ԱՂՕԹԱԳԻՐՔ

Մեծացուսցէ անձն իմ զՏէր

Օրհնութեամբ եւ արտօնութեամբ՝
Արհ. Տ. Ռափայէլ Արքեպս. Մինասեանի՝
Առաջնորդի Կաթողիկէ Հայոց՝ Հայաստանի,
Վրաստանի, Ռուսաստանի, Ուկրաինայի
եւ Արեւելեան Եւրոպայի

ԱՂՕԹԱԳԻՐՔ

Առաջնորդարան Հայ Կաթողիկէ Եկեղեցւոյ
Հայաստանի, Վրաստանի, Ռուսաստանի
եւ Արեւելեան Եւրոպայի
Գիւմրի 2021



ՀԱՅՐԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ

Մեծ ուրախութեամբ ձեզ ենք նուիրում այս աղօթագիրքը, որը, յուսով ենք՝ կը ծառայի ի խնդիր ձեր հոգեւոր շինութեան եւ առաւել ջերմեռանդութեան: Այս յոյսով եւ Աստուծոյ հանդէպ անխախտ վստահութեամբ բերում ենք մեր հայրական օրհնութիւնը այս աղօթագիրքը կազմողների աշխատանքին եւ ձեզ բոլորիդ՝ հայցելով մեծագոյն աղօթասաց Ուսուցչուհի Սրբուհի Աստուածամօր զօրաւոր բարեխօսութիւնը՝ ձեզ եւ ձեր ընտանիքների համար, որպէսզի անդադար աղօթքով եւ բարեպաշտ նուիրումով վայելէք աստուածառաք լիառատ շնորհներ՝ ձեր հոգեւոր նկարագիրը առաւելագոյնս նմանեցնելու մեր Տէր Յիսուս Քրիստոսի աստուածային մաքրամաքուր պատկերին, որ Հայր Աստծոյ անսահման Ողորմութեան դէմքն է՝ յայտնուած մարդկային ցեղին՝ ի խնդիր փրկութեան եւ յաւիտենական երանութեան պարգեւի: Սիրով եւ աղօթքով միանում եմ իւրաքանչիւրիդ սրտից բխած հաւատաբորբ աղօթքին՝ որպէս հայր եւ եղբայր՝ ի Քրիստոս:

Օրհնեալք եղերուք ի շնորհաց Սուրբ Հոգւոյն. Ամէն:

Ձերդ աղօթարար՝

Տ. Ռափայէլ Արքեպս. Մինասեան՝

Տիտղոսաւոր Արքեպիսկոպոս Կապադովկեան Կեսարիոյ Հայոց Առաջնորդ Հայաստանի, Վրաստանի, Ռուսաստանի, Ուկրաինայի եւ Արեւելեան Եւրոպայի Կաթողիկէ Հայոց

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅՐԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ *5*

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ *17*

Ի՞ՆՉ Է ԱՂՕԹՔԸ 20
ՍՈՒՐԲ ԳԻՐՔԸ՝ ԱՂՕԹՔԻ ՄԱՍԻՆ 20
ԿԱԹՈՂԻԿԷ ԵԿԵՂԵՑԻՆ
ԵՒ ՍՈՒՐԲ ՀԱՅՐԵՐԸ՝
ԱՂՕԹՔԻ ՄԱՍԻՆ 23

ԱՄԵՆՕՐԵԱՅ ԱՂՕԹՔՆԵՐ 39
ՏԷՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՕԹՔԸ 41
ՀՐԵՇՏԱԿԱՅԻՆ ՈՂՋՈՅՆԸ 41
ՀԱՒԱՏՈՅ ՀԱՆԳԱՆԱԿ 43
ՀԱՒԱՏՈՎ ԽՈՍՏՈՎԱՆԻՄ 44
ԱՌԱՒՕՏԵԱՆ ԱՂՕԹՔՆԵՐ 54
ԱՂՕԹՔ՝ ՅԻՍՈՒՍԻՆ 54
ԱՂՕԹՔ՝ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱՄՕՐԸ 55
ԱՌԱՒՕՏ ԼՈՒՍՈՅ 55
ԱՇԽԱՐՀ ԱՄԵՆԱՅՆ 61
ԱՂՕԹՔ ՃԱՇԻՑ ԱՌԱՋ 66
ԱՂՕԹՔ ՃԱՇԻՑ ՅԵՏՈՅ 66
ԵՐԵԿՈՅԵԱՆ ԱՂՕԹՔՆԵՐ 67
ԱՂՕԹՔ՝ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ 68
ԱՂՕԹՔ՝ ՊԱՀԱՊԱՆ ՀՐԵՇՏԱԿԻՆ 68
ՔՆՆՈՒԹԻՒՆ ԽՂՃԻ, ԱՊԱ՝
ԱՂՕԹՔ ՋՂՋՄԱՆ 69
ՋՂՋՄԱՆ ԱՂՕԹՔ՝ ՕՐՈՒԱՅ ՎԵՐՋՈՒՄ 70
ԱՂՕԹՔ՝ ԱՇԽԱՏԱՆՔ ՍԿՍԵԼՈՒՑ ԱՌԱՋ 71
ԱՂՕԹՔ ՃԱՆԱՊԱՐՀ ԳՆԱԼՈՒՑ ԱՌԱՋ 71

ՍՈՒՐԲ ՀԱՅՐԵՐԻ ԱՂՕԹՔՆԵՐ 73
ԱՂՕԹՔ՝ ՄԻԱԾԻՆ ՈՐԴՈՒՆ 76
ԱՂՕԹՔ՝ ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒՆ 78
ԱՂՕԹՔ ԱՊԱՇԽԱՐՈՒԹԵԱՆ 79
ՅՈՎՀԱՆ ՄԱՆԴԱԿՈՒՆՈՒ ԱՂՕԹՔԸ 81
ԻՆՉ ՊԻՏԻ ԱՆԵՍ, Ա՛ՆՁ ԻՄ ԿՈՐՈՒՍԵԱԼ..... 85
ՍԲ. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑՈՒ ԱՂԵՐՍԸ՝
ՍԲ. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻՆ 86
ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ ԱՂՕԹՔԸ, ԵՐԲ ՄԷԿԸ
ՈՐՈԳԱՅԹԻ ՄԷՋ Է ԸՆԿՆՈՒՄ 88
ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑՈՒ ԱՂՕԹՔԸ՝ ԴԵՒԵՐԻՑ
ՊԱՀՊԱՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ 90
ՄԱՆԱՍԷ ԹԱԳԱՒՈՐԻ ԱՂՕԹՔԸ..... 91
ՍԱՂՄՈՍՆԵՐ 94
ՍԱՂՄՈՍ 4 94
ՍԱՂՄՈՍ 6 95
ՍԱՂՄՈՍ 21 96
ՍԱՂՄՈՍ 22..... 99
ՍԱՂՄՈՍ 26..... 100
ՍԱՂՄՈՍ 50 101

ԱՂՕԹՔՆԵՐ ԱՌ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱՄԱՅՐՆ 105
ՄԱՐԻԱՄԻ ՕՐՀՆԵՐԳԸ..... 107
ՓԱՌԱՒՈՐԵԱԼ ԵՒ ՕՐՀՆԵԱ՛Լ 108
ՀՐԵՇՏԱԿ ՏԵԱՌՆ 109
ՈՒՐԱԽ ԼԵՐ 111
ՔԵ՛Զ ԵՄ ՅԱՆՁՆԻՈՒՄ ԱՄԲՈՂՋՈՎԻՆ, ՏԻՐԱՄԱ՛ՅՐ..
113
ԱՂՕԹՔ՝ ԶՄՄԱՌԻ ՏԻՐԱՄՕՐԸ..... 113
ՏՈՒ՛Ր ԻՆՁ ՍԻՐՏ՝ ՆՄԱՆ ՔՈ ՍՐՏԻՆ 114
ԵՐԻՏԱՍԱՐԴԻ ԱՂՕԹՔԸ՝ ԱՍՏՈՒԱԾԱՄՕՐԸ 115

ԱՂՕԹՔՆԵՐ՝ ՈՒՂՂՈՒԱԾ ՍՐԲԵՐԻՆ..... 117
ԱՂՕԹՔ՝ ՍՈՒՐԲ ՅՈՎՍԷՓԻՆ..... 119
ԱՂՕԹՔ ՍՈՒՐԲ ՅՈՎՍԷՓԻՆ՝
ՅՈԲԵԼԵԱՆԱԿԱՆ ՏԱՐՈՒԱՅ ՀԱՄԱՐ 120
ԼԻԹԱՆԻԱ ՍՈՒՐԲ ՅՈՎՍԷՓԻ 121
ԱՌԱՆՁՆԱԿԱՆ ԱՂՕԹՔ՝

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐՉԻՆ 123
ԼԻԹԱՆԻԱ՝ Ի ՊԱՏԻՒ ՍՐԲՈՅ ՀՕՐՆ ՄԵՐՈՅ
ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԻՆ 124
ԱՂՕԹՔ 127
ԱՂՕԹՔ՝ ՍՈՒՐԲ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԿՐՏՉԻՆ 128
ԱՂՕԹՔ՝ ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍ ՋՕՐԱՎԱՐԻՆ 129
ԱՂՕԹՔ՝ ՍՈՒՐԲ ՍԱՀԱԿԻՆ
ԵՒ ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊԻՆ 130
ԱՂՕԹՔ՝ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՋՕՐԱՎԱՐՆԵՐԻՆ 131
ԱՂՕԹՔ՝ ՍՈՒՐԲ ՀՌԻՓՍԻՄԵԱՆՑ
ԵՒ ՍՈՒՐԲ ԳԱՅԵԱՆԵԱՆՑ 132
ԱՂՕԹՔ՝ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑՈՒՆ 133
ԱՂՕԹՔ՝ ՈՒՂՂՈՒԱԾ ՀՐԵՇՏԱԿՆԵՐԻՆ,
ՍԵՐՈՎԲԷՆԵՐԻՆ ԵՒ ՔԵՐՈՎԲԷՆԵՐԻՆ 134
ԱՂՕԹՔ՝ ՍՈՒՐԲ ՊԵՏՐՈՍԻՆ
ԵՒ ՍՈՒՐԲ ՊՕՂՈՍԻՆ 134
ԻՆՆՕՐԵԱՅ ԱՂՕԹՔ՝ ՍՈՒՐԲ ՇԱՐԲԷԼԻՆ 135
ԱՌԱՋԻՆ ՕՐ 135
ԵՐԿՐՈՐԴ ՕՐ 136
ԵՐՐՈՐԴ ՕՐ 137
ՉՈՐՐՈՐԴ ՕՐ 138
ՀԻՆԳԵՐՈՐԴ ՕՐ 139
ՎԵՑԵՐՈՐԴ ՕՐ 139
ԵՕԹՆԵՐՈՐԴ ՕՐ 140
ՈՒԹԵՐՈՐԴ ՕՐ 141
ԻՆՆԵՐՈՐԴ ՕՐ 142
ԱՂՕԹՔ՝ ՍՐԲՈՒՀԻ ՌԻԹԱՅԻՆ 143
ԱՂՕԹՔ՝ ԵՐԱՆԵԼԻ ԻԳՆԱՏԻՈՍ ՄԱԼՈՅԵԱՆԻՆ 144

**ԱՂՕԹՔՆԵՐ՝ ՋԱՆԱՋԱՆ ԱՌԻԹՆԵՐԻ
ԵՒ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ 146**
ԱՂՕԹՔ ՍՈՒՐԲ ԾՆՆԴԵԱՆ 146
ՆՈՐ ՏԱՐՈՒԱՅ ՇԵՄԻՆ 147
ՍԲ. ՖՐԱՆՑԻՍԿՈՍ ԱՍՍԻԶԵՑՈՒ ԱՂՕԹՔԸ 149
ԱՂՕԹՔ ԹՇՆԱՄԻՆԵՐԻ
ԵՒ ՉԱՐԱԿԱՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ 150
ՍԻՐԵԼ ԵՒ ՏԱԼ 151
ՇՆՈՐՀԱԿԱԼ ԵՄ ՔԵԶ, ՏԷՐ 153

ԱՂՕԹՔ՝ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ 154
ԵՐԻՏԱՍԱՐԴ ՋՈՅԳԻ ԱՂՕԹՔԸ..... 156
ԾԵՐՈՒՆՈՒ ԱՂՕԹՔԸ 157
ՈՒՂԵԿՈՐՈՅՍ ՀՈԳՈՒ ԱՂՕԹՔԸ..... 158
ԱՂՕԹՔ՝ ԱՇԽԱՏԱՒՈՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ 159
ԱՂՕԹՔ՝ ԳՈՐԾԱՋՈՒՐԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ..... 160
ԲԺՇԿԻ ԱՂՕԹՔԸ 161
ՀԻՒԱՆԴԻ ԱՂՕԹՔԸ 162
ԱՂՕԹՔ՝ ՀԻՒԱՆԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ..... 163
ԱՂՕԹՔ՝
ԸՆՏԱՆԵԿԱՆ ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ 164
ԱՂՕԹՔ՝ ՎԱՍՆ ՆԱՀԱՏԱԿԱՑ
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ..... 165

ԱՂՕԹՔՆԵՐ
ԱՄԵՆԱՍՈՒՐԲ ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ ԱՌՋԵՎ 169
ԱՂՕԹՔ՝ ՍՈՒՐԲ ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆԸ
ՄՕՏԵՆԱԼՈՒՑ ԱՌԱՋ 171
ՆԵՐԳՈՐԾՈՒԹԻՒՆ ՋՂՋՄԱՆ..... 172
ՆԵՐԳՈՐԾՈՒԹԻՒՆ ՍԻՐՈՅ ԵՒ ՆՈՒԻՐՄԱՆ 173
ԱՂՕԹՔ՝ ՍՈՒՐԲ ՀԱՂՈՐԴՈՒԹԻՒՆՆ
ԸՆԴՈՒՆԵԼՈՒՑ ՅԵՏՈՅ 174
ԱՂՕԹՔ՝ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻՆ՝ ՍՈՒՐԲ
ՀԱՂՈՐԴՈՒԹԻՒՆՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒՑ ՅԵՏՈՅ 175
ԱՂՕԹՔ՝ ԽԱՉԵԼՈՒԹԵԱՆ ԱՌՋԵՒ՝ ՍՈՒՐԲ
ՀԱՂՈՐԴՈՒԹԻՒՆՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒՑ ՅԵՏՈՅ..... 176
ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ԱՄԵՆԱՍՈՒՐԲ
ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՄԲ 176
ԱՂՕԹՔ՝
ԱՄԵՆԱՍՈՒՐԲ ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ ԱՌՋԵՒ..... 180
ԱՂՕԹՔ
ԱՄԵՆԱՍՈՒՐԲ ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ ԱՌՋԵՒ՝
ՍՐԲՈՒՀԻ ՖԱՈՒՍՏԻՆԱ ԿՈՎԱԼՍԿԱՅԻ..... 182

ԱՂՕԹՔ ԵՒ ՆՈՒԻՐՈՒՄ
ՅԻՍՈՒՍԻ ՍՈՒՐԲ ՍՐՏԻՆ 187
ԲԱՆԱՁԵՒ ՆՈՒԻՐՄԱՆ

ՅԻՍՈՒՍԻ ՍՈՒՐԲ ՍՐՏԻՆ 189
ԼԻԹԱՆԻԱ ՍՈՒՐԲ ՍՐՏԻՆ ՅԻՍՈՒՍԻ24 190
ԱՂՕԹՔ..... 193
ՊՍԱԿ ԱՂՕԹՔՆԵՐԻ՝
ԱՌ ՍՈՒՐԲ ՍԻՐՏՆ ՅԻՍՈՒՍԻ 193
ԵԿԵՂԵՑԻՈՅ ՀԱՄԱՐ 193
ՄԵՂԱՒՈՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ..... 195
ՀԱՒԱՏՔԻ ՏԱՐԱԾՄԱՆ ՀԱՄԱՐ 196
ՀԱՅ ԱԶԳԻ ՀԱՄԱՐ 197
ՄԵՔ ՀԱՄԱՐ 198

ՃԱՆԱՊԱՐՀ ԽԱՉԻ..... 201
ԱՂՕԹՔ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԵԱՆ 203
ԱՌԱՋԻՆ ԿԱՅԱՆ 204
ԵՐԿՐՈՐԴ ԿԱՅԱՆ 205
ԵՐՐՈՐԴ ԿԱՅԱՆ..... 206
ՉՈՐՐՈՐԴ ԿԱՅԱՆ 207
ՀԻՆԳԵՐՈՐԴ ԿԱՅԱՆ 208
ՎԵՑԵՐՈՐԴ ԿԱՅԱՆ 209
ԵՕԹԵՐՈՐԴ ԿԱՅԱՆ
ՅԻՍՈՒՍ ԸՆԿՆՈՒՄ Է ԵՐԿՐՈՐԴ ԱՆԳԱՄ 210
ՈՒԹԵՐՈՐԴ ԿԱՅԱՆ
ՅԻՍՈՒՍ ՀԱՆԴԻՊՈՒՄ Է
ԻՐ ՀԱՄԱՐ ԼԱՅՈՂ ԿԱՆԱՆՑ..... 211
ԻՆՆԵՐՈՐԴ ԿԱՅԱՆ
ՅԻՍՈՒՍ ԸՆԿՆՈՒՄ Է ԵՐՐՈՐԴ ԱՆԳԱՄ 212
ՏԱՍՆԵՐՈՐԴ ԿԱՅԱՆ
ՅԻՍՈՒՍԻՆ ՄԵՐԿԱՑՆՈՒՄ ԵՆ
ԻՐ ԶԳԵՍՏՆԵՐԻՑ 213
ՏԱՍՆՄԷԿԵՐՈՐԴ ԿԱՅԱՆ
ՅԻՍՈՒՍԻՆ ԳԱՄՈՒՄ ԵՆ ԽԱՉԻՆ..... 214
ՏԱՍՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ԿԱՅԱՆ
ՅԻՍՈՒՍ ՄԱՀԱՆՈՒՄ Է ԽԱՉԻ ՎՐԱՅ 216
ՏԱՍՆԵՐԵՔԵՐՈՐԴ ԿԱՅԱՆ
ՅԻՍՈՒՍԻՆ ԻՋԵՑՆՈՒՄ ԵՆ ԽԱՉԻՑ..... 217
ՏԱՍՆՉՈՐՍԵՐՈՐԴ ԿԱՅԱՆ
ՅԻՍՈՒՍԻՆ ՋԵՏԵՂՈՒՄ ԵՆ
ՍՈՒՐԲ ԳԵՐԵԶՄԱՆԻ ՄԷՋ..... 218

ՏԱՍՆՀԻՆԳԵՐՈՐԴ ԿԱՅԱՆ
ՅԻՍՈՒՍԻ ՅԱՐՈՒԹԻՒՆԸ 219
ԱՂՕԹՔ ԳՈՀՈՒԹԵԱՆ 220
ԿԱՅՐ ԱՌ ԽԱՉԻՆ 221
ՈՂԲՔ ՄԵԾԻ ՈՒՐԲԱԹԻՆ,
Ի ՆԵՐՍԻՍԷ ԿԱԹՈՂԻԿՈՍԷ ՀԱՅՈՑ 223
ԵՐԿՐՊԱԳՈՒԹԻՒՆ ՍՈՒՐԲ ԽԱՉԻ 228

ԱՍՏՈՒԱԾԱՄՕՐ ՍՈՒՐԲ ՎԱՐԴԱՐԱՆԸ 231
ՈՒՐԱԽՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ
(ԵՐԿՈՒՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ) 236
Ա. ՀՐԵՇՏԱԿԻ ԱՒԵՏՈՒՄԸ ՄԱՐԻԱՄԻՆ 236
Բ. ՄԱՐԻԱՄԻ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ ԵՂԻՍԱԲԵԹԻՆ 237
Գ. ՅԻՍՈՒՍԻ ԾՆՈՒՆԴԸ 238
Դ. ՅԻՍՈՒՍԻ ԸՆԾԱՅՈՒՄԸ ՏԱՃԱՐԻՆ 239
Ե. ՅԻՍՈՒՍ՝ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՏԱՃԱՐՈՒՄ 240
ԼՈՅՍԻ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ (ՀԻՆԳՇԱԲԹԻ) 241
Ա. ՅԻՍՈՒՍԻ ՄԿՐՏՈՒԹԻՒՆԸ 241
Բ. ԿԱՆԱՅԻ ՀԱՐՍԱՆԻՔԸ 242
Գ. ԱՍՏՈՒԾՈՅ ԱՐՔԱՅՈՒԹԵԱՆ ԱՒԵՏՈՒՄԸ 243
Դ. ՅԻՍՈՒՍԻ ՊԱՅԾԱՌԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ 244
Ե. ՍՈՒՐԲ ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ 245
ՏՐՏՄՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ
(ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՈՒՐԲԱԹ) 245
Ա. ՅԻՍՈՒՍ՝ ԳԵԹՍԵՄԱՆԻԻ ՊԱՐՏԷԶՈՒՄ 245
Բ. ՅԻՍՈՒՍԻ ԽԱՐԱԶԱՆՈՒՄԸ 246
Գ. ՅԻՍՈՒՍԻ ՓՇԵՊՍԱԿՈՒՄԸ 247
Դ. ԽԱՉԻ ՃԱՆԱՊԱՐՀԸ 247
Ե. ԽԱՉԵԼՈՒԹԻՒՆ 248
ՓԱՌԱՒՈՐՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ
(ԵՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ԿԻՐԱԿԻ) 249
Ա. ՅԻՍՈՒՍԻ ՅԱՐՈՒԹԻՒՆԸ 249
Բ. ՅԻՍՈՒՍԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԸ 250
Գ. ՀՈԳԵԳԱԼՈՒՍՏԸ 250
Դ. ԱՍՏՈՒԱԾԱՄՕՐ ՎԵՐԱՓՈԽՈՒՄԸ 251
Ե. ԱՍՏՈՒԱԾԱՄՕՐ ՊՍԱԿՈՒՄԸ՝
ՈՐՊԷՍ ԹԱԳՈՒՀԻ ԵՐԿՆՔԻ ԵՒ ԵՐԿՐԻ 251

ՈՂՋ ԼԵ՛Ր, ԹԱԳՈՒՀԻ 252
ԼԻԹԱՆԻԱ (ԼՕՐԵՆՏԵԱՆ) ՍՈՒՐԲ ԿՈՅՍԻՆ 253
ԱՂՕԹՔ 257
ԼԻԹԱՆԻԱ ԱՆԱՐԱՏ ՅՂՈՒԹԵԱՆ 258

ՈՂՈՐՄՈՒԹԵԱՆ ՊՍԱԿ 261

ԱՂՕԹՔ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ԵՕԹՆ ՈՒՐԱԽՈՒԹԻՒՆՆԵՐԻ 264

ԱՌԱՋԻՆ ՈՒՐԱԽՈՒԹԻՒՆ
ԱՒԵՏՈՒՄ 265
ԵՐԿՐՈՐԴ ՈՒՐԱԽՈՒԹԻՒՆ
ՅԻՍՈՒՍԻ ԾՆՈՒՆԴԸ 266
ԵՐՐՈՐԴ ՈՒՐԱԽՈՒԹԻՒՆ
ՎԵՐԱՓՈԽՈՒՄԸ 267
ՉՈՐՐՈՐԴ ՈՒՐԱԽՈՒԹԻՒՆ
ՅԻՍՈՒՍ ԻՐ ՄՕՐԸ ՆՍՏԵՑՐԵՑ
ԻՐ ԱՋ ԿՈՂՄՈՒՄ 268
ՀԻՆԳԵՐՈՐԴ ՈՒՐԱԽՈՒԹԻՒՆ
ԱՍՏՈՒԱԾԱՄՕՐ ՊՍԱԿՈՒՄԸ՝
ՈՐՊԷՍ ԹԱԳՈՒՀԻ ԵՐԿՆՔԻ ԵՒ ԵՐԿՐԻ 269
ՎԵՑԵՐՈՐԴ ՈՒՐԱԽՈՒԹԻՒՆ
ԱՍՏՈՒԱԾԱՄԱՅՐԸ՝ ԳՈՐԾԱԿԻՑ ՔՐԻՍՏՈՍԻ 270
ԵՕԹՆԵՐՈՐԴ ՈՒՐԱԽՈՒԹԻՒՆ
ՍՈՒՐԲ ԿՈՅՍԸ՝ ԳԱՆՁԱՊԱՀ
ԲՈԼՈՐ ՇՆՈՐՀՆԵՐԻ 271

ԱՂՕԹՔ՝ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ԵՕԹԸ ՎԷՐՔԵՐԻ 273

ԱՌԱՋԻՆ ՎԷՐՔ
«ԻՍԿ ՔՈ ՀՈԳՈՒ ՄԻՋՈՎ ԷԼ
ՍՈՒՐ ՊԻՏԻ ԱՆՑՆԻ» (ՂԿ., 2, 35) 275
ԵՐԿՐՈՐԴ ՎԷՐՔ
ՓԱԽՈՒՍՏ ԴԷՊԻ ԵԳԻՊՏՈՍ՝
ՅԻՍՈՒՍ ՄԱՆԿԱՆ ՀԵՏ 277
ԵՐՐՈՐԴ ՎԷՐՔ
ՄԱՐԻԱՄԸ ԿՈՐՑՆՈՒՄ Է ՅԻՍՈՒՍԻՆ
ԵՐՈՒՍԱՂԷՄՈՒՄ 278

ՉՈՐՐՈՐԴ ՎԷՐՔ
ՅԻՍՈՒՍԻ ՁԵՐԲԱԿԱԼՈՒՄԸ,
ԳԱՆԱԿՈԾՈՒՄԸ ԵՒ ԾԱՂՐՈՒՄԸ 279
ՀԻՆԳԵՐՈՐԴ ՎԷՐՔ
ՏԻՐԱՄԱՅՐԸ ՏԵՍԱՒ ԻՐ ՈՐԴՈՒՆ՝
ԽԱՉԸ ԿՐԵԼԻՍ 281
ՎԵՑԵՐՈՐԴ ՎԷՐՔ
ՏԻՐԱՄԱՅՐԸ ՏԵՍԱՒ ԻՐ ՈՐԴՈՒ ԽԱՉՈՒԵԼԸ 283
ԵՕԹՆԵՐՈՐԴ ՎԷՐՔ
ՏԻՐԱՄԱՅՐԸ ԳՐԿԵՑ ԻՐ ՄԵՌԱԾ ՈՐԴՈՒ
ՄԱՐՄԻՆԸ 285
ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ
ԱՌ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴՆ ՔՐԻՍՏՈՍԻ 287
ԵԶՐԱՓԱԿԻՉ ԱՂՕԹՔ՝ ՎԵՐՋԻՆ ՕՐՈՒԱՅ՝
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի ՀԱՄԱՐ. 289

ՏՕՆԱԿԱՆ ՇԱՐԱԿԱՆՆԵՐ 290
ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ 290
ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԿՐՏՈՒԹԻՒՆ 291
ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱՋ 292
ԾԱՂԿԱՁԱՐԴ 292
ՍՈՒՐԲ ՁԱՏԻԿ 292
ՏՕՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ 293
ԱՍՏՈՒԱԾԱՄՕՐԸ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՇԱՐԱԿԱՆՆԵՐ
ԵՒ ԱՅԼ ԵՐԳԵՐ 293

ԲԱՐԵՊԱՇՏԱԿԱՆ ԵՐԳԵՐ 307
ՍՈՒՐԲ ԾՆՆԴԵԱՆ ԵՐԳԵՐ
ՔՐԻՍՏՈՍ ԾՆԱՒ ԵՒ ՅԱՅՏՆԵՑԱՒ 307
ԱՅՍՕՐ ՏՕՆՆ Է ԾՆՆԴԵԱՆ 307
ԼՈՒՌ ԳԻՇԵՐ, ՍՈՒՐԲ ԳԻՇԵՐ 308
ԵՐԳԵՐ՝ ՍՈՒՐԲ ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ
ԵՐԿՐՊԱԳՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ 308
ԵՐԿՐՊԱԳԵՄ 309
ԵՂԻ՛Ր ՅԻՍՈՒՍ 310
ԱՆՁՆ ԻՄ ԱՀԱ ԾԱՐԱՒԻ 311
Ո՛Վ ՔԱՂՑՐԱԳՈՒԹ ՍԻՐՏ ՅԻՍՈՒՍԻ 311
ՅԻՍՈՒՍ ԽՈՆԱՐՀ ԵՒ ՀԵԶ 312

ԿԸ ՊԱՇՏԵՆՔ ՔԵԶ 313
ՈՎ ԱՆՄԱՀ 313
Զ՞ԻՆՉ ՏԱՑ ՏՐԻՏՈՒՐ ՏԵԱՌՆ 313
ՍԻՐՈՅ ՔՈՅ ՀՈՒՐ 314
ԶԹԱԳԱՒՈՐՆ ՔՐԻՍՏՈՍ 314
ԿԸ ՀԱՒԱՏԱՄ ՔԵԶԻ 315
ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ԵՐԳԵՐ 316
ԵՐԳ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱՄՕՐ 316
ԱՄԻՍՆ ԱՀԱ ՍՈՒՐԲ ԿՈՒՍԻՆ 318
ԵՐԱՆԵԼԻ ԿՈՅՍ ՄԱՐԻԱՄ, ... 319
ԳԱԲՐԻԷԼԻ Ի ՁԵՌԻՆ 321
ԻՆՉՊԷՍ ՆԱՒԱԿ Մ՚ԱԼԵՅՈՅԶ 322
ԱՒԵՏԱԲԵՐ ՀՐԵՇՏԱԿԻՆ 324
ՇՈՒՔՆ ԵՐԿՐԻ ՎՐԱՅ ԿԸ ԾԱՒԱԼԻ, ... 325
ՈՂՋՈ՛Յ, ԱՍՏՂ ԾՈՎՈՒ, ... 326
ԵՐԲ ԿԸ ԿՐԿՆԵՄ ԱՆՈՒՆԴ ՈՎ ՄԱՅՐ, ... 327
ՄԱՅՐԻ՛Կ, ՄԱՅՐԻԿ, ԻՄ ՄԱՐԻԱՄ 328
ՈՂՋՈ՛Յ ՔԵԶ, ԱՆԱՐԱ՛Տ ՅՂԱՑԵԱԼ, ... 329

**ԽՈՐՀՐԴԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ
ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳԻ 331**

**ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՆ
ՀԻՄՆԱԿԱՆ ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆՆԵՐ 368**
ԱՍՏՈՒԾՈՅ ՏԱՍԸ ՊԱՏՈՒԻՐԱՆՆԵՐԸ 368
ԵՂԵՂԵՑԻՈՅ ԵՕԹԸ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ 368
ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՈՒԻՐԱՆՆԵՐԸ 369
ԳԵՐԱԳՈՅՆ ՊԱՏՈՒԻՐԱՆԸ 369
ՏԷՐ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ՆՈՐ ՊԱՏՈՒԻՐԱՆԸ ... 369
Ի՞ՆՉ Է ՄԵՂՔԸ 370
ԾԱՆՐ ԵՒ ԹԵԹԵՒ ՄԵՂՔԵՐ 370
ԱՊԱՇԽԱՐՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ 371
ԽՂՃԻ ՔՆՆՈՒԹԻՒՆ
Ա. ՄԵՂՔԵՐ՝ ԱՍՏԾՈՅ ՀԱՆԴԷՊ 371
Բ. ՄԵՂՔԵՐ՝ ԾՆՈՂԻ ԵՒ ԸՆԿԵՐՈՋ ՀԱՆԴԷՊ 372
Դ. ՍԵՓԱԿԱՆ ԱՆՁԻ ՀԱՆԴԷՊ 373
ԵՕԹԸ ՄԱՀԱՑՈՒ ՄԵՂՔԵՐԸ 374
ԶՂՋՄԱՆ ԱՂՕԹՔ 375

ԵՐԵՔ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԱԿԱՆ
ԱՌԱՔԻՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ 375
ՍԻՐՈՅ (ՈՂՈՐՄՈՒԹԵԱՆ)
ՆԻՒԹԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ 376
ՍԻՐՈՅ (ՈՂՈՐՄՈՒԹԵԱՆ) ՀՈԳԵՒՈՐ ԳՈՐԾԵՐ .. 378

ԱՂԲԻՒՐՆԵՐԻ ՑԱՆԿ 380

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

«Զգաստացէ՛ք ուրեմն եւ արթո՛ւն եղէք աղօթքի համար»
(Ա Պետ., 4,7)

Սուրբ Պետրոս առաքեալը, ում Տէրը կարգեց Վէմ Եկեղեցւոյ եւ յանձնեց իր ոչխարներին արածեցնելու ծանր, բայց այնքա՜ն քաղցր առաքելութիւնը, յորդորում է իւրաքանչիւրիս այս աշխարհի անտարբերութեան եւ գայթակղութիւնների ծովում չնիրհել անզգայութեան թմբիրի մէջ եւ մշտապէս լինել զգաստ՝ աղօթքի մէջ, որ քրիստոնէական կեանքի հիմքն է եւ շարժիչ ուժը: Աղօթքո՛վ է, որ իւրաքանչիւրս եւ բոլորս միասին կառուցում ենք մեր հաղորդութիւնը Տիրոջ հետ, Պօղոս առաքեալի խօսքով, մասնակից լինում Աստծոյ էութեանը եւ ապահովում մեզ համար զէնք՝ յաղթելու այս աշխարհին եւ ընդունելու յաւիտենական երջանկութիւնը: Աղո՛թքն է, սիրելինե՛ր, որ վահանի պէս պաշտպանելու է մեզ այս աշխարհի արհաւիրքներից եւ զօրացնելու է՝ յառաջ ընթանալու՝ ետ չնայելով մեր դժուարութիւններին եւ

սխալներին: Աղո՛թքն է, որ մեզ օգնելու է ամուր վստահութիւն ունենալ Քրիստոսի հանդէպ եւ Նրանով զօրացած, մշտապէս արթուն լինելով՝ անվախ քայլել այս կեանքի ալեկոծ ծովի ալիքների վրայով եւ չսուզուել: Աղո՛թքն է, սիրելինե՛ր, որ մեզ առաջնորդելու է դէպի ճշմարիտ քրիստոսանմանութիւնը:

Փափաքելով օգնել ձեզ՝ սիրելի եղբայրնե՛ր եւ քոյրե՛ր, աւելի հարստացնելու ձեր անդադար ու ջերմեռանդ աղօթական կեանքը, որոշեցինք ձեզ առաջարկել այս փոքրիկ աղօթագիրքը: Այս գրքոյկի մէջ ընդգրկուած են ամէնօրեայ աղօթքներ՝ առանձին կամ միասին ասելու համար, ջերմեռանդական զանազան աղօթքներ, որոնց տարածումը համայնքներում, ընտանիքներում, միասնական արտասանութիւնը եւ երգեցողութիւնը բալասանի նման օգտակար է մերօրեայ կեանքում, որ ողողուած է տարատեսակ արատներով եւ շեղիչ ազդեցութիւններով:

Աղօթագրքում ներառնուած են թէ՛ Ընդհանրական Եկեղեցւոյ, թէ՛ Հայ Եկեղեցւոյ Սուրբ Հայրերի աղօթքներ, թէ՛ արեւմտեան ծագման հնագոյն, շատ զօրաւոր աղօթքներ, որոնք հաւասարապէս սիրելի եւ հարազատ են հայ ժողովրդին: Հարկ է միշտ օգտուել աղօթքների ընդհանուր գանձարանից եւ միշտ կենդանի ու թարմ պահել աղօթական աւանդոյթները՝ թէ հայկական եւ թէ ընդհանրական:

Այս գրքոյկի մէջ ընդգրկուել են նաեւ հոգեւոր երգեր, որոշ շարականներ, որոնց երգեցողութեան եղանակները պարզ են եւ հեշտ իւրացուող: Զգուշացինք խուսափել բարդ եւ երաժշտական հմտութիւններ պահանջող շարականների ներառումից: Նոյն տրամաբանութեամբ նաեւ աղօթքների մեծամասնութիւնը դրել ենք աշխարհաբարով, բացառութեամբ մի քանի հնագոյն աղօթքների, որոնց հոգեւոր ուժն ու գեղեցկութիւնը նաեւ գրաբարեան հայերէնի մէջ է:

Աղօթքների եւ հեղինակների վերաբերեալ կան նաեւ ծանօթագրութիւններ, իսկ վերջում՝ քրիստոնէականի հիմնարար որոշ տեղեկութիւններ, որոնք եւս կարող են օգտակար լինել թէ՛ մեծի եւ թէ՛ փոքրի համար:

Յուսով ենք, որ այս աղօթագիրքը սիրելի կը դառնայ ձեզ եւ օգտակար կը լինի ձեր «ներքին մարդու» շինութեան եւ հոգեւոր աճման համար՝ ի հաճոյս Ամենասուրբ Երրորդութեան, որին վայել է փառք, իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս. Ամէն:

Կազմող

ԻՆՉ Է ԱՂՕԹՔԸ

ՍՈՒՐԲ ԳԻՐՔԸ՝ ԱՂՕԹՔԻ ՄԱՍԻՆ

Արթուն եղէ՛ք եւ աղօթեցէ՛ք,
որպէսզի փորձութեան մէջ չընկնէք
(Մտթ. 26, 41):

Արթո՛ւն կացէք այսուհետեւ, ամէն ժամ աղօ՛թք արէք, որպէսզի կարողանաք զերծ մնալ այն ամէ-նից, որ լինելու է, եւ արժանի լինէք կանգնելու մարդու Որդու առաջ (Ղկ., 21, 36):

Եւ երբ աղօթես, չլինե՛ս կեղծաւորների նման, որոնք սիրում են ժողովարաններում եւ հրա-պարակների անկիւններում աղօթքի կանգնել, որպէսզի մարդկանց երեւան. ճշմարիտ եմ ասում ձեզ, ա՛յդ իսկ է նրանց վարձը: Այլ դու երբ աղօթես, մտի՛ր քո սենեակը, փակի՛ր քո դռները եւ ծածո՛ւկ աղօթիր քո Հօրը, եւ քո Հայրը, որ տեսնում է, ինչ որ ծածուկ է, կը հատուցի քեզ յայտնապէս: Աղօթք անելիս շատախօս մի՛ լինէք ինչպէս հեթանոսները, որովհետեւ նրանք կարծում են, թէ իրենց շատ խօսքերի պատճառով լսելի կը լինեն: Արդ, նրանց չնմանուէ՛ք, որովհետեւ ձեր Հայրը գիտէ, թէ ինչ է

ձեզ պէտք, նախքան որ դուք նրանից մի բան ուզէք (Մտթ 6, 5–8):

Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ, թէ ով հաւատում է ինձ, ինքն էլ կ՚անի այն գործերը, որ ես եմ անում. եւ դրանցից աւելի մեծերը կ՚անի, որովհետեւ ես գնում եմ Հօր մօտ: Եւ ինչ որ ուզէք իմ անունով, այն կ՚անեմ, որպէսզի Հայրը փառաւորուի Որդու միջոցով (Յվհ., 14, 12–13):

Տէրն ամբարիշտներից հեռու է, բայց արդարների աղօթքը լսում է (Առ., 15, 29):

…Ամէն ինչ, որ աղօթք անելով խնդրէք եւ հաւատաք, թէ կը ստանաք, կը տրուի ձեզ: Եւ երբ աղօթքի կանգնէք, թէ մէկի դէմ մի բան ունէք, ներեցէ՛ք, որպէսզի ձեր Հայրն էլ, որ երկնքում է, ների ձեզ ձեր յանցանքները (Մրկ., 11, 24–25):

…Աղօթեցէ՛ք նրանց համար, որ չարչարում են ձեզ եւ հալածում, որպէսզի որդիները լինէք ձեր Հօր, որ երկնքում է. քանի որ նա իր արեգակը ծագեցնում է չարերի եւ բարիների վրայ եւ անձրեւ է թափում արդարների եւ մեղաւորների վրայ (Մտթ., 5, 44–45):

Ուրա՛խ եղէք միշտ, անդադար աղօթեցէ՛ք, ամէն ինչում գոհութի՛ւն մատուցեցէք, որովհետեւ ա՛յդ է Աստծու կամքը ձեզ համար ի Քրիստոս Յիսուս (Ա Թես., 5, 17–18):

Ուզում եմ, որ տղամարդիկ աղօթեն ամէն տեղ, սուրբ ձեռքեր բարձրացնեն դէպի վեր, առանց բարկութեան եւ երկմտութեան: Նոյնպէս

եւ կանայք, համեստ զարդարանքով, ակնածութեամբ եւ պարկեշտութեամբ թող զարդարուեն. ոչ թէ մարգարտով ընդելուզուած ոսկեայ հիւսքերով կամ պճնազարդ զգեստներով, այլ՝ բարի գործերով, ինչպէս վայել է աստուածապաշտութիւնը յանձն առած կանանց (Ա Տիմ., 2, 8-10):

Ձեզնից մէկը վշտի՞ մէջ է ընկել, թող աղօթի. մէկը բերկրանքի՞ մէջ է, սաղմոս թող ասի. հիւա՞նդ է ձեզնից մէկը, թող կանչի եկեղեցու երէցներին, եւ նրանք նրա վրայ թող աղօթք անեն, թող իւղով օծեն նրան Տիրոջ անունով: Եւ հաւատով եղած աղօթքը կը փրկի հիւանդին, ու Տէրը նրան ոտքի կը կանգնեցնի: Եւ եթէ մեղք գործած լինի, այդ նրան պիտի ներուի: Ձեր մեղքերը միմեանց խոստովանեցէ՛ք եւ միմեանց համար աղօ՛թք արէք, որպէսզի բժշկուէք. քանզի արդարի աղօթքը շատ ազդեցիկ է եւ օգնում է: Եղիան մարդ էր մեզ նման՝ կրքերի ենթակայ. նա աղօթեց, ու երկրի վրայ երեք տարի ու վեց ամիս անձրեւ չտեղաց: Ապա դարձեալ աղօթեց, եւ երկինքը անձրեւ տուեց, ու երկիրը բուսցրեց իր պտուղը (Յկբ., 5, 13-18):

«Զգաստացէ՛ք ուրեմն եւ արթո՛ւն եղէք աղօթքի համար» (Ա Պետ., 4,7):

ԿԱԹՈՂԻԿԷ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՒ ՍՈՒՐԲ ՀԱՅՐԵՐԸ՝ ԱՂՕԹՔԻ ՄԱՍԻՆ

Աղօթքը Աստծոյ շնորհի պարգեւ է, իսկ մեր կողմից՝ վճռական պատասխան: Աղօթքը միշտ ենթադրում է ջանադրութիւն: Քրիստոսից առաջ ապրած Հին Ուխտի մեծ աղօթարարները, նոյն կերպ եւ Աստուածամայրն ու սրբերը՝ Յիսուսի հետ, սովորեցնում են մեզ, որ աղօթքը ճակատամարտ է: Ո՞ւմ դէմ: Մեր իսկ անձի դէմ եւ ընդդէմ մեր փորձիչի նենգամտութեան, որ ամէն ինչ անում է՝ մեզ շեղելու աղօթքից, Աստծոյ հետ մեր միութիւնից: Մարդն աղօթում է այնպէս, ինչպէս ապրում է, որովհետեւ ապրում է այնպէս, ինչպէս աղօթում է: Եթէ մարդը չի ուզում մշտապէս գործել ըստ Քրիստոսի Հոգու, չենք կարող մշտապէս աղօթել Նրա անունով: Քրիստոնեայի նոր կեանքի «հոգեւոր պատերազմը» անբաժան է աղօթքի ճակատամարտից:

Քրիստոնէական Կաթողիկէ Եկեղեցւոյ, 2725

«Արդ, աղօթքով, պահքով, սուրբ սիրով, շնորհալից յոյսով եւ բաղձալից մղումով զգուշօրէն պատրա՛ստ եղիր՝ Աստուծոյ կամքը կատարելու: Ահով եւ երկիւղով ջանա՛ միշտ յառաջանալ բարեպաշտութեան մէջ եւ չպակասեցնել երեւելի եւ աներեւոյթ առաքինութիւնների վաստակդ:

Եւ ամէնուր հոգեւորապէս, անխափան կատարի՛ր աղօթքի ծառայութիւնդ՝ թէ՛ տանը նստած, թէ՛ ճանապարհ գնալիս, թէ՛ աշխատելիս, թէ՛ ննջելիս եւ թէ՛ արթնանալիս:

Ողջ սրտից բխած աղօթքներն ու խնդրուածքները (Աստուծոյ) շնորհիւ խաղաղութիւն են բերում հոգուն, իսկ միտքը խնամալից պաղատանքներով ուղղւում է դէպի արտասուալից զղջումը եւ եռանդասէր խանդաղատանքով՝ դէպի աւետիսների յիշատակը: Աղօթքները, շնորհալից արտասուքներ հեղելով, մաքրում են միտքն ու մարմինը չար եւ աղտեղի ցանկութիւններից:

Բաց մի՛ թող մտքիցդ Աստուծոյ յիշումը՝ անդադար խնդրուածքներով, եռանդասէր հոգով եւ միշտ ջերմ արտասուքով, որպէսզի աղօթքներով ընդունելութեան արժանանաս, եւ Աստուած (քեզ) պարգեւատու լինի, քանզի կամենում է, որ բոլորը փրկուեն եւ արժանանան արքայութեան՝ ի Քրիստոս Յիսուս»:

Սբ. Գրիգոր Լուսաւորիչ[1]

---

[1] Սբ. Գրիգոր Լուսաւորիչ (240-326թթ.)՝ Հայոց աշխարհում քրիստոնէութեան քարոզիչը, հայոց առաջին Կաթողիկոսը: Սբ. Գրիգորը մկրտեց հայոց արքունիքը եւ սկսեց դարձի բերել ամբողջ հայ ժողովրդին, ձեռնարկեց Էջմիածնի Մայր Տաճարի կառուցումը՝ ներշնչուած աստուածային մի տեսիլքով: Նրան յիրաւի կարելի է անուանել «Հայր հայոց հաւատի»:

«Սրտի սրբութիւնն առաւել է բոլոր բարձրաձայն բարբառուող աղօթքներից: Եւ յստակուած մտքին խառնուած լռութիւնն առաւել է մէկի բարձրաձայն աղաղակից: Արդ, սիրելի՛, տո՛ւր ինձ քո սիրտն ու խորհուրդները եւ լսի՛ր դու սրբերի աղօթքների զօրութիւնը: Տե՛ս՝ ինչպէս Աստուծոյ առաջ առաքինացան առաջին արդարներն իրենց աղօթքներով, նրանց պատարագներն ընդունելի եղան (Աստծուն): Եւ դարձեալ՝ (աղօթքներով) Նա ցածրացրեց հեղեղի ջուրը, բազմացրեց ամուլների ծնունդները, կործանեց բանակները, յայտնեց խորհուրդները, բաժանեց ծովերը, ճեղքեց Յորդանանը, կանգնեցրեց արեգակը եւ լուսինը, կոտրեց պիղծերին, իջեցրեց ջրերը, փակեց երկինքը, հանեց գուբից, ազատեց հրից, փրկեց ծովից, եւ աղօթքի զօրութիւնները յոյժ եւ առաւել են:

Երբ աղօթելիս լինես, սիրտդ ուղղիր վե՛ր եւ աչքերդ՝ վա՛ր, մտի՛ր դու քո ներսը՝ քո ներքին մարդու մէջ, եւ ծածո՛ւկ աղօթիր քո Հօրը, որ Երկնքում է: Եւ այս ամէնը, որ գրեցի քեզ աղօթքի ճառերի մասին, եթէ սուրբ լինեն, ընդունելի կը լինեն, եւ եթէ սուրբ չլինեն, ընդունելի չեն լինի: Քանզի կան ոմանք մեր մէջ, որոնք շատացնում են աղօթքները, երկարացնում հեծութիւնները, կորացնում իրենց անձերը եւ տարածում իրենց ձեռքերը, բայց աղօթքի գործերը հեռու են նրանցից:

Աղօթքները վայելուչ են, եթէ գործերը բարի են, ընդունելի են, եթէ խաղաղութիւն է լինում նրանց

մէջ, լսելի են, եթէ թողութիւն է գտնուում նրանց մէջ, սիրուած են, եթէ սուրբ են նենգութիւնից, զօրաւոր են, եթէ նրանց մէջ կատարուում են Աստուծոյ զօրութիւնները:

Կան խնդրուածքներ, օրհնութիւններ եւ գոհութիւններ: Խնդրուածքներն այս են, որ մէկն իր մեղքերի համար գթութիւն եւ ողորմութիւն է խնդրում: Օրհնութիւնները եւ գոհութիւններն այս են, որ խնդութեամբ գոհանում է երկնաւոր Հօրից եւ օրհնում Նրան՝ Իր բոլոր գործերի համար: Խնդրուածքների աղօթքը մատուցի՛ր քո նեղութեան վտանգի ժամանակ, իսկ երբ լցուես Նրա բարութեամբ, խոստովանութեամբ գոհացի՛ր քեզ տուողից, եւ այն ժամանակ, երբ միտքդ լի է ուրախութեամբ եւ ցնծութեամբ, օրհնութիւն եւ փա՛ռք տուր: Եւ քո բոլոր աղօթքները թող ընտրողաբար լինեն Աստուծոյ առաջ:

Սբ. Յակոբ Մծբնայ Հայրապետ[2]

---

[2] Սբ. Յակոբ Մծբնեցին (+338) սրբակենցաղ ճգնաւոր էր, բնակւում էր անտառներում ու բարձրաբերձ լեռներում՝ սնուելով միայն վայրի ծառերի պտուղներով ու բանջարեղէնով, հագուստը պատրաստուած էր այծի կոշտ մազից: Յարատեւ աղօթքների եւ ճգնութիւնների միջոցով հասնելով մեծ սրբութեան՝ Յակոբը մարգարէութեան շնորհ ստացաւ Տիրոջից: Որպէս Մծբինի Եպիսկոպոս՝ դարձի բերեց բազում հեթանոսներ, կառուցեց եկեղեցիներ, դպրոցներ:

«Ո՛վ դու մեղաւոր, որչափ կարող ես, բազում աղօթքներով մարտնչի՛ր ընդդէմ սովորական դարձած քո մեղքերի եւ բարեխօսութեան կանչի՛ր սուրբ հրեշտակների դասերը, բոլոր սրբերին եւ արդարներին, մանաւանդ՝ սուրբ Աստուածածնին, առաւել եւս՝ Քրիստոսի սուրբ չարչարանքները. եւ անդադար աղաղակի՛ր առ Հայր, որպէսզի ողորմի քեզ եւ Սուրբ Հոգու միջոցով կարողութիւն տայ քեզ՝ ընդդիմանալու մեղքերին»:

Սբ. Եփրեմ Ասորի[3]

Աղօթել սկսելով՝ թո՛ղ անձդ, կնոջդ ու որդիներիդ, թո՛ղ երկիրը, բարձրացի՛ր երկնքից էլ վեր, թո՛ղ երեւացող ու աներեւոյթ ամէն արարած եւ սկսի՛ր փառաբանել ամէնքի Արարչին: Եւ երբ անզբաղ մտքով փառաբանես Նրան, Սուրբ Գրքից ընտրի՛ր՝ ասելով. «Օրհնում եմ Քեզ, Տէ՛ր՝ երկայնամիտ եւ անոխակալ, որ միշտ ներողամիտ ես իմ՝ յանցաւորիս նկատմամբ: Եւ տո՛ւր մեզ բոլորիս ապաշխարելու կարողութիւն, քանզի լսում եւ անսալով

---

3 Սբ. Եփրեմ Ասորին (306-373թթ.) Սբ. Յակոբ Մծբնեցու աշակերտն է, սրբակենցաղ ճգնակեաց: Գրել է Սուրբ Գրքի մեկնութիւններ, հոգեւոր բանաստեղծութիւններ, աղօթքներ, մեծ ազդեցութիւն ունի աստուածաբանական մտքի պատմութեան մէջ:

ներում ես մեզ, որպէսզի փառաբանենք Քեզ, որ տնօրինում ես մեր ազգի փրկութիւնը»...

Իսկ երբ Սուրբ Գրքից ըստ կարողութեան փառաբանես ու գովեստ մատուցես Աստծուն, այնժամ սկսի՛ր խոնարհութեամբ եւ ասա՛. «Ես արժանի չեմ Քո առջեւ բարբառելու, Տէ՛ր, քանզի յոյժ մեղաւոր եմ»: Թէպէտ անձիդ ապիրատութեան մասին ոչինչ չգիտես, սակայն այդպէ՛ս պէտք է ասես, քանզի ոչ ոք անմեղ չէ, այլ միայն՝ Աստուա՛ծ, քանզի, բազում անգամ մեղանչելով՝ շատ բան չենք ըմբռնում, որի մասին առաքեալն ասում է. «Ինքս ինձ չգիտեմ, սակայն սրանով չեմ արդարանում» (Ա Կրնթ., 4, 4), այսինքն՝ բազում անգամ մեղանչում եմ եւ չեմ ըմբռնում: Այս մասին մարգարէն ասում է. «Չիմացաւ իր յանցանքները» (Յոբ, 35, 15): Եթէ չես ասում, թէ՝ մեղաւոր եմ, ուրեմն չես ատում անձդ, քանզի հէնց միայն «մեղաւոր չեմ» ասելով՝ մեղանչում ես: Բայց, մանաւանդ, ասա՛, թէ՝ մեղաւորներից էլ աւելի՛ յանցաւոր եմ Աստուծոյ պատուիրանների հանդէպ: Այդպէ՛ս է պէտք խորհել ամէն ժամ եւ ասել, թէ՝ անպիտան եմ, նաեւ միմեանց խոնարհութեամբ աւելի մեծարել, քան (սեփական) անձերը: Այսուհետեւ, երկիւղով եւ խոնարհութեա՛մբ մօտեցիր Աստծուն, իսկ երբ մատուցես խոնարհութեան խօսքը, ասա՛. «Գոհանում եմ Քեզանից, Տէ՛ր, քանզի երկայնամտութեամբ ներեցիր ինձ եւ ցայժմ առանց տանջանքների պահեցիր, քանզի, Տէ՛ր, եւս արժանի էի մեծ պատուհաս կրելու եւ Քո կողմից

արհամարուելու: Իսկ Քո անոխակալ մարդասի-
ութիւնը ներողամիտ գտնուեց իմ հանդէպ: Գոհա-
նում եմ Քեզանից, թէպէտ եւ արժանի չեմ երկայ-
նամտութեանդ գովութեանը»: Եւ երբ երկուսն էլ՝
փառաբանութիւնն ու խոնարհութիւնը, կատարես,
այնժամ խնդրի՛ր այն, ինչ որ պէտք է խնդրէիր …

Սբ. Բարսեղ Կեսարացի[4]

Եթէ Աստծուն աղաչես օգնել փորձութեան ժամանակ, եւ չլսի քեզ, մի՛ վհատուիր, քանզի Ինքը քեզանից առաւել գիտի քո օգուտը: Քո խնդրուածքներում Աստծուն մի՛ ասա, թէ՝ վերցրո՛ւ այս ինձանից կամ տո՛ւր ինձ այս, այլ այսպէ՛ս աղօթիր.

«Տէ՛ր Յիսուս, Դո՛ւ ես իմ օգնականը, Քո ձեռքերում եմ, Դո՛ւ գիտես իմ օգուտը, օգնի՛ր ինձ: Մի՛ թող ինձ կորչել իմ մեղքերի մէջ, գթա՛ Քո ստեղծուածին, մի՛ գցիր ինձ Քո աչքից իմ մեղքերի պատճառով, քանզի Քեզ ապաւինեցի: Բժշկի՛ր իմ

---

4 Սբ. Բարսեղ Կեսարացին (329-373թթ.) Եկեղեցու Տիեզերական վարդապետ է, սրբակենցաղ ճգնակեաց, եղել է Կեսարիայի եպիսկոպոս, գրել է դաւանաբանական աշխատութիւններ, որոնք հսկայական ազդեցութիւն են թողել աստուածաբանութեան զարգացման վրայ: Սբ. Բարսեղ Կեսարացին գրել է նաեւ Սբ. Պատարագի մի տեքստ, որը մասամբ պահպանուել է նաեւ հայկական ծէսի Սբ. Պատարագի կանոնում:

անձը, քանզի մեղանչեցի Քո հանդէպ, Քո առջեւ են իմ բոլոր նեղիչները, եւ չկայ ինձ ապաւէն, Տէ՛ր, Քեզանից բացի: Փրկի՛ր ինձ ըստ Քո ողորմութեան, եւ թող ամաչեն բոլոր ինձ վրայ յարձակուածները, որոնք ձգտում են կորցնել իմ անձը, քանզի Դու, Տէ՛ր, ամենակարող ես, եւ Քո՛նն է փառքը յաւիտեանս»:

Սբ. Սերապիոն Եպիսկոպոս[5]

Հնազանդուի՛ր սիրով, աղօթի՛ր յոյսով, աշխատի՛ր հաւատքով եւ կը պայծառանաս երկնային հարսանիքում:

Սբ. Եզնիկ Կողբացի[6]

Ջանա՛ աղօթքի ժամանակ միտքդ խուլ ու համր պահել, անսայթաք մնալ ամէն տեսակ արկածներից, որպէսզի աղօթքդ ընդունելի լինի:

---

5 Սբ. Սերապիոն Եպիսկոպոսը (339-360թթ.) Եգիպտոսի Թմուիսի եպիսկոպոսն էր, անապատական հայր Սբ. Անտոնի աշակերտը, պայքար է մղել աղանդաւորական շարժումների դէմ, գրել դաւանաբանական աշխատութիւններ:

6 Եզնիկ Կողբացին (մօտ 380-450թթ.) Սբ. Մեսրոպ Մաշտոցի աշակերտներից է, ոսկեդարեան աստուածաբանական գրականութեան եւ թարգմանութիւնների ականաւոր հեղինակ: Նրա գրչին է պատկանում «Եղծ աղանդոց» աշխատութիւնը:

Աղօթքը հեզութեան, անբարկութեան, անյիշաչարութեան եւ սիրոյ բխումն է:

Աղօթքը խնդութեան, խաղաղութեան եւ գոհութեան բխումն է՝ դէպի լաւագոյնը:

Աղօթքը տրտմութեան, տարակուսանքների եւ վշտերի հրաժարադեղն ու սփոփանքն է:

Գնա՛, վաճառի՛ր քո ունեցուածքը եւ տո՛ւր աղքատներին եւ, վերցնելով խաչդ, ուրացի՛ր անձդ եւ աշխարհը (Մտթ. 19, 21, 16 24), որպէսզի կարողանաս անզբաղ աղօթել:

Եթէ կամենում ես գովելի կերպով աղօթել, միշտ ուրացի՛ր անձդ եւ, աղօթքի համար բազում նեղութիւններ կրելով, ստուգապէս իմաստասի՛ր:

Անզբաղ աղօթելը մտքի ծայրագոյն վիճակն է, որը միշտ աստուածայինը խոկալն է:

Աղօթքը մտքի համբարձուելն է երկրային իրողութիւններից՝ առ Աստուած:

Զգո՛ն եղիր աղօթքի ժամին՝ միտքդ պահելով մտածութիւններից, եւ քո ներսում լռութի՛ւն պահպանիր, որպէսզի Նա, Ով վշտակից է լինում տգէտներին, քեզ մօտ գայ, եւ այնժամ կը գայ շնորհներով բարգաւաճած աղօթքի պարգեւը:

Չես կարող մաքուր աղօթել՝ պաղատելով մարմնաւոր իրեր, քանզի աղօթքը հեռացնում է այս աշխարհի նիւթական ակնկալութիւններից:

Կապուածը չի կարող ընթանալ, եւ ախտերին ծառայող միտքը չի կարող տեսնել հոգեւոր

ոլորտը, քանզի ներքաշւում եւ տարուբերւում է ախտաւոր մտքերի մէջ եւ մաքուր չի մնում:

Երջանիկ է այն միտքը, որն, անզբաղ աղօթելով, բարձրացնում է իր անձը դէպի Աստուծոյ առաւել փափաքումը:

Երբ, կանգնելով աղօթքի, զգում ես ուրախութիւն, որը վեր է այս աշխարհի բոլոր ուրախութիւններից, այնժամ իսկապէս ձեռք ես բերել սուրբ աղօթքը, որը կատարւում է ի փառս Ամենասուրբ Երրորդութեան այժմ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

Սբ. Նեղոս Սինայեցի[7]

Աղօթքի ժամանակ հեռու չես հրեշտակներից, այլ նրանց հետ ես, որպէսզի նրանց հետ փառաւորես Աստծուն, ինչպէս որ դու նրանց հետ ես միաբանւում, նոյնպէս էլ նրանք քեզ հետ երգակից են լինում աղօթքների եւ օրհնութիւնների ժամանակ:

Սբ. Եղիշէ Վարդապետ[8]

---

7 Սբ. Նեղոսը (+450թ.) ճգնաւոր հայր է՝ յայտնի իր բազմաթիւ ճգնաւորական-խրատական երկերով: Ծնուել է Կոստանդնուպոլսում, աշակերտել՝ Սբ. Յովհան Ոսկեբերանին: Սբ. Նեղոս Սինայեցին շուրջ վեց տասնամեակ ճգնել է Սինա լեռան մի անձաւում: Հայ Եկեղեցու տօնելի սրբերից է: Նրա երկերի մի մասը Ե դարից սկսած թարգմանուել է հայերէն եւ մեծապէս ազդել հայ խրատական-բարեպաշտական գրականութեան զարգացման վրայ:

8 Սբ. Եղիշէն (մօտ 410 - մօտ 470) հայ պատմիչ եւ աստուածաբան է, Սբ. Մեսրոպ Մաշտոցի կրտսեր

Աղօթքն ամրութեան պարիսպ է, հաստատութեան սիւն, հաւատքի հիմք, յուսոյ խարիսխն, առ Աստուած ելնելու սանդուղք: Աղօթքը պարծանքների պսակ է, փրկութեան պատճառ, բարիքների առիթ, համբերութեան մարզիչ, աստուածպաշտութեան ծանօթութիւն, Սուրբ Հոգուն հրաւիրող, ինչպէս վկայում է աղօթքով այս ամէնը գտած ու պայծառացած Կոռնելիոսը (Գործք 10, 1-33): Աղօթքը սանդարամետական դեւերի հալածիչ է, Բելիարին (Դտ., 20, 13) ջախջախող, բանսարկուին կործանող, նրա բոլոր արկածները խափանող եւ կորստեան ամօթ: Եւ քանի որ սատանան գիտի, որ մարդն աղօթելիս շնորհ է ստանում Աստծուց, ուստի ջանում է աղօթքի ժամին ցնորել մարդկանց մտքերը, որպէսզի զրկի շնորհներից, որոնք մարդ ստանում է մաքուր մտքով աղօթելիս:

Ուստի եւ մենք, իմանալով այս, նրան հակառակ հանապազ ջանանք անզբաղ մնալ աղօթքում: Եւ այն ժամին մեր սրտերը մաքրենք չարի բոլոր արկածներից եւ միշտ աղօթենք առանց բարկութեան եւ երկմտութեան: Եւ մանաւանդ սրտանց

աշակերտներից: Հեղինակն է «Վասն Վարդանայ եւ Հայոց Պատերազմին» պատմական գործի եւ այլազան մեկնողական գրականութեան: Մասնակցել է Վարդանանց պատերազմին, ապա նուիրուել ճգնաւորական կեանքին եւ ապրել Մոկաց լեռներում:

աղօթենք թշնամիների համար, որպէսզի մեր աղաչանքն էլ ընդունելի լինի Աստուծոյ մօտ: Եւ յատկապէս աղօթքի ժամին մեր հոգիներում ընդունենք Քրիստոսի սիրոյ հուրը՝ յարատեւ պաղատանքներով արթուն լինելով Նրա առջեւ, առօրեայ հոգսերը թեթեւ համարելով յանուն մշտնջենաւոր բարիքների վայելքի:

Պարտաւոր ենք միմեանց համար աղօթել, օգնել եւ փրկել միմեանց մարմնի եւ հոգու վտանգներից: Քանի որ եթէ մարտընկերներն զգուշանում են ոչ միայն (սեփական) անձի, այլեւ՝ ընկերոջ համար եւ մեռնում նաեւ ուրիշների համար, ո՛րչափ առաւել եւս մենք ենք պարտաւոր հոգեւոր պատերազմում աղօթքներով եւ բազում բարեխօսութիւններով (միմեանց) օգնական լինել, ինչպէս սովորեցինք գլխաւոր առաքեալներ Պօղոսից, Յովհաննէսից եւ տեառնեղբայր Յակոբոսից:

Խոսրով Անձեւացի[9]

Աղօթքն առաւել հարազատ եւ մերձաւոր է Աստծուն, քան ամէն մի առաքինութիւն, քանզի բոլոր միւսները որպէս հանդերձանք եւ պատրաստութիւն

---

9 Խոսրով Անձեւացին (մօտ+964) հայ եկեղեցական գործիչ եւ մատենագիր է: Նրա մասին շատ քիչ տեղեկութիւններ են պահպանուել: Սբ. Գրիգոր Նարեկացու հայրն է: Մեկնել է Սբ. Պատարագը եւ ժամակարգութիւնը:

են Աստուծոյ մօտ մուտք գործելու համար, իսկ սա դէմ-յանդիման խօսակցութիւն է Աստուծոյ հետ:

Սբ. Գրիգոր Նարեկացի[10]

Յաճա՛խ աղօթեցէք, քանզի աղօթքներն են, որ մարդկանց բարձրացնում են առ Աստուած եւ Աստծուն խոնարհեցնում դէպի մարդիկ:

Սբ. Ներսէս Շնորհալի[11]

Ով աղօթելիս մարմնաւոր փառք, մեծութիւն, կամ էլ հարստութիւն է խնդրում Աստծուց,

---

10 Սբ. Գրիգոր Նարեկացին (951-1003թթ.) միջնադարեան Հայ եւ Ընդհանրական Եկեղեցու աստուածաբանական մտքի հսկայ է, սրբակենցաղ վանական, խորհրդապաշտ աղօթարար: Սբ. Գրիգորը գրել է ներբողներ, գանձեր, տաղեր ու մեկնութիւններ: Նրա գլուխգործոցը «Մատեան ողբերգութեան» աղօթագիրքն է՝ «Նարեկը», որը հայ հաւատացեալի համար երկրորդ Սուրբ Գիրք է եւ բժշկութեան դեղ: 2015թ. Հռոմի Ֆրանցիսկոս Սրբազան Քահանայապետը Սբ. Գրիգոր Նարեկացուն հռչակեց Ընդհանրական Եկեղեցու Վարդապետ:

11 Սբ. Ներսէս Շնորհալին (1102-1173թթ.) հայոց կաթողիկոս էր (1166-1173թթ.), աստուածաբան, աղօթագիր, շարականագիր, երաժշտագէտ: Հարստացրել է հայ եկեղեցական ժամերգութիւնները: Ապրել է Կիլիկիայի Հռոմկլայ բերդաքաղաքում, որի պատճառով էլ կոչուել է նաեւ «Կլայեցի»:

այնպիսին բարկացնում է Աստծուն եւ չի հաշ-տեցնում: Այդ ժամանակ նա նման է այն ապշած խելագարին, որը գնաց ողորմած թագաւորի մօտ եւ, արհամարհելով պայծառ ոսկին ու լուսաւոր մարգարիտը, ժահահոտ աղբ խնդրեց թագաւո-րից: Այս պատճառով էլ Տէրն ասաց, թէ՝ «Աղօթե-լիս հեթանոսների պէս շատախօս մի՛ եղէք» (Մտթ. 6, 7): Քանզի նրանք յարութեան յոյս չունեն եւ այս կեանքի մասին են միայն հոգում ու խնդրում: Իսկ դուք արքայութի՛ւնը խնդրէք, քանզի երկնաւոր Հայրը գիտէ ձեր մարմնաւոր կարիքները եւ ձեզ համար կը պատրաստի կերակուր, զգեստ, ինչպէս նաեւ՝ ամէն անհրաժեշտ բան:

Աստուած կամենում եւ ուրախանում է, երբ մենք աղօթում ենք ողջ աշխարհի համար՝ արդար-ների ու մեղաւորների, կենդանիների ու ննջեցեալ-ների, հեռաւորների ու մերձաւորների, առաւել եւս՝ նրանց համար, ովքեր չարիք են կամենում կամ գործում մեր նկատմամբ:

Աղօթքի միջոցով հանենք քէնն ու ոխը մեր մտքից եւ յետո՛յ միայն Աստծուց կարող ենք թողու-թիւն խնդրել մեր յանցանքներին: Արդ, սա՛ է ընդու-նելի աղօթքը, որը հաճելի է Աստուծոյ կամքին:

Աղօթելով՝ մարդ զրուցում է Աստուծոյ հետ եւ հաւասարւում հրեշտակներին: Առաւել եւս այն ժամանակ, երբ ջերմ արծաթափայլ արտասուքը բխելով իջնում եւ լուանում է աչքն ու մօրուքը եւ միեւնոյն ժամանակ ջնջում մարդու ներսում եղած

մեղքերի շարաւը: Ու սիրտը սկսում է փղձկալ եւ ճմլուել եւ բորբոքուել Աստուծոյ սիրոյ կրակով: Ապա միտքը, համբառնալով առ Աստուած, տեսնում է հանդերձեալ աշխարհն ու արդարների հանգիստը: Յիշում է մարդկային ցեղի կործանումը, երբ զրկուեցինք հայրենի ժառանգութիւնից: Մտաբերում է նաեւ իր անձի մեղքերն ու յանցանքները, նաեւ՝ մնացած բոլոր մեղքերը, որոնք կատարւում են աշխարհում: Սիրելի՛, ահա՛ երկրորդ աւազանը, ահա՛ աղօթքի քաղցրահամ ճաշակումն ու ցանկալի թմրութիւնը, այն նման է սերովբէների հիացմանն ու անուշահամ ճաշակմանը, որն ունենում են Աստուածութեան բուրմունքից: Ո՞վ կ,ընդիմանայ արդեօք այդ երանելի պահին, երբ Աստուծոյ այս շնորհները հանդիպեն կամ պատահեն որեւէ մէկին: Երկինքն իր լուսատուներով եւ երկիրն իր բարիքներով չեն կարող հաւասարուել այս վայրկեանին: Ուստի աղաչում եմ՝ չծուլանա՛նք, այլ արիաբար միշտ աղօթե՛նք օր ու գիշեր, քուն թէ արթուն, քայլելիս թէ նստած ժամանակ, առաւօտեան թէ երեկոյեան, աշխատելիս եւ թէ հանգստի պահին, այսինքն՝ միշտ օրհնենք եւ փառաբանենք Աստծուն, որովհետեւ, ո՞վ գիտէ, գուցէ աստուածային այդ շնորհներից մեզ էլ պատահի մի ցանկալի պահ, երբ լոյսի իւղ կը դառնայ մեր լապտերներում:

Աղօթե՛նք անդադար, քանզի սա է անուշահոտ խունկը, որ ծխւում է Աստուծոյ առաջ ոսկէ բուր-վառով, որ հաճելի է Աստծուն: Աղօթքով միշտ բախե՛նք Արարչի գթառատութեան դուռը, եւ Նա կը բացի Իր անմահ առագաստի դուռը: Աղօթքը սանդուղք է երկրից մինչեւ երկինք, լոյս է խաւար ճանապարհին, մնայուն պաշար է մշտնջենաւոր կեանքի համար:

Վարդան Այգեկցի[12]

---

12 Վարդան Այգեկցին (11-12-րդ դդ.) Կիլիկեան Հայաստանի ականաւոր եկեղեցական գործիչ, քարոզիչ, առակագիր է: Նրա հեղինակած առակները ժողովուած են «Աղուէսագիրք» խորագրով գրքում: Գրել է խրատներ, դաւանաբանական «Արմատ հաւատոյ» աշխատութիւնը:

ԱՄԵՆՈՐԵԱՅ ԱՂՈԹՔՆԵՐ

ՏԷՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՕԹՔԸ[13]

ՀԱՅՐ ՄԵՐ,
որ յերկինս ես,
սուրբ եղիցի անուն քո,
եկեսցէ արքայութիւն քո,
եղիցին կամք քո,
որպէս յերկինս եւ յերկրի:
Զհաց մեր հանապազորդ տո՛ւր մեզ այսօր.
եւ թող մեզ զպարտիս մեր,
որպէս եւ մեք
թողումք մերոց պարտապանաց.
եւ մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն,
այլ փրկեա՛ զմեզ ի չարէն:
Զի քո է արքայութիւն եւ զօրութիւն
եւ փառք յաւիտեանս.
Ամէն:

ՀՐԵՇՏԱԿԱՅԻՆ ՈՂՋՈՅՆԸ[14]

Ողջո՛յն քեզ, Մարիա՛մ,

---

13 «Տէրունական» է կոչւում, որովհետեւ Տէր Յիսուս Քրիստոս Ի՛նքն այսպէս սովորեցրեց աղօթել: Տե՛ս՝ Աւետարան ըստ Մատթէոսի, 6, 9-13:

14 Աստուածածնին նուիրուած այս աղօթքը, որը հիմնականում աղօթում ենք Սուրբ Վարդարանի ժամանակ, հայ կաթողիկէ հաւատացեալների ամենասիրելի աղօթքներից մէկն է: Անհերքելի է, որ աղօթքի առաջին մասը կարելի է գտնել դեռեւս 5-6-րդ դարերի հայ սուրբ

Լի շնորհօք, Տէր ընդ քեզ,
Օրհնեա՛լ ես դու ի կանայս,
Եւ օրհնեա՛լ է պտուղ որովայնի քո՝ Յիսուս:
Սրբուհի Մարիա՛մ, Մա՛յր Աստուծոյ,
Բարեխօսեա՛ վասն մեր՝ մեղաւորացս այժմ եւ ի ժամու մահուան մերոյ. Ամէն:

Փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

հայրերի ճառերում: Աղօթքի հայերէն ամբողջական բնագիրն առաջին անգամ տպագրուել է 1539թ.՝ Ամստերդամում, սակայն փաստաթղթերը վկայում են, որ Հայաստանում «Ողջոյն...»-ը աղօթել են շատ վաղուց: Այն համապատասխանում է լատիներէն «Ave Maria, gratia plena...» աղօթքին, որը արեւմտեան կաթողիկէ համայնքներում տարածուած եւ շատ սիրելի է 15-րդ դարից սկսած: Թարգմանուած է եւ կիրառելի է բազում լեզուներով: Այս հրաշագործ, պարզ աղօթքի առաջին մասը հիմնուած է Գաբրիէլ հրեշտակապետի շուրթերով Մարիամին տրուած աւետիսի (Տես՝ Ղկ., 1, 28) եւ Եղիսաբեթի՝ Մարիամին ասած խօսքերի վրայ (Ղկ., 1, 42), իսկ երկրորդ մասն աւելացուել է յետոյ:

ՀԱՒԱՏՈՅ ՀԱՆԳԱՆԱԿ[15]

Հաւատամք ի մի Աստուած՝ Հայրն ամենակալ, յարարիչն երկնի եւ երկրի՝ երեւելեաց եւ աներեւութից: Եւ ի մի Տէր Յիսուս Քրիստոս, յՈրդին Աստուծոյ, ծնեալն յԱստուծոյ Հօրէ՝ միածին, այսինքն՝ յէութենէ Հօր: Աստուած յԱստուծոյ, լոյս ի լուսոյ, Աստուած ճշմարիտ յԱստուծոյ ճշմարտէ, ծնունդ՝ եւ ոչ արարած:

Նոյն ինքն ի բնութենէ Հօր, որով ամենայն ինչ եղեւ յերկինս եւ ի վերայ երկրի՝ երեւելիք եւ անեռեւոյթք: Որ յաղագս մեր մարդկան եւ վասն մերոյ փրկութեան՝ իջեալ ի յերկնից, մարմնացաւ, մարդացաւ, ծնաւ կատարելապէս ի Մարիամայ սրբոյ Կուսէն՝ Հոգւովն սրբով: Որով էառ մարմին, հոգի եւ միտս, եւ զամենայն որ ինչ է ի մարդ, ճշմարտապէս եւ ոչ կարծեօք: Չարչարեալ, խաչեալ, թաղեալ, յերրորդ աւուր յարուցեալ, ելեալ ի յերկինս նովին մարմնովն, նստաւ ընդ աջմէ Հօր: Գալոց է նովին մարմնովն եւ փառօք Հօր՝ դատել զկենդանիս եւ զմեռեալս: Որոյ թագաւորութեանն ոչ գոյ վախճան:

---

15 Հաւատոյ Հանգանակը Ընդհանրական Եկեղեցու հաւատքի դաւանութեան ամփոփումն է, բանաձեւումն է: Հայ Եկեղեցին այն ժառանգել է Նիկիայի (325թ.) եւ Կ.Պոլսի (381թ.) Սուրբ Տիեզերաժողովներից, Սուրբ Հայրերի ձեւակերպումներով: Հաւատոյ Հանգանակը արտասանւում կամ երգւում է Սուրբ Պատարագի, Սուրբ Մկրտութեան խորհրդակատարութիւնների ժամանակ:

Հաւատամք եւ ի սուրբ Հոգին՝ յանեղն եւ ի կատարեալն: Որ խօսեցաւ յՕրէնս եւ ի մարգարէս եւ յԱւետարանս: Որ էջն ի Յորդանան, քարոզեաց յառաքեալսն եւ բնակեցաւ ի սուրբսն:

Հաւատամք եւ ի մի միայն յԸնդհանրական եւ յԱռաքելական Սուրբ Եկեղեցի: Ի մի մկրտութիւն՝ յապաշխարութիւն, ի քաւութիւն եւ ի թողութիւն մեղաց: Ի յարութիւն մեռելոց: Ի դատաստանսն յաւիտենից հոգւոց եւ մարմնոց: Յարքայութիւնն Երկնից եւ ի կեանսն յաւիտենականս:

ՀԱՒԱՏՈՎ ԽՈՍՏՈՎԱՆԻՄ[16]

Ա

Հաւատով խոստովանիմ
Եւ երկիր պագանեմ քեզ,
Հայր եւ Որդի եւ սուրբ Հոգի.
Անեղ եւ անմահ բնութիւն.
Արարիչ հրեշտակաց եւ մարդկան
Եւ ամենայն եղելոց.
Եւ ողորմեա քո արարածոց

---

16 Հայ ժողովրդի համար շատ սիրելի այս աղօթքը համաշխարհային հոգեւոր գրականութեան զարդերից է, հեղինակն է Սբ. Ներսէս Շնորհալին (1102-1173թթ.): Աղօթքը բաղկացած է 24 տներից՝ ըստ օրուայ ժամերի: Կարելի է աղօթել նաեւ առանձին տները՝ ըստ կարիքի:

Եւ ինձ՝ բազմամեղիս:

Բ

Հաւատով խոստովանիմ
Եւ երկիր պագանեմ քեզ,
Անբաժանելի լոյս,
Միասնական սուրբ Երրորդութիւն
Եւ մի Աստուածութիւն,
Արարիչ լուսոյ եւ հալածիչ խաւարի.
Հալածեա ի հոգւոյ իմմէ
Զխաւար մեղաց եւ անգիտութեան.
Եւ լուսաւորեա զմիտս իմ ի ժամուս յայսմիկ՝
Աղօթել քեզ ի հաճոյս
Եւ ընդունիլ ի քէն զխնդրուածս իմ.
Եւ ողորմեա քո արարածոց
Եւ ինձ՝ բազմամեղիս:

Գ

Հայր երկնաւոր Աստուած ճշմարիտ,
Որ առաքեցեր զՈրդիդ քո սիրելի
Ի խնդիր մոլորեալ ոչխարին.
Մեղայ յերկինս եւ առաջի քո.
Ընկալ զիս որպէս զանառակ որդին.
Եւ զգեցո ինձ զպատմուճանն զառաջին՝
Զոր մերկացայ մեղօք,
Եւ ողորմեա քո արարածոց
Եւ ինձ՝ բազմամեղիս:

Դ

Որդի Աստուծոյ Աստուած ճշմարիտ,
Որ խոնարհեցար ի հայրական ծոցոյ

Եւ առեր մարմին ի սրբոյ կուսէն Մարիամայ
Վասն մերոյ փրկութեան՝
Խաչեցար եւ թաղեցար
Եւ յարեար ի մեռելոց
Եւ համբարձար փառօք առ Հայր.
Մեղայ յերկինս եւ առաջի քո.
Յիշեա զիս որպէս զաւազակն՝
Յորժամ գաս արքայութեամբ քով.
Եւ ողորմեա քո արարածոց
Եւ ինձ՝ բազմամեղիս:

Ե

Հոգի Աստուծոյ՝ Աստուած ճշմարիտ,
Որ իջեր ի Յորդանան եւ ի վերնատունն
Եւ լուսաւորեցեր զիս մկրտութեամբ սուրբ աւազա-
նին՝
Մեղայ յերկինս եւ առաջի քո.
Մաքրեա զիս վերստին աստուածային հրով քով՝
Որպէս հրեղէն լեզուօք զառաքեալսն.
Եւ ողորմեա քո արարածոց
Եւ ինձ՝ բազմամեղիս:

Զ

Անեղ բնութիւն,
Մեղայ քեզ մտօք իմովք.
Հոգւով եւ մարմնով իմով.
Մի յիշեր զմեղս իմ զառաջինս՝
Վասն անուանդ քում սրբոյ.
Եւ ողորմեա քո արարածոց
Եւ ինձ՝ բազմամեղիս:

Է

Տեսող ամենայնի
Մեղայ քեզ,
Խորհրդով, բանիւ եւ գործով.
Զնջեա զձեռագիր յանցանաց իմոց
Եւ գրեա զանուն իմ ի դպրութեան կենաց.
Եւ ողորմեա քո արարածոց
Եւ ինձ՝ բազմամեղիս:

Ը

Քննող գաղտնեաց,
Մեղայ քեզ կամայ եւ ակամայ,
Գիտութեամբ եւ անգիտութեամբ.
Թողութիւն շնորհեա մեղաւորիս.
Զի ի ծննդենէ սուրբ աւազանին
Մինչեւ ցայսօր մեղուցեալ եմ
Առաջի աստուածութեանդ քո,
Զգայարանօք իմովք,
Եւ ամենայն անդամօք մարմնոյս.
Եւ ողորմեա քո արարածոց
Եւ ինձ՝ բազմամեղիս:

Թ

Ամենախնամ Տէր,
Դիր պահապան աչաց իմոց
Զերկիւղ քո սուրբ
Ոչ եւս հայել յարատ.
Եւ ականջաց իմոց՝
Ոչ ախորժել լսել զբանս չարութեան.

Եւ բերանոյ իմոյ՝ ոչ խօսել զստութիւն.
Եւ սրտի իմոյ՝ ոչ խորհել զչարութիւն.
Եւ ձեռաց իմոց՝ ոչ գործել զանիրաւութիւն.
Եւ ոտից իմոց՝
Ոչ գնալ ի ճանապարհս անօրէնութեան.
Այլ ուղղեա զշարժումն սոցա
Լինել ըստ պատուիրանաց
Քոց յամենայնի.
Եւ ողորմեա քո արարածոց
Եւ ինձ՝ բազմամեղիս:

Ժ

Հուր կենդանի Քրիստոս,
Զհուր սիրոյ քո, զոր արկեր յերկիր՝
Բորբոքեա յանձն իմ,
Զի այրեսցէ զաղտ հոգւոյ իմոյ.
Եւ սրբեսցէ զխիղճն մտաց իմոց.
Եւ մաքրեսցէ զմեղս մարմնոյ իմոյ.
Եւ վառեսցէ զլոյս գիտութեան քո ի սրտի իմում,
Եւ ողորմեա քո արարածոց
Եւ ինձ՝ բազմամեղիս:

ԺԱ

Իմաստութիւն Հօր Յիսուս,
Տուր ինձ զիմաստութիւն,
Զբարիս խորհել եւ խօսել եւ գործել
Առաջի քո յամենայն ժամ.
Ի չար խորհրդոց՝ ի բանից եւ ի գործոց փրկեա զիս.
Եւ ողորմեա քո արարածոց
Եւ ինձ՝ բազմամեղիս:

ԺԲ

Կամեցող բարեաց Տէր կամարար,
Մի թողուր զիս ի կամս անձին իմոյ գնալ.
Այլ առաջնորդեա ինձ
Լինել միշտ ըստ կամաց քոց բարեսիրաց.
Եւ ողորմեա քո արարածոց
Եւ ինձ՝ բազմամեղիս:

ԺԳ

Արքայ երկնաւոր,
Տուր ինձ զարքայութիւն քո,
Զոր խոստացար սիրելեաց քոց.
Եւ զօրացո զսիրտ իմ
Ատել զմեղս
Եւ սիրել զքեզ միայն
Եւ առնել զկամս քո.
Եւ ողորմեա քո արարածոց
Եւ ինձ՝ բազմամեղիս:

ԺԴ

Խնամող արարածոց,
Պահեա նշանաւ խաչի քո
Զհոգի եւ զմարմին իմ՝
Ի պատրանաց մեղաց,
Ի փորձութեանց դիւաց,
Եւ ի մարդոց անիրաւաց,
Եւ յամենայն վտանգից հոգւոյ եւ մարմնոյ.
Եւ ողորմեա քո արարածոց
Եւ ինձ՝ բազմամեղիս:

ԺԵ

Պահապան ամենայնի Քրիստոս,
Աջ քո հովանի լիցի ի վերայ իմ
Ի տուէ եւ ի գիշերի.
Ի նստել ի տան եւ ի գնալ ի ճանապարհի,
Ի ննջել եւ ի յառնել,
Զի մի՛ երբէք սասանեցայց.
Եւ ողորմեա քո արարածոց
Եւ ինձ՝ բազմամեղիս:

ԺԶ

Աստուած իմ, որ բանաս զձեռն քո
Եւ լնուս զամենայն արարածս
Ողորմութեամբ քով,
Քեզ յանձն առնեմ զանձն իմ.
Դու հոգա եւ պատրաստեա
Զպէտս հոգւոյ եւ մարմնոյ իմոյ
Յայսմհետէ մինչեւ յաւիտեան.
Եւ ողորմեա քո արարածոց
Եւ ինձ՝ բազմամեղիս:

ԺԷ

Դարձուցիչ մոլորելոց,
Դարձո զիս ի չար սովորութեանց իմոց
Ի բարի սովորութիւն.
Եւ բեւեռա ի հոգի իմ զսոսկալի օր մահուն,
Եւ զերկիւղ գեհենոյն,
Եւ զսէր արքայութեան քոյ,
Զի զղջացայց ի մեղաց
Եւ գործեցից զարդարութիւն

Եւ ողորմեա քո արարածոց
Եւ ինձ՝ բազմամեղիս:

ԺԸ

Աղբիւր անմահութեան.
Աղբերացո ի սրտէ իմմէ զարտասուս
ապաշխարութեան
Որպէս պոռնկին.
Զի լուացից զմեղս անձին իմոյ՝
Յառաջ քան զելանելն իմ յաշխարհէս.
Եւ ողորմեա քո արարածոց
Եւ ինձ՝ բազմամեղիս:

ԺԹ

Պարգեւիչ ողորմութեան,
Պարգեւեա ինձ
Ուղղափառ հաւատով,
Եւ բարի գործով,
Եւ սուրբ մարմնոյ
Եւ արեան քո հաղորդութեամբ
Գալ առ քեզ.
Եւ ողորմեա քո արարածոց
Եւ ինձ՝ բազմամեղիս:

Ի

Բարերար Տէր,
Հրեշտակի բարւոյ յանձն արասցես զիս՝
Քաղցրութեամբ աւանդել զհոգի իմ.
Եւ անխռով անցուցանել ընդ չարութիւն այսոցն՝
Որ են ի ներքոյ երկնից.
Եւ ողորմեա քո արարածոց

Եւ ինձ՝ բազմամեղիս:

ԻԱ

Լոյս ճշմարիտ Քրիստոս,
Արժանաւորեա զհոգի իմ ուրախութեամբ տեսա-
նել
Զլոյս փառաց քոց
Ի կոչման աւուրն
Եւ հանգչել յուսով
Բարեաց յօթեւանս արդարոց
Մինչեւ յօր մեծի գալստեան քո.
Եւ ողորմեա քո արարածոց
Եւ ինձ՝ բազմամեղիս:

ԻԲ

Դատաւոր արդար,
Յորժամ գաս փառօք Հօր դատել
Զկենդանիս եւ զմեռեալս՝
Մի մտաներ ի դատաստան
Ընդ ծառայի քում,
Այլ փրկեա զիս ի յաւիտենական հրոյն
Եւ լսելի արա ինձ
Զերանաւէտ կոչումն արդարոց՝
Յերկնից արքայութիւնդ.
Եւ ողորմեա քո արարածոց
Եւ ինձ՝ բազմամեղիս:

ԻԳ

Ամենողորմ Տէր,
Ողորմեա ամենայն հաւատացելոց ի քեզ՝
Իմոց եւ օտարաց,

Ծանօթից եւ անծանօթից,
Կենդանեաց եւ մեռելոց.
Շնորհեա եւ թշնամեաց իմոց
Եւ ատելեաց զթողութիւն,
Որ առ իս յանցանաց.
Եւ դարձո զնոսա ի չարեացն,
Զոր ունին վասն իմ,
Զի ողորմութեան քում արժանի եղիցին.
Եւ ողորմեա քո արարածոց
Եւ ինձ՝ բազմամեղիս:

ԻԴ

Փառաւորեալ Տէր,
Ընկալ զաղաչանս ծառայի քո՝
Եւ կատարեա ի բարի զխնդրուածս իմ
Բարեխօսութեամբ սրբուհւոյ Աստուածածնին,
Եւ Յովհաննու Մկրտչին,
Եւ սրբոյն Ստեփանոսի Նախավկային,
Եւ սրբոյն Գրիգորի մերոյ Լուսաւորչին,
Եւ սրբոց առաքելոց եւ մարգարէից,
Եւ վարդապետաց, եւ մարտիրոսաց
Եւ սրբոց հայրապետաց, եւ ճգնաւորաց
Եւ կուսանաց, եւ ամենայն սրբոց քոց,
Երկնաւորաց եւ երկրաւորաց,
Եւ քեզ փառք եւ երկրպագութիւն
Անբաժանելի սուրբ Երրորդութեանդ,
Յաւիտեանս յաւիտենից, ամէն:

ԱՌԱՒՕՏԵԱՆ ԱՂՕԹՔՆԵՐ

Տէ՛ր, եթէ շրթներս բացես, բերանս կ'երգի օրհնութիւնը քո:

Օրհնեա՛լ համագոյ եւ միասնական անբաժանելի Սուրբ Երրորդութիւնն՝ Հայր եւ Որդի եւ Հոգի սուրբ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

Ամենասուրբ Երրորդութիւ՛ն եւ մի Աստուածութիւ՛ն, անբաւ գոհութիւն եւ շնորհակալութիւն եմ մատուցում Քեզ, որ ինձ՝ անարժանիս, ողջ առողջ պահեցիր մինչեւ այսօր եւ հասցրեցիր այս առաւօտեան լոյսին:

Փափաքում եմ քեզ համար միայն ապրել: Քեզ եմ նուիրում բոլոր մտածումներս, խօսքերս, գործերս ու հոգսերս:

Դու ինձ պահի՛ր այսօր երեւելի եւ աներեւոյթ թշնամիներից, բոլոր փորձանքներից: Շնորհք տուր, որ այսօր առանց մեղքի անցկացնեմ եւ ամէն բանում Քո կամքը կատարեմ. ամէն:

ԱՂՕԹՔ՝ ՅԻՍՈՒՍԻՆ

Յիսուս Փրկիչ, սիրում եմ Քեզ,
Հոգիս մատուցում եմ Քեզ՝ որպէս ողջակէզ:

Երկրպագելի Յիսու՛ս, ուզում եմ ամբողջ սրտով հետեւել ու նմանուել Քեզ, որքան որ հնարաւոր է, լինել Քեզ նման հեզ, խոնարհ, պարկեշտ, ջերմեռանդ, համբերող, եղբայրասէր, անձնուէր:

Այսօր յատկապէս պէտք է ջանամ որեւէ սխալ չանել, մանաւանդ չկրկնել վատ սովորութիւններս: Սրտանց փափաքում եմ ամբողջովին ուղղել ինքս ինձ:

ԱՂՕԹՔ՝ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱՄՕՐԸ

Ո՛վ անուշ Մայր, կոյս Մարիա՛մ,
Մարմինս, հոգիս քեզ՛ եմ նուիրում:

Սրբուհի եւ Կոյս Աստուածածին Մարիա՛մ, Մայր իմ եւ Պաշտպան իմ, ինքս ինձ յանձնում եմ Քո առաջնորդութեանը եւ, բոլորովին վստահ, դիմում եմ ողորմութեանդ: Նեղութեան րոպէներին պաշտ-պանի՛ր ինձ, վշտերիս մէջ մխիթարի՛ր, պաշտելի Որդուդ առջեւ բարեխօսի՛ր ինձ համար, որպէսզի անվտանգ հասնեմ նպատակիս:

ԱՌԱՒՕՏ ԼՈՒՍՈՅ[17]

Առաւօտ լուսոյ,
Արեգակն արդար,
Առ իս լոյս ծագեա:

---

[17] Շարական՝ հեղինակութեամբ Սբ. Ներսէս Շնորհալու: Երգւում է բոլոր տօնական օրերին՝ Գիշերային ժամերգութեան ժամանակ: Կարելի է նաեւ առանձին աղօթել բոլոր կիրակիներին եւ տօնական օրերին:

Բըղխումն ի Հօրէ,
Բըղխեա ի հոգւոյս,
Բան քեզ ի հաճոյս։

Գանձդ ողորմութեան,
Գանձիդ ծածկելոյ
Գըտող զիս արա։

Դուռն ողորմութեան,
Դաւանողիս բաց,
Դասեցո վերնոցն։

Երրեակ միութիւն,
Եղելոց խնամող,
Եւ ինձ ողորմեա։

Զարթիր, Տէր, յօգնել,
Զարթո ըզթմբրեալս,
Զուարթնոց նըմանել։

Էդ Հայր անսկիզբն,
Էակից Որդի,
Է միշտ սուրբ Հոգի։

Ընկալ զիս, գըթած,
Ընկալ, ողորմած,
Ընկալ, մարդասէր։

Թագաւոր փառաց,
Թողութեանց տուող,
Թող ինձ զյանցանս:

Ժողովող բարեաց,
Ժողովեա եւ զիս
Ժողովս անդրանկաց:

Ի քէն, Տէր, հայցեմ,
Ի մարդասիրէդ,
Ինձ բժշկութիւն:

Լեր կեանք մեռելոյս,
Լոյս խաւարելոյս,
Լուծանող ցաւոյս:

Խորհրդոց գիտող,
Խաւարիս շնորհեա
Խորհուրդ լուսաւոր:

Ծնունդ Հօր ծոցոյ,
Ծածկելոյս ստուերաւ
Ծագեա լոյս փառաց:

Կենարար փրկիչ,
Կեցո զմեռեալս,
Կանգնեա զգլորեալս:

Հաստեա հաւատով,
Հաստատեա յուսով,
Հիմնեցո սիրով։

Զայնիւս աղաչեմ,
Զեռօքս պաղատիմ,
Զիր բարեաց շնորհեա։

Ղամբարմամբ լուսոյ,
Ղեկավար ճարտար,
Ղօղեալս ամրացո։

Ճառագայթ փառաց,
Ճանապարհ ինձ ցոյց,
Ճեմել ի յերկինս։

Միածինդ Հօր,
Մոյծ զիս յառագաստ
Մաքուր հարսանեացդ։

Յորժամ գաս փառօք
Յահագին աւուրն,
Յիշեա զիս, Քրիստոս։

Նորոգող հնութեանց,
Նորոգեա եւ զիս,
Նորոգ զարդարեա։

Շնորհատու բարեաց,
Շնորհեա զքաւութիւն,
Շնորհեա զթողութիւն:

Ուրախացո, Տէր,
Ոգւոյս փրկութեամբ,
Ոյր վասն եմ ի սուգ:

Չար մըշակողին,
Չար սերմանց որ յիս՝
Չորացո զպըտուղ:

Պարգեւիչ բարեաց,
Պարգեւեա իմոց
Պարտեաց թողութիւն:

Ջուր շնորհեա աչացս,
Ջերմ հեղուլ զարտօսր,
Ջնջել զյանցանս:

Ռետինըդ քաղցու,
Ռամ հոգւոյս արբո,
Ռահ ցոյց ինձ լուսոյ:

Սէր անուն Յիսուս,
Սիրով քով ճըմլեա,
Սիրտ իմ քարեղէն:

Վասըն գըթութեան,
Վասն ողորմութեան,
Վերըստին կեցո:

Տենչալի տեսլեամբ
Տուր ինձ յագենալ,
Տէր Յիսուս Քրիստոս:

Ռաբուն երկնաւոր,
Ռոտեա զաշակերտս
Ռամից երկնայնոց:

Ցօղ արեան քո, Տէր,
Ցօղեա ի հոգիս,
Ցընծասցէ անձն իմ:

Իիւծեալըս մեղօք,
Իիւծեալ աղաչեմ,
Իիւսեա յիս բարիս:

Փրկիչ բոլորից,
Փութա զիս փրկել
Փորձութեանց մեղաց:
Քաւիչ յանցանաց,
Քաւեա զօրինաբանս,
Քեզ երգել զփառս:

Աստուածածնին բարեխօսութեամբ.
Յիշեա՛, Տէր եւ ողորմեա՛:

ԱՇԽԱՐՀ ԱՄԵՆԱՅՆ[18]

Աշխարհ ամենայն,
Առ իս նայեցեալ,
Ախտակից լերուք:

Բանամ ըզշըրթունս,
Բարբառիմ լեզուաւս,
Բողոքեմ զանձնէ:

Գող եղէ մեղաց,
Գըտող կորստեան,
Գուբ ինձ փորեցի:

Դաւեցի զանձն իմ,
Դաւաճանեցի,
Դարան գործեցի:

Երբեմն էի լոյս
Եւ այժմ եմ խաւար
Եւ ստուեր մահու:

---

18 Երգ զղջման եւ խոստովանութեան՝ հեղինակութեամբ Սբ. Ներսէս Շնորհալու: Երգւում է Գիշերային ժամերգութեան ժամանակ՝ սրբոց օրերին՝ երկուշաբթի, երեքշաբթի, հինգշաբթի եւ շաբաթ օրերին: Կարելի է նաեւ առանձին աղօթել նոյն կարգով:

Զիա՛րդ պատմեցից
Զթիւ մեղաց իմոց,
Զի բազում են յոյժ։

Էրկինք եւ երկիր,
Էկայք, ողբացէք
Էղկելի զանձն իմ։

Ընտրեցի ըզչարն,
Ընկալայ կամաւ
Ըզհոյլըս մեղաց։

Թաթաւիմ տըղմով,
Թաւալիմ ի մեղս,
Թօթափիլ չկարեմ։

Ժանտ ախտիւ լըցեալ,
Ժահահոտ եղէ
Ժամանակ բազում։

Ի բաց մեկնեցայ
Ի սուրբ խորհըրդոց,
Ի բարեաց գործոց։

Լաւ վարկաւ անձն իմ,
Լուսոյն հեռանալ,
Լինել ընդ խաւար։

Խորհուրդըք չարին
Խաբեն ըզհոգիս,
Խորասոյզ առնեն։

Ծածկեն անդնդօք,
Ծիծաղին գլորմամբս,
Ծանակ զիս առնեն։

Կամաւ կորացայ,
Կարկամեալս անձամբ,
Կանգնել ոչ կարեմ։

Հուր մեղաց կիզող,
Հըրդեհեաց որ յիս,
Հոգեւոր բարիս։

Ձաղկեցայ մեղօք,
Ձաղեցին տեսողք,
Ձանձրացաւ հոգիս։

Ղեղի դառնութեան
Ղօղեալ ի սըրտիս,
Ղամբար իմ շիջաւ։

Ճաշակմամբ մեղաց
Ճաշեցի զմահ,
Ճոխս աղքատացայ։

Մեռեալ եմ հոգւով,
Մոլորեալ մըտօք,
Միայն կամ մարմնովս։

Յորոգայթ մահու
Յորսողին անկայ,
Յաղթեցայ յախտից։

Նետից թշնամւոյն
Նըշաւակ եղէ,
Նոր միշտ խոցոտիմ։

Շուրջ պատեալ զինեւ
Շունք բազումք եղեն,
Շաղախին արեամբս։

Որս եղէ չարին,
Ուռկանաւ մեղաց
Որսացաւ զանձն իմ։

Չարաչար վըշտօք
Չարչարի անձն իմ,
Չունիմ դադարումն։

Պարտապան գըտայ
Պարտուց յանցանաց,
Պարտեալս ի մեղաց։

Ջանամ զըղջանալ,
Ջերանիմ դարձեալ,
Ջեռնում հրով մեղաց:

Ռաբբի կոչեցայ,
Ռակայ անուանիմ
Ռամկական վարուք:

Սիրով ցանկութեան,
Սաստիկ բարկութեան,
Սիրտ իմ խոցեալ է:

Վիրօք յանցանաց
Վըշտանայ հոգիս.
Վարանեալ շրջիմ:

Տիրեցին ինձ չարք,
Տարագիր հանին
Տիրական գըրկացն:

Ռաբունւոյն բարւոյ
Ռախճական ձայնին
Ռոտինս ոչ լըւայ:

Ցանկութիւն չարեաց
Ցանկալի դիմօք
Ցաւեցոյց զաչս իմ:

Իիւրաքանչիւրոց
Իիւսմամբ խուռն ախտից,
Իիւծեալ է հոգիս:

Փութացիր, անձն իմ,
Փախչել ի չարեաց,
Փափաքել բարեաց:

Քեզ միշտ մերձ ծանիր,
Քուն մահու եկեալ,
Քննող դատաւոր:

Աստուածածնին բարեխօսութեամբ.
Յիշեա՛, Տէր, եւ ողորմեա՛:

ԱՂՕԹՔ ՃԱՇԻՑ ԱՌԱՋ

Օրհնեա՛լ Տէր մեր Յիսուս Քրիստոս. Ամէն:
Հայր մեր ... :
Ճաշակեսցուք խաղաղութեամբ զկերակուրս, որ պարգեւեալ է մեզ ի Տեառնէ. օրհնեալ է Տէր ի պարգեւս իւր. Ամէն:

ԱՂՕԹՔ ՃԱՇԻՑ ՅԵՏՈՅ

Փա՛ռք կերակրողին տիեզերաց, որ զմեզ կերակրեաց եւ լիացոյց. նմա փա՛ռք յաւիտեանս. Ամէն:

ԵՐԵԿՈՅԵԱՆ ԱՂՕԹՔՆԵՐ

(*Մխիթար Աբբահօր աղօթագրքից*)

Աստուա՛ծ իմ, անբաւելի բարութիւն, սրտանց շնորհակալ եմ այն ամէն բարիքների համար, որ պարգեւել ես ինձ՝ անարժանիս, իմ կեանքի բոլոր օրերում, ու մանաւանդ՝ այսօր: Քո մարդասիրութեամբ խնամել ես ինձ, պահպանել՝ բազում վտանգներից, սնուցել հոգեւոր ու մարմնաւոր կերակուրներով, եւ առողջ ու կենսունակ՝ հասցրել ինձ երեկոյեան այս ժամին:

Օրհնութիւ՛ն եւ փա՛ռք՝ Քո մեծվայելչութեան, երկնքում եւ երկրի վրայ, Քո բոլոր արարածներից եւ ընտրեալներից, յաւիտեանս. ամէն:

Եւ արդ, Տէ՛ր ամենակալ, եթէ այսօր քո առաջ ինչ որ մի բարի բան գործեցի, այն Քեզանից է. եւ Քեզանից ստացուածը քեզ եմ մատուցում: Իսկ եթէ ինչ որ մի չար բան գործեցի, ապա ինձանից է: Ուստի, աղաչում եմ, բա՛ց արա իմ միտքը, որպէսզի ճանաչեմ իմ յանցանքները, որ գործել եմ այսօր քո առաջ, մտածողութեամբ, խօսքերով, գործով եւ զանցառութեամբ:

Քեզ եմ յանձնո՛ւմ, Տէր, իմ հոգին ու մարմինը:

Ո՛վ Մայր Աստուծոյ, եւ դու՝ պահապան հրեշտակ իմ, եւ դուք՝ բոլոր սրբերդ, որ անդադար փառաբանում էք Տիրոջը, դուք խնամեցէ՛ք ինձ այս գիշեր՝ խաղաղ քնով, Աստուծոյ բարեգութ հովանու ներքոյ:

Լոյս տուր, Տէ՛ր իմ աչքերին, որպէսզի երբեք չննջեմ մահուան քնով:

ԱՂՕԹՔ՝ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Ո՜վ բարեգութ Յիսուս, Քո ազնուագութ պաշտպանութեանն եմ յանձնում հայրիկիս ու մայրիկիս, ովքեր անհուն զոհաբերութիւններ են արել ինձ համար:

Արժանի արա՛ նրանց քո մասնաւոր ողորմածութեան, առատօրէն յատուցի՛ր նրանց՝ ինձ արած բարիքների փոխարէն: Պարգեւի՛ր նրանց խաղաղ եւ երջանիկ կեանք, թող լինեն քաջառողջ եւ լի՝ Քո սուրբ շնորհներով: Թո՛ղ որ իմ որդիական պարտականութիւնների անթերի կատարումով լինեմ նրանց մխիթարութեան առարկան, մնամ միշտ յարգալիր ու հնազանդ՝ նրանց հանդէպ: Արժանի արա՛ նրանց Քո Երկնային Արքայութեանը, որպէսզի միասին փառաբանենք եւ օրհնենք Քեզ յաւիտեանս, յաւիտենից. Ամէն:

ԱՂՕԹՔ՝ ՊԱՀԱՊԱՆ ՀՐԵՇՏԱԿԻՆ

Ո՜վ իմ բարի հրեշտակ, նախախնամութիւնն ինձ յանձնել է քեզ: Գիտեմ, որ դու շարունակ ինձ հետ ես, սիրում ես ինձ, գուրգուրում եւ հսկում ես ինձ վրայ, որ չշեղուեմ ճանապարհից, խրատում

ես, որ բարին գործեմ եւ չարից հեռու մնամ: Ո՛վ գիտէ՝ որքա՛ն փորձանքներից ես ազատել ինձ: Շնորհակալ եմ քեզ՝ այդ բոլորի համար, բարի հրեշտակս, յատկապէս, քո՝ այսօրուայ օգնութիւնների համար: Եւ հիմա՝ քնելուց առաջ, խնդրում եմ՝ գեղեցիկ թեւերդ տարածի՛ր ինձ վրայ եւ մի՛ թող, որ չար ոգին ինձ վնասի, որպէսզի արթնանամ բարի տրամադրութիւններով եւ վաղուայ օրս սկսեմ Աստծոյ սուրբ կամքի համաձայն՝ նրա հրամաններն անշեղ կատարելով. Ամէն:

ՔՆՆՈՒԹԻՒՆ ԽՂՃԻ, ԱՊԱ՝ ԱՂՕԹՔ ԶՂՋՄԱՆ[19]

1.

Ի՞նչ արեցի այսօր Աստծոյ համար,

ա) Աղօթեցի՞ այն աղօթքները, որ որոշել եմ ասել ամէն օր, կամ մասնակցեցի արդեօ՞ք Սբ. Պատարագի (եթէ, անշուշտ, կայ հնարաւորութիւն՝ ամէն օր մասնակցելու):

բ) Ի՞նչ սիրոյ գործեր արեցի ուրիշների համար (նիւթական օգնութիւն, կամ բարոյական աջակցութիւն, մխիթարական խօսք, աղօթք, պարզապէս

---

[19] Քնելուց առաջ լաւ կը լինի կատարել խղճի քննութիւն՝ մտածելով օրուայ ընթացքում կատարած լաւ եւ վատ գործերի մասին, ապա, եթէ կայ գիտակցութիւն սխալի եւ կայ անկեղծ զղջում, ասել այս զղջման աղօթքը:

լսել ուրիշին, երբ պատմում է իր դժուարութիւն-ների մասին), կամ ի՞նչ արեցի Եկեղեցու համար:

2.

Ի՞նչ մեղքեր, սխալներ գործեցի գիտակցաբար կամ ակամայ: Ո՞ւմ վիրաւորեցի. Աստծո՞ւն, ծնող-ների՞ս, ընկերների՞ս, ուրիշների:

ա) Ի՞նչ հետեւանքներ ունեցան վատ արարք-ներս:

բ) Ինչպէ՞ս կարող եմ ուղղել հետեւանքները եւ հաշտուել Աստծոյ, մերձաւորի եւ ինքս ինձ հետ:

գ) Կատարելո՞ւ եմ արդեօք խոստովանութիւն կամ կարո՞ղ եմ ընդունել Սբ. Հաղորդութիւնը՝ առանց խոստովանութեան:

ՁՂՋՄԱՆ ԱՂՕԹՔ՝ ՕՐՈՒԱՅ ՎԵՐՋՈՒՄ

Ձղջում եմ, Տէ՛ր, այնչափ վատ գործերի համար, որ արել եմ այսօր՝ արհամարհելով քո անբաւ բարութիւնը: Յանուն Քո սիրոյ, խոստա-նում եմ այլեւս չմեղանչել, մանաւանդ զգուշանալ ծանր մեղքերից ու նրանց վտանգներից: Եւ քանզի ես տկար եմ, Դո՛ւ, Տէ՛ր, պարգեւի՛ր ինձ Քո սուրբ շնորհը, որպէսզի կարողանամ յաղթահարել մեղ-քի նկատմամբ հակումներս:

Քեզ եմ յանձնում, Տէ՛ր, իմ հոգին ու մարմինը:

Ո՛վ Մայր Աստուծոյ, եւ դու՝ պահապան հրեշ-տակ իմ, եւ դուք՝ բոլոր սրբերդ, որ անդադար փառաբանում էք Տիրոջը, դուք խնամեցէ՛ք ինձ այս գիշեր՝ խաղաղ քնով, Աստուծոյ բարեգութ հովա-նու ներքոյ:

Հայր մեր…

Ողջո՛յն քեզ, Մարիա՛մ…

Փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. Ամէն:

ԱՂՕԹՔ՝ ԱՇԽԱՏԱՆՔ ՍԿՍԵԼՈՒՑ ԱՌԱՋ

Զգործս ձեռաց մերոց ուղիղ արա՛ ի մեզ, Տէ՛ր, եւ զգործս ձեռաց մերոց աջողեա՛ մեզ. Ամէն: (Սղմ. 90, 7)

ԱՂՕԹՔ ՃԱՆԱՊԱՐՀ ԳՆԱԼՈՒՑ ԱՌԱՋ

Տէ՛ր, ուղղեա՛ զգնացս մեր ի ճանապարհս խաղաղութեան: Տէ՛ր, ուղղեա՛ եւ առաջնորդեա՛ ամենայն հաւատացելոց՝ գնալ յարդարութեան ճանապարհն եւ ի կեանսդ յաւիտենից. Ամէն:



ՍՈՒՐԲ ՀԱՅՐԵՐԻ ԱՂՕԹՔՆԵՐ



Փրկի՛չ աշխարհի Քրիստոս, աղաչում եմ Քեզ, նայի՛ր ինձ եւ ողորմի՛ր ինձ, փրկի՛ր ինձ իմ բազում անօրինութիւններից, քանզի անարգեցի բոլոր բարիքները, որ շնորհեցիր ինձ իմ մանկութիւնից ի վեր: Ինձ՝ տխմարիս, տգէտիս եւ յիմարիս, դարձրեցիր գիտութեամբ լի մի անօթ, Քո շնորհն առատացաւ իմ մէջ, յագեցրեց իմ քաղցն ու զովացրեց իմ ծարաւը, լուսաւորեց իմ խաւարած միտքը, թափառումներից հաւաքեց իմ խորհուրդները եւ լցրեց իմ սիրտը: Այժմ երկրպագում եւ աղաչում եմ, ծունկի գալիս եւ հայցում՝ վկայելով Քո բարերարութեան մասին, կատարի՛ր ինձ համար Քո շնորհի խոստումը եւ պահի՛ր այն Քո գանձի մէջ, որպէսզի դարձեալ տաս ինձ այն Օրը:

Մի՛ բարկանայ ինձ վրայ, Մարդասէ՛ր, քանզի չեմ դիմանում Քո սպառնալիքներին: Ուստի թախանձելով աղաչում եմ, քանզի չափից առաւել առատացաւ (շնորհն) իմ մէջ, քանի որ լեզուս տկարացաւ՝ չկարողանալով խօսել Քո շնորհի մասին: Սարսափեց նաեւ իմ միտքը՝ չտանելով (նրա) ալիքների բազմութիւնը:

Մի՛ յիշի՛ր իմ անօրէնութիւնները, յանդգնում եմ հայցել՝ տո՛ւր ինձ իմ խնդրուածները, եւ

Յայտնութեան օրն իմ օթեւանը թող օրհնուի Քո Հօր կողմից: Շնորհի՛ր ինձ, Քրիստո՛ս, իմ հայցուածները, քանզի միայն Դու ես ինձ կեանք տուողը: Եւ Քեզ փա՛ռք յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Սբ. Գրիգոր Լուսաւորիչ

ԱՍՏՈՒԱ՛Ծ ԵՒ ՏԷ՛Ր, կեա՛նք եւ արարի՛չ, ողորմա՛ծ, գթա՛ծ, լո՛յս, երկայնամի՛տ, անոխակա՛լ, մարդասէ՛ր, ամենագո՛ւթ, բարեբանեա՛լ, դարա՛ն ամրութեան, պատսպարա՛ն վստահութեան, բարութի՛ւն աննենգ, ճառագա՛յթ անխաւար, քաւի՛չ մեղքերի, բուժի՛չ վէրքերի, անհասանելիների հնա՛րք, անմատչելիներին՝ մերձաւո՛ր, անյուսութեան ե՛լք, անունդ խոստովանուած՝ Աստծոյ Որդի. եւ Քեզ հետ հզօր եւ ահաւոր Հօրդ եւ Քեզ հետ երկրպագելի ամենակալ Հոգուդ փա՛ռք եւ պաշտամունք գոհաբանութեան, յաւիտեանս. Ամէն:

Սբ. Գրիգոր Նարեկացի,
Մատեան ողբերգութեան, Բան ՁԹ

ԱՂՕԹՔ՝ ՄԻԱԾԻՆ ՈՐԴՈՒՆ

Ամէն կողմից տարակուսանքներով շրջապատուած սրտով պղծուածներս եւ ունկնդրութեան կարօտեալներս Քեզ ենք նայում, մեր տկար բնութիւնը կրած Քահանայապե՛տդ Յիսուս: Ո՛վ Դու,

որ մեզ համար մեղապարտ եղար, որպէսզի մենք Քեզանով արդարանանք: Ո՛վ Դու, որ մեզ համար երկրաւոր եղար, որպէսզի մենք Քեզանով երկնաւորներ լինենք: Ո՛վ Դու, որ մեզ համար հաց եղար, որպէսզի մենք, Քեզ ճաշակելով, սրբուենք: Տո՛ւր Քո ցաւերով լի Մարմինը՝ իբրեւ ամենայն սրտի սրբարար կերակուր: Մատռուակի՛ր Քո Արեան անմեղ վտակը՝ կաթեցնելով ի յագուրդ անմեղութեան մարդկանց որդիների: Մեկնի՛ր աշխարհի ծովում թաղուածներիս Քո փրկական Խաչը՝ առ Քեզ վեր հանող: Կարօտեցինք շնորհիդ, սփռի՛ր, լքուած մնացինք գործերից, քաւի՛ր, խարխափում ենք խաւարում, ճառագայթի՛ր, ընկանք հաւատից, հաստատի՛ր: Դո՛ւ ես յոյս, Դո՛ւ ես լոյս, Դո՛ւ ես կեանք, Դո՛ւ ես քաւութիւն, Դու ինքն իսկ՝ անմահութի՛ւն: Քեզ ենք սպասում Քո շնորհնե-րին ապաւինողներս, Քեզանից փրկութիւն կստանան կարօտ Քո Մարմնին խառնուածները, Քեզ ունի որպէս քաւիչ քահանայ Քո Արեամբ գնուած Քո հօտը: Նայի՛ր ամենքին, սփոփի՛ր մեր տարակուսանքները Քո չարչարանքներով, հանդարտեցրո՛ւ մեր խռովութիւնները Քո խաղաղութեամբ, հանգստացրո՛ւ մեր յոգնութիւնները Քո օթեւաններում, ուր Դու գնացիր, ո՛վ Տէր, եւ խոստացար: Արժանացրո՛ւ իւրայիններիդ փառաւորել Քեզ՝ այդտեղ Հօր եւ Սուրբ Հոգու հետ յաւիտեանս. ամէն:

Սբ. Ներսէս Լամբրոնացի

ԱՂՕԹՔ՝ ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒՆ

Աղաչում եմ ամենազօր Հոգուդ անփոփոխելի տէրութեանը, առաքի՛ր ցօղը Քո քաղցրութեան եւ բարեգործի՛ր հոգուս եւ զգայութեան վրայ իշխող (մտքիս) մէջ՝ Քո բազմապարգեւ ողորմութեան ամենալից շնորհներով: Եւ հերկի՛ր կարծրացած մարմնեղէն սրտիս բանական անդաստանը, որ կարող լինի պտղաբերելու սերմդ հոգեւոր: Խոստովանում ենք՝ Քո ամէնիմաստ էութեամբ, որ ծաղկում եւ աճում են մեր մէջ պարգեւներդ բոլոր: Դու ես ձեռնադրում առաքեալներին, լցնում մարգարէներին, ուսուցանում վարդապետներին, խօսեցնում համրերին եւ բացում խուլերի ականջները փակ, ինչպէս ազգակիցը Քո, էակիցը Հօր՝ անդրանիկ Որդին, Քո գործակցութեամբ իրագործելով այս բոլորը, Քեզ Հօր իսկութեան հաւասարակից Աստուած հռչակեց: Շնորհի՛ր եւ ինձ՝ մեղաւորիս համարձակութեամբ խօսել կենդանարար խորհուրդն աւետեաց Աւետարանիդ, արագաթռիչ մտքի ընթացքով հետեւել քոյաշունչ Կտակարանների անհուն ասպարէզներին: Եւ երբ փորձեմ ճառել խօսքիդ մեկնութեան մասին, թող նախաժամանի առ ինձ գթութիւնը Քո՝ իր ժամանակին խօսելով իմ մէջ արժանին, պիտանին եւ Քեզ հաճելին՝ ի փառս եւ ի գովեստ Քո Աստուծութեան ու ի կատարեալ շինութիւն Կաթողիկէ Եկեղեցւոյ: Կարկառի՛ր ինձ ամենամերձ աջդ եւ զօրացրո՛ւ ինձ գթութեանդ

շնորհներով, փարատի՛ր իմ մտքից մոռացութեան մթին մէգը՝ ցրելով նրա հետ խաւարը մեղքի, որպէսզի խորհուրդների արթնութեամբ այս երկրաւոր կենցաղից ի վեր բարձրանամ: Լուսաւորի՛ր վերստին իմ մէջ, ով Հզո՛ր, աստուածգիտութեան հրաշքի ծագումն անստուեր, որպէսզի արժանի լինեմ ուսանելու եւ ուսուցանելու՝ որպէս բարի օրինակ աստուածասէր լսողներին: Եւ Քեզ ամենայն փա՛ռք ամէն ինչում, Ամենակալ Հօր եւ Միասին, բարերար Որդու հետ՝ այժմ եւ միշտ եւ անվախճան յաւիտեաններում. Ամէն:

Սբ. Գրիգոր Նարեկացի, Բան ԼԴ

ԱՂՕԹՔ ԱՊԱՇԽԱՐՈՒԹԵԱՆ

Տէ՛ր երկնքի եւ երկրի՝ Յիսուս Քրիստոս, իշխա՛ն կեանքի եւ մահուան, դատաւո՛ր կենդանիների եւ մեռեալների, յո՛յս եւ ապաւէ՛ն իմ հոգու, Քեզ եմ մատուցում իմ աղօթքի երկրպագութիւնը եւ աղերսները: Լսի՛ր ինձ եւ քաւի՛ր իմ մեղքերը, որ միա՛կդ ես առանց մեղքերի, որ միա՛կդ ես սուրբ եւ սուրբերի մէջ բնակւում, որ միա՛կդ ես գթած ու ողորմած: Ողորմի՛ր ինձ, Ստեղծի՛չ իմ, եւ օրհնի՛ր ինձ: Հաշտուի՛ր ինձ հետ, կենսատո՛ւ իմ, եւ արքայութեանդ մէջ յիշի՛ր ինձ, ինչպէս աւազակին: Դարձի՛ր դէպ ինձ, Փրկի՛չ իմ Աստուած, եւ դարձրո՛ւ

ինձանից Քո ցասումը: Բարկութեամբդ մի՛ խրատիր ինձ եւ Քո ցասումով մի՛ յանդիմանիր:

Մի՛ բարկացիր ինձ վրայ յաւիտեան եւ մի՛ յիշիր իմ չարիքները եւ մի՛ պարտաւորիր ինձ ըստ իմ անօրէնութիւնների: Մի՛ վարուիր ինձ հետ ըստ իմ մեղքերի եւ մի՛ հատուցիր ինձ ըստ իմ անօրէնութեան: Մի՛ զրկիր ինձ Քո երեսից եւ մի՛ դատապարտիր ինձ, քանի որ ես ինքս գիտեմ, որ յանցաւոր եմ իմ մանկութիւնից եւ անպատասխան եմ Քո առջեւ:

Բայց Դո՛ւ, Թագաւո՛ր հզօր եւ անոխակալ, որ մեղաւոր կնոջ յանցանքները ներեցիր, ների՛ր իմ՝ մեղաւոր եւ անօրէն Քո ծառայի, պարտքերը: Քանզի Քո առատ բարերարութիւնն այնժամ է երեւում, երբ ողորմում ես ինձ, որ արժանի չեմ Քո ողորմութեանը, երբ ինձ ցոյց ես տալիս գթութիւնդ, որ արժանի եմ բիւր տանջանքների, քանի որ իմ բոլոր օրերն անցկացրեցի չարութեան մէջ եւ չմնացի Քո հրամանով:

Արդ, քաղցրացի՛ր իմ նկատմամբ, բարի եւ քա՛ղցր Թագաւոր, հաշտուի՛ր բազմամեղիս հետ եւ մի՛ դարձրու Քո երեսն ինձանից եւ բարկութեամբ մի՛ հեռացիր Քո ծառայից: Մի՛ անարգիր ինձ եւ մի՛ թող ինձ, իմ Փրկի՛չ Աստուած, քանի որ թէպէտ ես Սուրբ Հոգուդ տաճարն ապականեցի անառակ վարքով, բայց Դու գթա՛ ինձ, Ստեղծի՛չ իմ՝ ողորմած եւ անյիշաչար, եւ մի՛ ապականիր իմ հոգին գեհէնի հրում յաւիտենական այրմամբ: Ներողամի՛տ եղիր իմ հանդէպ, մարդասէ՛ր, եւ շնորհի՛ր

ինձ ապաշխարհութեան ժամանակ եւ արցունքով զղջում եւ զօրացրո՛ւ սիրտն իմ՝ իմաստութեամբ խորհելու Քո օրէնքների մասին օր ու գիշեր, բարութիւն եւ արդարութիւն գործելու Քո առջեւ:

Սբ. Եփրեմ Ասորի

ՅՈՎՀԱՆ ՄԱՆԴԱԿՈՒՆՈՒ[20] ԱՂՕԹՔԸ

Ո՛վ անեղ եւ անստեղծ, Արարի՛չ բոլոր արարածների, Ում ո՛չ երկիրը կարող է տանել, եւ ո՛չ էլ երկինքը՝ ընդգրկել, այլ վեր ես, քան երկինքը, եւ (երկրի) ծագերից էլ այն կողմ, եւ բոլոր երեւելիները եւ աներեւոյթները Քեզանով են բովանդակուած: Դու տիրում ես բոլորին, եւ Քո հրամանը կառավարում է բոլոր արարածներին, Դու աղքատացնում ես եւ Դու՝ հարստացնում, հարուածում եւ Ինքդ բժշկում, Դու ես սատանայից վտանգուածիս սփոփիչը եւ մեղքերով հիւանդացածիս առողջացնողը, Դու ես աղօթքներն ընդունողը

---

20 Յովհաննէս Մանդակունին (5-րդ դար) Հայոց Կաթողիկոս էր՝ 471/472-483/84թթ., աստուածաբան, մատենագիր, շարականագիր, թարգմանիչ, Սբ. Մեսրոպ Մաշտոցի աշակերտը: Մանդակունին վերակառուցել է Վաղարշապատի եւ Դուինի տաճարները, հաստատել Սբ. Պատարագի եւ ժամասացութեան կարգերը, հեղինակել բազմաթիւ ճառեր, շարականներ, աղօթքներ:

եւ խնդրուածքները կատարողը: Խոնարհեցրո՛ւ, Տէ՛ր, Քո ունկը եւ լսի՛ր Քո ծառային, տե՛ս, Տէ՛ր, իմ տառապանքները եւ ընդունի՛ր ինձ գթութեամբ, ինձ մի՛ խրատիր Քո բարկութեամբ եւ Քո ցասումով մի՛ յանդիմանիր, քանզի Աստուած ես գթութեան, գթա՛ եւ ինձ՝ մեղաւորիս, որ բազում հեծեծանքներով եւ պաղատանքներով աղերսում եւ աղաչում եմ Քեզ: Քանզի կարեվէր եմ մեղքերով եւ ցաւահարուած՝ անօրէնութեամբ, չարաչար ախտերով՝ յանցանքների մէջ, եւ պիղծ խորհուրդներով՝ ամբարշտութեանս մէջ, գարշ հոգովս՝ աղտոտուած, եւ մեղսաթաթախ մարմնովս՝ զազրացած, ամօթահար երեսով կանգնած Քո առաջ եւ ամօթով՝ տեսնողների առաջ:

Եւ արդ, Դո՛ւ, Տէ՛ր, քա՛ղցր եւ ներո՛ղ, որ ներողամիտ կոչուեցիր մեղաւորների պատճառով, որ ասացիր, թէ՝ երբ անօրէնը դառնայ, չեմ յիշի իր անօրէնութիւնները: Եւ արդ, ահա՛ մեղաւոր ծառաս եկել ընկել եմ Քո առջեւ եւ թախանձելով խնդրում եմ Քեզանից ողորմութիւն. մի՛ յիշիր իմ բազում մեղքերը, իմ անօրէնութիւնները երեսովս մի՛ տուր, որ թէ՛ կամովի, թէ՛ ակամայ մեղանչեցի, թէ՛ խօսքով, թէ՛ գործով եւ թէ՛ անտեղի մտածութիւններով պղծուեցի, թէ՛ անգիտութեան եւ թէ՛ ծուլութեան եւ թէ՛ մոռացութեան պատճառով (մեղք) գործեցի, քանզի Դո՛ւ, Տէ՛ր, սովոր ես գթալ ու ողորմել, ներել բազում մեղքերը եւ քաւել անօրէնութիւնների ամբողջ բազմութիւնը, որ սրբեցիր պոռնիկին,

ազատեցիր, աւազակին, արդարացրիր մաքսաւորին եւ թեթեւացրիր մեղքերով ծանրաբեռնուածներին: Քանզի ողորմած Աստուած ես եւ գթում ես մեղաւորներին, ովքեր հաւատով դիմում են Քեզ. գթա՛, Տէ՛ր, եւ ի՛նձ՝ բազմամեղիս, եւ փրկի՛ր թշնամու թոյնից: Փարատի՛ր, Տէ՛ր, խաւարում շրջող իմ հայեացքները, բա՛ց իմ խլացած ականջները՝ լսելու համար, բժշկի՛ր բամբասանքներից վիրաւորուած իմ լեզուն եւ սրբի՛ր իմ սիրտը չար խորհուրդներից:

Քե՛զ եմ ցանկանում, բարերա՛ր Տէր, եւ փափաքում իմ գթած Հօրը. գթա՛ ինձ՝ մեղաւորիս, եւ ընդունի՛ր ինչպէս անառակ որդուն: Քո սիրով յագեցրո՛ւ իմ քաղցը, ծարաւս լցրո՛ւ Քո առատաբուխ շնորհով, քանզի անդադար Քեզ մերձենալ եմ փնտռում եւ Քեզ նայել յարաժամ տենչում, միշտ փափաքում Քո շնորհները եւ հանապազ կարօտում Քո ողորմութիւնը: Մի՛ պարտաւորեցրո՛ւ պատժուածների հետ եւ մի՛ դատապարտիր ատելիների հետ, այլ ընդունի՛ր Քո կամքը կատարողների եւ պահի՛ր Քո պատուիրանները պահողների հետ: Քանզի եթէ իմ յանցանքներն առանց ներելու քննես, ընդունայն է ինձ համար յարութեան խոստումը, քանզի գեհենի հրի մէջ է իմ ժառանգութիւնը: Քանզի եթէ դատես իմ անտեղի եւ դատապարտելի մտածութիւնները, ապա երանի թէ չծնուէի որովայնից, այլ նայի՛ր իմ աղերսներին եւ պաղատանքներին եւ մի՛ մերժիր ինձ Քո ողորմութիւնից, քանզի ես Քո ողորմութիւնն եմ տենչում եւ Քո գթութիւնը կարօտում:

Քանզի մշտապէս իմ մարմինը պղծեցի եւ հանապազ հոգիս աղտոտեցի ոչ միայն չար վարքով, այլեւ՝ զազիր խորհուրդներով:

Եւ արդ, լուա՛ մեղքերից եւ մաքրի՛ր այս գարշաշաղախ տիղմից: Քեզ խնդրեցի եւ Քեզ եմ աղաչում, լցրո՛ւ իմ փափաքման կարօտութիւնը, խառնի՛ր ինձ սրբերի դասին եւ արդարների ժողովին, ովքեր յարաժամ վայելում են Քո ցանկալի տեսութիւնը: Ես չեմ հայցում, ինչպէս համարձակերես բարեգործ մէկը, այլ՝ աղերսելով թախանձում, ինչպէս պարտապանը եւ բազմամեղը: Չեմ համարձակւում ինչպէս մաքուրը, այլ՝ աղաչում՝ մաքրի՛ր իմ գարշահոտութիւնը Քո մաքրութեամբ, քանզի բռնուած եմ իմ անթիւ մեղքերի բազմութիւններով, եւ իմ անօրէնութեան ամբոխներն ինձ հանապազ հեղձում են, սիրտս ճմլում եւ մարմինս ու ոսկորներս հալեցնում ու մաշեցնում, ուստի հանապազ թախանձում եմ՝ պաղատելով, աղաչելով եւ աղերսելով, քանզի Դու իմ Հայրն ես ու Տէրը, արարիչը եւ ստեղծողը, ո՞ւմ մօտ գնամ կամ ումի՞ց խնդրեմ օգնութիւն: Մեղա՛յ Քեզ, խոստովանում եմ Քեզ եւ աղաչում՝ մի՛ մերժիր ինձ Քո ողորմութիւնից եւ մի՛ զրկիր Քո երեսից: Աղաչում եմ Քեզ՝ բարերար Տիրոջդ եւ իմ բազմագութ Արարչիդ՝ յաւիտենական ամօթով ինձ մի՛ ամաչեցրու եւ (Դատաստանի) մեծ Օրը ինձ մի՛ դատապարտիր, տիեզերական հրապարակիդ առաջ ինձ մի՛ յանդիմանիր, անողորմ տանջանքներով մի՛ տանջիր եւ սոսկալի գեհենովդ

մի՛ պատուհասիր: Այլ փրկի՛ր հրացայտ հնոցնե-
րից եւ հրեղէնների հրահոսան գետերից, չարա-
ժանիք որդերից, անթափանց խաւարից, դառը
դատաստաններից եւ աններելի տանջանքներից,
անքակտելի կապանքներից եւ հանապազօրեայ
նեղութիւններից, միշտ ողբալուց եւ ատամներ
կրճտացնելուց: Այլ գթա՛ մեղքերով վիրաւորուա-
ծիս եւ բժշկի՛ր անօրէնութեամբ հիւանդացա-
ծիս: Ընդունի՛ր ինչպէս հայհոյողին եւ հալածչին,
փարատի՛ր իմ մեղքերի բազմութիւնը, սրբի՛ր ինձ
պղծութիւնից, ինչպէս պոռնիկին, եւ արդարացրո՛ւ,
ինչպէս մաքսաւորին: Ողորմի՛ր, ինչպէս քանանա-
ցուն, եւ ների՛ր իմ յանցանքները, ինչպէս աւազա-
կին: Բնակեցրո՛ւ ինձ սրբերի դասի եւ Քո կամա-
րար արդարների խորանների մէջ, անանց կեանքի
վայելչութեան եւ անբաւ ուրախութեան բարիքների
մէջ՝ ի Տէր մեր Յիսուս Քրիստոս, Որին փա՛ռք յաւի-
տեանս.Ամէն:

Ի՞ՆՉ ՊԻՏԻ ԱՆԵՍ, Ա՛ՆՁ ԻՄ ԿՈՐՈՒՍԵԱԼ

Եւ արդ, ի՞նչ պիտի անես, անձ իմ կորուսեալ,
ու՞ր պիտի թաքնուես կամ ինչպէ՞ս փրկուես կամ
ինչպէ՞ս դուրս գաս մեղքերի բանտից: Քանզի
բազում են պարտքերդ, եւ անթիւ՝ հատուցումներդ,
սաստիկ է կշտամբանքը, եւ անվախճան՝ նախա-
տինքը, անողորմ են հրեշտակները, եւ անկաշառ՝

Դատաւորը, հզօր է ատեանը, եւ բեմն՝ անաչառ, քստմնելի են սպառնալիքները, եւ հատուցումներն՝ անողորմ, ահարկու է հրամանը, եւ յանդիմանութիւնները՝ մերկապարանոց, հրեղէն են գետերը, եւ վտակներն՝ անանցանելի, կործանիչ է գուբը, եւ տագնապը՝ մշտնջենաւոր, ամենակուլ է տարտարոսը, եւ սառնամանիքն՝ անզերծանելի: Եւ արդ, արդարեւ քեզ համար են պահուած այս բոլոր դժնդակ դառնութիւնները եւ անտանելի պատուհասների տաժանելի օթեւանները, ո՛վ անարժան անձ իմ մեղաւոր, չարագոր՛ծ, պոռնի՛կ, բազմաբի՛ծ եւ բովանդակ անմաքրութեա՛ն անդաստանի սահմանագիծ: Ահա քո գործերի արդիւնքն ես ժառանգելու, շեղուա՛ծդ ճշմարտութիւնից եւ խոտորուա՛ծդ մաքրութիւնից, տարագրուա՛ծդ արդարութիւնից եւ պարկեշտութիւնից, ունա՛յնդ հոգեպարգեւ հարստութիւնների լիութիւնից, որ բարերար եւ ամենակալ Թագաւորի վրէժը շարժեցիր:

Սբ. Գրիգոր Նարեկացի, Բան Ը

ՍԲ. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑՈՒ ԱՂԵՐՍԸ՝ ՍԲ. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻՆ

Եւ արդ, այսքան յուսահատութիւններից, ահարկու սրտաբեկութիւններից, սաստիկ ահաբեկութիւններից, աստուածային բարկութիւններից

յետոյ, թախծալից հոգով տագնապած, աղաչում եմ քեզ, Սո՛ւրբ Աստուածածին, հրեշտա՛կ՝ մարդկանց մէջ, մարմնատեսիլ քերովբէ՛, երկնաւոր արքայուհի՛, անխառն՝ իբրեւ օդը, մաքուր՝ որպէս լոյս, անշաղախ՝ բարձր արեգակի պատկերի նման, գերազանց, քան անկոխ սրբութիւնների բնակավայրը, երանելի խոստման վա՛յր, եդե՛մ շնչական, անմահ կենաց ծա՛ռ՝ բոցեղէն սրով պարուրուած, Բարձրեալ Հօրից զօրացած եւ հովանաւորուած, Հոգու հանգստեամբ հանդերձաւորուած եւ մաքրագործուած, Որդու բնակութեամբ յարդարուած եւ տաղաւարուած. միածին՝ Հօր համար, եւ քեզ՝ անդրանիկ, Որդին քո՝ ծննդեամբ, եւ Տէր՝ արարչութեամբ, անկիրք մաքրութեանդ հետ եւ անբիծ բարի, անարատ սրբութեանդ հետ՝ եւ խնամակալ բարեխօս: Ընդունի՛ր քեզ դաւանողիս այս աղերսալի աղօթքը եւ, խառնելով նրան մեծիդ ներբողուած իմ նախկին խօսքը, իբրեւ քո պաղատանքը մօտեցրո՛ւ, ընծայի՛ր (Աստծուն): Հիւսի՛ր, միացրո՛ւ մեղաւորիս դառը հեծութիւնը քո երջանիկ եւ խնկաւորուած խնդրուածքների հետ, տո՛ւնկդ կենաց՝ օրհնեալ պտղի, որպէսզի, միշտ քեզանից օգնութիւն ստանալով, բարեգործուելով, անապական քո մայրութեանն ապաւինելով եւ լուսաւորուելով, ապրեմ Քրիստոսի՝ Քո Որդու եւ Տիրոջ համար:

Մատեան ողբերգութեան, Բան Զ

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ ԱՂՕԹՔԸ, ԵՐԲ ՄԷԿԸ ՈՐՈԳԱՅԹԻ ՄԷՋ Է ԸՆԿՆՈՒՄ

Օրինեա՛լ է Քո մարդասիրութիւնը, Տէ՛ր իմ եւ Փրկի՛չ իմ Յիսուս Քրիստոս: Ինչո՞ւ ես լքում ինձ: Դո՛ւ ես միայն առանց մեղքի, եւ Քո անունն անոխակալութիւն եւ մարդասիրութիւն է ցոյց տալիս: Գթա՛ ինձ, քանզի Դո՛ւ ես միայն մարդասէր:

Փրկի՛ր ինձ՝ մեղքերի մէջ ընկածիս, քանզի Դո՛ւ ես միայն առանց մեղքի: Հանի՛ր ինձ իմ անօրէնութիւնների տիղմից, քանզի ընկղմուեցի յաւիտեանս յաւիտենից: Փրկի՛ր ինձ իմ թշնամիներից, քանզի ահա՛ առիւծի պէս գոչում եւ մռնչում են՝ կամենալով կլանել ինձ: Արդ, Տէ՛ր իմ, արձակի՛ր Քո շանթերը եւ կործանի՛ր նրանց զօրութիւնները, թող երկնչեն եւ խաւարեն Քո երեսից, քանզի անկարող են եւ չունեն զօրութիւն՝ Քո եւ Քեզ սիրողների առջեւ կանգնելու: Տեսնում են Քո Խաչի նշանի զօրութիւնը, Տէ՛ր, եւ զարհուրում եւ ամաչելով հեռու փախչում նրանցից, ովքեր աղօթում են Քեզ: Այժմ, Տէ՛ր պահպանի՛ր եւ փրկի՛ր ինձ, քանզի Քեզ ապաւինեցի, նեղութիւնից ազատի՛ր իմ անձը, որպէսզի իսպառ կորստեան չմատնի ինձ նենգաւորը, որ ծածուկ հնարներով մարտնչում է իմ դէմ: Որ խորհուրդների Տէր ես եւ քննում ես սրտերն ու երիկամները, սրբի՛ր սիրտս եւ խորհուրդներս զազիր ու պիղծ խորհուրդներից, որպէսզի իսպառ չկորչեմ յաւիտենական կորստով:

Ո՛վ ամենակարող Աստուած իմ, ողորմի՛ր ինձ, մեղաւոր հոգուս արտասուելու շնո՛րհ տուր, որպէսզի լուանամ մեղքերիս բազմութիւնը, որպէսզի փրկուեմ ամբարիշտներին գեհենի հուրը նետող անողորմ հրեշտակների ձեռքերից: Երանի՜ թէ լայի հանապազ՝ աղաչելով Քեզ, Աստուա՛ծ, որպէսզի անարժան չհամարես այնժամ, երբ գաս, եւ չլսեմ այն ահաւոր ձայնը, թէ՝ «Հեռո՛ւ գնա, անիրաւ մշակ, չգիտեմ՝ որտեղից ես»:

Բարձրեա՛լ Աստուած, Դո՛ւ ես միայն առանց մեղքի, շնորհի՛ր ինձ՝ մեղաւորիս, Քո բազում գթութիւնն այն օրը, որպէսզի յայտնի չդառնան իմ ծածուկ ամբարշտութիւններն ամենատես հրեշտակների եւ հրեշտակապետերի, մարգարէների, առաքեալների եւ սուրբ արդարների առջեւ: Այլ փրկի՛ր ինձ՝ ամբարշտիս, Քո ողորմութեան շնորհներով: Կատարեալ արդարների հետ ընդունի՛ր ինձ փափուկ դրախտի մէջ: Ընդունի՛ր Քո մեղաւոր ծառայի աղօթքները բարեխօսութեամբ սուրբերի, որոնք հաճոյ եղան Քեզ, Տէ՛ր մեր Յիսուս Քրիստոս: Եւ Քեզ Հօր եւ Սուրբ Հոգուդ հետ փա՛ռք յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑՈՒ ԱՂՕԹՔԸ՝ ԴԵՒԵՐԻՑ ՊԱՀՊԱՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Աստուա՛ծ յաւիտենական, բարերա՛ր եւ ամենակա՛լ, ստեղծո՛ղ լոյսի եւ յօրինո՛ղ գիշերի, կեա՛նք՝ մահուան մէջ եւ լո՛յս՝ խաւարում, յո՛յս ակնկալողների եւ համբերութի՛ւն տարակուսեալների, որ ամէնարուեստ Քո իմաստութեամբ մահուան ստուերը փոխում ես այգի, աննուա՛զ ծագում եւ անմո՛ւտ արեգակ, քանզի գիշերուայ խաւարը չի կարող ծածկել Քո տէրութեան փառքը, որին ծնրադիր երկրպագում են բոլոր արարածները՝ երկնայինները, երկրայինները եւ սանդարամետականները: Որ լսում ես կապեալների հեծութիւնը, նայում խոնարհների աղօթքին եւ ընդունում նրանց խնդրուածքները, Աստուա՛ծ իմ եւ Թագաւո՛ր իմ, կեա՛նք իմ եւ ապաւէ՛ն իմ, յո՛յս իմ եւ վստահութի՛ւն իմ, Յիսո՛ւս Քրիստոս, Աստուա՛ծ ամենայնի, Սո՛ւրբդ՝ սուրբերի հոգում բնակուող, մխիթարութի՛ւն վշտերի եւ քաւարա՛ն մեղաւորների, որ ամէն ինչ գիտես նախապէս, առաքի՛ր պահպանող զօրութիւնը Քո աջի եւ փրկի՛ր գիշերուայ երկիւղից եւ չար դեւից: Որպէսզի, Քո սոսկալի եւ սուրբ անուան յիշատակը միշտ համբուրելով հոգուս շուրթերով, շնչիս փափաքով, ապրեմ՝ պահպանուած բոլոր նրանց հետ, ովքեր կանչում են Քեզ ամբողջ սրտով:

Մատեան ողբերգութեան, Բան ՂԴ

ՄԱՆԱՍԷ[21] ԹԱԳԱՒՈՐԻ ԱՂՕԹՔԸ

Տէ՛ր ամենակալ, Աստուա՛ծ Աբրահամի, Իսահակի, Յակոբի եւ նրանց արդար զաւակների. ամենակա՛լ Տէր, ների՛ր իմ մեղքերը:

Որ արարեցիր երկինքն ու երկիրը եւ նրանց բոլոր զարդերը. ամենակա՛լ Տէր, ների՛ր իմ մեղքերը:

Որ կապեցիր ծովը Քո հրամանի խօսքով, փակեցիր անդունդները, կնքեցիր Քո ահաւոր եւ փառաւորեալ անուամբ. ամենակա՛լ Տէր, ների՛ր իմ մեղքերը:

Որ ամէն ինչ սարսում է եւ դողում Քո զօրութեան ահից. ամենակա՛լ Տէր, ների՛ր իմ մեղքերը:

---

[21] Այս աղօթքը վերագրւում է Յուդայի Մանասէ թագաւորին (Ն. Ք. 687-643թթ.), որի մասին պատմւում է Թագաւորութիւնների 4-րդ գրքի 21, 1-9 համարներում: Մանասէն դաւաճանեց Աստծուն եւ երկրում տարածեց կռապաշտութիւն, կառուցեց մեհեաններ, եւ, որպէս հետեւանք եւ Աստծոյ պատիժ, գերի տարուեց Բաբելոն, ապա զղջաց, աղօթեց Տիրոջը, եւ Աստուած նրան վերադարձրեց իր թագաւորութիւնը: Այս աղօթքն, ըստ մասնագէտների, գրուել է ուշ շրջանում եւ յայտնուել է Հին Կտակարանի՝ 4-րդ դարով թուագրուող լատիներէն vulgata կոչուող թարգմանութեան մէջ: Այս աղօթքը չկայ Սուրբ Գրքի հայերէն թարգմանութեան մէջ, բայց կայ Առաւօտեան ժամերգութեան մէջ եւ ընթերցւում է Մեծ Պահոց շրջանում: Մանասէի աղօթքը ապաշխարութեան աղօթքի եզակի մի ստեղծագործութիւն է:

Անբաւ է Քո սրբութեան փառքի մեծվայելչութիւնը, սաստիկ է Քո սպառնալիքների բարկութիւնը՝ մեղաւորների հանդէպ, անչափ են եւ անքննելի Քո աւետիսների ողորմութիւնները, ամենակա՛լ Տէր, ների՛ր իմ մեղքերը:

Դո՛ւ, Տէ՛ր, բարձրեալ, գթած, համբերող, բազումողորմ ես եւ ցաւում ես մարդկանց չարիքների համար. ամենակա՛լ Տէր, ների՛ր իմ մեղքերը:

Դո՛ւ, Աստուա՛ծ, չկարգեցիր ապաշխարութիւն արդարների՝ Աբրահամի, Իսահակի եւ Յակոբի համար, որոնք չմեղանչեցին Քո հանդէպ. ամենակա՛լ Տէր, ներիր իմ մեղքերը:

Այլ ապաշխարութիւն կարգեցիր ինձ՝ մեղաւորիս համար, քանզի մեղանչեցի աւելի, քան ծովի աւազները, եւ բազմացան իմ անօրէնութիւնները. ամենակա՛լ Տէր, ների՛ր իմ մեղքերը:

Արժանի չեմ նայելու եւ տեսնելու երկնքի բարձունքները իմ բազում անօրէնութիւնների պատճառով. ամենակա՛լ Տէր, ների՛ր իմ մեղքերը:

Կորացել եմ ես երկաթէ կապանքների բռնութիւնից եւ չունեմ հանգիստ. ամենակա՛լ Տէ՛ր, ների՛ր իմ մեղքերը:

Սաստկացրեցի զայրոյթդ եւ չարիք գործեցի Քո առջեւ, կռապատկեր կանգնեցրեցի եւ աւելացրեցի ցասումդ իմ անձի հանդէպ. ամենակա՛լ Տէր, ների՛ր իմ մեղքերը:

Եւ արդ, Տէ՛ր, խոնարհեցնում եմ իմ սրտի ծունկը եւ հայցում Քո քաղցրութիւնից. ամենակա՛լ Տէ՛ր, ների՛ր իմ մեղքերը:

Մեղա՛յ, Տէ՛ր, մեղա՛յ, իմ անօրէնութիւնները ես ինքս գիտեմ. ամենակա՛լ Տէր, ներիր իմ մեղքերը:

Աղաչում եմ խնդրում եմ Քեզ, ների՛ր ինձ, Տէ՛ր, ների՛ր ինձ, եւ կորստեան մի՛ մատնիր ինձ ըստ իմ անօրէնութեան. ամենակա՛լ Տէր, ների՛ր իմ մեղ-քերը:

Տէ՛ր, յաւիտեան մի՛ բարկանայ ինձ վրայ եւ մի՛ յիշիր իմ չարիքները եւ մի՛ պարտաւորեցրու ինձ չարիքներով երկրի ստորոտն իջնողների հետ. ամենակա՛լ Տէր, ների՛ր իմ մեղքերը:

Քանի որ Դու, Աստուա՛ծ, ապաշխարողների Աստուածն ես ի՛նձ էլ ցոյց տուր Քո բարերարու-թիւնը, որին անարժան եմ. ամենակա՛լ Տէր, ների՛ր իմ մեղքերը:

Ապրեցրո՛ւ ինձ ըստ Քո բազում ողորմութեան, եւ ես կ,օրհնեմ Քեզ իմ կեանքի բոլոր օրերում. ամենակա՛լ Տէր, ների՛ր իմ մեղքերը:

Քեզ են, Տէ՛ր, օրհնում երկնքի բոլոր հրեշտակ-ները, եւ Քոնն է փառքը յաւիտեանս. ամէն:

ՍԱՂՄՈՍՆԵՐ[22]

Սաղմոս 4

«Դպրապետին. Դաւթի[23] օրհնութեան սաղմոսերգութիւնը»,

Երբ ձայն տուի, իմ արդարութեան համար լսեցիր ինձ, Աստուա՛ծ, նեղութեան մէջ ինձ անդորր պարգեւեցիր. ողորմի՛ր ինձ եւ ակա՛նջ դիր իմ աղօթքին:

Մարդկա՛նց որդիներ, մինչեւ ե՞րբ պիտի խստասիրտ լինէք. ինչո՞ւ էք ունայնութիւն սիրում եւ ստութիւն փնտռում:

Իմացէ՛ք, որ Տէրը զարմանահրաշ գործեր արեց իր սրբի համար, եւ Տէրը կը լսի ինձ, երբ օգնութեան կանչեմ նրան:

Եթէ բարկանաք՝ մի՛ մեղանչէք, ձեր անկողնու մէջ ինչ էլ որ ասէք ձեր սրտում՝ զղջացէ՛ք:

---

22 Այս աղօթքները, որ կոչւում են «սաղմոսներ» (ծագում է յունարէն psalmos բառից, որ նշանակում է «հոգեւոր երգ կամ բանաստեղծութիւն») վերցուած են Հին Կտակարանի «Սաղմոսներ» գրքից, որը պարունակում է 150 սաղմոս:

23 Դաւիթը Իսրայէլի ամենափառաւոր թագաւորն էր, որի օրոք Իսրայէլը միաւորուեց եւ դարձաւ հզօր թագաւորութիւն: Դաւիթը ոչ միայն իմաստուն եւ զօրեղ արքայ էր, այլեւ՝ աղօթասաց սաղմոսերգու:

Արդարութեան զոհե՛ր մատուցեցէք եւ Տիրոջ վրայ յո՛յս դրէք:

Շատերն ասացին՝ «Ո՞վ ցոյց կը տայ մեզ Տիրոջ բարութիւնը»:

Քո երեսի լոյսը ծագեց մեր վրայ, եւ ուրախութիւն տուիր մեր սրտերին, ցորենի, գինու, ձէթի բարիքով յագեցրիր նրանց:

Այսուհետեւ մենք խաղաղութեամբ կը ննջենք ու կ,արթնանանք, քանզի դու միայն, Տէ՛ր, ապահովութեան մէջ բնակեցրիր մեզ:

Սաղմոս 6

Տէ՞ր, Քո ցասումով մի՛ յանդիմանիր ինձ եւ Քո բարկութեամբ մի՛ խրատիր ինձ:

Ողորմի՛ր ինձ, Տէր, զի հիւանդ եմ ես, բժշկի՛ր իմ անձը, քանզի իմ ոսկորները խռովուեցին:

Իմ անձը յոյժ խռովուեց, եւ Դո՛ւ, Տէ՛ր, մինչեւ ե՞րբ:

Դարձի՛ր, Տէ՛ր, եւ փրկի՛ր իմ անձը, կեա՛նք տուր ինձ ըստ Քո ողորմութեան:

Քանզի չկայ մէկը, որ մահուան մէջ յիշում է Քեզ կամ դժոխքում խոստովանում Քեզ:

Յոգնեցի ես իմ հեծութիւնից, ամէն գիշեր լուացի

իմ մահիճը եւ արտասուքովս թրջեցի անկողինս:

Իմ աչքը խռովուեց (Քո) ցասումից, եւ տկարացայ
ես իմ բոլոր թշնամիների առաջ:
Հեռացէ՛ք ինձանից ամէնքդ, որ անօրէնութիւն էք գործում:
Տէրը լսեց իմ լացի ձայնը, լսեց Տէրն իմ
աղօթքները եւ Տէրն ընդունեց իմ աղերսները:
Թող ամաչեն եւ յոյժ խռովուեն իմ թշնամիները,
յոյժ արագ ետ դառնան եւ խիստ ամաչեն եւ խռովուեն:
Փա՛ռք Հօրը եւ Որդուն եւ Սուրբ Հոգուն.
այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Սաղմոս 21

Այսուհետեւ՝ առաւօտեան օգնութեան մասին.
Սաղմոս Դաւթի

Աստուա՛ծ իմ, Աստուա՛ծ, նայի՛ր ինձ, ինչո՞ւ լքեցիր ինձ, յանցանքներիս պատճառով հեռու մնացիր իմ փրկութիւնից:

Աստուա՛ծ իմ, քեզ կանչեցի ցերեկով, բայց չլսեցիր ինձ, կանչեցի գիշերով՝ բայց չանսացիր ինձ:

Դու ապրում ես սրբերի մէջ եւ գովերգւում Իսրայէլում:

Քեզ վրայ յոյս դրին հայրերը մեր, յոյս դրին քեզ վրայ, եւ դու փրկեցիր նրանց:

Առ քեզ աղաղակեցին ու ապրեցին, քեզ վրայ յոյս դրին եւ ամօթով չմնացին:

Բայց ես որդ եմ եւ ոչ թէ մարդ, մարդկանց համար նախատինք եմ եւ անարգանք՝ ժողովուրդ-ներին:

Բոլոր ինձ տեսնողներն արհամարհում էին ինձ, խօսում շրթունքներով եւ շարժում գլուխներն իրենց՝ ասելով. «Յոյսը դրել է Տիրոջ վրայ, դէ թող փրկի ու ազատի նրան, եթէ սիրում է նրան»:

Դո՛ւ հանեցիր ինձ արգանդից, իմ յոյսը դար-ձար մօրս կա-

թով սնուելու օրից:

Քե՛զ յանձնուեցի ես արգանդից, մօրս որովայ-նից սկսած՝ դու ես Աստուածն իմ:

Մի՛ հեռացիր ինձնից, քանզի մօտ են վտանգ-ները, եւ չկայ մէկը, որ օգնի ինձ: Բազում եզներ շրջապատեցին ինձ, եւ պարարտ ցուլերը պաշա-րեցին ինձ:

Մռնչացող ու յափշտակող առիւծների պէս ինձ վրայ բացին բերաններն իրենց:

Հոսեցի ես ինչպէս ջուր, խախտուեցին իմ բոլոր ոսկորները, եւ սիրտս հալած մոմ դարձաւ որովայ-նիս մէջ:

Զօրութիւնն իմ չորացաւ խեցու նման, լեզուս կպաւ քիմքիս, եւ ինձ իջեցրին մահուան հողի մէջ:

Չորս կողմս բազում շներ հաւաքուեցին, եւ չարագործների ամբոխն ինձ պաշարեց:

Ծակեցին ձեռքերն ու ոտքերն իմ, հաշուեցին բոլոր ոսկորներս, նրանք նայեցին ու տեսան ինձ:

Հագուստներս բաժանեցին իրար մէջ, եւ պատ-մուճանիս վրայ վիճակ գցեցին:

Դու, Տէ՛ր, օգնութիւնդ ինձնից հեռու մի՛ պահիր, այլ օգնի՛ր ինձ, Տէ՛ր:

Փրկի՛ր ինձ սրից, փրկի՛ր միամօրիկիս շների ձեռքից:

Ազատի՛ր ինձ առիւծի բերանից, եւ խեղճ անձն իմ՝ միեղջերուի եղջիւրից:

Անունդ պիտի հռչակեմ իմ եղբայրներին, ժողո-վատեղում պիտի օրհնեմ քեզ:

Աստուածավախնե՛ր, օրհնեցէ՛ք Տիրոջը, եւ թող Յակոբի բոլոր զաւակները փառաբանեն նրան:

Իսրայէլի ողջ սերունդը երկիւղ պիտի կրի Տիրոջից, քանզի Տէրը չարհամարհեց ու չանարգեց աղօթքն աղքատիս եւ երեսն ինձնից չշրջեց, այլ երբ ձայն տուի նրան՝ լսեց ինձ:

Քո մասին է գովքն իմ, մեծ հաւաքներում պիտի օրհնեմ քեզ:

Ուխտս պիտի կատարեմ նրա բոլոր երկիւղած-ների առջեւ: Տնանկները պիտի ուտեն ու յագենան, Տիրոջը փնտռողները պիտի օրհնեն նրան:

Նրանց սրտերը կ՚ապրեն յաւիտեանս յաւիտե-նից: Աշխարհի բոլոր ծայրերից մարդիկ կը վերյի-շեն ու կը դառ-

նան Տիրոջը:

Բոլոր ազգատոհմերը կ'երկրպագեն նրան, քանզի Տիրոջն է արքայութիւնը, եւ նա է տիրում բոլոր հեթանոսների վրայ: Լիացան եւ երկրպագեցին նրան երկրի բոլոր մեծամեծները, եւ ամէն ոք, որ գերեզման է իջնում, նրա առջեւ պիտի ընկնի:

Նրանով է ապրում անձն իմ, եւ իմ սերունդը պիտի ծառայի նրան:

Գալիք սերունդներին պիտի պատմեմ Տիրոջ մասին, Տիրոջ գործած արդարութիւնը պիտի աւանդուի այն ժողովրդին, որ ծնուելու է:

Սաղմոս 22

Սաղմոս Դաւթի

Տէրն իմ հովիւն է, եւ ինձ ոչինչ չի պակասի:

Դալար վայրերում նա ինձ բնակեցրեց եւ հանդարտ ջրերի մօտ ինձ սնուցեց:

Նա կենդանացրեց ինձ, յանուն իր անուան առաջնորդեց ինձ արդարութեան ճանապարհներով:

Եթէ նոյնիսկ անցնեմ մահուան ստուերների միջով, չեմ վախենայ չարից, քանզի դու, Տէ՛ր, ինձ հետ ես:

Քո ցուպն ու գաւազանն ինձ կը մխիթարեն:

Իմ առջեւ սեղան պատրաստեցիր հալածիչների աչքերի դիմաց:

Գլուխս իւղով օծեցիր, եւ քո բաժակն ինձ արբեցրեց անխառն գինու պէս:

Ողորմութիւնը քո, Տէ՛ր, պիտի հետեւի ինձ կեանքիս բոլոր օրերին, երկար օրեր ես Տիրոջ տանը պիտի բնակուեմ:

Սաղմոս 26

Սաղմոս Դաւթի, երբ դեռ օծուած չէր

Տէրն իմ լոյսն է ու կեանքը, ո՞ւմից վախենամ. Տէրն իմ կեանքի ապաւէնն է, ո՞ւմից ես դողամ:

Երբ չարագործ նեղիչներս ու թշնամիներս մօտեցան ինձ՝ մարմինս ուտելու, նրանք թուլացան ու ընկան:

Եթէ իմ դէմ պատերազմ պատրաստուի, սիրտս չի սոսկայ. եթէ իմ դէմ ճակատամարտի ելնեն, միեւնոյն է, Տէ՛ր, յոյսս քեզ վրայ եմ դնելու:

Մի բան եմ խնդրել Տիրոջից, եւ նոյնն եմ աղաչում, որ կեանքիս բոլոր օրերին բնակուեմ Տիրոջ տանը, տեսնեմ Տիրոջ վայելչութիւնը եւ հսկեմ նրա տաճարում:

Չար օրերին նա ինձ թաքցրեց իր վրանում, պատսպարեց ինձ իր վրանի ծածկի տակ:

Ժայռից բարձր պահեցիր ինձ, այժմ էլ գլուխն իմ բարձրացրո՛ւ թշնամիներիս վրայ:

Շրջեմ եւ օրհնութեան պատարագ մատուցեմ Նրա վրանում, օրհներգեմ եւ սաղմոս երգեմ Տիրոջը:

Լսի՛ր ձայնն իմ, Տէ՛ր, քանզի քեզ կանչեցի, ողորմի՛ր ինձ եւ ակա՛նջ դիր, քանզի սիրտն իմ քեզ

դիմեց, եւ հայեացքն իմ փնտռեց, փնտռեց քո երեսը, Տէ՛ր:

Մի՛ դարձրու երեսդ ինձնից եւ բարկութեամբ մի՛ շրջուիր քո ծառայից:

Իմ օգնականն եղիր, Տէ՛ր, եւ մի՛ անարգիր ինձ ու մի՛ լքիր, փրկիչ Աստուա՛ծ իմ:

Իմ հայրն ու մայրը լքեցին ինձ, բայց Տէրն ինձ ընդունեց:

Սովորեցրո՛ւ ինձ, Տէ՛ր, քո ճանապարհը եւ առաջնորդի՛ր ինձ քո ուղիղ շաւիղներով:

Իմ թշնամիների պատճառով ինձ նեղողների ձեռքը մի՛ մատնիր. Իմ դէմ մեղսագործ վկաներ ելան եւ չարախօսեցին ինձ իրենց անիրաւութեամբ:

Հաւատում եմ, որ կը տեսնեմ Տիրոջ բարութիւնը ողջերի երկրում:

Սպասի՛ր Տիրոջն ու քաջալերուի՛ր, սիրտդ թող ամրապնդուի, Տիրո՛ջն սպասիր:

Սաղմոս 50[24]

Այսուհետեւ՝ սաղմոս Դաւթի. այն ժամանակ, երբ նրա մօտ եկաւ Նաթան մարգարէն, երբ ինքը մերձեցել էր Բերսաբէին

Ողորմի՛ր ինձ, Աստուա՛ծ, քո մեծ ողորմութեամբ եւ քո գթառատութեամբ ջնջի՛ր իմ յանցանքները:

---

24 Այս սաղմոսը ընդունուած է կոչել նաեւ ապաշխարութեան: Կարելի է այս սաղմոսը աղօթել ապաշխարութիւն կատարելիս եւ, յատկապէս, Մեծ Պահոց շրջանում:

Առաւել եւս լուա՛ ինձ իմ անօրէնութիւնից եւ իմ մեղքերից մաքրի՛ր ինձ:

Իմ անօրէնութիւններն ես ինքս գիտեմ, եւ մեղքերն իմ միշտ առջեւս են:

Քո դէմ միայն մեղանչեցի, Տէ՛ր, եւ չարիք գործեցի քո առջեւ, որպէսզի արդար լինես քո խօսքերում, եւ յաղթող՝ քո դատաստանի մէջ:

Անօրէնութեամբ յղիացաւ եւ մեղքերի մէջ ծնեց ինձ մայրն իմ:

Դու, Տէ՛ր, ճշմարտութիւնը սիրեցիր եւ քո իմաստութեան անյայտն ու ծածուկն ինձ յայտնեցիր:

Ցօղի՛ր ինձ սպունգով՝ եւ ես կը մաքրուեմ, լուա՛, եւ ձիւնից ճերմակ կը լինեմ:

Ինձ ցնծութիւն եւ ուրախութիւն լսել տո՛ւր, եւ թող տառապեալ ոսկորներս ցնծան:

Երեսդ շո՛ւռ տուր իմ մեղքերից եւ իմ բոլոր յանցանքները ջնջի՛ր ինձնից:

Իմ մէջ մաքուր սիրտ հաստատի՛ր, Աստուա՛ծ, եւ արդար հոգի նորոգի՛ր իմ որովայնում:

Մի՛ գցիր ինձ, Տէ՛ր, քո երեսից եւ սուրբ Հոգիդ մի՛ հանիր ինձնից:

Ինձ փրկութեան ցնծութի՛ւն տուր, եւ քո տիրական Հոգով հաստատի՛ր ինձ:

Անօրէններին կը սովորեցնեմ քո ճանապարհը, եւ ամբարիշտները քո կողմը կը դառնան:

Փրկի՛ր ինձ արիւնից, Աստուա՛ծ, իմ փրկութեա՛ն Աստուած. լեզուս թող ցնծայ քո արդարութեամբ:

Տէ՛ր, եթէ շրթներս բացես, բերանն իմ կ՚երգի օրհնութիւնը քո:

Եթէ ուզէիր՝ պատարագ կը մատուցէինք, բայց դու ողջակէզներ չես սիրում:

Խոնարհ հոգին է պատարագն Աստծու, մաքուր սիրտն ու խոնարհ հոգին Աստուած չի արհամարհում:

Քո բարեհաճութեամբ բարի՛ք գործիր Սիոնին, Տէ՛ր, եւ Երուսաղէմի պարիսպները թող կառուցուեն:

Այնժամ դու կը հաւանես արդարութեան պատարագները, եւ, իբրեւ ուխտի զոհեր, քո սեղանին հորթեր կը մատուցեն:



ԱՂՕԹՔՆԵՐ ԱՍ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱՄԱՅՐՆ



ՄԱՐԻԱՄԻ ՕՐՀՆԵՐԳԸ

ՄԵԾԱՑՈՒՍՑԷ՛ անձն իմ զՏէր,

Եւ ցնծասցէ հոգի իմ յԱստուած փրկիչ իմ,

Զի հայեցաւ ի խոնարհութիւն աղախնոյ իւրոյ.

Զի ահա յայսմհետէ երանեսցեն ինձ ամենայն ազգք:

Զի արար ինձ մեծամեծս հզօրն, եւ սուրբ է անուն նորա:

Եւ ողորմութիւն նորա ազգաց յազգս երկիւղածաց իւրոց:

Արար զօրութիւն բազկաւ իւրով, եւ ցրուեաց զամբարտաւանս մտօք սրտից իւրեանց:

Քակեաց զհզօրս յաթոռոց եւ բարձրացոյց զխոնարհս:

Զքաղցեալս լցոյց բարութեամբ, եւ զմեծատունս արձակեաց ունայնս:

Պաշտպանեաց Իսրայէլի ծառայի իւրում՝ յիշել զողորմութիւնս:

Որպէս խօսեցաւ առ հարս մեր՝ Աբրահամու եւ զաւակի նորա յաւիտեան:

Ղկ. Ա. 46-55

ԱՆԿԱՆԻ՛ՄՔ[25] առաջի քո, Աստուածածի՛ն, եւ աղաչե՛մք զանարատ զԿոյսդ: Բարեխօսեա՛ վասն

---

25 «Անկանիմք»-ը շարական է, որը երգւում է Հանգստեան ժամերգութեան ընթացքում:

անձանց մերոց, եւ աղաչեա՛ զՄիածին Որդիդ: Փրկել զմեզ ի փորձութենէ եւ յամենայն վտանգից մերոց:

ՓԱՌԱՒՈՐԵԱԼ ԵՒ ՕՐՀՆԵԱ՛Լ[26]

Միշտ Սուրբ Կոյս,
Աստուածածին Մարիա՛մ,
Մա՛յր Քրիստոսի,
Մատո՛ զաղաչանս մեր
Որդւոյ քոյ եւ Աստուծոյ մերոյ,
Փրկել զմեզ ի փորձութենէ,
Եւ յամենայն վտանգից մերոց.
Ամէն:

ԱՂԱՉԵ՛ՄՔ[27] զքեզ սուրբ Կոյս Մարիամ Աստուածածին, բարձրելոյն զօրութեամբն հովանաւորեալ, եւ սուրբ Հոգւոյն եկաւորութեամբն լուսաւորեալ, որ զամենայն գոյութեանցն զստեղծիչն յղացեալ ծնար անճառապէս. մարմնացելոյն առ ի քէն բարեխօսեա՛ կեցուցանել զանձինս մեր:

ԱՌ ՔԵԶ ԱՊԱՒԻՆԻՄՔ[28] Ամենասրբուհի՛, գերագոյն եւ հրաշալի բաշխո՛ղ բարութեանց.

---

26 Աղօթք՝ Առաւօտեան եւ Երեկոյեան ժամերգութիւններում:

27 Ժամամուտի շարական Ծննդեան տօնի

28 Շարական Մանկունք Ծննդեան Քրիստոսի

աղբիւր ես ծարաւեաց եւ հանգիստ աշխատելոց. եւ եղեր վերընկալ Աստուածային Բանին:

ԸՆԴ ՀՈՎԱՆԵԱՒ պաշտպանութեան քո ապաւինի՛մք, Սուրբ Աստուածածին, մի՛ անտես առներ զաղաչանս մեր ի կարիս մեր, այլ միշտ փրկեա՛ զմեզ յամենայն վտանգից մերոց, Կո՛յս փառաւորեալ եւ ամենօրհնեալ:

ՀՐԵՇՏԱԿ ՏԵԱՌՆ[29]

Հրեշտակ Տեառն աւետեաց Սրբոյ Կուսին Մարիամու:

---

29 «Հրեշտակ Տեառն»-ը (լատ.՝ Angelus Domini) յիշատակում է Աստծո Որդու մարդեղութեան աւետարանական դրուագը՝ երեք «Ողջոյն քեզ, Մարիամ»-ներով ընդմիջարկուած: Այս աղօթքը վանքերում եւ ժողովրդի մէջ մեծ տարածում ունի, մանաւանդ, արեւմտեան կաթողիկէ համայնքներում, որտեղից տարածուել է նաեւ Արեւելքում: Աղօթքի ծագման ժամանակը եւ պարագաները յստակ չեն. հաւանաբար, ծագել է Իտալիայի Արեցցո բնակավայրում՝ 11-13-րդ դարերում՝ ֆրանցիսկեան միաբանների վանքերում: Առաջին գրաւոր յիշատակութիւնն այս աղօթքի մասին ունի ֆրանցիսկեան Երանելի Բենեդիկտոս Սինիկարտին (1190-1282թթ.): «Հրեշտակ Տեառն» աղօթքի կազմաւորումը կապուած է եղել օրուայ մէջ երեք անգամ «Ողջոյն քեզ, Մարիամ» աղօթելու վանական եւ ապա նաեւ ժողովրդական սովորութեան հետ՝

–Եւ յղացաւ ի Հոգւոյն Սրբոյ:

Ողջո՛յն քեզ, Մարիամ … –Սրբուհի Մարիամ …

Ահաւասիկ կամ աղախին Տեառն:

–Եղիցի՛ ինձ ըստ Բանի Քում:

Ողջո՛յն քեզ, Մարիամ … –Սրբուհի Մարիամ …

Եւ Բանն մարմին եղեւ:

–Եւ բնակեաց ի մեզ:

Ողջո՛յն քեզ, Մարիամ … –Սրբուհի Մարիամ …

Աղաչեա՛ վասն մեր, Սուրբ Աստուածածին:

–Զի արժանի լիցուք խոստմանցն Քրիստոսի:

Աղաչեմք զքեզ, Տէ՛ր, հե՛ղ զշնորհս քո՝ ի միտս մեր, որպէսզի որք աւետեօք հրեշտակին զմարդեղութիւն Որդւոյ քոյ Քրիստոսի ծանեաք, ի ձեռն չարչարանաց եւ Խաչի նորա առաջնորդեալ հասցուք ի փառս յարութեան, ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր. Ամէն:

Փառք Հօր … –Այժմ եւ միշտ …

ժամը 6:00-ին, 12:00-ին եւ 18:00-ին՝ եկեղեցու զանգերի ղօղանջների ժամանակ: Այդ սովորութիւնը այսօր էլ շարունակւում է շատ համայնքներում, մանաւանդ՝ կէսօրուայ աղօթքը, նոյնիսկ, աշխատանքի ամենաթէժ պահին: Հռոմի Սրբազան Քահանայապետը ամեն կիրակի՝ ուղիղ կէսօրին, աղօթում է «Հրեշտակ Տեառն»-ը եւ մի կարճ հայրական խօսք ասում: Այս մասին առաւել մանրամասն տե՛ս՝ Մեսրոպ Հայունի, «Ահա՛, այսուհետեւ բոլոր ազգերը պիտի երանեն զիս, որովհետեւ հզօրը մեծ սքանչելիքներ ըրաւ զիս», Այնճար, 2015, էջ՝ 180:

Աղաչեմք զքեզ, ո՛վ հրեշտակ Աստուծոյ, կարգեալ ի պահպանութիւն մեր, զյանձնեալքս ի քեզ՝ լուսաւորեա՛ այսօր, վերնական գթութեամբդ պաշտպանեա՛, հովուեա՛, ուղղեա՛ եւ կառավարեա՛. Ամէն:

Անուն Յիսուսի փառաւորեալ եղիցի.

– Եղիցի, եղիցի:

ՈՒՐԱԽ ԼԵՐ[30]

Ուրախ լե՛ր, Թագուհի երկնից, ալէլուիա:

– Քանզի զոր դու ի քեզ կրել արժանի եղեր, ալէլուիա:

Յարեաւ, ահա որպէս ասացն, ալէլուիա:

– Աղաչեա՛ վասն մեր զԱստուած, ալէլուիա:

Խնդա՛ եւ ուրախ լե՛ր, Կոյս Մարիամ, ալէլուիա:

– Զի ճշմարտապէս յարեաւ Տէրն, ալէլուիա:

---

30 «Ուրախ լե՛ր, Թագուհի երկնից» (լատ.՝ Regina Caeli) աղօթք-օրհներգը եւս մեծ տարածում ունի արեւմտեան կաթողիկէ համայնքներում, աղօթում են «Հրեշտակ Տեառն» աղօթքի փոխարէն՝ Յարութեան կիրակիից մինչեւ Երրորդութեան կիրակին ընկած շրջանում: Այս աղօթքի ծագումը եւս յստակ չէ, բայց 13-րդ դարում արդէն տարածուած էր ֆրանցիսկեան վանքերում: Այս աղօթքով խնդակից ենք լինում Աստուածամօրը՝ Իր Սուրբ Որդու Յարութեան համար եւ կանխաճաշակում երկնային ցնծութիւնը:

Աստուած, որ յարութեամբ Որդւոյ Քոյ՝ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի արժանի համարեցար ուրախ առնել զաշխարհ:

– Տու՛ր մեզ, աղաչեմք, զի ի ձեռն Ծնողի Նորին՝ Կուսին Մարիամու հասանիցեմք յաւիտենական ուրախութեանցն՝ յերկինս, Տերամբ մերով՝ Յիսուսիւ Քրիստոսիւ: Ամէն:

Փառք Հօր … – Այժմ եւ միշտ …

Աստուա՛ծ, որ յարութեամբ Որդւոյ քոյ, Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, զաշխարհ ուրախ առնել հաճեցար տո՛ւր մեզ, աղաչեմք, զի ի ձեռն Ծնողի նորին Կուսին Մարիամու, հասցուք յյաւիտենական ուրախութեանց յերկինս՝ Տերամբ մերով՝ Յիսուսիւ Քրիստոսիւ. Ամէն:

Աղաչեմք զքեզ, ո՛վ հրեշտակ Աստուծոյ, կարգեալ ի պահպանութիւն մեր, զյանձնեալքս ի քեզ՝ լուսաւորեա՛ այսօր, վերնական գթութեամբդ պաշտպանեա՛, հովուեա՛, ուղղեա՛ եւ կառավարեա. Ամէն:

Անուն Յիսուսի փառաւորեա՛լ եղիցի.

– Եղիցի, եղիցի:

ՔԵ՛Զ ԵՄ ՅԱՆՁՆԻՈՒՄ ԱՄԲՈՂՋՈՎԻՆ, ՏԻՐԱՄԱ՛ՅՐ

Քե՛զ եմ յանձնւում ամբողջովին, Տիրամա՛յր: Դնում եմ ոտքերիդ առջեւ՝ ինչ որ ունեմ. ձիրքերս, որ զարգացնեմ դրանք, թերութիւններս, որ քեզ հետ ուղղեմ դրանք, մեղքերս, որ քեզ հետ քավեմ դրանք:

Ամբողջովին եւ ամէն բանում վստահում եմ քեզ: Աշխատանքիս մէջ ոգեւորի՛ր ինձ, ցաւերիս մէջ սփոփի՛ր ինձ, ուրախութեանս մէջ ազնուացրու՛ ինձ, ուղեւորութեանս ընթացքում առաջնորդի՛ր ինձ:

Բաւական է, որ իմանամ, որ դու ես ինձ ուղղում, այնտեղ, ուր ուզում ես տանել ինձ, երջանկութեանս նաւահանգիստն է ապահով: Ինչպէ՞ս ամբողջ յոյս եւ վստահութիւնս չդնեմ քո վրայ, Տիրամա՛յր:

ԱՂՕԹՔ՝ ԶՄՄԱՌԻ ՏԻՐԱՄՕՐԸ

Ո՛վ ցաւագին Տիրամայր, ահա քո առջեւ խոնարհւում եմ՝ իբրեւ մի խեղճ մեղաւոր: Ընդունի՛ր աղօթքներս եւ արցունքներս:

Ողջո՛յն քեզ Մարիամ...

Ո՛վ ցաւագին Մարիամ, բարեխօսի՛ր ինձ համար, որ քեզ եմ դիմում: Ո՛վ ցաւագին Տիրամայր, հոգիս յուսահատ է եւ կարիքների բեռան

տակ կքած: Ջօրացրո՛ւ եւ մխիթարի՛ր ինձ՝ զաւակիդ: Սիրում եմ, պաղատում եմ քեզ:

Ողջո՛յն Քեզ Մարիամ...

Ո՜վ ցաւագին Մարիամ, բարեխօսի՛ր ինձ համար, որ քեզ եմ դիմում: Ո՜վ ցաւագին Տիրամայր, սրտիս մէջ ծագում է յոյսը, թէ ինձ պիտի լսես անպայման: Այս է շնորհը (...), որ ակնկալում եմ քեզնից եւ ամբողջ սիրտս նուիրում եմ քեզ:

Ողջո՛յն Քեզ Մարիամ...

Ո՜վ ցաւագին Մարիամ, բարեխօսի՛ր ինձ համար, որ քեզ եմ դիմում: Ամէն:

ՏՈՒ՛Ր ԻՆՁ ՍԻՐՏ՝ ՆՄԱՆ ՔՈ ՍՐՏԻՆ[31]

Սրբուհի Մարիա՛մ, Մա՛յր Աստուծոյ, տու՛ր ինձ մի սիրտ մանկական, որ լինի ջինջ ու պայծառ՝ մշտահոս աղբիւրի նմա: Տու՛ր ինձ մի սիրտ՝ պարզ եւ համեստ, որ չհրճուի ուրիշների տխրութեամբ. սիրտ մի վեհանձն՝ նուիրուելու, եւ եռանդուն՝ ներելու մէջ, սիրտ մի պարկեշտ եւ ասպետական, որ չմոռանայ բարիքը եւ չյիշի բնաւ չարիքը: Տու՛ր ինձ մի սիրտ քաղցր եւ խոնարհ, որ սիրի՝ առանց սէր ակնկալելու, սիրտ մեծ եւ անզուսպ ու արի, որ չընկնճուի ուրիշների ապերախտութեամբ եւ

---

31 Հեղինակ՝ ֆրանսիացի Յիսուսեան միաբան, աստուածաբան Հ. Լէոնս Դը Գրանմեզոն (Léonce de Grandmaison)

չյուսալքուի նրանց անտարբերութեամբ: Տուր ինձ մի սիրտ տառապող, սիրտ մի տանջուող՝ Քրիստոսի փառքով, վիրաւորուած նրա սիրով եւ բուժելի՝ միայն Երկնքում:

ԵՐԻՏԱՍԱՐԴԻ ԱՂՕԹՔԸ՝ ԱՍՏՈՒԱԾԱՄՕՐԸ[32]

Ո՛վ Մայր, գիտեմ, որ կեանքս ամբողջովին չի համապատասխանում բաղձանքիս:

Ուզում եմ մաքուր լինել, բայց քաջութիւն չունեմ միտքս ու հայեացքներս հեռու պահելու պիղծ բաներից: Ուզում եմ պարկեշտ ու անկեղծ լինել, բայց չեմ խուսափում սնապարծութիւնից եւ կեղծիքից: Ուզում եմ աստուածասէր լինել, բայց պատրուակ եմ փնտռում՝ աղօթքներս զանցառելու համար: Ուզում եմ եղբայրասէր լինել, բայց շատ անգամ անիմաստ կերպով վիրաւորում եմ շրջապատս: Ուզում եմ խոնարհ լինել, բայց առիթը չեմ կորցնում՝ ինքս ինձ գովք հիւսելու: Ուզում եմ աշխատասէր լինել, բայց վատնում եմ ժամանակս՝անիմաստ խօսակցութիւնների եւ դիտումների վրա: Ուզում եմ գթասիրտ լինել, բայց գլուխս թեքում եմ, երբ աղքատի եմ հանդիպում: Ուզում եմ անձնուէր լինել, բայց մերժում եմ ծառայել ընտանիքիս կամ ընկերական շրջապատիս:

---

32 Հեղինակ՝ Ֆ. Էլլօթ

Ո՛վ Մայր, սովորեցրո՛ւ ինձ գործածել երազածս գաղափարները: Քո ամէն արարքը արտայայտութիւնն է հոգուդ ներքին ծալքերի: Ցո՛յց տուր, թէ ինչ պէտք է անեմ, որ վեհանձնութեան ներքին իղձերս կանգ չառնեն շրթունքներիս վրայ:

Սովորեցրու՛ ինձ զգալ քեզ պէս, բայց, մանաւանդ, գործե՛լ քեզ նման: Ինչ որ սրտիցս է բխում՝ թող մարմնանայ խօսքերիս, մտածումներիս եւ արարքներիս մէջ:

ԱՂՕԹՔՆԵՐ՝ ՈՒՂՂՈՒԱԾ ՍՐԲԵՐԻՆ



ԱՂՕԹՔ՝ ՍՈՒՐԲ ՅՈՎՍԷՓԻՆ

Մեր վշտերի մեջ, քեզ ենք դիմում, ո՛վ Սուրբ Յովսէփ: Մարիամի օգնութիւնը հայցելուց յետոյ, վստահութեամբ խնդրում ենք նաեւ քո պաշտպանութիւնը: Այն սիրոյ համար, որ քեզ միացրեց անարատ կոյսին՝ Աստուածամօր հետ, եւ այն հայրական սիրոյ, որ տածեցիր Յիսուս մանկան հանդէպ, խնդրում ենք քեզ, բարեհաճ աչքով նայի՛ր Յիսուս Քրիստոսի արեամբ փրկուած ժառանգութեանը եւ քո օգնութեամբ ու իշխանութեամբ հոգա՛ մեր կարիքները:

Ո՛վ աստուածային ընտանիքի պահապա՛ն, պաշտպա՛ն Յիսուս Քրիստոսի ընտրեալ սերնդի, հեռո՛ւ պահիր մեզանից, ո՛վ ամենասիրելի հայր, մոլորութեան ու մոլութեան ախտերը: Օգնի՛ր մեզ երկնքից, ո՛վ մեր զօրեղ ազատարար, խաւարի իշխանութեան դէմ մեր մղած պայքարի մեջ. եւ ինչպէս որ մանուկ Յիսուսի կեանքը մօտալուտ մահից ազատեցիր, այդպէս էլ հիմա Աստուծոյ Սուրբ Եկեղեցին պաշտպանի՛ր թշնամիներից ու ամէն հակառակորդներից:

Քո հովանաւորութեամբ պահպանի՛ր մեզ, որպէսզի քո օրինակով եւ քո օգնութեամբ զօրացած՝ կարողանանք ապրել սրբութեամբ, մեռնել բարեպաշտութեամբ եւ յաւիտենական երանութիւնը ստանալ երկնքում. Ամէն:

ԱՂՕԹՔ ՍՈՒՐԲ ՅՈՎՍԷՓԻՆ՝ ՅՈԲԵԼԵԱՆԱԿԱՆ ՏԱՐՈՒԱՅ ՀԱՄԱՐ[33]

Ողջո՛յն, Պահապան Փրկչի,
Ամուսի՛ն Երանելի Սուրբ Կոյս Մարիամի,
Աստուած Քեզ վստահեց իր Միածին Որդուն,
Քեզ վստահությամբ հետեւեց Մարիամը,
Քո կողքին Քրիստոս դարձաւ մարդ:
Երանելի՛ Յովսէփ, մեզ համար եւս եղի՛ր հայր եւ
Առաջնորդի՛ր մեզ կեանքի ճանապարհին:
Մեզ համար ձեռք բե՛ր շնորհ, ողորմութիւն եւ քաջութիւն,
Եւ պաշտպանի՛ր մեզ ամենայն չարից. ամէն:

Ն.Ս. Ֆրանցիսկոս Քահանայապետ
«Հայրական սրտով» առաքելական նամակ

---

33 2020թ. դեկտեմբերի 8-ին՝ Կոյս Մարիամի Անարատ Յղութեան տօնին, Ն. Ս. Ֆրանցիսկոս Սրբազան Քահանայապետը հրապարակեց իր «Patris Corde»՝ «Հայրական սրտով», առաքելական նամակը՝ Սուրբ Յովսէփին տիեզերական Եկեղեցու հովանաւոր հռչակելու 150-ամեակի առթիւ: Այս նամակով Քահանայապետը 2020թ. դեկտեմբերի 8-ից մինչեւ 2021թ. դեկտեմբերի 8-ը Կաթողիկէ Եկեղեցում հռչակեց Սուրբ Յովէփին նուիրուած տարի՝ նպատակ ունենալով հաւատացեալների ուշադրութիւնը հրաւիրել դէպի Սուրբ Յովսէփի կերպարը, Սուրբ Ընտանիքի եւ Եկեղեցու կեանքում նրա ունեցած առաքելութիւնը, առաւել մեծ ջերմեռանդութեամբ աղօթել եւ խնդրել նրա պաշտպանութիւնը, մանաւանդ, հիւանդութիւնների եւ սոցիալական դժուարութիւնների պարագաներում:

ԼԻԹԱՆԻԱ ՍՈՒՐԲ ՅՈՎՍԷՓԻ

Տէ՛ր, ողորմեա՛. Քրիստոս, ողորմեա՛:
Յիսուս, լո՛ւր մեզ, Քրիստոս անսա ՛մեզ:
Հայր երկնաւոր Աստուած, ողորմեա՛ մեզ:
Որդի Փրկիչ աշխարհի Աստուած, ողորմեա՛ մեզ:
Հոգի Սուրբ Աստուած, ողորմեա՛ մեզ:
Ս. Երրորդութիւն, Մի Աստուած, ողորմեա՛ մեզ:
Սրբուհի՛ Մարիամ, աղօթեա՛ վասն մեր:
Սո՛ւրբ Յովսէփ, աղօթեա՛…
Սո՛ւրբ Յովսէփ, փառաւոր որդի Դաւթի, աղօթեա՛...
Սո՛ւրբ Յովսէփ, լոյս նահապետաց, աղօթեա՛...
Սո՛ւրբ Յովսէփ, փեսայ Աստուածածին Կոյսի, աղօթեա՛...
Սո՛ւրբ Յովսէփ, անարատ պահապան Սրբոյ Կուսին, աղօթեա՛...
Սո՛ւրբ Յովսէփ, խնամակալ Աստուծոյ Որդու, աղօթեա՛...
Սո՛ւրբ Յովսէփ, նախանձաւոր պաշտպան Քրիստոսի, աղօթեա՛...
Սո՛ւրբ Յովսէփ, գլուխ սուրբ ընտանիքի, աղօթեա՛...
Սո՛ւրբ Յովսէփ, այր արդար, աղօթեա՛...
Սո՛ւրբ Յովսէփ, այր անբիծ, աղօթեա՛...
Սո՛ւրբ Յովսէփ, այր իմաստուն աղօթեա՛...
Սո՛ւրբ Յովսէփ, այր քաջ, աղօթեա՛...
Սո՛ւրբ Յովսէփ, այր հնազանդ, աղօթեա՛...
Սո՛ւրբ Յովսէփ, այր հաւատարիմ, աղօթեա՛...
Սո՛ւրբ Յովսէփ, հայելի համբերութեան, աղօթեա՛...

Սո՛ւրբ Յովսէփ, սիրող աղքատութեան, աղօթեա՛...
Սո՛ւրբ Յովսէփ, օրինակ աշխատողաց, աղօթեա՛...
Սո՛ւրբ Յովսէփ, փառք ընտանի կենաց, աղօթեա՛...
Սո՛ւրբ Յովսէփ, պահապան կուսանաց, աղօթեա՛...
Սո՛ւրբ Յովսէփ, նեցուկ ընտանեաց, աղօթեա՛...
Սո՛ւրբ Յովսէփ, մխիթարութիւն թշուառաց, աղօթեա՛...
Սո՛ւրբ Յովսէփ, յոյս հիւանդաց, աղօթեա՛...
Սո՛ւրբ Յովսէփ, պաշտպան հոգեվարաց, աղօթեա՛...
Սո՛ւրբ Յովսէփ, սարսափ դիւաց, աղօթեա՛...
Սո՛ւրբ Յովսէփ, պաշտպան Սուրբ Եկեղեցւոյ, աղօթեա՛...
Գառն Աստուծոյ, որ բառնաս զմեղս աշխարհի, խնայեա՛ ի մեզ Տէր,
Գառն Աստուծոյ, որ բառնաս զմեղս աշխարհի, անսա՛ մեզ Տէր,
Գառն Աստուծոյ, որ բառնաս զմեղս աշխարհի, ողորմեա՛ մեզ Տէր.

Կացոյց զնա տէր տան իւրոյ,

Եւ իշխան ի վերայ ամենայն ստացուածոց իւրոց:

Աստուած, որ ըստ անքնին խորհրդոց քոց ընտրեցեր զսուրբ նահապետն Յովսէփ ի փեսայ անարատ Մօր քո եւ Կուսի, տուր մեզ զի ջերմ եռանդեամբ մեծարելով զնա յերկրի, արժանի լիցուք բարեխօս ունել զնա առ քեզ յերկինս, որ կենդանի ես եւ թագաւորես ի յաւիտեանս. ամէն:

ԱՌԱՆՁՆԱԿԱՆ ԱՂՕԹՔ՝ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐՉԻՆ[34]

Քահանայապե՛տ Աստուծոյ, մեծ խոստովանող Քրիստոսի եւ քարոզիչ ճշմարտութեան, երանելի սուրբ հայր Գրիգո՛ր, ընտրեալ յԱստուծոյ ի լուսաւորութիւն եւ ի գիտութիւն ճշմարտութեան: Երեւելի ես վարքովդ, նշանաւոր իմաստութեամբդ, զարմանալի՝ հրաշագործութեամբդ: Ո՜վ երանելի ծառայ Աստուծոյ, հայցում եմ քո բարեխօսութիւնը: Խոնարհութեամբ խնդրում եմ, որ բժշկես մեղուցեալ հոգիս, որ առաքինութիւններից զուրկ, շնորհներից կողոպտուած եւ բազում մեղքերով աղտոտուած է: Օգնի՛ր խեղճ հոգուս, երջանիկ սուրբդ Աստուծոյ, որ աստուածամերձ վարքովդ, քաղցրաբուխ յորդորներովդ, առաքելաշնորհ

34 Հ. Գրիգոր Վրդ. Գովրիկեան, «Բանալի արքայութեան», Վիեննա, 1887թ.

քարոզութեամբդ այնքա՛ն բազմութեան սրտերը լոյսով լուսաւորեցիր, աստուածպաշտութեան ոգով վառեցիր եւ յաւիտենական երջանկութեան հասցրեցիր: Օգնի՛ր ինձ, ով սուրբ հա՛յր, թող խոնարհուեն ականջներդ պաղատանքներիս: Առջեւդ ընկած՝ խնդրում եմ հզօր բարեխօսութիւնդ, որ Աստծուց շնորհներ խնդրես ինձ համար՝ դուրս ելնելու մեղքերիս տղմից, հոգիս բժշկելու եւ առաքինութիւններով զարդարելու: Խնդրի՛ր Աստծուց, ո՛վ երանելի Սուրբ Գրիգոր, որ խաղաղութիւն պարգեւի Եկեղեցուն, ցրի տարածուած վատ սկզբունքներն ու մոլորութիւնները, վերացնի հերձուածները, Սուրբ Հոգով լցնի Եկեղեցու պաշտօնեաներին եւ սէր ու միաբանութիւն շնորհի իր հաւատացեալներին.Ամէն:

ԼԻԹԱՆԻԱ՝ Ի ՊԱՏԻՒ ՍՐԲՈՅ ՀՕՐՆ ՄԵՐՈՅ ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԻՆ[35]

Տէր, ողորմեա՛ց.
Քրիստոս ողորմեա՛ց.
Տէր, ողորմեա՛ց.
Քրիստոս լու՛ր մեզ,
Քրիստոս անսա՛ մեզ:
Հայր երկնաւոր Աստուած, ողորմեա՛ց մեզ.
Որդի Փրկիչ աշխարհի Աստուած. ողորմեա՛ց մեզ.

---

35 Նոյն տեղում

Հոգիդ Սուրբ Աստուած, ողորմեա՛ց մեզ.
Սուրբ Երրորդութիւն մի Աստուած, ողորմեա՛ց մեզ.
Սրբուհի Մարիամ, աղօթեա՛ վասն մեր,
Սուրբ Աստուածածին, աղօթեա՛…
Սուրբ Կոյս Կուսանաց, աղօթեա՛…
Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ, աղօթեա՛…
Դրախտ աստուածատունկ ծաղկեալ, աղօթեա՛…
Պարգեւական զաւակ նշխարացն առաքելոյն Թադէոսի, աղօթեա՛…
Բարունակ ողկուզաբեր ճշմարիտ Որդոյն Քրիստոսի, աղօթեա՛…
Գարնանաբեր հողմն հալեցուցիչ սառին կռապաշտութեան, աղօթեա՛…
Դրախտ նորազուարճ տնկեալ յաշխարհիս հայոց, աղօթեա՛…
Երկնային լոյս ծագեալ իր յերկրի, աղօթեա՛…
Քահանայապետ՝ ընտրեալ աստուածային յայտնութեամբ, աղօթեա՛…
Քաղցրաձայն հնչմամբ դարձուցիչ մոլորեալ հօտին, աղօթեա՛…
Թագ պարծանաց արշակունեաց առաքելական վարուքդ, աղօթեա՛…
Վայելուչ պսակ՝ հիւսեալ Սուրբ Եկեղեցւոյ, աղօթեա՛…
Քաղցրաճաշակ արմաւենի՝ ի տանն Աստուծոյ տնկեալ, աղօթեա՛…

Ծնող հոգեւոր եւ գորովագութ հայր պարծանաց, աղօթեա՛…
Հայաստանեայց հայր հաւատոյ, հեղինակ ընտրեալ, աղօթեա՛…
Նահատակ բարի Քրիստոսի ընտրեալ եւ զինուոր անյաղթելի, աղօթեա՛…
Շառաւիղ լուսազարդ ճանապարհին կենաց, աղօթեա՛…
Չնաշխարհիկ պարծանք հողեղէն բնութեանս, աղօթեա՛…
Պարակից հոգեղինաց երկնային զօրաց, աղօթեա՛…
Ցանկալի սերովբէից անմարմնական վարուքդ, աղօթեա՛…
Յորդառատ բանիւ լուսաւորող Հայաստան աշխարհի, աղօթեա՛…
Աստուածային տեսլեամբ բժշկող հարուածելոց ի դիւաբախ ախտից, աղօթեա՛…
Քահանայապետ անբիծ քարոզող աստուածային բանին, աղօթեա՛…
Ղեկօք հաւատոյ ընդ ծով աշխարհիս անցեալ, աղօթեա՛…
Խոստովանող Քրիստոսի ճշմարիտ վկայ, բազմաչարչար նահատակ, աղօթեա՛…
Աստուածագութ ծնող տառապեալ որդեացդ ազգիս Հայոց, աղօթեա՛…
Հայցեա՛ առ Հայր երկնաւոր, կատարել զընթացս մեր ուղղափառութեամբ, աղօթեա՛…

Գառն Աստուծոյ, որ բառնաս զմեղս աշխարհի,
խնայեա՛ ի մեզ, Տէր,
Գառն Աստուծոյ, որ բառնաս զմեղս աշխարհի,
անսա՛ մեզ, Տէր,
Գառն Աստուծոյ, որ բառնաս զմեղս աշխարհի,
ողորմեա՛ց մեզ,
Յիսուս, լո՛ւր մեզ, Քրիստոս անսա՛ մեզ:

ԱՂՕԹՔ

Տէր մեր Յիսուս Քրիստո՛ս, Բան Հօր եւ իմաստութի՛ւն յաւիտենական, ճշմարիտ Մարդ եւ Քահանայապե՛տ յաւիտենից, ըստ կարգին Մելքիսեդեկի, որ մեր՝ մոլորեալ ոչխարի բնութիւնը գտնելու համար աշխարհ գալով՝ Սուրբ Խաչիդ հետ կենսաբեր ուսերիդ վրայ առար, եւ առաջնորդեցիր Քո օրինաց քաղցր լծով՝ քաջ հովիւներ ու լաւ առաջնորդներ տալով: Նոյն գթութեան խնամքը տարածեցիր նաեւ հայոց աշխարհի վրայ՝ շնորհելով իբրեւ հովիւ եւ առաջնորդ՝ մեր հայր Սուրբ Գրիգոր Լուսաւորչին՝ աստուածային օրէնքի տիրապէս քարոզողին: Որ հայոց ազգը անաստուածութեան խաւարից աստուածգիտութեան լոյսին դարձրեց եւ Քո քաղցր օրէնքի լծի տակ դրեց: Արդ, այս քաջ նահատակի բարեխօսութեամբ ծագի՛ր մեզ վրայ լոյսդ շնորհների, որ անսասան մնանք Քո օրէնքի մէջ՝ միշտ հետեւելով Քաջ Հովուիդ ձայնին, որպէս զի մեր կեանքի վերջում ուղղափառ դաւանութեամբ

արժանի լինենք հասնելու Լոյսի Խորանին, ուր՝ որպէս մեր հօր հոգիներ, նրա հետ միասին փառաւորենք ճշմարիտ Քահանայապետիդ՝ մեր Տէր Յիսուս Քրիստոսին, որ է օրհնեալ յաւիտեանս. Ամէն:

ԱՂՕԹՔ՝ ՍՈՒՐԲ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԿՐՏՉԻՆ

Ո՛վ Սուրբ Յովհաննէս, որ երկար տարիներ ճգնեցիր անապատում, նախապատրաստելով Յիսուս Քրիստոսի գալուստը, մեր հոգի-ները տրամադրի՛ր, որ լսենք Աստուծոյ ձայնը: Աստուծոյ առաջ դու նախասիրեալ անձ էիր, եւ Քրիստոս քեզ որակեց «Մեծագո՛յն ի ծնունդս կանանց»: Հակառակ այս բոլորի, դու, օրինակելի էիր քո խոնարհութեամբ, դու հրաժարւում էիր քանդել Քրիստոսի կօշիկների կապերը՝ քեզ արժանի չհամարելով եւ յայտարարում էիր աշակերտներիդ,

որ դու քեզ երջանիկ ես զգում՝ տեսնելով Քրիստոսի փառքի տարածումն ու քո սեփական փառքի նուազումը: Համապատասխան քո վսեմ խօսքին՝ ամբողջ կեանքդ ապաշխարութիւն եղաւ՝ սկսած անապատի տաժանքներից մինչեւ գլխատումդ նկուղի մէջ. դու հանդիսացար ապաշխարութեան անզուգական մի առաքեալ:

Խնդրում ենք քեզ, ո՛վ Սուրբ Կարապետ, օգնի՛ր մեզ, որ մենք էլ ապաշխարութեան ոգով անցկացնենք մեր կեանքը՝ աննշան չափով գոնէ նմանուելով քեզ եւ մեր Տէր Յիսուս Քրիստոսին. Ամէն:

ԱՂՕԹՔ՝ ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍ ՋՕՐԱՎԱՐԻՆ

Ո՛վ Սուրբ Սարգիս, քաջ զօրավար եւ նահատակ, դո՛ւ, որ քաջութեամբ զարմացրիր քո ժամանակի բոլոր զօրականներին, անձնուրացութեամբ մոռացութեան տուեցիր փառք ու աստիճան, անվախ փշրեցիր սին կուռքերը, եւ արիաբար յանձն առար նահատակուել Քրիստոսի սիրոյ համար: Դո՛ւ, որ զոհաբերման սքանչելի օրինակն ես մեզ համար: Երբ դժուարութեան պահերին մոռանում ենք մեր հոգեւոր պարտականութիւնները՝ վազելով աշխարհային սին փառքի ու պատուի հետեւից, զգաստացրո՛ւ մեզ: Դո՛ւ քրիստոնեաների արագահաս եւ հզօր

պաշտպան, պաշտպանի՛ր եւ մեր հաւատքը, եւ խնդրի՛ր Քրիստոսից, որին այնքա՜ն սիրեցիր երկրի վրայ, մեզ եւս օժտել հաւատարմութեան ուխտով, որպէս զի հաւատարիմ մնանք մեր հաւատքին եւ արժանանաք իր զինուորները կոչուելու. Ամէն:

ԱՂՕԹՔ՝ ՍՈՒՐԲ ՍԱՀԱԿԻՆ ԵՒ ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊԻՆ

Ո՛վ անձնազոհ սուրբ Հայրեր, դուք ուրացաք ձեր անձն ու ձեր ձիրքերը, լքեցիք աշխարհն ու աշխարհային գոռոզ փառքերը, զոհաբերութեան ոգով ընդունեցիք սքեմը, գիտակցօրէն յանձն առաք տառապել ու տանջուել՝ ապրեցնելու համար մի ողջ ժողովուրդ: Դուք ստեղծեցիք ձեր ազգի իրական փառքն ու հոգեւոր արժէքները, Հային պարգեւեցիք Գիր ու Աստուածաշունչ Մատեան, բոլոր խաւար հոգիների մէջ վառեցիք երկնային Լոյսը եւ մոլորեալ հոգիները դարձրիք դէպի Աստուած, Հայաստան աշխարհը դարձրիք մի հսկայ տաճար: Այդ տաճարում հայ ժողովուրդն իր անքակտելի ուխտը կնքեց Աստուծոյ հետ եւ վասն հաւատքի եւ հայրենեաց պայքարի ելաւ խաւարի չար ուժերի դէմ ու յաղթանակեց միշտ հոգով: Ո՛վ հայոց անմոռաց հայրապետներ, յաւիտեան պաշտպան կանգնեցէ՛ք մեր տարաբախտ ժողովրդին, մի թողէք, որ կորչենք թափառումների

ճանապարհների վրայ եւ լքենք մեր սրբազան խորանները, խնդրեցէ՛ք Աստուծուց, որ վերարթնացնի հայութեան սրտում հաւատաւոր ժողովրդի առաքինութիւնները, պահի սիրոյ, համերաշխութեան եւ բարօրութեան մէջ եւ դարձնի մէկ միաւորեալ Ազգ, նախնիների հաւատքով ու առաքինութիւններով բարեզարդի երիտասարդ հոգիները, որպէսզի հաւատարմաբար եւ նուիրումով ծառայեն Աստծուն եւ հայրենիքին. Ամէն:

ԱՂՕԹՔ՝ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՋՕՐԱՎԱՐՆԵՐԻՆ

Ով սուրբ զօրավարնե՛ր, դուք, որ փառքն ու պարծանքն էք Սբ. Եկեղեցու եւ Հայ ժողովրդի, դուք անպարտելի զինուորագրեալներդ հայոց հաւատքի ու աշխարհի, դուք՝ քաջութեան եւ զոհաբերումի անպարտելի ասպետներ, որ խիզախօրէն մահն ընդունեցիք՝ դարերով անմահանալու համար, դո՛ւք՝ հաւատքի ու արդարութեան ջահակիրներ, ահա մենք էլ մեր խոնարհ փառաբանութիւնն ենք միացնում հայոց տաճարներում մխացող խունկ ու աղօթքին, երգին ու գոհաբանութեանը, ձեր յաղթական հոգիները փառաբանելու համար: Ով քաջե՛ր եւ սրբե՛ր հայոց, շարունակեցէ՛ք պաշտպան կանգնել մեր ազգին, երիտասարդ սրտերը վառէք հաւատքի ու հայրենիքի սիրով, որպէս զի սերունդները քայլեն ձեր գծած

լոյսի ու արդարութեան ճանապարհով: Մեր երիտասարդներին դարձրէ՛ք աստուածապաշտ եւ հայրենասէր, փոխանցէ՛ք նրանց ձեր պայքարի սրբազան դրօշը, որի վրայ գրուած է *Աստուած եւ ժողովուրդ*:

ԱՂՕԹՔ՝ ՍՈՒՐԲ ՀՌԻՓՍԻՄԵԱՆՑ ԵՒ ՍՈՒՐԲ ԳԱՅԵԱՆԵԱՆՑ

Ո՛վ սուրբ կոյսերի աստուածապաշտ եւ ազնուազարմ փաղանգ, որ թողնելով Հռոմն ու նրա մթաշուք փառքերը, ցանկացաք քայլել Քրիստոսի հետքերով, ազնիւ զգացումներով լցրէ՛ք մեր երիտասարդուհիների սրտերը, որպէս զի ձեր օրինակով առինքնուած՝ հետեւեն ձեր կուսական անմեղութեանը եւ աստուածանուէր ընթացքին: Թողեցիք փառք ու պատիւ, պերճանք ու վայելք, ընտանեկան հանգիստ ու գուրգուրանք, թափառեցիք երկրէ երկիր՝ որոնելով միայն Քրիստոսի պարգեւած հանգիստը: Անբիծ ու անխորտակ պահելու համար ձեր հաւատքն ու կուսութիւնը, սիրով ենթարկուեցիք հալածանքի՝ նահատակութեան փառապսակին արժանանալու համար: Այժմ մենք դիմում ենք ձեր ազդու բարեխօսութեանը, ո՛վ սուրբ կոյսեր, արթնացրէ՛ք մեր սրտերի մէջ մաքրամաքուր առաքինութիւնների փափաքն ու սէրը, որպէս զի

մենք էլ ձեզ նման վանենք մեր սրտերից ամէն յոռի մտածում՝ անաղարտ պահելով մեր սրտերի անմեղութիւնը. Ամէն:

ԱՂՕԹՔ՝ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑՈՒՆ

Ո՛վ Սուրբ Գրիգոր Նարեկացի, այր աստուածապաշտ, ճգնաւոր սուրբ, Քրիստոսի սիրոյ աննման տաւիղ, Դու, որ մարդկային խեղճութիւնները պարզեցիր Աստուծոյ առաջ, գթութիւն եւ ողորմութիւն խնդրեցիր բոլորի համար, տո՛ւր ինձ քո մեծ հոգու անհանգչելի կրակից, որ ես էլ բոցավառուեմ Յիսուսի սիրով եւ, քեզ նման, իմ սրտի խորքից փառաբանեմ նրան: Մինչ այժմ էլ քո սրտաբուխ աղօթքներն են մեր շուրթերի վրայ եւ քո խնկաւէտ երգերով ենք փառաբանում Ամենակալին: Ո՛վ հանճարեղ միտք, լուսաւորի՛ր մեր ճամբան, ամրապնդի՛ր մեր հոգիները, որպէսզի քո հզօր մտքի պէս մեր մտածումներն էլ շարունակ սլանան դէպի երկինք: Քո ի խորոց սրտի խօսքերով բարեխօսի՛ր մեզ համար, եւ թող քո ազդու պաղատանքի շնորհիւ Աստուծոյ Գառն իջնի հայոց խորանների վրայ՝ մեր ժողովրդի հոգին բոցավառելու սիրով ու հաւատքով, որպէսզի մեր անդարար փառաբանութիւնը բարձրանայ դէպի Ամենակարողի աթոռը եւ մեր բիւրաւոր նահատակների արեան բուրմունքն

առնելով՝ Տէրը գթա եւ առաջնորդի մեր ժողովրդին սիրոյ եւ խաղաղութեան ճանապարհով՝ դէպի անմահութեան հանգրուանը. Ամէն:

ԱՂՕԹՔ՝ ՈՒՂՂՈՒԱԾ ՀՐԵՇՏԱԿՆԵՐԻՆ, ՍԵՐՈՎԲԷՆԵՐԻՆ ԵՒ ՔԵՐՈՎԲԷՆԵՐԻՆ

Ո՛վ երկնային զօրութիւններ, որ Աստուծոյ գահի շուրջ բոլորուած՝ անդադար օրհնում եւ փառաբանում էք Նրան, բարեխօսեցէ՛ք երկրի վրայ պայքարողներիս համար: Ընդունէ՛ք մեզ համար շնորհք եւ կարողութիւն՝ մեր կեանքը, նուիրաբերելու Աստծուն: Թո՛ղ մենք եւս ձեզ նման անվերապահօրէն կատարենք Նրա սուրբ կամքն ու փափաքները: Դրոշմէ՛ք մեր սրտերի մէջ Աստուծոյ օրէնքը, որ անսայթաք հետեւենք Իր հրամաններին: Օգնեցէ՛ք մեզ չարի դէմ մղած մեր պայքարում, որպէսզի ձեր օրինակի համեմատ մենք էլ դժոխքի ուժերին պարտութեան մատնենք եւ արժանանանք ձեզ հետ միասին յաւիտեանս փառաբանելու մեր Արարչին. Ամէն:

ԱՂՕԹՔ՝ ՍՈՒՐԲ ՊԵՏՐՈՍԻՆ ԵՒ ՍՈՒՐԲ ՊՕՂՈՍԻՆ

Ո՛վ գլխաւոր Առաքեալներ եւ նախասիրեալ-ներդ Քրիստոսի, մոռանալով ձեր անցած օրերի

խեղճութիւնն ու տկարութիւնները, անվեհերութեամբ լծուեցիք Քրիստոսի սուրբ հաւատքի տարածման սրբազան գործին՝ արհամարհելով տանջանք ու հալածանք, բանտարկութիւն եւ գանահարութիւն, ձեր արեամբ կնքեցիք ձեր սրբազան ուխտը եւ հաստատեցիք ձեր տարածած հաւատքի ճշմարտութիւնը: Մեզ էլ վարակէ՛ք ձեր աննման եռանդով՝ պայքարելու եւ մարտնչելու հաւատքի եւ արդարութեան համար, օգնեցէ՛ք մեզ, որ մենք էլ, հետեւելով ձեր օրինակին, մեր շրջապատում առաքեալներ լինենք եւ Քրիստոսի փառքը տարածենք մեր շրջանակի մէջ. Ամէն:

ԻՆՆՕՐԵԱՅ ԱՂՕԹՔ՝ ՍՈՒՐԲ ՇԱՐԲԷԼԻՆ



Առաջին օր

Ո՜վ Սուրբ Շարբէլ, հրաշագործ բժիշկ, որ քո անարատ եւ անփուտ մարմնից սփռւում է երկնքի բուրմունքը. հասի՛ր ինձ օգնութեան, եւ ընդունի՛ր ինձ համար Աստծուց խնդրած շնորհս ... (*ասել խնդրանքը*), որի կարիքն այնքա՜ն ունեմ, եթէ իրօք Աստծոյ փառքի եւ իմ հոգու փրկութեան համար է: Ամէն:

Սուրբ Շարբէլ, աղօթի՛ր ինձ համար:

Տէ՛ր, Դու, որ Սուրբ Շարբէլին պարգեւեցիր հաւատի շնորհը, խնդրում եմ, շնորհի՛ր ինձ նրա բարեխօսութեամբ իմ խնդրանքը՝ Քո պատուիրանների ու Աւետարանի համաձայն ապրելու: Քեզ փա՜ռք յաւիտեանս: Ամէն:

Հայր մեր…

Ողջո՛յն քեզ, Մարիամ…

Փա՜ռք Հօր:

Խորհրդածութիւն. Սուրբ Շարբէլի ապրած կեանքն այնքան առաքինի էր եւ նրա հոգու ջերմեռանդութիւնն այնպիսին, որ բոլորը նրան համարում էին Աստծոյ շնորհի գործիք:

Երկրորդ օր

Ո՜վ Սուրբ Շարբէլ, վանական կեանքի մարտիրոս, որ ճանաչել ես տառապանքը, ու Աստուած քեզ բարձրացրեց ինչպէս լուսատու փարոս. քեզ եմ դիմում եւ խնդրում Աստծուն, քո բարեխօսութեամբ, ի սրտէ խնդրած … (*ասել խնդրանքը*) շնորհս: Վստահում եմ քեզ: Ամէն:

Ո՜վ Սուրբ Շարբէլ, անօթ երկնային բուրմունքի, բարեխօսի՛ր ինձ համար:

Անսահման բարութեան Աստուած իմ, որ Սուրբ Շարբէլին պատուեցիր հրաշքներ գործելու շնորհով, ողորմի՛ր ինձ եւ պարգեւի՛ր նրա

բարեխօսութեամբ խնդրած այս շնորհս: Քեզ փա՛ռք յաւիտեանս: Ամէն:

Հայր մեր…

Ողջո՛յն քեզ, Մարիամ…

Փա՛ռք Հօր:

Խորհրդածութիւն. Սուրբ Շարբէլի ողջ սրբութիւնը մեր Փրկիչ Յիսուս Քրիստոսի հանդէպ նրա տածած սիրոյ մեջ է:

Երրորդ օր

Ո՛վ սիրելի Սուրբ Շարբէլ, որ ինչպէս պայծառ աստղ շողում ես եկեղեցու երկնակամարում, լուսաւորի՛ր իմ ճանապարհը եւ զօրացրո՛ւ իմ յոյսը: Խնդրում եմ … (*ասել խնդրանքը*) շնորհը: Խնդրի՛ր այն Խաչեալ Յիսուսից, Ում շարունակ երկրպագում էիր: Ամէն:

Ո՛վ Սուրբ Շարբէլ, համբերութեան եւ լռութեան տիպար օրինակ, բարեխօսի՛ր ինձ համար:

Ո՛վ Տէր Աստուած, որ Սուրբ Շարբէլին սրբացրեցիր եւ նրան օգնեցիր իր խաչը տանելու, տո՛ւր ինձ քաջութիւն համբերութեամբ կրելու կեանքի դժուարութիւնները եւ յանձնուելու քո աստուածային Կամքին, Սուրբ Շարբէլի բարեխօսութեամբ: Քեզ փա՛ռք, յաւիտեանս: Ամէն:

Հայր մեր…

Ողջո՛յն քեզ, Մարիամ…

Փա՛ռք Հօր:

Խորհրդածութիւն. Սուրբ Շարբէլի հոգին զարդարուեց Սուրբ Խորհրդի հրաշալի շքեղութեամբ՝ իր հերթին լուսաւորելով ամբողջ Եկեղեցին:

Չորրորդ օր

Ո՛վ սիրելի հայր, Սուրբ Շարբէլ, քո հանդէպ վստահութեամբ լեցուն սրտով քե՛զ եմ դիմում: Աստծոյ մօտ Քո հզօր բարեխօսութեամբ ակնկալում եմ քեզնից խնդրած շնորհս … (*ասել խնդրանքը*):

Մէկ անգամ եւս ցոյց տուր ինձ քո սէրը, ո՛վ Սուրբ Շարբէլ, առաքինութիւնների պարտէ՛զ, բարեխօսի՛ր ինձ համար:

Տէ՛ր, որ Սուրբ Շարբէլին պարգեւեցիր Քեզ նմանուելու շնորհը, տու՛ր ինձ աճել քրիստոնէական առաքինութիւններով, եւ ողորմի՛ր ինձ, Տէ՛ր, որպէսզի կարողանամ քեզ յաւերժ փառաբանել: Ամէն:

Հայր մեր…

Ողջո՛յն քեզ, Մարիամ…

Փա՛ռք Հօր:

Խորհրդածութիւն. Աստուած կանչեց Սուրբ Շարբէլին՝ յանուն Իր հանդէպ սիրոյ հրաժարուելու աշխարհից, եւ ճաշակելու աստուածային ուրախութիւնը:

Հինգերորդ օր

Ո՛վ Սուրբ Շարբէլ, Աստծոյ սիրելի, լուսաւորի՛ր ինձ, օգնի՛ր եւ սովորեցրու՛ իմ կեանքում կատարելու այն, ինչ հաճելի է Աստծուն: Գթասիրտ Հայր Շարբէ՛լ, հասի՛ր ինձ օգնութեան: Խնդրու՛մ եմ, Աստծուց ընդունես … (*ասել խնդրանքը*) այս շնորհը:

Ո՛վ Սուրբ Շարբէլ, Խաչեալի մտերիմ, միջնորդի՛ր ինձ համար:

Տէ՛ր, Սուրբ Շարբէլի բարեխօսութեամբ լսի՛ր իմ աղօթքները: Բժշկի՛ր իմ սիրտը եւ մխիթարիր. խաղաղութի՛ւն պարգեւիր իմ հոգուն: Ամէն:

Հայր մեր…

Ողջո՛յն քեզ, Մարիամ…

Փա՛ռք Հօր:

Խորհրդածութիւն. Սուրբ Շարբէլը երկրի վրայ ապրեց աղքատ եւ խոնարհ, բայց երկինք մտաւ հարստացած, եւ այսօր նրա պատուին հնչում են երկնային շարականներ:

Վեցերորդ օր

Ո՛վ Սուրբ Շարբէլ, հզօր բարեխօ՛ս, խնդում եմ քեզ, որ ինձ համար Աստծուց ստանաս … (*ասել խնդրանքը*) շնորհը: Քո մէկ խօսքը բաւարար է, որ Յիսուս ինձ ների, ողորմի եւ լսի: Ամէն:

Ո՜վ Սուրբ Շարբէլ, երկնքի ու երկրի ուրախութիւն, բարեխօսի՛ր ինձ համար:

Տէ՛ր, որ Քո ահեղ դատաստանին Սուրբ Շարբէլին ինձ փաստաբան կարգեցիր, պարգեւի՛ր ինձ նրա բարեխօսութեամբ խնդրած շնորհս, նրա հետ միասին Քեզ ընդմիշտ փառաւորելու: Ամէն:

Հայր մեր…

Ողջո՛յն քեզ, Մարիամ…

Փա՜ռք Հօր:

Խորհրդածութիւն. Սուրբ Շարբէլը կատարելութիւնը փնտռում էր աղքատութեան ուխտի մէջ, որ նրա կեանքի հարստութիւնն էր:

Եօթներորդ օր

Ո՜վ բոլորի կողմից սիրուած Սուրբ Շարբէլ, կարիքաւորների օգնական, լիովին վստահում եմ Աստծոյ մօտ քո միջնորդութեանը. ընդունի՛ր ինձ համար … (*ասել խնդրանքը*) շնորհը, որն ի սրտէ աղերսում եմ:

Ո՜վ Սուրբ Շարբէլ, մոլորեալների առաջնորդ աստղ, բարեխօսի՛ր ինձ համար:

Տէ՛ր, տո՛ւր ինձ զղջալու եւ ապաշխարելու շնորհ: Բարեհաճութեամբ նայի՛ր ինձ Սուրբ Շարբէլի բարեխօսութեամբ: Փարատի՛ր սրտիս տխրութիւնը: Քեզ, ովկիա՜ն բոլոր շնորհների, փառք, պատիւ յաւիտեանս: Ամէն:

Հայր մեր…

Ողջո՛յն քեզ, Մարիամ…

Փա՛ռք Հօր:

Խորհրդածութիւն. Աստուած կանչում է Սուրբ Շարբէլին Իր հետ ապրելու առանձնութեան, աղօթքի, խոկումի եւ լռութեան մէջ:

Ութերորդ օր

Ո՛վ Սուրբ Շարրբէլ, երբ տեսնում եմ քեզ՝ ծնրադրած քո տերեւալից մահճի վրայ, կամ քո արած զոհողութիւններն ու ծոմապահութիւններն եմ յիշում, հաւատս ու յոյսս ուժեղանում են: Խնդրում եմ, օգնի՛ր, որ Տէրն ինձ պարգեւի խնդրածս … (*ասել խնդրանքը*) շնորհը:

Ո՛վ Աստծով լիացած Սուրբ Շարբէլ, բարեխօսի՛ր ինձ համար:

Ո՛վ բարի Յիսուս, որ Քո սիրելի Շարբէլին բարձրացրիր աւետարանական կատարելութեան, աղաչո՛ւմ եմ պարգևել ինձ շնորհը՝ մնացած կեանքս Քո կամքի համաձայն անցկացնելու: Սիրո՛ւմ եմ Քեզ, Ո՛վ իմ Աստուած եւ իմ Փրկիչ: Ամէն:

Հայր մեր…

Ողջո՛յն քեզ, Մարիամ…

Փա՛ռք Հօր:

Խորհրդածութիւն. Սուրբ Շարբէլը փայլեց իր գովելի կեանքի օրինակով: Աշխարհի լոյսի պէս բոլորին լուսաւորեց իր հիանալի վարքով եւ սրբութեան եռանդով:

Իններորդ օր

Ո՛վ Սուրբ Շարբէլ, ահա՛ իններորդ աւարտը: Սիրտս խայտում է քեզ հետ խօսելիս: Լի եմ վստահութեամբ եւ յոյսով, որ ինձ համար Յիսուսից կը ստանաս շնորհը, որ քո բարեխօսութեամբ խնդրում եմ: Ձղջում եմ իմ մեղքերի համար եւ կը փորձեմ այլեւս չմեղանչել:

Աղաչում եմ ինձ համար ընդունել … (*ասել խնդրանքը*) շնորհը:

Ո՛վ Սուրբ Շարբէլ, փառքով պսակուած, բարեխօսի՛ր ինձ համար:

Տէ՛ր, որ լսում ես Սուրբ Շարբէլի աղօթքները եւ նրան պարգեւել ես Քեզ հետ մեկ լինելու շնորհը, ողորմի՛ր ինձ տրտմութեանս մէջ եւ փրկի՛ր չարիքներից: Քեզ փա՛ռք, պատիւ եւ գոհութիւն յաւիտեանս: Ամէն:

Հայր մեր…

Ողջո՛յն քեզ, Մարիամ…

Փա՛ռք Հօր:

Խորհրդածութիւն. Սուրբ Շարբէլի ողջ կեանքը Սուրբ Կոյս Մարիամի երկնային առաքինութիւնների արտացոլումն էր: Թող Տիրամօր հանդէպ ջերմեռանդութիւնը երաշխաւոր լինի նաեւ մեր փրկութեանը:

Ո՛վ հրաշագործ Սուրբ Շարբէլ, որ քո կեանքն անցկացրեցիր միայնակ՝ խոնարհ եւ թաքնուած ճգնարանում, հրաժարուելով աշխարհից ու դրա

սին հաճոյքներից, եւ այժմ վայելում ես սրբերի փառքի մէջ, Սուրբ Երրորդութեան հրասքանչ շքեղութիւնը, միջնորդի՛ր մեզ համար:

Լուսաւորի՛ր մեր միտքն ու սիրտը, ամրացրո՛ւ մեր հաւատը եւ ուժեղացրո՛ւ մեր կամքը: Մեր մէջ աւելացրո՛ւ Աստծոյ եւ մերձաւորի հանդէպ սէրը: Օգնի՛ր մեզ բարիք գործելու եւ չարից խուսափելու: Պաշտպանի՛ր մեզ երեւելի եւ աներեւոյթ թշնամի-ներից եւ փրկի՛ր մեզ ողջ կեանքի ընթացքում:

Դո՛ւ, որ հրաշքներ ես գործում քեզ դիմողների համար եւ ստանում բժշկութիւն՝ անթիւ ցաւերի ու լուծում՝ մարդու համար անելանելի խնդիրների, ողորմածութեամբ նայի՛ր մեզ, եւ եթէ աստուա-ծային կամքին եւ մեր գլխաւոր բարիքին համա-պատասխան է, ընդունի՛ր մեր խնդրած շնորհը՝ … (*ասել խնդրանքը*), բայց ամէն ինչից առաւել օգնի՛ր մեզ Քո Սուրբ եւ առաքինի կեանքի նմանութեամբ ապրելու: Ամէն:

ԱՂՕԹՔ՝ ՍՐԲՈՒՀԻ ՌԻԹԱՅԻՆ

Ցաւերի ծանրութեան տակ քեզ եմ դիմում, ո՜վ Սրբուհի Ռիթա՝ վստահ, որ ինձ կը լսես: Խնդրում եմ, ազատի՛ր իմ խեղճ սիրտն ամէն կողմից ճնշող նեղութիւններից եւ վերադարձրո՛ւ տագնապա-խռով հոգուս հանդարտութիւնը:

Դու, որ Աստծուց ընտրուել ես որպէս անելանելի իրավիճակների փաստաբան, ընդունի՛ր ինձ

համար շնորհը, որ սրտանց խնդրում եմ … (*ասա՛ քո խնդրանքը*):

Եթէ մեղքերս խոչընդոտում են իմ խնդրանքների իրականացման համար, ընդունի՛ր Աստծուց դրանց զղջումը եւ քաւութիւնը:

Մի՛ թող, որ շարունակեմ դառնագին արցունքներ թափել: Ո՛վ փշի եւ վարդի Սրբուհի, վարձատրի՛ր քո նկատմամբ ունեցած իմ մեծ յոյսը, եւ ես ամէնուր կը տարածեմ վշտացած հոգիների հանդէպ քո մեծ ողորմութիւնը:

Ո՛վ Խաչեալի զարմանալի հարս, օգնի՛ր ինձ լաւ ապրել եւ լաւ մեռնել: Ամէն:

ԱՂՕԹՔ՝ ԵՐԱՆԵԼԻ ԻԳՆԱՏԻՈՍ ՄԱԼՈՅԵԱՆԻՆ[36]

Երանելի՛ Մալոյեան, քո տառապալից կեանքիդ անթառամ պսակը հանդիսացաւ նահատակու–

[36] Երանելի Իգնատիոս Արքեպիսկոպոս Մալոյեանը (1878-1915թթ.) Արեւմտեան Հայաստանի Մարտինի հայ կաթողիկէ թեմի առաջնորդն էր: 1915թ. յունիսի 11-ին, 417 հաւատացեալների եւ քահանաների հետ միասին նահատակուել է թուրքական ցեղասպան կառավարութեան

թիւնդ, որ եղաւ քո հանդէպ Աստուածային Սիրոյն մեծագոյն փաստը:

Բայց նաեւ, մարտիրոսութիւնդ դարձաւ գերազանց ապացոյցը՝ սիրոյդ ու հաւատարմութեանդ՝ նկատմամբ մեր Տիրոջ:

Դու կրեցիր ամէն տեսակ չարչարանք եւ յանձն առար տաժանելի մահը, բայց չուզեցիր ուրանալ Քրիստոսին՝ գերագոյն Իմաստը քո ամբողջ կեանքի:

Նախ, սրտանց աղաչում եմ, ինձ էլ սովորեցրո՛ւ սիրել իմ Փրկչին ու հաւատարիմ մնալ կրօնիս, որպէսզի երկուսին էլ չդաւաճանեմ ոչ մի նեղութեան մէջ եւ ոչ մի սպառնալիքի առջեւ:

Երկրորդ, սրտանց աղաչում եմ, որ լսես իմ հաւատաբորբ աղօթքս եւ կատարես վստահ եւ ջերմ խնդրանքս (*ասա՛ խնդրանքդ…*), քանի որ սպասում եմ այնքա՛ն մեծ ակնկալիքով. Ամէն:

կողմից: 2001թ. հոկտեմբերի 7-ին Հռոմի Սբ. Յովհաննէս Պողոս Բ Սրբազան Քահանայապետը Իգնատիոս Արքեպիսկոպոս Մալոյեանին հռչակեց «Երանելի»:

ԱՂՕԹՔՆԵՐ՝ ԶԱՆԱԶԱՆ ԱՌԻԹՆԵՐԻ ԵՒ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԱՂՕԹՔ ՍՈՒՐԲ ԾՆՆԴԵԱՆ

Ո՛վ Աստուածային Փրկիչ իմ, այսօր տօնում ենք քո հրաշալի եւ Սուրբ Ծնունդը, երբ այնչափ անձկութեամբ ու այնքա՜ն փափաքով սպասող աշխարհս այցելեցիր որպէս մարդ: Անչափ ողորմութեանդ վրայ զարմանալով՝ մտաբերում եմ հրաշալի ծննդեանդ ժամանակ երկնային զօրքի գովասանքը՝ *Փառք ի բարձունս Աստուծոյ*...Ո՛վ սիրոյ Աստուած, ինձ համար փառքի գահը թողեցիր եւ անչափ բարձրութիւնիցդ խոնարհուեցիր, աղքատացար, աշխարհիս նեղութիւնները յանձն առար: Սրա փոխարեն ի՞նչ կարող եմ անել քեզ, եթէ ոչ խորին խոնարհութեամբ եւ մեծարանքով կանգնել մսուրիդ առջեւ եւ հովիւների հետ մասին երկրպագել Քեզ: Քո մսուրը, Քո այս աստիճան խոնարհուելդ ինձ սովորեցնում են խոնարհութիւն: Դու մի անմեղ տղայի կերպարանքով առջեւիցս գնում ես եւ ուզում ես, որ ես էլ քեզ հետեւեմ: Ուրեմն, սրտանց փափաքում եմ հետեւել Քեզ եւ լինել Քեզ նման խոնարհ ու հեզ: Ուզում եմ համբերել աշխարհիս վշտերին, որովհետեւ Դու՝ Սուրբդ սրբոց, մանկութիւնիցդ ինձ համար

չարչարուեցիր ու վշտացար: Բանդ Աստուծոյ, որ մարմնացար եւ բնակուեցիր մեր մէջ: Յուսով եմ, որ մի օր ինձ էլ փառքդ տեսնել ու վայելել կը տաս: Ո՜վ մանուկ Յիսուս, կատարի՛ր փափաքս եւ մի՛ զրկիր ինձ մարդեղութեանդ պտուղներից. Ամէն:

Սուրբ Ծնունդ է,
Բայց Ծնունդ է ամէն օր,
Երբ սրբում ենք արցունքը որբի աչքերից,
Երբ զէնքերը վար ենք դնում
Եւ ո՛չ ենք ասում պատերազմին,
Երբ թեւերը մեր լայն բացում ենք թշնամու համար
Եւ ստիպում, որ թշուառութիւնն աւելի հեռանայ մեր տներից:
Ծնունդ է երկրիս վրայ ամէն օր,
Որովհետեւ Ծնունդը սէր է
Եւ ուրիշ ոչ մի բան:
Ծնունդ է, երբ ուրիշի յանցանքի վրան քօղ նետելով՝
Մեր սրտերը դարձնում ենք աւելի հիւրընկալ,
Եւ սուտն ու կեղծիքը լռել ենք տալիս վերջնականապէս:

ՆՈՐ ՏԱՐՈՒԱՅ ՇԵՄԻՆ

Շնորհակալ եմ, Տէր՝ այս Նոր Տարուայ համար, որ ինձ պարգեւեցիր:

Չգիտեմ, թէ արդեօ՞ք արժանի էի դրան: Կարողացայ արդեօ՞ք օգտագործել այն անթիւ շնորհներն ու բարիքները, որ պարգեւել էիր Դու ինձ: Արդեօ՞ք չէի կարող աւելի մեծ ջանադրութեամբ եւ քաջութեամբ հեռու մնալ բազմաթիւ զանցառութիւններից:

Բայց անչափ բարի ես Դու, մոռանում ես սխալներս եւ յիշում միայն բարի կամքս եւ անկեղծ տենչանքս՝ Քեզ աւելի հաճելի դառնալու:

Շնորհակա՛լ եմ երջանկութեան այն պահերի համար, որ շնորհեցիր ինձ՝ հակառակ անարժանութեանս:

Շնորհակալ եմ, մանաւանդ, այն պագեւած սիրոյ համար, որ սիրտս դրիր եւ որը, գուցէ, չարաչար օգտագործեցի բազմիցս, անգիտակցաբար:

Ինձ սովորեցրո՛ւ՝ ինչպէս կարող եմ հասկանալ եւ օգտագործել այդ սէրը, որ այդքա՜ն մեծ տեղ ունի իմ երկրաւոր կեանքում: Քանի որ չենք կարող ապրել առանց սիրոյ՝ օգնի՛ր ինձ, որ ստանամ այն ու բաշխեմ՝ կատարեալ ինքնամոռացումի հոգով, որովհետեւ սիրել՝ նշանակում է գերազանցել ինքդ քեզ եւ զոհաբերուել ուրիշի համար՝ Քեզ նմանուելու նպատակով միայն, որ կատարեալ մարմնացումն ես սիրոյ:

Արա՛ այնպէս, ո՛վ Տէր, որ սէրն այդ ըմբռնելով ու ապրելով խորապէս՝ հասնեմ խաղաղութեան, ներքին հանդարտութեան, որի կարիքն ունեմ անչափ, որը չպէտք է խանգարուի երբեք ինձ

այդքան տանջող մտավախութիւններով եւ անձկութիւններով:

Ահա՛ այս է, որ խնդրում եմ շնորհել ինձ այս Նոր Տարուայ շեմին, լինի թէ՛ ինձ համար, թէ՛ այն բոլորի, որոնց սիրում եմ ու բարին մաղթում. Ամէն:

ՍԲ. ՖՐԱՆՑԻՍԿՈՍ ԱՍՍԻԶԵՑՈՒ[37] ԱՂՕԹՔԸ

Աստուա՛ծ իմ, դարձրո՛ւ ինձ Քո խաղաղութեան գործիքը,
Այնտեղ, ուր ատելութիւն է, օգնի՛ր, որ սէր սերմանեմ,
Ուր վիրաւորանք է՝ ներում սերմանեմ,
Ուր կասկած է՝ հաւատք,
Ուր յուսահատութիւն է՝ յոյս,
Ուր խաւար է՝ լոյս,
Ուր տխրութիւն է՝ ուրախութիւն:
Ո՜վ Աստուածային Վարդապետ,
Շնորհ տո՛ւր, որ ոչ այնքան մխիթարութիւն փնտռեմ, այլ մխիթարեմ,
Ոչ թէ ձգտեմ հասկացուել, այլ հասկանալ,

---

37 Սբ. Ֆրանցիսկոս Ասսիզեցին (1181/82-1226թթ.) իտալացի սուրբ է, ով յայտնի է «Աղքատը» անունով, նուիրուեց աղքատ վանական կեանքին եւ իր եղբայրների հետ քարոզում էր ապրել Աւետարանի համաձայն, արարչագործութեան հետ ներդաշնակ կեանքով: Հիմնել է Ֆրանցիսկեանների միաբանութիւնը:

Ոչ թէ սիրուել, այլ՝ սիրել,
Որովհետեւ տալո՛վ է, որ ստանում ենք,
Ներելո՛վ է, որ ներւում ենք,
Մեռնելո՛վ է, որ վերածնւում ենք՝ յաւիտենական կեանքի համար:

ԱՂՕԹՔ ԹՇՆԱՄԻՆԵՐԻ ԵՒ ՉԱՐԱԿԱՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Արդ, ո՜վ ողորմած եւ բազմագութ Աստուած իմ Յիսուս Քրիստոս, իմ հարազատների եւ բարեկամների համար բարիքներ եւ ողորմութիւն խնդրեցի Քեզանից, ինչպէս որ հարկն է, եւ պահանջում է մեր բնութեան օրէնքը: Այժմ, աղաչում եմ Քեզ, նաեւ իմ թշնամիների համար, ինչպէս որ Դո՛ւ իսկ ասացիր օրհնեալ բերանովդ, թէ՝ «Բարի՛ք գործէք ձեզ ատողներին»: Ուրեմն, ընկնելով Քո առաջ, խնդրում եմ ամէնառատ ողորմութիւնիցդ, ողորմի՛ր նաեւ իմ բոլոր թշնամիներին եւ ատողներին, չարակամներին ու վնասատուներին եւ բոլոր միւսներին, ովքեր Քո ծառայի (աղախնու) հանդէպ չարն են խորհում, խօսում, գործում ու կամենում գործել, ովքեր բամբասում, վատաբանում եւ հայհոյում են ինձ՝ թէ՛ իրաւամբ եւ թէ՛ անիրաւամբ, մի՛ բարկացիր, Տէ՛ր իմ, նրանց վրայ՝ իմ պատճառով, այլ ների՛ր եւ թողութիւն տո՛ւր նրանց մեղքերին:

Քանզի նրանք մեղանչում են իմ հանդէպ, որովհետեւ յիրաւի մեղաւոր եմ եւ արժանի ամենայն բամբասանքի ու նախատինքի: Ես մեղանչում եմ Քո հանդէպ, որ արդար ես ամէն ինչում եւ միշտ բարերար՝ իմ հանդէպ: Ուրեմն, եթէ նրանք արժանի են Քո բարկութեանը, ապա ես բիւրապատիկ բարկութեան որդի եմ եւ պատժի արժանի առաւել, քան նրանք:

Այս պատճառով, աղաչում եմ Քեզ, Տէ՛ր իմ, որ բարիքների աղբիւր ես եւ անհուն ողորմութեան ծով, ողորմի՛ր նրանց ու ինձ՝ նրանց հետ, եւ ների՛ր իմ հանդէպ նրանց բոլոր սխալները եւ ետ դարձրո՛ւ նրանց չարից՝ փոխարկելով բարու: Որպէսզի ամէնքս զգաստանալով՝ ընթանանք ըստ Քո կամքի եւ փառք վերառաքենք Քեզ՝ Հօր եւ Սուրբ Հոգուդ հետ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ՍԻՐԵԼ ԵՒ ՏԱԼ

Կեանքի աղբիւրից նոր էի սկսել ըմպել, Տէ՛ր,
երբ դու մի օր կանչեցիր ինձ
եւ խօսեցիր սրտիս հետ.
այդ օրից ի վեր՝ մենք
միասին ենք ընթանում, ձեռք ձեռքի:
Քեզ հետ է որ գտայ կեանքիս
առաջին ծաղիկները:

Դո՛ւ ցոյց տուիր ինձ գեղեցկութիւնն
ու բարութիւնը բնութեան:
Դու, Հա՛յր իմ, ինձ լաւ ես ճանաչում,
թէպէտ ես՝ քո զաւակը,
ամենեւին չէի ճանաչում քեզ:
Ո՞վ ես դու, Տէր, ասացի,
արա՛ այնպէս, որ ճանաչեմ քեզ:
Եւ դու մի օր բռնեցիր իմ ձեռքը
եւ ներկայացրեցիր մարդկանց:
Եւ ասացիր՝ ահա՛ քոյրերդ, եղբայրներդ,
սիրի՛ր նրանց,
նրանց մէջ է, որ պիտի գտնես ինձ,
որովհետեւ ես սէ՛ր եմ:
Տեսայ մարդկանց,
որ մեռնում են ամէն օր,
սովից, քաղցից, պատերազմից,
կանանց, որ լաց են լինում,
մանուկներ, որ որբացել են,
չկար մէկը, որ ժպիտ բաշխէր նրանց:
Եւ խորհեցի՝ արդեօ՞ք պատճառն այն է,
Որ պէտք եղածի չափ
սէր չբաշխեցի ես նրանց:
Այնքա՜ն բաներ կ՛ուզէի խնդրել քեզանից,
ո՛վ Տէր,
բայց լաւագոյնը, կարծում եմ, այն է,
որ լուռ նայեմ Քեզ
եւ ողողուեմ քո սիրոյ մէջ,
որպէսզի սովորեմ տա՛լ

եւ տա՛լ միշտ աւելի.
Ամէն:

ՇՆՈՐՀԱԿԱ՛Լ ԵՄ ՔԵԶ, ՏԷ՛Ր

Տէ՛ր, քեզնից ոյժ խնդրեցի՝
կեանքի մէջ յաջողութիւն գտնելու համար,
դու դարձրեցիր ինձ տկար՝
ազնուութիւն փնտռելու համար:
Քեզնից խնդրեցի առողջութիւն՝
մեծ գործեր անելու համար,
դու տուիր ինձ հիւանդութիւն՝
համակերպուել սովորելու համար:
Քեզնից խնդրեցի հարստութիւն՝
երջանիկ լինելու համար,
եւ ստացայ աղքատութիւն՝
իմաստուն դառնալու համար:
Քեզնից խնդրեցի իշխանութիւն՝
մարդկանց գնահատանքը շահելու համար,
Դու դարձրեցիր ինձ տկար՝
Քո կարիքը զգալու համար:
Քեզնից խնդրեցի բարեկամութիւն՝
Միայնակ չապրելու համար՝
դու ինձ տուեցիր մի սիրտ՝
բոլոր մարդկանց սիրելու համար:
Քեզնից խնդրեցի դեռ շատ բաներ՝
կեանքս հաճելի դարձնելու համար,

դու ինձ կեանք պարգեւեցիր՝
գերագոյն հաճոյք վայելելու համար:
Խնդրածներիցս ոչ մէկը չընդունեցիր,
բայց յուսացածիցս աւելի՛ն ստացայ:
Կամքիս գրեթէ հակառակ՝
չարտայայտուած իղձերս լսեցիր դու:
Շնորհակա՛լ եմ Քեզ, Տէ՛ր.
Մարդկանց մէջ
ամէնից հարուստը դարձայ ես.
Ամէն:

ԱՂՕԹՔ՝ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Աստուա՛ծ իմ, գիտեմ, որ հեռու չես ինձանից, դիտում ես ինձ, եւ սպասում, որ քայլ անեմ դէպի քեզ:

Ամենավառ բաղձա՛նքս է պատկանել քեզ ամբողջութեամբ: Բայց ինչպէ՞ս, չգիտեմ:

Աւետարանդ պատմում է, թէ մի երիտասարդ վազեց դէպի Քեզ եւ խանդավառ սլացքով ուզեց նուիրել Քեզ իր երիտասարդութիւնն ու խինդը: Բայց կարծում էր, թէ դու պիտի պահանջես իրենից *որոշ* բաներ, եւ անակնկալի եկաւ, երբ պահանջեցիր՝ *ամէ՛ն* բան:

Եւ հեռացաւ Քեզանից՝ յուսախաբ, տխուր ու կոտրուած սրտով:

Դէպի ո՞ւր գնաց արդեօք: Հաւանաբար՝ դէպի իր առօրեան դժգոյն ու կեանքը հասարակ: Դու ուզեցիր, որ դառնայ նա առաքեալ, բայց նա գերադասեց մնալ մեծահարուստ, թէպէտ, անանուն, բայց գոհ իր կեանքից:

Կարծում եմ, որ նա իսկապէս կորցրեց եզակի առիթը՝ դուրս գալու զանգուածի կոխկրտած միօրինակ ճանապարհից, եւ լինելու շատ հոգիների առաջնորդն ու ազատարարը:

Եւ դու, Յիսուս, երկար սեւեռեցիր հայեացքդ այդ երիտասարդի վրայ, որ հեռանում էր յուսախաբ: Բայց դու մնացիր է՛լ աւելի յուսախաբ, որովհետեւ անկեղծօրէն սիրում էիր այդ խանդավառ պատանուն:

Տէ՛ր, մեր վրայ եւս յաճախ սեւեռում ես հայեացքդ եւ պատասխանի ես սպասում: Քո հրաւէրդ պիտի հասնի արդեօ՞ք մեր սրտին: Պիտի ունենա՞նք քաջութիւն՝ մեր երիտասարդութիւնն ու խինդը նուիրելու քեզ, թէ, նման այդ հարուստ պատանուն, մէջք պիտի դարձնենք քեզ՝ վախեցած քո խիստ պահանջներից:

Ո՛վ Տէր, մեր սրտերը լցրո՛ւ անսահման նուիրումի բաղձանքով: Չգոհանա՛նք տալով մեր ունեցածի փշրանքները կամ մէկ մասնիկը, այլ տանք ամէ՛ն ինչ, որ հարկ է՝ Քեզ ամբողջովին հետեւելու համար՝ *սէր, ազատութիւն եւ կեանք*:

Եւ գիտակցենք, որ քեզ տալով՝ մե՛նք ենք շահում ամէն բան, եւ ոչ թէ Դու:

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԶՈՅԳԻ ԱՂՕԹՔԸ

Մեր կեանքի գարունն ենք ապրում, Տէ՛ր, եւ մեր սրտերը սիրով պոռթկում են:

Կեանքի գարուն… Դու լաւ գիտես, Տէ՛ր, թէ ինչ է նշանակում այդ՝ մեզ համար: Երբ հանդիպում ենք մեր քոյրերին, որոնք ժպիտով անցնում են մեր կողքից, խորհում ենք, որ դու չես պահանջի, որ մեր սրտերը փակենք նրանց առջեւ, Դու, որ կազմեցիր մեր սիրտը մարմնից, բայց հոգի դրեցիր նրա մէջ անմահ, Դու, որ անբացատրելի ուժեր զետեղեցիր սիրելու բոլոր գեղեցկութիւնները, Դու՝ սիրոյ աղբիւր, լաւ ես ճանաչում սիրտը քո երիտասարդների եւ գիտես, թէ ինչի համար է բորբոքւում բոցը, որ վառել ես նրանց մէջ:

Գիտենք մենք, որ մե՛ծ նպատակի համար ես ստեղծել սէրը եւ ոչ թէ՝ վայրկենական հաճոյքի համար: Այդ վաղանցուկ հաճոյքը միայն փնտռելով՝ գիտենք, որ կը ցամաքի սիրոյ աղբիւրը, որն ստեղծուած է միշտ հոսելու համար: Որքա՜ն ուրախ ենք, որ Դու ես սիրոյ արարիչը, որովհետեւ ապահով ենք, որ յաւիտենական է այն, որովհետեւ ուզել էիր, որ կեանքի աղբիւր լիներ այն, եւ նրա շնորհի՛ւ է, որ պիտի ծնուի մեր մարմնից ու արիւնից այն էակը, որը պսակումը պիտի լինի մեր սիրոյ:

Տուր մեզ, Տէր, ա՛յդ սէրը, որպէսզի մենք էլ հաղորդենք այն ուրիշներին:

ԾԵՐՈՒՆՈՒ ԱՂՕԹՔԸ

Տէ՛ր, ահա մօտենում է կեանքիս ձմեռը, իր ձիւնով ու ցրտով, կեանքս՝ շունչից կախուած, սպասում է մահուան ժամին, այլեւս ապրում եմ անցեալի յիշատակներով:

Խաղաղութիւնդ տուր ինձ, ո՛վ Տէր, որովհետեւ բաւական ապրեցի Քո շուքի տակ, հաւատքս պահեցի աղօթքով ու ծոմով, օգնեցի աղքատին ու հիւանդին, որչափ որ կարող էի՝ պատիւն ու հաճոյքը ճաշակեցի եւ տեսայ, որ ամէն ինչ վաղանցուկ է: Տո՛ւր ինձ, Տէր, քո խաղաղութիւնը՝ աւելի տառապալից օրեր չտեսած, որովհետեւ չունեմ այլեւս ուրիշ տալիք կամ առնելիք. տուի, ինչ որ ունէի, քիչ կամ շատ. կը մնայ ինձ միայն Քո սէրը ու հաւատքը, եւ գոհ եմ այդքանով:

Դու ասացիր՝ նա որ Տիրոջ ճամբով է քայլում, պէտք է ճաշակի արցունք ու ցաւ, բայց կ՛ընդունի վարձատրութեան պսակը, եթէ մինչեւ վերջ համբերի ու դիմանայ:

Արժանի չեմ հրաշքներդ տեսնելու, ով Տէ՛ր, եւ ոչ էլ մարտիրոսութեան պսակը կրելու, բայց յուսով եմ արժանանալ հայրական ողորմութեանդ, երբ ներկայանամ արդար դատաստանիդ առջեւ: Տէր, սպասում եմ յոյսով մեկնումի ժամին, արա՛ այնպէս, որ օր առաջ ծառադ տեսնի քո փրկութիւնը: Տո՛ւր ինձ խաղաղութիւնդ, Տէ՛ր:

Թ. Ս. Էլիոթ[38]

ՈՒՂԵԿՈՐՈՅՍ ՀՈԳՈՒ ԱՂՕԹՔԸ

Տէ՛ր, քեզ եմ յանձնում ինքս ինձ՝ այնպէս, ինչպէս որ կամ: Եթէ դու չկարողանաս ճար եւ դարման գտնել իմ վիճակիս՝ ո՞վ պիտի կարողանայ… Տէ՛ր, թւում է՝ դժբախտ եմ, բայց ո՛չ, որովհետեւ դո՛ւ կաս իմ մէջ ու իմ շուրջ, եւ պատրաստ ես փրկելու ինձ: Բայց ցաւալի է, որ ես սխալ կերպով եմ գործածում քո պարգեւները: Այդ է դժբախտութեանս պատճառը: Ուրեմն, ընդունի՛ր ինձ ամբողջովին՝ իմ թերութիւններով, իմ յանցանքներով: Նրանք մաս են կազմում իմ անկեալ բնութեանը:

Տէ՛ր, հոգիս լեցուն է հպարտութեամբ եւ այլ ախտերով, որոնց անունը նոյնիսկ չեմ համարձակւում տալ: Եթէ դու չօգնես ինձ՝ կը գլորուեմ անդունդը: Օգնի՛ր, ուրեմն, որ կանգ առնեմ անկման ճանապարհին եւ քաջութիւնն ունենամ վերադառնալու Քեզ: Վստահ չեմ, որ կը յաջողուի շուտով, որ պիտի չուշանայ այդ օրը՝ եթէ դու բռնես իմ ձեռքից եւ առաջնորդես ինձ:

---

38 Թոմաս Էլիոթը (Thomas Eliot (1888-1965թթ.)) ամերիկեան բանաստեղծ է, արուեստի տեսաբան, մշակութաբան, կաթողիկէ հաւատացեալ: 1948 թ. ստացել է Գրականութեան Նոբելեան մրցանակ:

Ահա՛ բարի կամքս, ահա՛ անկեղծ ջանքերս: Ընդունի՛ր նրանք եւ ամբողջացրո՛ւ քո շնորհքով: Մի՛ յամենար, Տէր, օգնութեան հասնելու ինձ, որովհետեւ վախենում եմ՝ չարաչար գործածեմ ազատութիւնս:

Հեղեւողութեամբ՝ Ժորժ Դիւհամելի

ԱՂՕԹՔ՝ ԱՇԽԱՏԱՒՈՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Ո՜վ փառաւորեալ Սբ. Յովսէփ, որ Յիսուսի եւ Կոյս Մարիամի պահապանի աննման ու սքանչելի տիտղոսդ ծածկեցիր արհեստաւորի խոնարհ տեսքի տակ եւ քո աշխատանքովդ նրանց կեանքը ապահովեցիր, քո զօրութեամբ պաշտպանի՛ր աշխատաւորներին, որ քեզ են յանձնուած:

Դու լաւ ես ճանաչում նրանց հոգսերն ու տառապանքները, որովհետեւ դու ինքդ կրեցիր նրանք՝ Յիսուսի եւ նրա Մօր կողքին:

Մի՛ թող, որ այդքան մտահոգութիւնների բեռան տակ նրանք մոռանան նպատակը, որի համար Աստուած ստեղծել է նրանց: Մի՛ թող, որ անվստահութեան սերմերը տիրանան նրանց անմահ հոգիներում:

Յիշեցրո՛ւ բոլոր աշխատաւորներին, թէ ուր որ գտնուեն՝ արհեստանոցում, գործարանում, արօտավայրում կամ գիտական աշխատանքում,

նրանք մենակ չեն թէ՛ աշխատելու, թէ՛ տառապելու եւ թէ՛ վայելելու ժամերին, այլ իրենց մօտ են Յիսուսը, Մարիամը՝ նրանց օգնելու, նրանց քրտինքը սրբելու, նրանց յոգնութիւնը անցկացնելու համար: Սովորեցրո՛ւ նրանց, որ ինչպէս դու արեցիր, նոյնպէս իրենք էլ դարձնեն իրենց աշխատանքը՝ սրբացման ազնիւ միջոց: Ամէն:

Սբ. Յովհաննէս ԻԳ Սրբազան Քահանայապետ

ԱՂՕԹՔ՝ ԳՈՐԾԱԶՈՒՐԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Ո՛վ Սուրբ Յովսէփ, աղօթում ենք քեզ՝ գործազուրկների համար, որոնք ուզում են արդար կերպով շահել իրենց ընտանիքի ապրուստը:

Դու, որ աշխատաւորների պաշտպանն ես, արա՛ այնպէս, որ անգործութիւնը վերանայ մեր շրջապատից, արա՛ այնպէս, որ նրանք, ովքեր արժանի են աշխատելու, կարողանան օգտագործել իրենց ուժերն ու ձիրքերը՝ ի սպաս իրենց եղբայրներին՝ ստանալով արդար վաստակն իրենց ջանքերով:

Դո՛ւ, որ ընտանիքների պաշտպանն ես, մի՛ թող, որ նրանք, որոնք զաւակներ ունեն, զրկուած մնան անհրաժեշտ սննդից, պիտոյքներից:

Խղճա՛ մեր այն եղբայրներին, որոնք ստիպուած են մնալ անգործ ու աղքատ՝ հիւանդութեան կամ մարդկային մեքենայութիւնների պատճառով:

Ներշնչի՛ր ղեկավարներին, գործատէրերին եւ բոլոր պատասխանատուներին՝ արդար նախաձեռնութիւններ եւ լուծումներ, թող իւրաքանչիւր անհատ ունենայ պատրաստակամութիւն՝ նպաստելու, իր կարողութեան չափով, հասարակութեան բարիքին, պատուաւոր կերպով վաստակելով իր կեանքը:

Արա՛ այնպէս, որ ամէնքս միասին օգտուենք Աստուծոյ առատ պարգեւներից եւ օգնենք նրանց՝ որոնք մեզնից նուազ բախտաւոր են: Ամէն:

ԲԺՇԿԻ ԱՂՕԹՔԸ

Շնորհակալ եմ, Տէ՛ր, որ շնորհեցիր ինձ այս առաքելութիւնը՝ հիւանդներին առողջութիւն պարգեւելու: Յարգանքով ուզում եմ խնամել, Տէր, մարդկային կեանքը, որին դու գոյութիւն տուեցիր: Ուզում եմ լինել ուշադիր՝ չխափանելու համար ապրելու իրաւունքը, նոյնիսկ նրա, որ տակաւին աշխարհ չի եկած: Ուզում եմ լինել խորապէս մարդասէր՝ միշտ եւ ամէնուրեք օգնութեան հասնելու համար որեւէ տառապողի:

Օգնի՛ր ինձ, որ սիրով խնամեմ հիւանդին, կատարեմ ճշգրիտ ախտաճանաչում, նշանակեմ պատշաճ բուժում, եւ հետեւեմ քայլ առ քայլ հիւանդին՝ մինչեւ լիակատար ապաքինում: Տո՛ւր, որ գիտութեանը միացնեմ փափկանկատութիւնը,

եւ իմաստութեանը՝ սէրը, լինեմ հանդարտ՝ առանց սառնութեան, համբերատար՝ առանց տկարութեան, զօրաւոր՝ առանց հպարտութեան, եռանդուն՝ ցաւերը ամոքելու եւ յոյս ներշնչելու:

Արա՛ այնպէս, որ լինեմ համեստ՝ հանդէպ չքաւորի ու անտէրի, եւ զգայասիրտ՝ հոգով ու մարմնով խորտակուածի: Մասնակից արա՛ ինձ քո անսահման այն գութին, որ այնքան շռայլօրէն բաշխեցիր, երբ մարդկանց մարմիններն ու հոգիներն էիր բուժում: Վերջապէս, ո՛վ երկնաւոր բժիշկ, պարգեւիր ինձ գերագոյն մխիթարութիւնը՝ մի օր լսելու քո բերանից. «Եկէ՛ք, Հօրս օրհնեալներ… որովհետեւ հիւանդ էի՝ եւ այցելեցիք ինձ…»

Ժ. Քելլեր

ՀԻՒԱՆԴԻ ԱՂՕԹՔԸ

Տէ՛ր Յիսուս, այս հիւանդութիւնը, որ ինձ ուղարկեցիր, ընդունում եմ իբրեւ շնորհք՝ քո ձեռքերից: Այն ինձ տանջում է, բայց աւելի նման է դարձնում Քեզ: Օգնի՛ր ինձ, որ *տառապեմ Քեզ նման*, արա՛ այնպէս, որ տառապանքս օգտակար լինի բոլոր նրանց, ում սիրում եմ:

Նուիրում եմ Քեզ կրկին մարմինս, սիրտս, կամքս, իմ անձկութիւնները, իմ անքուն ժամերը, իմ պայքարը, ամբողջ կեանքս: Բացարձակ

վստահութեամբ ձեռքերիդ մէջ եմ դնում իմ անցեալը, որպէսզի մաքրես այն, իմ ներկան, որպէսզի սրբացնես այն, իմ ապագան, որպէսզի լինի այն այնպիսին, ինչպիսին որ կ՛ուզես լինի:

Մէկ կամք միայն ունեմ, ո՛վ Տէր, եւ Քո՛ կամքն է այն. Ամէն:

ԱՂՕԹՔ՝ ՀԻՒԱՆԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Ո՛վ Յիսուս, որ չգոհացար երկնային պատ-գամներդ հաղորդելով մարդկանց, այլ բուժեցիր նաեւ հոգիներն ու մարմինները տառապեալ-ների, աղօթում եմ յատկապէս քո Եկեղեցւոյ տառապող անդամների համար: Աղաչում եմ քեզ, որ մեղմացնես նրանց ցաւերը՝ նրանց, որ կարօտ են քո բարութեանը եւ զօրութեանը:

Ցո՛յց տուր նրանց քո գթութիւնը եւ պարգեւի՛ր համբերութիւն, կատարեալ առողջութիւն եւ շնորհք՝ համակերպուելու քո սուրբ եւ անքննելի կամքին: Արա՛ այնպէս, որ գիտակցենք ամէնքս, որ մարմնական եւ հոգեկան տառապանքները անգնահատելի միջոցներ են՝ քաւելու մեր մեղքերը եւ հասնելու սրբութեան եւ կատարելութեան, միացնելով դրանք՝ քո կրած տառապանքներին. Ամէն:

ԱՂՕԹՔ՝ ԸՆՏԱՆԵԿԱՆ ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Ո՛վ Սուրբ Յովսէփ, պաշտպան քրիստոնեայ ընտանիքի, դու մեզ նման ճանաչեցիր ընտանեկան կեանքը: Մարիամի հետ ապրեցիր՝ փոխադարձ եւ կատարեալ սիրոյ առօրեայ մի կեանք: Ձեր փոխադարձ սէրը կենտրոնանում էր Աստծոյ Որդու մէջ, որ նաեւ ձե՛ր զաւակն էր: Եւ մեզ նման ձեր սէրը պահպանեցիք, եւ անցկացրեցիք ուրախութիւնների եւ դժուարութիւնների մէջ:

Պաշտպանի՛ր այսօր մեր ընտանիքը: Օգնի՛ր մեզ, որ հասկանանք իրար՝ հետեւելով օրինակին քո Որդու, որ նայում էր նախ մարդու սրտին եւ ոչ միայն դէմքին:

Արա՛ այնպէս, որ երբեք հպարտութիւնն ու անձնասիրութիւնը չվնասեն մեր սիրոյն:

Դարձրո՛ւ մեզ օրըստօրէ աւելի հաւատարիմ մեր խոստումներին, օգնի՛ր մեզ, որ աւելի մօտենանք իրար եւ միասին՝ Աստծոյ Որդուն, որ միշտ ներկայ է համերաշխ ընտանիքների մէջ. Ամէն:

ԱՂՕԹՔ՝ ՎԱՍՆ ՆԱՀԱՏԱԿԱՑ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ[39]

Սրկ.

Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք. ընկա՛լ կեցո եւ ողորմեա՛:

Քինյ.

Օրհնութի՛ւն եւ փա՛ռք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ.

Այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

Երգ

Նահատակք կենդանիք, սիրողք Քրիստոսի,

Որք չարչարեցայք մարմնով վասն անուանն Տեառն:

Մարտիրոսք ցանկալիք, մարդկան ընդձալիք,

Հայցեցէ՛ք ի Սուրբ Հոգւոյն տալ մեզ ըզբարիս:

Գովելիք վերնոց դասուց, պարծանք աշխարհի,

Խնդրեցէ՛ք զխաղաղութիւն տալ Եկեղեցւոյ:

Կամաւոր սուրբ պատարագ, հասակաւ մանկունք,

Հայցեցէ՛ք լինել եւ մեզ ձեզ պսակակից:

Աղօթք միասնական

Ո՛վ նահատակներ,

Երկնաւոր Հօր սիրեցեալնե՛ր,

Ցոյց տուէ՛ք մեզ ձեր լուսաւոր դէմքերը,

---

[39] Այս աղօթքը կազմուել է Հայ Կաթողիկէ Պատրիարքարանի կողմից, 2015թ.:

Մեզ փոխանցեցէ՛ք գաղտնիքը ձեր ամբողջական նուիրումի,

Եւ ձեր սիրոյն՝ հանդէպ Քրիստոսի, Աւետարանի եւ Եկեղեցւոյ:

Ո՛վ խաչապաշտ հայ նահատակներ,

Դուք, որ աճեցիք Նարեկացու մատեանով,

Լուսաւորեցէ՛ք մեր մտքերը,

Որպէսզի գիտենանք ապրել

Հայոց նահատակութիւնը՝ մեր ամենօրեայ կեանքում:

Արի եւ յաղթող սուրբ վկաներ,

Հիշում ենք ձեզ եւ փառաւորում Աստծուն. Ամէն:

Սրկ.

Սուրբ նահատակօքն աղաչեսցո՛ւք զՏէր,

Որք զչարսն պարտեցին, նեղութեանցն

Համբերեցին, լուսեղէն եւ երկնային

Անթառամ պսակացն արժանի եղեն,

Աղօթիւք նոցա եւ բարեխօսութեամբ

Մեզ ողորմեսցի:

Ամենակալ Տէր Աստուած մեր,

Կեցո՛ եւ ողորմեա՛:

Բոլորը միասին՝

Տէր ողորմեա՛, Տէր ողորմեա՛, Տէր ողորմեա՛:

Քինյ. Աղօթք

Սուրբ ես, Տէ՛ր, եւ ի սուրբս հանգուցեալ. եւ մեք սուրբ վկայիւքս աղաչեմք զքեզ, բարեխօսութեամբ Սուրբ Աստուածածնին եւ աղաչանօք ամենայն սրբոց քոց՝ մի՛ մերժեր զմեզ յողորմութենէ քումմէ, այլ կեցո՛ զմեզ աղօթիւք սոցին: Զի դու ես բազումողորմ Աստուած, եւ քեզ վայել է փառք, իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

Երգչախումբը եւ ժողովուրդը՝ միասին

Հայր մեր… (*ձայնիւ, խնկարկութիւն*)

Զի քո է արքայութիւն եւ զօրութիւն եւ փառք յաւիտեանս. Ամէն:

Օրհնեալք եղերո՛ւք ի շնորհաց Սուրբ Հոգւոյն: Հանգերո՛ւք խաղաղութեամբ եւ Տէրն մեր Յիսուս Քրիստոս եղիցի ընդ ձեզ, ընդ ամենեսեան. Ամէն:



ԱՂՕԹՔՆԵՐ

ԱՄԵՆԱՍՈՒՐԲ ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ ԱՌՁԵՎ

ԱՂՕԹՔ՝ ՍՈՒՐԲ ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆԸ ՄՕՏԵՆԱԼՈՒՑ ԱՌԱՋ[40]

Սիրելի Փրկի՛չ, որչափ դժուարին ու խիստ լեռներ անցնելու պարտաւորուեցիր, որպէսզի գաս եւ այս սրբազան խորհրդի միջոցով ինձ միանաս: Աստուած էիր, հարկադրուեցիր մարդ լինել, անչափ էիր՝ երեխայ եղար, յաւիտենական Հօր ծոցից մի կոյսի արգանդը եկար, Երկնքից ախոռ իջար, փառաց գահից արդարութեան կախաղանին խոնարհուեցիր: Այս առաւօտ էլ երկնաւոր աթոռիցդ պիտի իջնես եւ բնակութիւնդ սրտիս մէջ պիտի հաստատես:

Ա՛նձ իմ, ահաւասի՛կ քո ցանկալի Յիսուսը՝ բոր-բոքուած այն սիրով, որով խաչուելու պահին քեզ սիրում էր, հիմա էլ Սուրբ Հաղորդութեան մէջ՝ հացի եւ գինու կերպարանքով, ուզում է, որ Իրեն սիրես. նշխարի կերպարանքով քեզ է սպասում, որ պատրաստում ես ճաշակել իր Աստուածային Մարմինը եւ Արիւնը: Արդեո՞ք արժանի ես, ա՛նձն իմ:

Աստուա՛ծ իմ, ո՞վ եմ ես, ո՞վ ես Դու: Ես քաջ գիտեմ եւ խոստովանում եմ, թէ Դու ով ես, որ Ինքդ Քեզ ինձ ես տալիս, բայց արդեո՞ք Դու գիտե՞ս, թէ ե՛ս ով եմ, որ համարձակւում եմ Քեզ

---

40 Ըստ Հ. Գրիգոր Վրդ. Գովրիկեանի «Բանալի արքայութեան» աղօթագրքի, Վիեննա, 1887թ.

ընդունել: Կարելի՞ բան է, ո՛վ Յիսուս իմ, որ լինելով անսահման Սրբութիւն՝ բաղձում ես բնակուել սրտիս մէջ՝ այնպիսի մի սրտում, որ անչափ անգամներ բնակատեղի է եղել Քո թշնամու համար եւ անչափ մեղքերով աղտեղուած է: Գիտակցում եմ, Տէ՛ր, Քո Անչափ մեծվայելչութիւնը եւ իմ խեղճութիւնը, դրա համար էլ ամաչում եմ երեւալ Քո առջեւ: Կ՛ուզէի մեծարելու համար Քեզ-նից հեռանալ, բայց որ Քեզնից հեռանամ, ո՛վ կեանք իմ, ո՞ր գնամ, ո՞մ դիմեմ: Չէ՛, չէ՛, չեմ ուզում բաժանուել Քեզնից, մանաւանդ որ միշտ բաղձում եմ Քեզ մօտենալ: Դու յանձն առնում ես, որ Քեզ ընդունեմ կերակրի պէս, եւ մանաւանդ, կանչում ես: Արդ գալի՜ս եմ, սիրելի՛ Փրկիչ, գալիս եմ Քեզ ընդունելու՝ բոլորովին խոնարհուած ու ամաչելով՝ թերութիւններիս համար, բայց՝ միանգամայն վստահ՝ իմ հանդէպ Քո սիրոյ եւ գթութեան վրայ:

Ներգործութիւն զղջման

Յաւում եմ, Աստուա՛ծ իմ, որ մինչեւ հիմա Քեզ չսիրեցի: Մանաւանդ, Քեզ սիրելու փոխարէն, ցանկութիւններս կատարելով՝ անսահման բարու-թեանդ վշտացրի, Քեզնից ետ կանգնեցի, շնորհ-ներդ արհամարհեցի: Զղջում եմ, Տէ՛ր, եւ ամբողջ սրտով գարշում եմ մեղքերիցս: Ատում եմ Քեզ պատճառածս թէ՛ ծանր եւ թէ՛ թեթեւ վիրաւո-րանքները, տխրութիւնները: Յուսով եմ, որ արդէն

ինձ թողութիւն ես տուել, իսկ եթէ դեռ չես տուել, Քեզ ընդունելուցս առաջ թողութի՛ւն տուր: Լուա՛ սիրտս, ուր քիչ անց գալու ես ու բնակութիւն ես հաստատելու:

Ներգործութիւն սիրոյ եւ նուիրման

Ո՛վ ծածկուած եւ մարդկանց մեծ մասին անյայտ Աստուա՛ծ, հաւատում եմ եւ Քեզ եմ մերձենում՝ իբրեւ Տիրոջս եւ Փրկչիս: Այս Սուրբ Խորհրդի մէջ Քեզ եմ երկրպագում. այս ճշմարտութիւնը խոստովանելու համար կեանքս էլ պատրաստ եմ տալու: Դու գալիս ես՝ ինձ հարստացնելու շնորհներովդ եւ բոլորովին ինձ հետ միանալու, ուրեմն, որչա՜փ մեծ պէտք է լինի վստահութիւնս՝ Քո այս սիրալիր գալստեանդ վրայ:

Աստուա՛ծ իմ, հոգուս ճշմարիտ ու միակ սէ՛ր, աւելին ի՞նչ կարող էիր անել, որ Քեզ սիրեմ: Տէ՛ր, բաւական չհամարեցիր ինձ համար մեռնելը եւ ուզեցիր նաեւ այս մեծ Խորհուրդը հաստատել, որպէսզի ինձ նման ապերախտ ու անպիտան մի արարածի հետ սերտօրէն միանաս: Բայց աւելի զարմանալի է այն, որ Անձա՛մբ ես ինձ հրաւիրում եւ բաղձում ես, որ Քեզ ընդունեմ: Օ՜, անըմբռնելի ու անսահման սէր. Աստուած ուզում է Ինքն Իրեն ի սպառ ինձ տալ: Ո՜վ Աստուած, անձիցս եւ կեանքիցս աւելի՜ եմ սիրում Քեզ:

Ե՛կ, Աստուա՛ծ իմ, շուտ արի՛, մի՛ ուշանա, իմ միմիայն ու անսահման բարի՛քս, գա՛նձս, կեա՛նքս, դրա՛խտս, սէ՛րս ու ամէն բանս: Ուզում եմ Քեզ ընդունել այն սիրով, որով ընդունել են Քեզ ամենասուրբ եւ Քեզ սիրող հոգիները, որով ընդունեց Սուրբ Կոյս Մարիամ Աստուածածինը: Իմ այս հաղորդութիւնը միացնում եմ նրանց հաղորդութեանը: Ամենասուրբ Կո՛յս եւ Մայր իմ Մարիա՛մ, ահա մօտենում եմ՝ ընդունելու քո Որդուն: Բաղձում եմ ունենալ քո սիրտն ու սէրն ուժգին, որով հաղորդում էիր դու: Տո՛ւր ինձ այս առաւօտ քո Յիսուսին, ինչպէս տուեցիր հովիւներին եւ մոգերին: Յիսուսին ընդունում եմ՝ իբրեւ քո սուրբ ձեռքերից: Ասա՛ Որդուդ, որ ես քո ջերմեռանդ ծառան եմ: Քո բարեխօսութեամբ Յիսուս ինձ կը նայի աւելի սիրալիր հայեացքով եւ աւելի ամուր ինձ Իր հետ կը միացնի:

ԱՂՕԹՔ՝ ՍՈՒՐԲ ՀԱՂՈՐԴՈՒԹԻՒՆՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒՑ ՅԵՏՈՅ[41]

Ո՛վ բարի Յիսուս, որ իմ սրտումս ես, պաշտում եմ Քեզ երկիւղով, սիրում եմ Քեզ իմ ամբողջ սրտով, իմ հոգով ու կարողութիւններով: Շնորհակալ եմ, որ Քեզ պարգեւեցիր ինձ, ո՛վ իմ

[41] Հ. Ներսէս Վրդ. Թոսունեան, «Մատեան աղօթքի», Պէյրութ, 1981թ.

սրտի ցնծութիւն, իմ միակ բարիք: Իմ ցնծութիւնն ու անսահման ուրախութիւնը միացնում եմ Երկնքի բնակիչների երանութեանն ու պաշտամունքին եւ այդ բոլորը նուիրում եմ Քեզ: Թող սիրտս միայն Քո սիրով բոցավառուի եւ միացած մնաս ինձ բովանդակ կեանքիս ընթացքում, ես ինձ Քեզ եմ նուիրում ամբողջովին, ընդունի՛ր իմ մտածումներն ու զգացումները, ազատութիւնս, հոգիս, մարմինս, ամբողջ էութիւնս: Ոչինչ չեմ ուզում ինձ վերապահել, ընդունի՛ր իմ կամովին նուիրաբերումը եւ թող, որ միշտ մնամ Սուրբ Սրտիդ մէջ. Ամէն:

ԱՂՕԹՔ՝ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻՆ՝ ՍՈՒՐԲ ՀԱՂՈՐԴՈՒԹԻՒՆՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒՑ ՅԵՏՈՅ[42]

Անբաւ շնորհակալութիւն եմ մատուցանում քեզ, ո՛վ Ամենասուրբ Կոյս՝ այն մեծ շնորհի համար, որ արեցիր ինձ՝ Աստծուց խնդրելով ինձ համար, որ ընդունեմ քո սուրբ որովայնի ամենօրհնեալ պտուղը՝ Յիսուսին՝ իմ Աստծուն եւ Փրկչին: Խնդրում եմ քեզ, ո՛վ Մայր Գթութեան, որ յանուն քո եւ սիրելի Որդուդ չարչարանքների՝ բոլոր մեղքերիս համար թողութիւն ընդունես, մոլորութիւններս մաքրես, օգնես ինձ առաջադիմել բարու մէջ, համբերութիւն շնորհես վշտերիս մէջ, քաջութիւն՝ փորձութիւնների

---

42 Հ. Գրիգոր Վրդ. Գովրիկեան, «Բանալի արքայութեան», Վիեննա, 1887թ.

ժամանակ, հաստատութիւն՝ բարի որոշումներիս մէջ, զզուանք՝ աշխարհային եւ զգացական մոլութիւններից, սէր ու բորբոք՝ հոգեւոր բաների հանդէպ, եւ կատարեալ համակերպութիւն Որդուդ աստուածային կամքին:

ԱՂՕԹՔ՝ ԽԱՉԵԼՈՒԹԵԱՆ ԱՌՋԵՒ՝ ՍՈՒՐԲ ՀԱՂՈՐԴՈՒԹԻՒՆՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒՑ ՅԵՏՈՅ[43]

Ո՛վ բարի Յիսուս, ահա Քո մեծ վայելչութեանդ առջեւ երեսնիվայր ընկած՝ ամբողջ սրտով աղաչում եւ խնդրում եմ Քեզ, որ սրտիս մէջ տպաւորես հաւատք կենդանի, յոյս ու սէր, մեղքերիս համար ճշմարիտ ցաւ եւ հաստատուն որոշում՝ այլեւս քեզ չվիրաւորելու: Եւ ցաւագին սրտով մտածում եմ Քո հինգ վէրքերի մասին՝ յիշելով Դաւիթ մարգարէի խօսքն այն, թէ «Ծակեցին զձեռս իմ եւ զոտս իմ եւ թուեցին զամենայն ոսկերս իմ»:

ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ԱՄԵՆԱՍՈՒՐԲ ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՄԲ

«Ոչինչ չկայ, որ իր վսեմութեամբ կարողանայ համեմատուել Սուրբ Հաղորդութեան հետ:

Աշխարհի բոլոր լաւ գործերը դրէ՛ք

---

43 Նոյն տեղում

Սուրբ Հաղորդութեան առջեւ.

Եւ դրանք կը նմանուեն լեռան կողքին գտնուող փոշեհատիկի».

Ժան Մարի Վիաննէ

Սուրբ Հաղորդութիւնը «ի բազմոցի» դնելիս՝ երգում են հետեւալ հատուածը՝ «Մայր հաւատոյ» շարականից.

ՀԱՑՍ ԱՅՍ մարմին է Քրիստոսի
Բաժակս արիւն նորոյ Ուխտի.
Ծածկեալ խորհուրդըն մեծ յայտնի,
Աստուած ի սմա մեզ տեսանի:

Սա է Քրիստոս Բանն Աստուած,
Որ ընդ աջմէ Հօրն բազմի,
Եւ աստ ի մեզ պատարագի,
Բառնայ զմեղս աշխարհի:

Ապա, Սուրբ Հաղորդության առջեւ երեք անգամ խնկարկելուց յետոյ, քահանան ոտքի է կանգնում եւ երգում այս աղօթքը.

Տէր Աստուա՛ծ բարձրեալ ամենակալ, լո՛յս անքնին, մեծութիւն ահեղ, գթութիւն անսահմանելի, մարդասիրութիւնն օրհնաբանելի, Յիսուս Աստուծոյ կենդանւոյ Միածին Որդի: Որ

սքանչելարուեստ հրաշիւք, անպարագի՛րդ էակ, վասն մեր եղեր մարդ ի Կուսէն: Որ արեամբդ քո զմեզ ստացար, եւ մարմնովդ կերակրես: Որ կարգեալ զայս խորհուրդ անճառելի՝ ուխտ կենաց անփոխադրելի սահմանեցեր: Որ յանուն զենման միշտ հիշատակաւ քո չարչարանաց առ Հայր քո բարերար աղօթել զմեզ համարձակեցեր, եւ զայս տուրս շնորհաց քան ամենայն գործոց քոց զքանչելիսն մեծացուցեր: Լո՛ւր մեզ, բազմագութ մարդասէր, տո՛ւր զպարարեալ վշտօք մարմինդ քո ամենայն սրտի սրբարար կերակուր. զի զքեզ ունին քաւիչ քահանայ՝ գնեալ արեամբ հօտս քո, հայեա՛ց յամենեսեան, հանգո՛ զաշխատանս մեր ի քո օթեւանսդ, ուր գնացեր, Տէ՛ր, եւ խոստացար: Արժանացո՛ զքոյս փառաւորել զքեզ այդր ընդ Հօր եւ ընդ Սուրբ Հոգւոյդ ի յաւիտեանս:

Սպասաւորները եւ ժողովուրդը երգում են.
Ամէն:

Քահանան շարունակում է երգել.
Աղօթք վասն Սրբազան Քահանայապետին.

Հովիւ քաջ եւ առաջնորդ բանաւոր հօտի, աղաչեմք զքեզ, Տէր, նայեա՛ գթութեամբ ի ծառայ քո *(անունը)* Քահանայապետ՝ զոր կարգեցեր հովիւ Եկեղեցւոյ քում սրբոյ. տո՛ւր նմա բանիւք եւ արդեամբք առաջնորդել ի փրկութիւն իւրոց

հնազանդելոցն հաւատացեալ նմա հօտին. զի ընդ նոսին ժամանեսցէ ի կեանսդ յաւիտենից:

Սպասաւորները եւ ժողովուրդը երգում են.

Ամէն:

Քահանան դարձեալ ծնրադիր խնկարկում է Սուրբ Հաղորդութեան առջեւ, իսկ ժողովուրդն երգում է.

Աստուած մեր եւ Տէր մեր, երեւեցաւ մեզ: Օրհնեա՛լ եկեալ անուամբ Տեառն:

Քահանան բարձրանում է Խորան եւ Սուրբ Հաղորդութեամբ օրհնում է ժողովրդին՝ ասելով.

Կեցո՛, Տէր, զժողովուրդս քո, եւ օրհնեա՛ զժառագանութիւնս քո. հովուեա՛ եւ բարձրացո՛ զսոսա յայսմհետէ մինչեւ յաւիտեան:

Ապա քահանան դառնում է դէպի Խորան եւ Սուրբ Հաղորդութիւնը դնում է Սեղանին, ծնկի է իջնում եւ դարձեալ խնկարկում, ապա բարձրանում է եւ Սուրբ Հաղորդութիւնը դնում է տապանակի մէջ:

Երգւում է հետեւալ շարականը.

Յաստուածային կայծակունս, ի Սրովբէիցն անհպելին անմաքրապէս մերձեցաք, գոլ

պարտապան քում Խորհրդոյն, շնորհեա՛ զնոյն մաքրութեամբ ի թողութիւն մեղաց մերոց:

Որ վառեցար ի յարփւոյն եւ ոչ կիզար ըստ մորենւոյն, այլ ետուր զՀացն կենաց, կերակուր բանաւորաց. բարեխօսեա՛ առ Քրիստոս ջնջել զգիր մեղաց մերոց:

ԱՂՕԹՔ՝
ԱՄԵՆԱՍՈՒՐԲ ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ ԱՌՋԵՒ

Տէ՛ր իմ Յիսուս Քրիստոս, հաւատում եմ որ Դու իսկապէս ներկայ ես Սուրբ Խորանի վրայ՝ Սուրբ Հաղորդութեան սքանչելի Խորհրդի մէջ: Գիշեր ու ցերեկ այստեղ ես բնակւում՝ մարդկանց սիրոյ համար, եւ անձկութեամբ սպասում ես, որ Քեզ այցի գանք:

Ոչնչութեանս անդունդից ձայնում եմ Քեզ, Տէ՛ր, եւ ասում. «Պաշտո՛ւմ եմ Քեզ, ո՛վ Աստուած իմ, շնորհակալ եմ Քեզ՝ ինձ պարգեւած բոլոր շնորհներիդ համար, յատկապէս, նրա համար, որ բանտարկուել ես Սուրբ Հաղորդութեան մէջ, որպէսզի Ինքդ Քեզ նուիրես ինձ, եւ Սուրբ Աստուածածնին կարգել ես բարեխօս՝ ինձ համար, եւ բարեհաճել ես ինձ հրաւիրել Եկեղեցի:

Ողջո՛յն, պաշտելի՛, ամենաբարի՛ Յիսուս, որ ցանկանում ես նուիրուել մարդկանց՝ այս Սբ. Խորհրդի միջոցով:

Շնորհակալութի՛ւն, որ առիթ ես տալիս ինձ՝ Սբ. Հաղորդութեան դէմ գործուած անհամար անարգանքների փոխարէն մի չնչին հատուցում կատարել, եւ իմ պաշտամունքով մասամբ փարատել այն ծանր վիշտը, որ քեզ պատճառում է մարդկանց անտարբերութիւնը՝ Սբ. Հաղորդութեան հանդէպ:

Ո՛վ Յիսուս, սիրո՛ւմ եմ Քեզ, ցաւո՛ւմ եմ, որ այնքա՛ն յաճախ վշտացրել եմ Քո բարի Սիրտը: Ահա՛, քո սուրբ շնորհքի օգնութեամբ որոշում եմ այլեւս քեզ չվշտացնել: Ես ինձ ամբողջովին քեզ եմ նուիրում: Քե՛զ եմ յանձնում իմ կամքը, իմ սէրը, իմ բաղձանքները, իմ բովանդակ էութիւնը: Թո՛ղ այժմուանից իմ թոյլ կամքը միախառնուի Քո հզօր ու սուրբ կամքին: Իմ միակ փափաքն է սիրել Քեզ, հնազանդուել Քո սուրբ կամքին եւ ամբողջովին հաւատարիմ մնալ Քեզ:

Քե՛զ եմ յանձնում իմ ընտանիքի անդամների, իմ սիրելի ազգականների եւ բոլոր խեղճ մեղաւորների հոգիները: Առաջնորդի՛ր նրանց դէպի յաւիտենական կեանքը, ուր մի օր բոլորս միատեղ պիտի փառաւորենք քեզ՝ քո Հօր եւ Սուրբ Հոգու հետ միասին. Ամէն:

ԱՂՕԹՔ ԱՄԵՆԱՍՈՒՐԲ ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ ԱՌՋԵՒ՝ ՍՐԲՈՒՀԻ ՖԱՈՒՍՏԻՆԱ ԿՈՎԱԼՍԿԱՅԻ

Սուրբ Հաղորդութի՛ւն, որի մէջ պարունակւում է մեր եւ, յատկապէս, թշուառ մեղաւորների հանդէպ Աստծոյ ողորմութեան վկայութիւնը:

Սուրբ Հաղորդութի՛ւն, որի մէջ պարունակւում է Տէր Յիսուս Քրիստոսի Մարմինն ու Արիւնը՝ որպէս մեր եւ, յատկապէս, թշուառ մեղաւորների հանդէպ անսահման ողորմածութեան ապացոյց:

Անսահման ողորմածութեան Սուրբ Հաղորդութի՛ւն, որի մէջ պարունակւում է կեանքը յաւիտենական՝ առատօրէն բաշխուած մեզ եւ, յատկապէս, թշուառ մեղաւորներին:

Սուրբ Հաղորդութի՛ւն, որի մէջ պարունակւում է Հօր, Որդու եւ Սուրբ Հոգու ողորմածութիւնը մեր եւ, յատկապէս, թշուառ մեղաւորիների հանդէպ:

Սուրբ Հաղորդութի՛ւն, որի մէջ պարունակւում է ողորմածութեան այն անսահման գինը, որը կը փոխհատուցի մեր եւ, յատկապէս, թշուառ մեղաւորների բոլոր մեղքերի համար:

Սուրբ Հաղորդութի՛ւն, որի մէջ պարունակւում է կենդանի ջրի աղբիւրը, որ բխում է մեր եւ, յատկապէս, թշուառ մեղաւորների հանդէպ անսահման ողորմութիւնից:

Սուրբ Հաղորդութի՛ւն, որի մէջ պարունակւում է ամենաանաղարտ սիրոյ կրակը, որ շողում է

յաւիտենական Հօր գրկից՝ որպէս մեր եւ, յատկապէս, թշուառ մեղաւորների հանդէպ անսահման ողորմութեան անդունդից:

Սուրբ Հաղորդութի՛ւն, որի մէջ պարունակւում է մեր բոլոր տկարութիւնների դեղը, որ բխում է մեր եւ յատկապէս, թշուառ մեղաւորների հանդէպ անսահման ողորմութեան աղբիւրից:

Սուրբ Հաղորդութի՛ւն, որի մէջ պարունակւում է մեր միութիւնը Աստուծոյ հետ՝ մեր եւ յատկապէս, թշուառ մեղաւորների հանդէպ Նրա անսահման ողորմութեան միջոցով:

Սուրբ Հաղորդութի՛ւն, որ մէջ պարունակւում է Յիսուսի ամենաքաղցր Սրտի զգացմունքները՝ մեր եւ յատկապէս, թշուառ մեղաւորների հանդէպ:

Սուրբ Հաղորդութի՛ւն՝ մեր միակ յոյս՝ կեանքի բոլոր ձախորդութիւնների եւ տառապանքների ժամանակ:

Սուրբ Հաղորդութիւ՛ն՝ մեր միակ յոյս՝ խաւարի ներքին եւ արտաքին փոթորիկների մէջ:

Սուրբ Հաղորդութի՛ւն՝ մեր միակ յոյս՝ կեանքի եւ մահուան ժամին:

Սուրբ Հաղորդութի՛ւն՝ մեր միակ յոյս՝ յուսահատութեան տարափների մէջ:

Սուրբ Հաղորդութի՛ւն՝ մեր միակ յոյս՝ կեղծիքի եւ դաւաճանութեան մէջ:

Սուրբ Հաղորդութի՛ւն՝ մեր միակ յոյս՝ իմացական խաւարի եւ անաստուածութեան մէջ, որ ողողում են երկիրը:

Սուրբ Հաղորդութի՛ւն՝ մեր միակ յոյս՝ տենչանքի եւ ցաւի մէջ, ուր ոչ ոք մեզ չի հասկանում:

Սուրբ Հաղորդութի՛ւն՝ մեր միակ յոյս՝ ամենօրեայ կեանքի ծանր աշխատանքի եւ միօրինակութեան մէջ:

Սուրբ Հաղորդութի՛ւն՝ մեր միակ յոյս՝ մեր յոյսերի եւ ջանքերի գործադրութեան:

Սուրբ Հաղորդութի՛ւն՝ մեր պաշտպանութիւն՝ թշնամու աւերածութիւնների եւ դժոխքի ուժերի դէմ:

Սուրբ Հաղորդութի՛ւն, վստահում եմ Քեզ, երբ բեռս ուժերիցս վեր է լինում եւ տեսնում եմ, որ ջանքերս ապարդիւն են:

Սուրբ Հաղորդութի՛ւն, վստահում եմ Քեզ, երբ սիրտս սկսում է դողալ, եւ մահացու քրտինքը պատում է ճակատս:

Սուրբ Հաղորդութի՛ւն, վստահում եմ Քեզ, երբ ամէն ինչ դաւադրում է իմ դէմ, ու յուսահատութիւնը սողալով՝ մտնում է հոգիս:

Սուրբ Հաղորդութի՛ւն, կը վստահեմ Քեզ, երբ աչքերս սկսեն մշուշուել բոլոր ժամանակաւոր բաների հանդէպ, եւ առաջին անգամ հոգիս տեսնի անյայտ աշխարհները:

Սուրբ Հաղորդութի՛ւն, կը վստահեմ Քեզ, երբ խնդիրներս ուժերիցս վեր լինեն, եւ ձախորդութիւնը դառնայ իմ ամենօրեայ ճակատագիրը:

Սուրբ Հաղորդութի՛ւն, կը վստահեմ Քեզ, երբ առաքինութեան գործադրումը դժուարին թուայ, եւ էութիւնս դառնայ ըմբոստ:

Սուրբ Հաղորդութի՛ւն, կը վստահեմ Քեզ, երբ թշնամական հարուածներն ուղղուեն դէպի ինձ:

Սուրբ Հաղորդութի՛ւն, կը վստահեմ Քեզ, երբ տաժանելի աշխատանքս ու ջանքերս սխալ դատուեն ուրիշների կողմից:

Սուրբ Հաղորդութի՛ւն, կը վստահեմ Քեզ, երբ քննադատես ինձ, այդ ժամանա՛կ է, որ պիտի վստահեմ Քո ծով ողորմածութեանը:

Սուրբ Հաղորդութի՛ւն, վստահում եմ Քո անսահման ողորմութեանը: Աստուած իմ Հայրն է, ուրեմն՝ ես՝ նրա զաւակը, պահանջներ ունեմ Նրա աստուածային Սրտի հանդէպ: Եւ որքան մեծ է խաւարը, այնքա՛ն աւելի կատարեալ պէտք է լինի մեր վստահութիւնը:

Օրագիր, 356/357



ԱՂՕԹՔ ԵՒ ՆՈՒԻՐՈՒՄ ՅԻՍՈՒՍԻ ՍՈՒՐԲ ՍՐՏԻՆ[44]

---

44 Կաթողիկէ Եկեղեցում ամենատարածուած ջերմեռանդական աղօթքներից մէկն է՝ նուիրուած Տէր Յիսուս

Քրիստոսի Ամենասուրբ Սրտին: Պաշտելով Տիրոջ Սուրբ Սիրտը՝ պաշտում ենք Նրա անսահման, ինքնազոհ սէրը մարդկութեան նկատմամբ, պաշտում ենք Յիսուսի Սուրբ Վէրքերը, Չարչարանքները, որ նա կրեց մեզ համար, իսկ այդ ամէնի խտացումն է Սուրբ Սիրտը: Ուրեմն, պաշտում ենք ե՛ւ Յիսուսի մարմնեղէն Սիրտը, ե՛ւ Նրա անհատնում Սէրը, զգացումների խտացումը, որ Նա ունի մեր հանդէպ: Յիսուսի Սուրբ Սրտի ջերմեռանդութիւնը ծագել է 11-12-րդ դարերում, երբ զանազան կաթողիկէ վանքերում սկսեց տարածուել Տիրոջ Սրբազան Վէրքերի պաշտամունքը: Սակայն, ջերմեռանդութեան այն ձեւը, որ այսօր ունենք, հիմնականում ձեւաւորուել է 17-րդ դարում՝ ֆրանսիացի միաձնուհի Սրբուհի Մարգարեթ Մարի Ալաքոքի (Margaret Mary Alacoque) (1647–1690թթ.) շնորհիւ, ով 1673-75թթ. Յիսուս Քրիստոսի անձնական երեւումներից յետոյ յայտարարեց, որ Յիսուս աշխարհին խնդրում է կատարել Իր Սուրբ Սրտի հանդէպ ջերմեռանդութիւն, մասնաւորապէս, 1) խոստովանել եւ հաղորդուել Տիրոջ Մարմնին եւ Արեանը իւրաքանչիւր ամսուայ առաջին ուրբաթ օրերին, 2) մասնակցել Սուրբ Հաղորդութեան երկրպագութեան ամսուայ առաջին ուրբաթ կամ հինգշաբթի երեկոյեան, նաեւ՝ 3) մասնակցել յունիս ամսուայ՝ Յիսուսի Սուրբ Սրտի ջերմեռանդութեանը: Այս աղօթքի տարածման գործում մեծ դեր խաղաց նաեւ մէկ այլ միանձնուհի՝ Աստուածային Սրտի Մարիամը (1863-1899թթ.), ում խնդրանքով Լեւոն 13-րդ Սրբազան Քահանայապետը (1878-1903թթ.) աշխարհն ընծայեց Յիսուսի Սուրբ Սրտին:

ԲԱՆԱՁԵՒ ՆՈՒԻՐՄԱՆ ՅԻՍՈՒՍԻ ՍՈՒՐԲ ՍՐՏԻՆ[45]

Ո՛վ ամենաքաղցր Յիսուս, Փրկի՛չ մարդկային ազգի, գթալիր մի հայեացք գցի՛ր մեզ վրայ, որ խոնարհաբար ընկած ենք Սուրբ Սեղանիդ առջեւ: Մենք Քոնն ենք, եւ ուզում ենք լինել Քոնը, որպէսզի է՛լ աւելի սերտօրէն միանանք Քեզ: Իւրաքանչիւրս յօժարութեամբ նուիրւում ենք Քո Սուրբ Սրտին:

Շատերը բնաւ չեն ճանաչում Քեզ, շատերն էլ, արհամարհելով պատուիրաններդ, Քեզ ուրացել են:

Գթա՛ եւ ողորմի՛ր նրանց բոլորին, ո՛վ քաղցր Յիսուս եւ ձգի՛ր բոլոր մարդկանց դէպի Աստուածային Սուրբ Սիրտդ:

Իշխի՛ր եւ թագաւորի՛ր ոչ միայն նրանց վրայ, ովքեր հաւատարիմ մնալով՝ երբեք չհեռացան Քեզնից, այլ նաեւ՝ անառակ որդիների վրայ, ովքեր թողեցին Քեզ: Թո՛ղ որ նրանք էլ փութով դառնան իրենց տունը հայրենի, որպէսզի չկորչեն խեղճութեան մէջ սովամահ:

Թագաւորի՛ր նաեւ նրանց վրայ, ովքեր մոլորութեամբ խաբուած կամ գժտութեամբ հեռացել են: Առաջնորդի՛ր նրանց դէպի նաւահանգիստը ճշմարտութեան եւ ի միութիւն հաւատքի, որպէսզի լինի մէկ հօտ եւ մէկ հովիւ:

---

45 Հաստատուած Լեւոն 13-րդ Սրբազան Քահանայապետի հրամանով:

Թագաւորի՛ր վերջապէս բոլոր նրանց վրայ, որոնք տակաւին թաղուած են եւ ընկղմուած հեթանոսական հին նախապաշարումների մէջ, մի՛ մերժիր՝ հանելու նրանց իրենց խաւարից եւ առաջնորդելու դէպի լոյսը եւ Աստուծոյ Արքայութիւնը:

Շնորհի՛ր Տէր, Քո Եկեղեցուն ընդհանուր անդորրութիւն, ազատութիւն եւ երջանկութիւն:

Տո՛ւր, Տէր, բոլոր ազգերին հանդարտութիւն եւ բարեկարգութիւն, որպէսզի աշխարհի մի ծայրից մինչեւ միւսը հնչի այս աղաղակը.

«Գովութի՛ւն եւ գոհութի՛ւն Աստուածային Սրտին, որին պարտական ենք մեր փրկութիւնը. որին վայել է պատիւ եւ փառք յաւիտեանս. Ամէն»:

ԼԻԹԱՆԻԱ ՍՈՒՐԲ ՍՐՏԻՆ ՅԻՍՈՒՍԻ[24]

Տէ՛ր, ողորմեա՛.
Քրիստո՛ս, ողորմեա՛:
Յիսո՛ւս, լո՛ւր մեզ,
Քրիստո՛ս, անսա՛ մեզ:
Հայր երկնաւոր Աստուած, ողորմեա՛ մեզ:
Որդիդ Փրկիչ աշխարհի Աստուած, ողորմեա՛ մեզ,
Հոգիդ Սուրբ Աստուած,
ողորմեա՛ մեզ (*կրկնել բոլոր տողերից յետոյ*)
Սուրբ Երրորդութիւն մի Աստուած,
Սիրտ Յիսուսի, Որդւոյ Հօրն յաւիտենականի,

Սիրտ Յիսուսի, կազմեալ ի Հոգւոյն Սրբոյ յարգանդի Կուսին Մարիամու,
Սիրտ Յիսուսի, գոյացապէս միացեալ ընդ Բանին Աստուծոյ,
Սիրտ Յիսուսի, անբաւ մեծվայելչութիւն,
Սիրտ Յիսուսի, Սուրբ Տաճար Աստուծոյ,
Սիրտ Յիսուսի, Տապանակ Բարձրելոյն,
Սիրտ Յիսուսի, Տուն Աստուծոյ եւ Դուռն երկնից,
Սիրտ Յիսուսի, բորբոքեալ հնոց սիրոյ,
Սիրտ Յիսուսի, ընդունարան արդարութեան եւ սիրոյ,
Սիրտ Յիսուսի, լի բարութեամբ եւ սիրով,
Սիրտ Յիսուսի, անդունդք ամենայն առաքինութեանց,
Սիրտ Յիսուսի, գերարժանի ամենայն գոհութեան,
Սիրտ Յիսուսի, թագաւոր եւ կեդրոն ամենայն սրտից,
Սիրտ Յիսուսի, յորում են ամենայն գանձք իմաստութեան եւ գիտութեան,
Սիրտ Յիսուսի, յորում բնակի ամենայն լրութիւն Աստուածութեան,
Սիրտ Յիսուսի, ընդ որ Հայր հաճեցաւ,
Սիրտ Յիսուսի, յորոյ մենք ամենեքին առաք ի լրութենէ անտի,
Սիրտ Յիսուսի, անձկալիդ բլրոց յաւիտենականաց,
Սիրտ Յիսուսի, երկայնամիտ եւ բազումողորմ,
Սիրտ Յիսուսի, բաւական յամենեւին որք կարդան առ Քեզ,

Սիրտ Յիսուսի, աղբիւր կենաց եւ սրբութեան,
Սիրտ Յիսուսի, քաւութիւն մեղաց մերոց,
Սիրտ Յիսուսի, լցեալ նախատանօք,
Սիրտ Յիսուսի, փշրեալ վասն մերոց անօրէնութեանց,
Սիրտ Յիսուսի, լեալ հնազանդ մահու չափ,
Սիրտ Յիսուսի, ի խոր խոցեալ տիգաւ,
Սիրտ Յիսուսի, աղբիւր ամենայն մխիթարութեան,
Սիրտ Յիսուսի, կեանք մեր ու յարութիւն,
Սիրտ Յիսուսի, խաղաղութիւն մեր եւ հաշտութիւն,
Սիրտ Յիսուսի, զոհ մեղաւորաց,
Սիրտ Յիսուսի, փրկութիւն ի քեզ ննջեցելոց,
Սիրտ Յիսուսի, բերկրութիւն ամենայն սրբոց, ողորմեա՛ մեզ:
Գառն Աստուծոյ, որ բառնաս զմեղս աշխարհի, Խնայեա՛ ի մեզ Տէր,
Գառն Աստուծոյ, որ բառնաս զմեղս աշխարհի, Անսա՛ մեզ Տէր,
Գառն Աստուծոյ, որ բառնաս զմեղս աշխարհի, Ողորմեա՛ մեզ.
Յիսուս հեզ եւ խոնարհ սրտիւ.
Արա՛ զսիրտ մեր ըստ սրտին քում:

ԱՂՕԹՔ

Աստուա՛ծ ամենակարող ու յաւիտենական, հայեա՛ց ի Սիրտ Որդւոյ քոյ սիրելւոյ եւ ի գոհութիւնս ու ի հատուցմունս, զորս հատոյց Քեզ յանուն մեղաւորաց. Դու հաշտեցուցեալ, որոց եւ խնդրեն զողորմութիւն քո՝ շնորհեա՛ զթողութիւն յանուն Որդւոյ քո Յիսուսի Քրիստոսի, որ կենդանի է եւ թագաւորէ ընդ Քեզ ու ընդ Սրբւոյ Հոգւոյն յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

ՊՍԱԿ ԱՂՕԹՔՆԵՐԻ՝ ԱՌ ՍՈՒՐԲ ՍԻՐՏՆ ՅԻՍՈՒՍԻ[46]

Աստուա՛ծ, յօգնել ինձ նայեա՛ց.
Տէ՛ր, յընկերել ինձ փութա՛:
Փառք Հօր եւ Որդւոյ…
Այժմ եւ միշտ…

ԵԿԵՂԵՑԻՈՅ ՀԱՄԱՐ

Ո՛վ ամենասուրբ Սիրտ Յիսուսի, աղբի՛ւր շնորհաց, որ բխում է յաւիտեան, յիշի՛ր Եկեղեցիդ՝

---

46 Աղօթքների այս շարքը վերցուած է «Բանալիք քաւարանին՝ հաւաքածոյ աղօթից» գրքից, հեղ.՝ Ա. Ր. , թարգմանիչ՝ Հ. Յովհաննէս Թորոսեան

հարսըդ հաւատարիմ, որին ծնեցիր Գողգոթայի տանջանքների մէջ, արժանի արա՛ Եկեղեցուդ այն սրբազան միութեան, որին հաճեցիր բարձրացնել նրան: Տո՛ւր Սրբազան Քահանայապետին, որ երկրիս վրայ Քո ներկայացուցիչն է, Սողոմոն թագաւորի՝ Քեզնից խնդրած իմաստութիւնը: Չարը նրա դէմ անիրաւ դաւադրութիւններ է նիւթում. զօրացրո՛ւ նրան, որ յաղթական ելնի այն բոլոր դարաններից, որ լարում են իր դէմ բոլոր թշնամիները, որոնք նաեւ Քո՛ թշնամիներն են: Տո՛ւր եպիսկոպոսներին աստուածային նախանձախնդրութիւն եւ սրբութիւն: Թող հոգեւոր առաջնորդները լցուեն զօրութեամբ եւ քաղցրութեամբ, իսկ հաւատացեալների մէջ վառի՛ր հնազանդութեան ոգին: Իշխանաւորներին ներշնչի՛ր խաղաղութեան խորհուրդներ, որպէսզի Եկեղեցիդ կարողանայ իր բարերար առաքելութիւնը կատարել անխափան: Հեռացրո՛ւ Եկեղեցուց ամէն աղտ ու արատ, եւ դի՛ր նրան խնամակալ հրեշտակներիդ պաշտպանութեան ներքոյ: Դու խոստացար Եկեղեցուդ հետ լինել մինչեւ աշխարհիս կատարածը, եւ Քո այդ խոստման վրայ է հաստատուած մեր բոլորի յոյսը: «Երկինք եւ երկիր կանցնեն, եւ խօսքերը քո չեն անցնի»:

1 Հայր մեր…

5 Փառք Հօր…

ՄԵՂԱՒՈՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Ո՛վ Սիրտ Յիսուսի, առատ ողորմութեամբ եւ բոլոր սրտերից ամենից աւելի գորովալիրը, ողորմի՛ր խեղճ մեղաւորներին, ովքեր կուրացած են ստի ոգով, գոհ եւ ուրախ են իրենց չար գործերի մէջ, շարժի՛ր սիրտն ու հոգին նրանց, որ գերի են կրքերին եւ խստասիրտ են դարձել՝ ոտնատակ անելով շնորհներդ: Յիշի՛ր, Տէ՛ր իմ, որ նրանց համար թափեցիր արեանդ վերջին կաթիլները, որոնք հոսեցին Քո տիգախոց վիրաւոր սրտից: Երկնաւոր Հօրն ենք ընծայում Քո սուրբ Արիւնը, որ աւելի բարձրաձայն «Գթութի՛ւն» է գոչում, քան Աբելի արիւնն էր «վրէժխնդրութի՛ւն» գոչում: Յիսու՛ս, Ճշմարտութի՛ւն յաւիտենական, Դու Ինքդ ասացիր. «Երբ բարձրանամ երկրից, այնժամ բոլորին կը ձգեմ դէպի ինձ»: Ձգի՛ր, կանչի՛ր, ուրեմն, մոլորեալ զաւակներիդ, ցո՛յց տուր նրանց այն անդնդախոր վիհը, ուր գնում են գահավիժելու, որպէսզի զղջալով եւ ապաշխարելով՝ գան ապաստանեն բազուկներիդ մէջ, եւ, մանաւանդ, Սրտիդ մէջ, որ միշտ բաց է՝ նրանց ընդունելու համար:

1 Հայր մեր…

5 Փառք Հօր…

ՀԱԽԱՏՔԻ ՏԱՐԱԾՄԱՆ ՀԱՄԱՐ

Ո՛վ պաշտելի Սի՛րտ Յիսուսի, գթալիր հայեացքդ չե՞ս դարձնելու արդեօք այն անթիւ ժողովուրդների վրայ, որոնք թափառում են խաւարի եւ մահուան ստուերների մէջ: Օրինեալ անունդ, որո՛վ միայն փրկուելու են մարդիկ, դեռ չի հասել նրանց: Աստուածային Փրկի՛չ, որ մեռար Խաչի վրայ՝ բոլորի համար, գթա՛ նրանց թշուառութեան վրայ եւ փրկի՛ր նրանց: Յիշի՛ր, որ Երկնաւոր Հայրդ քեզ ժառանգութիւն տուեց երկրի բոլոր ազգերը: Տե՛ս, թէ որքա՜ն ժողովուրդներ դեռեւս զրկուած են փրկագործութեան բարիքներից: Եւ նոյնիսկ նրանց մէջ, որոնք տեսել են ու վայելում են Աւետարանի լոյսը, որքա՜ն շատ են հերձուածողները: Ո՛վ Յիսուս, Աստուած, որ միլիոնաւոր մարդկանց համար ծածկուած ես, մինչեւ ե՞րբ ես թողնելու, որ անպտուղ մնայ Արիւնդ: Ո՛վ Յիսուս, սիրուած շատ քչերից միայն, ինչո՞ւ չես շատացնում Քեզ պաշտողներիդ թիւը: Ո՛վ գեղեցկութիւն մշտահին եւ մշտանորոգ, հանի՛ր քարոզիչների անհամար գնդեր, որ գնան Քեզ ծանօթացնելու աշխարհին, նրանց առջեւից ուղարկի՛ր խաղաղութեանդ հրեշտակին, կործանի՛ր նրանց առջեւ դժոխքի պատուարները, որպէսզի կատարուի խօսքդ. «Եղիցի՛ մի հօտ եւ մի հովիւ»:

1 Հայր մեր…

5 Փառք Հօր…

ՀԱՅ ԱԶԳԻ ՀԱՄԱՐ

Ո՛վ աստուածային Սիրտ Յիսուսի, մեր ազգը Արեւելքի ժողովուրդների մէջ ամենաառանձնաշնորհեալներից մէկն է եղել, որովհետեւ շատ հնուց ճանաչել ու սիրել է Քեզ՝ պաշտելով ու փառաւորելով, վայելել է օրհնութիւններդ ու գթութեանդ բարիքը: Աւա՜ղ, ի՞նչ եղաւ մեր երանելի նախահայրերի սուրբ եւ ճշմարիտ հաւատքը: Բայց մենք սրբերի եւ նահատակների զաւակներ ենք. գթա՛ եւ ողորմեա՛ մեզ մեր հայրերի համար, եւ ողորմութեանդ չափը թող գերազանցի մեր մեղքերի կշիռը: Յիշի՛ր, որ մեր ազգը՝ շրջապատուած հեթանոս եւ վայրագ ազգերով, միշտ հալածուել է՝ իր սուրբ հաւատքի համար, եւ մեր հայրերը միշտ նախընտրել են ամէն զրկանք, չարչարանք, քան թէ ուրանալ Քեզ եւ հաւատքը: Տո՛ւր մեր նահատակ ազգին խաղաղութիւն, վերարծարծի՛ր մեր սրտերում մեր հայրերի առաքինութիւնները, նրանց կենդանի եւ ճշմարիտ հաւատքը: Հաստատի՛ր եւ ծաղկեցրո՛ւ մեր ազգի մէջ Մօրդ՝ ամենասուրբ եւ անարատ Սուրբ Կոյսի հանդէպ խոր յարգանքն ու սէրը, եւ մանաւանդ Ամենասուրբ Հաղորդութեան եւ Սուրբ Սրտիդ պաշտամունքը: Տո՛ւր մեզ ամէն երկնաւոր եւ ժամանակաւոր բարիք. օրհնի՛ր եւ լցրո՛ւ շնորհներովդ: Մեղանչել ենք բարութեանդ դէմ, բայց մի՛ թող մեզ, որովհետեւ Քո ժողովուրդն ենք եւ Քո հօտի ոչխարները:

1 Հայր մեր…
5 Փառք Հօր…

ՄԵԶ ՀԱՄԱՐ

Սի՛րտ Յիսուսի, ինո՛ց հրաբորբոք յաւիտենական սիրոյ, ուրախութի՛ւն հրեշտակաց եւ զուարճութի՛ւն սրբոց, թո՛յլ տուր, որ Քեզ պաշտողներս մեզ համար էլ աղօթենք: Չենք խնդրում հարստութիւն, վայելք եւ երկրաւոր պատիւներ. այլ երկնքում ենք դնում մեր սիրտը եւ մեր գանձը: Այս գանձը Դու Ինքդ ես՝ Յիսու՛ս. սէր, որ վառւում ես անդադար եւ երբեք չես նուազում: Ե՛կ, բորբոքի՛ր մեզ այն բոցով եւ հրով, որ բերեցիր աշխարհիս. այդ բոցի հետ միասին մեզ պիտի գայ ամէն բարիք: Տո՛ւր մեզ խոնարհութիւն, որ բոլոր առաքինութիւնների արմատն է, տո՛ւր մեզ արիութիւն՝ պայքարելու մեր չար սովորութիւնների դէմ, եւ հնազանդութիւն՝ Քո ներքին սուրբ ազդեցութիւններին: Ո՛վ սիրելի Սի՛րտ Յիսուսի, այնպէս արա՛, որ մեր կամքը միաձուլուի Քո կամքին, եւ մեր ամբողջ երջանկութիւնը լինի միայն Քո փառքի համար ապրելը, Սուրբ Հաղորդութի՛նդ լինի մեր հացն ու վայելքը, Սուրբ Խորա՛նդ՝ մեր հանգստավայրը, եւ մի օր սիրելի աշակերտիդ նման հանգստանանք Քո կրծքի վրայ՝ Երկնքի յաւերժական փառքի մէջ արթնանալու համար:

1 Հայր մեր…

5 Փառք Հօր…

Ո՛վ աստուածային Սիրտ Յիսուսի, տո՛ւր, որ միշտ առաւել շատ սիրեմ քեզ: Ամէն:





ՃԱՆԱՊԱՐՀ ԽԱՉԻ[47]

47 «Ճանապարհ Խաչի» կոչուող աղօթքների եւ խորհրդածութիւնների այս շարքը ջերմեռանդական աւանդութիւն է, որն առաւել տարածուած է Կաթողիկէ Եկեղեցում: Այն իրենից ներկայացնում է Տէր Յիսուս Քրիստոսի

չարչարանքների ճանապարհի տասնչորս դրուագների նկարագրութիւններ եւ աղօթքներ, որոնք կոչւում են «Տասնչորս կայաններ»: Պատմական տուեալները փաստում են, որ այս ջերմեռանդական սովորութիւնը սկսել է տարածուել միջնադարում, Քրիստոսի չարչարանքների հետքերով գնալու փափաքից, աւելի՝ Խաչակրաց արշաւանքների ժամանակ, այն ուխտաւորների մօտ, ովքեր այցելում էին Երուսաղէմի Via Dolorosa (Չարչարանաց կամ վշտի ճանապարհ) կոչուող այն փողոցը, որտեղով, ըստ աւանդութեան, իր խաչը շալակած՝ անցել է Յիսուս, դէպի Գողգոթա: Երբ 13-րդ դարում Սբ. Ֆրանցիսկոս Ասսիզեցին հիմնեց Երուսաղէմի Սրբազան Վայրերի պահպանութեան առաքելութիւնը, ֆրանցիսկեան վանականները սկսեցին լայնօրէն կիրառել Խաչի Ճանապարհի ջերմեռանդութիւնը, նախ Երուսաղէմում, ապա՝ 15-16-րդ դարերից, նաեւ եւրոպական երկրներում: Կառուցւում էին Սրբազան Վայրերի կրկնօրինակներ եւ պատրաստւում էին առանձին կայաններ (նկարներ կամ քանդակներ), որոնք պատկերում են Յիսուսի չարչարանքների դրուագները: 1686թ. ֆրանցիսկեանների խնդրանքով Նորին Սրբութիւն Իննովկենտիոս ԺԱ Քահանայապետը միայն ֆրանցիսկեան հայրերին պաշտօնապէս թոյլատրեց եկեղեցիներում կառուցել կայանները՝ տեղի եպիսկոպոսների իմացութեամբ: 1862թ. այդ իրաւունքը ստացան բոլոր կաթողիկէ եպիսկոպոսները: Նախապէս յիշատակւում էին միայն եօթը կայաններ, յետագայում հաստատուն մնացին աւանդական տասնչորսը: Այդ տասնչորս կայաններից միայն ութն են, որ համաձայն

ԱՂՕԹՔ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԵԱՆ

Ո՛վ աստուածային Փրկիչ, ցանկանում եմ խոնարհ սրտով մտաբերել քո դառնակսկիծ չարչարանքներն ու մահը՝ լաւ ըմբռնելու համար Խաչի վրայ քո զոհուելու իմաստը, դէպի մարդկութիւնը տածած քո անսահման սէրը, բայց, յատկապէս, մեր մեղքերի վատութիւնն ու ծանրութիւնը, որոնք Գողգոթայի արիւնոտ ճանապարհին քո կրած տառապանքների պատճառ եղան. Ամէն:

են Աւետարանին. երրորդը, չորրորդը, վեցերորդը եւ իններորդը հիմնուած են զուտ աւանդութեան վրայ, բայց, շատ ամուր հաստատուած, ինչը վկայութիւն է հաւատքի խոր ապրումի եւ խոկման: Երբ Սբ. Յովհաննէս Պօղոս Բ Քահանայապետը 1991թ. առաջարկեց զուտ աւետարանական հիմքով եւ այլ բովանդակութեամբ դարձեալ տասնչորս կայաններով «Խաչի ճանապարհի» մի տարբերակ, այն մեծ տարածում չունեցաւ, եւ աւելի սիրուած մնաց հին՝ աւանդական, տարբերակը: Ամէն տարի «Ճանապարհ Խաչի» ջերմեռանդական աղօթքխորհրդածութիւնը կատարւում է Աւագ Ուրբաթ, Հռոմի Քոլիզէումում, նախագահութեամբ Հռոմի Սրբազան Քահանայապետի եւ մասնակցութեամբ հարիւր հազարաւոր հաւատացեալների բազմութեան: Ջերմեռանդութիւնը կատարւում է նաեւ Մեծ Պահոց շրջանում՝ ուրբաթ օրերին, բոլոր կաթողիկէ համայնքներում: Հայ Կաթողիկէ համայնքներում այն եւս ամուր հաստատուած է հնուց եւ շատ սիրուած:

ԱՌԱՋԻՆ ԿԱՅԱՆ

Քրիստոս դատապարտում է մահուան

Երկրպագում ենք Քեզ, Յիսուս, եւ ցանկանում ենք Քեզ սիրել,

որովհետեւ քո Սուրբ Խաչով աշխարհին ես փրկել:

Ո՛վ աստուածային Փրկիչ, ինչպիսի՛ ծանր պարագաների մէջ են քեզ դատաստանի կանչում: Յուդան քեզ մատնել է, առաքեալներդ քեզ ուրացել են, չարագործները քեզ ատեանից ատեան են քաշում, բռնցքահարում եւ ապտակում: Կատաղած ամբոխը, քո արիւնն ու տառապանքները տեսնելով, չի յագեցել դեռ եւ պահանջում է, որ քեզ խաչը հանեն: Իսկ Պիղատոսը քեզ դատապարտում է մահուան: Ո՛վ պաշտելի Յիսուս, Դու բեռնաւորուած մեր մեղքերով ու ոճիրներով, մի չարագործի կերպարանք ես ստացել: Քեզ չարագործի տեղ են դնում եւ Դու չես բողոքում: Դու մեր յանցանքների համար մահուան ես դատապարտում, որպէսզի մաքրես մեր մեղքերը եւ մեզ ազատես դժոխքից. Ամէն:

Հայր մեր… Ողջո՛յն քեզ, Մարիամ… Փառք Հօր…

Ո՛վ խոցեալ սիրտ Յիսուսի,

ողորմի՛ր մեզ եւ ննջեցեալների հոգիներին:

ԵՐԿՐՈՐԴ ԿԱՅԱՆ

Յիսուս խաչն առնում է ուսին

Երկրպագում ենք Քեզ, Յիսուս, եւ ցանկանում ենք Քեզ սիրել,

որովհետեւ քո Սուրբ Խաչով աշխարհն ես փրկել:

Ո՜վ աստուծային Փրկիչ, ինչպիսի՜ եռանդով ես Դու գնում գրկելու այն խաչափայտը, որ մեր մեղապարտ հոգիներն է ներկայացնում: Ցանկանում ես նրա վրայ մեռնել, լուալ այն եւ օծել քո սուրբ արիւնով՝ ի նշան այն վսեմ լուացումին, որ մեր հոգիներին ես պարգեւելու: Ահաւոր տառապանքիդ մէջ մէկ մխիթարութիւն ունես՝ այն, որ Քո Հօր ամբողջական կամքն ես կատարում: Եւ երջանիկ ես, որովհետեւ Հօրդ կամքը կատարելով՝ Դու փրկում ես մարդկութիւնը, ազատում նրանց մեղքերից եւ դժոխքի սարսափներից:

Ո՜վ պաշտելի Յիսուս, յանուն Քո Սուրբ Խաչի, շնորհի՛ր որ մեր կամքը միշտ միացնենք Աստծոյ կամքին, եւ սիրով կրենք այն բոլոր խաչերն ու ցաւերը, որ տրւում են մեզ՝ մեր մեղքերի քաւութեան համար. Ամէն:

Հայր մեր… Ողջո՛յն քեզ, Մարիամ… Փառք Հօր…

Ո՜վ խոցեալ սիրտ Յիսուսի,

ողորմի՛ր մեզ եւ ննջեցեալների հոգիներին:

ԵՐՐՈՐԴ ԿԱՅԱՆ

Յիսուս ընկնում է խաչի ծանրութեան տակ

Երկրպագում ենք Քեզ, Յիսուս, եւ ցանկանում ենք Քեզ սիրել,

որովհետեւ քո Սուրբ Խաչով աշխարհին ես փրկել:

Ո՜վ աստուածային Փրկիչ, հակառակ Քո ցուցաբերած մեծ կորովին, Դու ցաւալիօրէն ընկճւում ես խաչի ծանրութիւնից եւ վայր ես ընկնում:

Ձեռքերիդ ու ոտքերիդ փակուած վէրքերը նորից արիւնոտւում են ու ներկում հողը: Իրօք ծանր է խաչափայտը, սակայն աւելի ծանր են իմ մեղքերը, մարդկութեան մեղքերն ու ոճիրները, որոնց ծանրութի՛ւնն է, որ քեզ ընկճում է ու ցած է գցում: Այդ անկեալ վիճակում՝ Դու մեր քաւութեան նոխազն ես, Աստծոյ առաջ՝ այն մահապարտը, որ Իր անհուն զոհաբերումով մաքրելու է մեր բոլոր յանցանքները:

Ո՜վ պաշտելի Յիսուս, որ ընկած վիճակում Դու տեսնում ես յատկապէս ի՛մ բոլոր մեղքերը, որոնք պատճառ են դարձել քո մահուան: Ների՛ր ինձ, Տէր, ողորմի՛ր եւ ուժ ու կորով պարգեւի՛ր, որ այսուհետեւ այլեւս քեզ չվշտացնեմ, այլ սիրեմ իմ ամբողջ հոգով. Ամէն:

Հայր մեր… Ողջո՛յն քեզ, Մարիամ… Փառք Հօր…

Ո՜վ խոցեալ սիրտ Յիսուսի,

ողորմի՛ր մեզ եւ ննջեցեալների հոգիներին:

ՉՈՐՐՈՐԴ ԿԱՅԱՆ

Յիսուս հանդիպում է Իր սիրելի մօրը

Երկրպագում ենք Քեզ, Յիսուս, եւ ցանկանում ենք Քեզ սիրել,

որովհետեւ քո Սուրբ Խաչով աշխարհն ես փրկել:

Ո՛վ աստուածային Փրկիչ, այն րոպէին, երբ Սուրբ Աստուածածինը քեզ տեսաւ մահապարտի այդ վիճակում, Դու տառապանքների ու կսկիծների դառնագո՛յնը ապրեցիր: Վերջին անգամ էր, որ գրկեցիք իրար: Ինչե՞ր ունէիք ասելու ... սակայն անգութ դահիճները ձեզ վայրագօրէն բաժանեցին՝ սաստկացնելով ձեր վիշտն ու կսկիծը: Ո՛վ Սուրբ Աստուածածին, տեսնում եմ, թէ ինչպիսի՜ հերոսութեամբ Քո միածին Որդուն զոհաբերում ես մեր փրկութեան համար: Բողոք ու գանգատ չկայ քո շուրթերին: Որչա՜փ երախտապարտ ենք քեզ, ո՛վ Յիսուսի եւ մեր Մա՛յրը, որ մեր սիրոյն համար համակերպւում ես Յիսուսի չարչարանքների ու մահուան հետ: Հայցի՛ր Աստծուց, որ մեր տեւական ապաշխարութեամբ՝ կարողանանք գնահատել մեզ համար թափուած այդ Սուրբ Արիւնը, որ քո ազնիւ սրտից հոսել է Յիսուսի նուիրական սրտի մէջ. Ամէն:

Հայր մեր… Ողջո՛յն քեզ, Մարիամ… Փառք Հօր…

Ո՛վ խոցեալ սիրտ Յիսուսի,

ողորմի՛ր մեզ եւ ննջեցեալների հոգիներին:

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԿԱՅԱՆ

Սիմոն Կիւրենացին օգնում է Յիսուսին

Երկրպագում ենք Քեզ, Յիսուս, եւ ցանկանում ենք Քեզ սիրել,

որովհետեւ քո Սուրբ Խաչով աշխարհն ես փրկել:

Ո՛վ աստուածային Փրկիչ, դահիճներդ տեսնում են, որ դու բոլորովին ուժասպառ ես եղել տառապանքից ու ցաւից. հրեաները վախենում են, որ դու մահանաս ճանապարհին եւ չյաջողուի քեզ խաչ հանելու իրենց ծրագիրը: Ուստի, ստիպում են Սիմոն Կիւրենացուն, որ օգնի քեզ եւ որոշ ժամանակ տանի քո ծանր խաչափայտը: Ո՛վ պաշտելի Յիսուս, թո՛ղ որ Սիմոն Կիւրենացու նման եւ նրա հետ ես էլ մասամբ օգնեմ Քեզ՝ ծանր բեռդ կրելու, որպէսզի մխիթարուի Քո բարի սիրտը: Մի՛ թող, որ փորձեմ փախչել Սուրբ Խաչի ծանրութիւնից, այլ օգնի՛ր, զօրացրո՛ւ ինձ, որ ընդառաջեմ քո սուրբ կամքին, գրկեմ քո Սուրբ Խաչը եւ սրտանց գոչեմ. «Ողջո՛յն, Սուրբ Խա՛չ՝ արդարների եւ մեղաւորների յոյս, ապաւէն ու փրկութիւն». Ամէն:

Հայր մեր… Ողջո՛յն քեզ, Մարիամ… Փառք Հօր…

Ո՛վ խոցեալ սիրտ Յիսուսի,

ողորմի՛ր մեզ եւ ննջեցեալների հոգիներին:

ՎԵՑԵՐՈՐԴ ԿԱՅԱՆ

Վերոնիկան[48] սրբում է Յիսուսի դէմքը

Երկրպագում ենք Քեզ, Յիսուս, եւ ցանկանում Քեզ սիրել,

որովհետեւ քո Սուրբ Խաչով աշխարհին ես փրկել:

Ո՜վ աստուածային Փրկիչ, արիւն ու քրտինք առատօրէն հոսում են քո ճակատից ու թափւում աչքերիդ մէջ: Երեսդ ծածկուած է փոշով, այլափոխուել եւ անճանաչելի ես դարձել: Ահա՛ մի արիասիրտ կին ճեղքում է քեզ շրջապատող ամբոխը, մօտենում է քեզ եւ անբիծ թաշկինակով

---

48 Վերոնիկան կաթողիկէ լատին ծէսի տօնացոյցում յիշատակուող սրբուհի է, ով ապրել է, հաւանաբար, Ք. Հ. 1-ին դարում եւ, ըստ աւանդութեան (ոչ ըստ Աւետարանի), Յիսուս Քրիստոսի Գողգոթայ բարձրանալու ճանապարհին սրբել է Նրա Դէմքը իր թաշկինակով, որի վրայ արտատպուել է Տիրոջ հրաշագործ դիմապատկերը: Այդ սրբազան պատկերը պահւում է Հռոմում, եւ ըստ ուսումնասիրողների, հնարաւոր է, որ հէնց այդ պատկերն է ի սկզբանէ կոչուել «Վերոնիկա»՝ Veronica, որ կազմուած է լատիներէն vera՝ ճշմարտութիւն, եւ icon՝ պատկեր, բառերից եւ նշանակում է՝ «ճշմարիտ պատկեր»: Յետագայում այդ անունով սկսել են կոչել նաեւ այն կնոջը, ով, ըստ աւանդութեան, սրբել է Յիսուսի դէմքը: Վերոնիկայի մասին, սակայն, կայ նաեւ յիշատակութիւն այլ քրիստոնէական աղբիւրներում, որտեղ նա նոյնացւում է այն կնոջ հետ, ում Յիսուս բուժեց արիւնահոսութիւնից (Մտթ., 9, 20-22):

սրբում քո աստուածային երեսը: Այդպէս այդ անվեհեր կինը՝ Վերոնիկան, քո բոլոր թշմանիների առաջ, խոստովանում է եւ հաստատում է, որ Դու ես միակ Տէրն ու Փրկիչը:

Ո՜վ պաշտելի Յիսուս, ես էլ եմ ցանկանում այդ կնոջ նման անվախ լինել ու արիաբար պաշտպանել Քեզ, չամաչել յայտարարելու, որ Դո՛ւ ես իմ Աստուածն ու Տէրը, որպէսզի դատաստանի օրը, Դու չամաչես ինձ քո աշակերտն ու հետեւորդն ընդունելու: Դրոշմի՛ր իմ սրտի մէջ Քո աստուածային պատկերն, ինչպէս այն դրոշմեցիր Վերոնիկայի թաշկինակի վրայ, եւ թող Քո պաշտելի դէմքն անջնջելի մնայ իմ սրտում. Ամէն:

Հայր մեր… Ողջո՛յն քեզ, Մարիամ… Փառք Հօր…

Ո՜վ խոցեալ սիրտ Յիսուսի,

ողորմի՛ր մեզ եւ ննջեցեալների հոգիներին:

ԵՕԹԵՐՈՐԴ ԿԱՅԱՆ
Յիսուս ընկնում է երկրորդ անգամ

Երկրպագում ենք Քեզ, Յիսուս, եւ ցանկանում ենք Քեզ սիրել,

որովհետեւ քո Սուրբ Խաչով աշխարհն ես փրկել:

Ո՜վ աստուածային Փրկիչ, դարձեալ ընկար խաչի ծանրութեան տակ, եւ անողորմ դահիճներդ քեզ հրելով ու քաշքշելով աւելացրին քո ցաւերը: Այնչափ յաճախակի ենք մենք մեղանչում եւ այնքան

ծանր է մեր յանցանքների կշիռը, որ չես դիմանում այդ ահաւոր ծանրութեանը եւ ընկնում ես:

Ո՜վ պաշտելի Յիսուս, այս բոլորից յետոյ դու ցաւով նշմարում ես, որ շատերն արհամարհում են քո սէրը, եւ շատ քչերն են օգտւում քո չարչարանքներից, հակառակ քո սիրոյ բուռն արտայայտութեանն ու մեծահոգութեանը, եւ մեղանչում են Քո դէմ: Աւա՜ղ, ես էլ նրաց թումն եմ, ես էլ անարգել եմ քեզ իմ ծանր յանցանքներով եւ պատճառ դարձել Քո անհուն տառապանքի կրկնապատկման. Ամէն:

Հայր մեր… Ողջո՛յն քեզ, Մարիամ… Փառք Հօր…

Ո՜վ խոցեալ սիրտ Յիսուսի,

ողորմի՛ր մեզ եւ ննջեցեալների հոգիներին:

ՈՒԹԵՐՈՐԴ ԿԱՅԱՆ
Յիսուս հանդիպում է Իր համար լացող կանանց

Երկրպագում ենք Քեզ, Յիսուս, եւ ցանկանում ենք Քեզ սիրել,

որովհետեւ քո Սուրբ Խաչով աշխարհն ես փրկել:

Ո՜վ աստուածային Փրկիչ, քո անցած տաժանելի ճանապարհին Դու հանդիպում ես այն կանանց, որոնք ծառայում էին Քեզ՝ Քո քարոզութեան տարիներին, եւ հիմա նկատում ես, որ նրանք արտասւում են դառնօրէն՝ Քո տառապանքները տեսնելով, ու մի պահ կանգ ես առնում եւ ասում

նրանց. «Իմ վրայ մի՛ լացէք, այլ լացէ՛ք ձեր եւ ձեր զաւակների վրայ»:

Եւ Դու ճշմարիտ ես, Տէ՛ր, քանզի մարդկանց գործած յանցանքներն են եղել Քո դառն չարչարանքների դրդապատճառը: Տէ՛ր, գիտակցութիւն տուր ինձ՝ ըմբռնելու անթիւ յանցանքներիս ծանրութիւնը, որ սրտանց ցաւեմ դրանք գործած լինելուս համար: Մի ողորմելի մեղաւոր եմ, Տէ՛ր, սակայն յոյս ունեմ, որ Քո զօրացուցիչ օգնութեամբ պիտի կարողանամ հրաժարուել մեղքերից, եւ, շարունակ վերյիշելով քո չարչարանքները՝ պիտի աշխատեմ հատուցում անել ապաշխարութեամբ. Ամէն:

Հայր մեր... Ողջո՛յն քեզ, Մարիամ... Փառք Հօր...
Ո՛վ խոցեալ սիրտ Յիսուսի,
ողորմի՛ր մեզ եւ ննջեցեալների հոգիներին:

ԻՆՆԵՐՈՐԴ ԿԱՅԱՆ
Յիսուս ընկնում է երրորդ անգամ

Երկրպագում ենք Քեզ, Յիսուս, եւ ցանկանում ենք Քեզ սիրել,
որովհետեւ քո Սուրբ Խաչով աշխարհն ես փրկել:

Ո՛վ աստուածային Փրկիչ, հասել ես Գողգոթայի ստորոտը եւ կրկին ընկրկում ես խաչի ծանրութեան տակ: Պաշտելի դէմքդ փոշեծածք, վէրքերիցդ արիւնը հոսում է առատօրէն, բոլորովին

ուժասպառ ես եղել. սակայն հալածիչներդ վայրագ կատաղութեամբ քեզ վեր են բարձրացնում, որպէսզի անյապաղ քեզ խաչին գամեն:

Ո՜վ անսահմանօրէն պաշտելի Յիսու՛ս, անհամար ու ծանր են մեր մեղքերը, յատկապէս զզուելի են նրանք, որ ուրիշների, մանաւանդ, բազում փոքրերի գայթակղութեան պատճառ են դարձել, եւ անմեղները, ի տես մեր տուած վատ օրինակների, մեղանչել են Քո դէմ: Ո՜վ բարեգութ Տէր, ես էլ եմ գայթակղութեան մեղքը գործել, ների՛ր յանցաւորիս, ուժ եւ կարողութիւն տուր, որ վերստին այդ ահաւոր յանցանքի մէջ չընկնեմ, այլ իմ բարի օրինակներով ուրիշներին էլ հրաւիրեմ Քեզ ծառայելու. Ամէն:

Հայր մեր… Ողջո՛յն քեզ, Մարիամ… Փառք Հօր…

Ո՜վ խոցեալ սիրտ Յիսուսի,

ողորմի՛ր մեզ եւ ննջեցեալների հոգիներին:

ՏԱՍՆԵՐՈՐԴ ԿԱՅԱՆ
Յիսուսին մերկացնում են իր զգեստներից

Երկրպագում ենք Քեզ, Յիսուս, եւ ցանկանում ենք Քեզ սիրել,

որովհետեւ քո Սուրբ Խաչով աշխարհն ես փրկել:

Ո՜վ աստուածային Փրկիչ, կարծես, Քո կրած բազում չարչարանքները բաւական չէին, հիմա ուզում են Քեզ մերկացնել Քո զգեստներից: Դու, Տէ՛ր, հզօր թագաւոր, ամենակալ Աստուած, թոյլ

ես տալիս, որ Քեզանից խլեն նույնիսկ Քո պատ-մուճանը, եւ Ինքդ ոչինչ ունենաս այս աշխարհի վրայ. համաձայնում ես, որ մերկացնեն Քո կուսական սուրբ մարմինը, Դու՛, որ խորին համեստութեան եւ պարկեշտութեան աղբիւրն ես:

Ո՛վ պաշտելի Յիսուս, փոխանակ հետեւելու Քո տուած սուրբ օրինակներին, ես անմտօրէն հետեւել եմ յոռի եւ անպարկեշտ հաճոյքներին եւ արատաւորել եմ իմ մկրտութեան սպիտակափայլ պատմուճանը: Ների՛ր ինձ, ո՛վ բարի եւ ներո-ղամիտ Յիսուս. խոստանում եմ այսուհետեւ ուղղել իմ վարքը, եւ սնուցել իմ հոգին Քո սուրբ խոր-հուրդներով: Պահի՛ր ու պաշտպանի՛ր ինձ. Տէր, իմ որոշման մէջ. Ամէն:

Հայր մեր… Ողջո՛յն քեզ, Մարիամ… Փառք Հօր…

Ո՛վ խոցեալ սիրտ Յիսուսի,

ողորմի՛ր մեզ եւ ննջեցեալների հոգիներին:

ՏԱՍՆՄԷԿԵՐՈՐԴ ԿԱՅԱՆ
Յիսուսին գամում են Խաչին

Երկրպագում ենք Քեզ, Յիսուս, եւ ցանկանում ենք Քեզ սիրել,

որովհետեւ Քո Սուրբ Խաչով աշխարհն ես փրկել:

Ո՛վ աստուածային Փրկիչ, հիմա ենք ըմբռնում, թէ որքա՜ն մեր հոգիները թանկ են արժել Քեզ. անհուն տառապանքներից ու նուաստացումներից

յետոյ, հիմա էլ թոյլ ես տալիս, որ Քեզ գամեն խաչի վրայ: Քո ձեռքերից եւ ոտքերից արիւնը ցայտում եւ օծում է խաչափայտը, եւ այդ արեան հեղմամբ է, որ փրկում ես մեզ բոլորիս:

Ո՜վ պաշտելի Յիսուս, անհունօրէն շնորհակալ եմ Քեզ, որ ինձ սիրել ես այդչափ, եւ իմ սիրոյ համար՝ մատնուել նմանօրինակ դառնակսկիծ մահուան:

Քո մեծ ու անշահախնդիր սէրը շփոթեցնում եւ ամաչեցնում է ինձ՝ անտարբեր ապերախտիս: Այդ բոլորից յետոյ, ինչպէ՞ս կարելի է Քեզ չսիրել: Ո՜վ իմ բարեգութ Փրկիչս, Քեզ եմ տալիս իմ սրտի ամբողջ սէրը, Քեզ եմ նուիրում իմ կեանքը, իմ բովանդակ էութիւնը. անեղծ պահի՛ր, պաշտպանի՛ր ինձ՝ որպէս Քո անձեռնմխելի սեփականութիւնը. Ամէն:

Հայր մեր… Ողջո՛յն քեզ, Մարիամ… Փառք Հօր…
Ո՜վ խոցեալ սիրտ Յիսուսի,
ողորմի՛ր մեզ եւ ննջեցեալների հոգիներին:

Երգ.

Տարածեա՛լ ձեռք ընդ ձեռաց, ոտք ընդ ոտից ընթանալեաց, փայտ ընդ փայտի՝ դառըն պըտղոյ, կեանք ընդ մահու, փոխարկելով ի մէջ երկուց անօրինաց կայր մերկացեալ տուողն օրինաց, զոր ոչ տեսին ազգըն կուրաց, բայց ի միոյն յաւազակաց:

ՏԱՍՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ԿԱՅԱՆ
Յիսուս մահանում է խաչի վրայ

Երկրպագում ենք Քեզ, Յիսուս, եւ ցանկանում ենք Քեզ սիրել,

որովհետեւ քո Սուրբ Խաչով աշխարհին ես փրկել:

Ո՛վ աստուածային Փրկիչ, ահա՛ խաչի վրայ ես, եւ երկու աւազակների միջեւ: Դու բազկատարած աղօթում ես մարդկութեան համար, եւ երկնաւոր Հօրիցդ խնդրում ես, որ ների նրանց, որոնք արհամարհում, նախատում եւ ծաղրում են Քո աստուածութիւնն ու ամենակարողութիւնը: Ահռելի տառապանքների մէջ, Դու ծարաւի ես սիրոյ եւ հանգստեան, եւ ջուր ես ուզում՝ որպէսզի մի պահ ուժերդ վերագտնելով, գերագոյն ճիգով դէպի Քեզ ձգես բոլոր հոգիներին: Եւ մարդկանց սիրով բոցավառուած հոգիդ աւանդում ես Քո աստուածային Հօր ձեռքերի մէջ:

Դու այդ անարգ մահը յանձն առար ո՛չ միայն իմ՝ այլ իմ սիրելիների, բարեկամների, ծանօթների, վերջապէս՝ ամբողջ մարդկութեան համար, բոլոր դարերի եւ բոլոր ժամանակների մարդկութեան համար: Սրտանց ու հոգով միանում եմ սրբերին եւ հրեշտակներին, Քեզ արժանաւորապէս երկրպագելու եւ փառաբանելու՝ անհուն երախտագիտութեամբ. Ամէն:

Հայր մեր… Ողջո՛յն քեզ, Մարիամ… Փառք Հօր…

Ո՛վ խոցեալ սիրտ Յիսուսի,

ողորմի՛ր մեզ եւ ննջեցեալների հոգիներին:

ՏԱՍՆԵՐԵՔԵՐՈՐԴ ԿԱՅԱՆ
Յիսուսին իջեցնում են Խաչից

Երկրպագում ենք Քեզ, Յիսուս, եւ ցանկանում ենք Քեզ սիրել,
որովհետեւ Քո Սուրբ Խաչով աշխարհին ես փրկել:

Ո՛վ աստուածային Փրկիչ, ահա Քեզ խաչից իջեցնում են եւ յանձնում Քո սիրելի Մորը՝ Սուրբ Աստուածածնին:

Այդ վայրկեանին, որքա՜ն սրեր խոցեցին քո մայրական ազնիւ սիրտը, ո՜վ Ս. Կոյս: Արդէն իսկ վիշտ ու տառապանք էր Քո ամբողջ կեանքը: Դու քայլ առ քայլ հետեւեցիր քո Որդուն՝ իր տառապանքի ճանապարհին, եւ ապրեցիր իր կրած բոլոր ցաւերը: Ո՜վ տառապանքների Մայր, յիշի՛ր Որդուդ վերջին պատգամը, երբ նա յանձնարարեց, որ լինես մեր բոլորի Մայրը, մտահոգուես եւ մեր փրկութեամբ: Ո՜վ Սուրբ Մայր, կատարի՛ր Որդուդ վերջին պատգամը, եղի՛ր մեր մայրը, աղօթի՛ր մեզ համար, որ արժանի լինենք քո որդիները կոչուելու, եւ մի օր Երկնքում, քեզ հետ միասին պաշտենք մեր փրկութեան համար խաչի վրայ զոհուած քո աննման Յիսուսին. Ամէն:

Հայր մեր… Ողջո՛յն քեզ, Մարիամ… Փառք Հօր…
Ո՜վ խոցեալ սիրտ Յիսուսի,
ողորմի՛ր մեզ եւ ննջեցեալների հոգիներին:

ՏԱՍՆՉՈՐՍԵՐՈՐԴ ԿԱՅԱՆ
Յիսուսին զետեղում են Սուրբ Գերեզմանի մէջ

Երկրպագում ենք Քեզ, Յիսուս, եւ ցանկանում ենք Քեզ սիրել,

որովհետեւ Քո Սուրբ Խաչով աշխարհն ես փրկել:

Ո՛վ աստուածային Փրկիչ, Քո բարեկամները փութկոտ գուրգուրանքով Քեզ զետեղում են Սուրբ Գերեզմանի մէջ: Ա՜հ, որքա՜ն յուսահատ են նրանք, որ իրենց յոյսն ու վստահութիւնը դրել էին Քո ամենակարողութեան վրայ, եւ ահա Քեզ իջեցնում են գերեզմանի մռայլ ու մութ խորշի մէջ, եւ գլխահակ ու տրտում գնում են իրենց տները: Ո՛վ պաշտելի Յիսուս, դու Քո ազատ կամքով ցանկացար մեռնել ու թաղուել, կեանքի բոլոր դառնութիւնները խորապէս ապրել, մահանալ եւ յաղթել մահուանը: Այդպիսով կամեցար մեզ սովորեցնել, որ չսարսափենք մահուանից, չյուսահատուենք ու հաւատանք, որ մենք էլ մի օր՝ մարմնով յարութիւն պիտի առնենք Քեզ նման: Լոյս պարգեւիր մեզ, ո՛վ բարի Յիսուս, որ բոլոր տառապանքների եւ նոյնիսկ մեր մահուան րոպէին, յարութեան յոյսով տոգորուենք եւ խորապէս վստահ լինենք, որ կը հասնենք յաւիտենական երջանկութեանը. Ամէն:

Հայր մեր… Ողջո՛յն քեզ, Մարիամ… Փառք Հօր…

Ո՛վ խոցեալ սիրտ Յիսուսի,
ողորմի՛ր մեզ եւ ննջեցեալների հոգիներին:

ՏԱՍՆՀԻՆԳԵՐՈՐԴ ԿԱՅԱՆ
Յիսուսի յարութիւնը[49]

Երկրպագում ենք Քեզ, Յիսուս, եւ ցանկանում ենք Քեզ սիրել,
որովհետեւ Քո Սուրբ Խաչով աշխարհին ես փրկել:

Ո՛վ Յիսուս, Դու ասացիր, թէ աւելի մեծ սէր չկայ, քան սեփական կեանքը զոհել սիրելիների համար: Դարձեալ մեզ սովորեցրիր, թէ «ով իր խաչը չվերցնի եւ իմ յետեւից չգայ, արժանի չէ ինձ», եւ թէ պէտք է կեանքս կորցնեմ Քեզ համար՝ այն գտնելու եւ փրկելու համար, որովհետեւ լաւ գիտէիր, թէ մարդու կեանքը չի կարող աւարտուել գերեզմանի մէջ: Այլ՝ անպայման խաչի եւ մահուան ճանապարհը պէտք է մարդուն առաջնորդի դէպի Յարութիւն, հոգու փրկութեան եւ յաւիտենական ճշմարիտ երջանկութեան:

---

49 Տասնհինգերորդ կայանը ոչ պաշտօնական աւելացում է, որ, ըստ նոր սովորութեան, աղօթում են շատ լատինածէս համայնքներում՝ Յարութեան յոյսի մասին աւելի հստակ պատկերացնելու եւ Տիրոջ չարչարանքները Յարութեան լոյսի ներքո հասկանալու համար:

Ո՛վ Մայր իմ՝ Մարիա՛մ, մի թող, որ թաղուած մնամ եսասիրութեան գերեզմանի մէջ, այլ՝ օգնի՛ր, որ յարութիւն առնեմ Որդուդ անձնուիրումի, զոհողութեան եւ ճշմարիտ սիրոյ շնորհիւ՝ յաւիտենական երջանկութեան համար. ամէն:

Հայր մեր… Ողջո՛յն քեզ, Մարիամ… Փառք Հօր…
Ո՛վ խոցեալ սիրտ Յիսուսի,
ողորմի՛ր մեզ եւ ննջեցեալների հոգիներին:

ԱՂՕԹՔ ԳՈՀՈՒԹԵԱՆ

Ո՛վ իմ աստուածային Փրկիչ, Քո խաչի այս սուրբ ճանապարհի խորհրդածութիւնը կատարելուց յետոյ, աւելի լաւ ենք ընբռնում Քո անհուն սէրը եւ մեր ծանր ապերախտութիւնը, Քո մարդասէր բարութիւնը եւ մեր վատ ընթացքը: Սրտանց շնորհակալ ենք՝ մեզ պարգեւած լոյսերիդ համար: Խնդրում ենք Քեզ, ո՛վ պաշտելի Յիսուս, թող ի զուր չանցնի մեզ համար թափուած Քո Սուրբ Արիւնը, այլ Քո Արեան շնորհիւ հոգեպէս նորոգուենք, զօրանանք մեր քրիստոնէական պարտականութիւնների եւ աստուածային պատուիրանների հաւատարիմ կատարման մէջ, եւ արժանանանք Քեզ յաւիտեանս սիրելու եւ փառաբանելու երկնքում. Ամէն:

ԿԱՅՐ ԱՌ ԽԱՉԻՆ[50]

Կայր առ Խաչին Մայր Ցաւագին,
Արտասուալից եւ տրտմագին,
Մինչ էր զփայտէ կախեալ Որդին:

Ընդ սիրտ նորա յոյժ սաստկագին,
Հառաչանօք կոծեալ ուժգին.
Ընդ մէջ էանց սուր երկսայրին:

Զիարդ թախծեալ եւ վշտագին
Էր Մարիամ երանելին,
Մայր Յիսուսի Տեառն Միածնին:

---

50 «Կայր առ խաչին»-ը (լատ.՝ Stabat Mater) 13-րդ դարում գրուած մի օրհներգ է՝ նուիրուած Տիրամօրը, որը նկարագրում է նրա տառապանքները՝ կանգնած Որդու՝ Յիսուսի Խաչի տակ եւ Նրա չարչարանքներին նայելիս: Օրհներգի հեղինակը ստոյգ յայտնի չէ, ըստ երեւոյթին ֆրանցիսկեան միաբան Ջակոպոն դա Տոդին է, կամ Իննովկենտիոս Գ Քահանայապետը: Այս անզուգական օրհներգը դարերի ընթացքում դարձել է երգահաններ՝ Անտոնիո Վիվալդիի, Դոմենիկո Սկարլատիի, Պերգոլեզիի, Հայդնի, Լիստի եւ բազում այլոց հիասքանչ ստեղծագործութիւնների նիւթ: Խաչի տակ վշտահար կանգնած Տիրամօր մասին կան նաեւ հոգեզմայլ հայկական շարականներ՝ Ներսէս Շնորհալու եւ այլ հայրերի գրչով:

Որ վշտանայր եւ աշխարէր,
Յոյժ թողացեալ մինչ տեսանէր,
Ի գանս զՈրդին՝ որ ազնիւն էր։

Որպիսի սիրտ կարծր ոչ ողբայր
Թէ տեսանէր զՔրիստոսի Մայր՝
Որ ի տանջանս համբերմամբ կայր։

Ո՞վ կարէր գոլ ոչ տրտմակից
Բարեպաշտի Մօր ողբակից,
Որ Միածնին էր ցաւակից։

Վասն մեղաց ազգին՝ հարեալ,
Ետես զՅիսուս ի գանս մատնեալ
Եւ տանջանացն հընազանդեալ։

Ետես զՈրդին իւր սիրելին,
Մեռեալ, անտես եղեալ բնաւին,
Մինչ արձակեաց զիւր ըզհոգին։

Մայր Իսկուհի, աղբիւր սիրոյ.
Տո՛ւր զօրութիւն ցաւոց զգալոյ,
Ընդ քեզ հեղուլ զարտօսր լալոյ։

Տո՛ւր զի սիրտ իմ բորբոքիցի,
Ի Քրիստոսի սէրն վառիցի,
Զի ընդ անձն իմ նա հաճեսցի։

Մայր Սրբուհի, զայն կատարեա՛,
Ջխաչեցելոյն զվէրս տնկեա՛,
Յիմում սրտի զնոյնս բեւեռեա՛:

Վիրաւորեալ Քումդ Որդւոյ,
Վասն իմ այդչափ չարչարելոյ,
Պատժոց հանցես ինձ զբաժին:

Տո՛ւր ինձ լինել քեզ ողբակից,
Խաչեցելոյն գոլ ցաւակից,
Ի կենցաղումս որչափ կեցից:

Տո՛ւր Քրիստոսի զխաչըն կրել,
Ջչարչարանաց բախտըն յիշել,
Ըզվէրս նորին միշտ մըտածել:

ՈՂԲՔ ՄԵԾԻ ՈՒՐԲԱԹԻՆ, Ի ՆԵՐՍԻՍԷ ԿԱԹՈՂԻԿՈՍԷ ՀԱՅՈՑ[51]

Կայր մայր Տեառն առ խաչին՝
Կոյսըն Մարիամ,
Ողբալով զայս ասէր
Առ միածին Որդին.
_ Ո՛վ անմեղ գառն Աստուծոյ,
Ընդ ո՞ր մեղաց պատժիս.
Ես սրբութեամբ զքեզ յղացայ,

[51] Սբ. Ներսէս Շնորհալի, Տաղեր

Մաքուր կուսութեամբ ծնայ:
Կոյս յետ ծնընդեան քո մնացի՝
Ծնելոյդ զաւրութեամբ.
Ամբիծ շըրջեցար յերկրի,
Անփորձ ի մեղաց:
Մեղս ոչ արարեր մարմնով
Ըստ նախաձայն Բանին,
Եւ ոչ նենգութիւն գըտաւ
Ի բերան քո բարի:
Իշխանն աշխարհի ի քեզ
Ոչ եգիտ յիւրոցն,
Արդ, զի՞ մատնեցար, որդե՛ակ,
Խաչի եւ մահու:
Ո՞ւր հրեշտակին բանն ըզքէն՝
Թագաւորել անվախճան.
Ահա զձեռսդ, որ զերկինս ձգեցին,
Տարածեցին ի փայտին:
Զմատունսդ, որ զաւրէնս գրեցին,
Բեւեռեցին ի խաչիդ.
Զոտսդ, որ ի ծովուն գնացին,
Հեղուսեալ կապեցին:
Յայտնեա՛ ինձ, Յիսո՛ւս, զխորհուրդ
Քո կամաւոր մահուանդ,
Զի հաստատեսցի սիրտ իմ
Ի մարդկեղէն կարծեաց:

Փոխ
–Ո՛վ Մարիամ, Կոյս եւ Մայր,

Տաճար լուսոյ իմոյ.
Մի՛ տկարանար դու հոգով
Յիմ ծածկեալ խորհրդոյս։
Ես մարգարէիւք իմովք
Յառաջ զայս ցուցի.
Աբրահամ կախեալ ետես զիս
Խոյ ընդ Սահակայ։
Մովսէս գուշակեաց տեսանել
Ըզկեանս ի փայտի,
Ըստ Դաւթայ ծակեցին զձեռս իմ
Եւ զոտս՝ ի փայտիս։
Ըստ Սողոմոնի եդին ինձ
Պըսակ ի փըշոց,
Ըստ Եսայեայ՝ իբրեւ զոչխար
Ի սպանդ վարեցայ։
Ըստ Դանիելի սպանին
Զաւծեալ Տեառն այսաւր,
Ըստ Երեմիայ արկին
Փայտ՝ ի հաց մարմնոյս։
Ըստ Զաքարիայ՝ հայեսցին
Յորս խոցեն տիգաւ։
Զիս Հայր իմ մատնեաց ընդ մեղաց
Որդւոց Ադամայ։
Ես հնազանդ եղէ Հաւր իմոյ
Մինչ ի մահ խաչիս,
Զանէծսն Ադամայ բառնամ
Փշեղէն պըսակաւս։
Զձեռսըն կարկամեալ փայտիւն,

Պարզեմ բեւեռաւքս,
Զոտիցըն կապանս ընդ ծառոյն
Արձակեմ հեղուսիւքս։
Դառնահամ պըտղոյն ճաշակ
Քաղցրանայ լեղեաւս,
Զկողածնին լուանամ զխայթուած,
Կողիս վտակաւք։
Մահ իմ տայ զկեանս մեռելոց,
Որք ի սկզբանէ,
Փայտ Խաչիս իմոյ՝ զփայտ մահու
Ի կեանս փոխարկէ։
Ընդնջեմ ի հող մահու ընդ մեռեալս
Զորս ընդ իս յարուցից,
Ի դժոխս իջանեմ առ հոգիսն,
Որք են ի բանտի։
Զկապեալն արձակեմ զԱդամ,
Կապեմ զկապողն,
Ի դրախտն ուստի ել՝ տանիմ,
Ուր եւ զաւազակն։
Արդ, մի՛ վհատիր, Մարիա՛մ,
Այլ խնդա՛ յուսով,
Ես յետ յարութեան իմոյ
Քեզ երեւեցայց.
Զհաւր կամս կատարել կամիմ,
Առ նոյն վերանամ։

Փոխ
–Արդ, ո՛վ Տէր եւ Որդի իմ,

Ու՞մ յանձն արարեր
Զմայր եւ զախաղին քո։
Դու յերկինս առ Հայր երթաս,
Ո՞վ զկեանս իմ տնաւրինէ
Փոխան քո յերկրի աստ։
Զի թէ հրէական նախանձն
Զլոյսդ հալածեցին,
Ինձ զի՞նչ արասցեն, որդեա՛կ։
Ես ակն ունէի՝ Յիսուս
Թագ ի գլուխ եղեալ,
Եւ այժմ տեսանեմ խաչեալ։
Բան ի հրեշտակէն լըւայ,
–Ուրախ լե՛ր, բերկրեալ,–
Եւ այժմ հոգւով խոցիմ։
Ի ժամ ծընընդեան քո
Հրեշտակք ցընծացին
Եւ այժմ անարգեն մարդիկ։
Մերկ ըզքեզ տեսի, որդեա՛կ,
Պընդեալ ի փայտիդ,
Խաւար իմ աչացս այսաւր։

Փոխ
–Ո՛վ անմեղ աղաւնի իմ,
Մի՛ զանգիտեր դու սըրտիւ
Ի յերկիւղէ մարդկային։
Ընդ քեզ եմ յաւիտեան ես,
Որ բառնամ զարարածս իմ
Բանիւ զաւրութեամբ իմով։

Ո՛վ սըրտիւ սիրեցեալդ իմ,
Ընդ քո մաքրութեան հոգւոյդ
Տամ մայր քեզ ըզՄարիամ մայր իմ:
Պատուեա՛ ըստ աւրինացն ըզնա,
Որպէս եւ տեսեր դու յիս,
Հնազանդ լինելով նըմա:
Եւ մեզ աղաւթիւք մաւր քո
Եւ Յովհաննու սիրելւոյն
Շնորհեա՛ զթողութիւն մեղաց:

Եւ քեզ երգեսցուք ընդ Հաւր,
Եւ ընդ Սուրբ Հոգւոյն ըզփառս
Յայժմուս եւ յաւիտենից. Ամէն:

ԵՐԿՐՊԱԳՈՒԹԻՒՆ ՍՈՒՐԲ ԽԱՉԻ[52]

Խաչի Քո Քրիստո՛ս, երկիր պագանեմք, եւ զխաչելութիւնդ (զթաղումն) կամ (զչարչարանսդ) քո մեծացուցանե՛մք. եկա՛յք հաւատացեալք, երկրպագեսցո՛ւք Քրիստոսի Աստուծոյ մերոյ, վասըն զի եկն ի ձեռըն խաչին իւրոյ շնորհեաց պարգեւս աշխարհի:

---

52 Ըստ աւանդութեան, այս շարականը գրել եւ առաջին անգամ երգել է Յակոբոս Տեառնեղբայրը՝ Երուսաղէմի առաջին հոգեւոր առաջնորդը՝ երկրպագելով Տիրոջ Խաչափայտը, որ կանգնեցուեց Երուսաղէմում առաջին անգամ՝ առ ի երկրպագութիւն եւ որպէս փրկութեան նշան:

Սուրբ Աստուած, Սուրբ եւ Հզօր, Սուրբ եւ Անմահ, ողորմեա՛ց մեզ:

Փա՛ռք Սուրբ Խաչին ալէլուիա. Սուրբ Սիովնի, ալէլուիա՛. Խաչելութեանդ (չարչարանացդ կամ Սուրբ Յարութեանն), ալէլուիա՛:

Նշանեցաւ առ մեզ լոյս երեսաց քոց. եւ ետուր ուրախութիւն սրտից մերոց:

Ի պտղոյ ցորենոյ, գինւոյ եւ ձիթոյ իւրեանց լըցուցեր ըզնոսա:

Փա՛ռք Սուրբ Խաչին ալէլուիա՛. Սուրբ Սիովնի, ալէլուիա՛. Սուրբ Յարութեանն, ալէլուիա՛:

Փա՛ռք եւ երկրպագութիւն Հօր եւ Որդւոյ եւ Սրբոյ Հոգւոյն, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

Փա՛ռք Սուրբ Խաչին ալէլուիա. Սուրբ Սիովնի, ալէլուիա՛. Խաչելութեանդ (չարչարանացդ կամ Սուրբ Յարութեանն), ալէլուիա՛:

Խաչըն կենարար, որ եղեր ըզմեզ փրկութիւն, սովաւ ամենեքեան ըզքեզ բարեբանեմք:

Որ ի Հօրէ լուսոյ լոյս ճառագայթեալ ի յերկրի, եւ գաւազան զօրութեան հաւատացելոց, սովաւ ամենեքեան ըզքեզ բարեբանեմք:

Որ լուսափայլ ծագմամբ հրաշափառապէս ըմեզ ցուցաւ ի յօգնութիւն ընդդէմ թշնամւոյն, սովաւ ամենեքեան ըզքեզ բարեբանեմք:



ԱՍՏՈՒԱԾԱՄՕՐ ՍՈՒՐԲ ՎԱՐԴԱՐԱՆԸ[53]

53 Վարդարանը Աստուածամօրը նուիրուած ժողովրդական ջերմեռանդական աղօթք է, որը շատ սիրելի է յատկապէս կաթողիկէ հաւատացեալների համար եւ մեծ տարածում ունի: «Վարդարան» բառը նշանակում է վարդերի պարտէզ: Անուանումը ծագել է Աստուածամօրը վարդեր նուիրելու հին սովորութիւնից. այս աղօթքը նմանեցուել

է վարդերի մի փնջի, որ ամէն անգամ հաւատացեալը նուիրում է Սուրբ Կոյսին: Իր երեւումների ժամանակ Աստուածածինն ինքն է ասել, թէ ամէն մի «Ողջո՛յն քեզ, Մարիամ...» աղօթքն ասելիս՝ իրեն ենք նուիրում մէկ վարդ: Վարդարանը Աստուածամօր բարեխօսութիւնը հայցող մի աղօթք է, որը միաժամանակ հրաւիրում է խորհրդածել Տէր Յիսուս Քրիստոսի երկրային կեանքի դրուագների մասին՝ Աստուածամօր առաջնորդութեամբ եւ նրա հետ միասին: Ինչպէս ասում էր մեծ մարեմասէր Սուրբ Լուի Մարի Գրինեոն դե Մոնֆորը, «դէպի Քրիստոս՝ Մարիամի միջոցով»: Սբ. Յովհաննէս Պօղոս Բ. Քահանայապետը Վարդարանին նուիրուած իր գրութեան մէջ ասում է. «Վարդարանի միջոցով հաւատացեալները ստանում են առատ շնորհներ՝ անմիջապէս Փրկչի Մօր ձեռքերից»: 1917թ. Ֆաթիմայում Աստուածամօր երեւումներին ականատես Քոյր Լուսիան ասում էր. «Չկայ մի խնդիր, ինչքան էլ բարդ լինի, նիւթական կամ հոգեւոր, մեր անձնական կամ ընտանեկան կեանքում...որ հնարաւոր չլինի լուծել Վարդարան աղօթելով»:

Վարդարանի աղօթքի պսակը բաղկացած է հինգ տասնեակ եւ եւս երեք հրեշտակային ողջոյններից, որոնցից առաջ աղօթում ենք Տէրունական աղօթքը, իսկ յետոյ՝ «Փառք Հօր...» աղօթքը եւ եւս մէկ աղօթք՝ աւանդուած Ֆաթիմայում Տիրամօր երեւումներից: Իւրաքանչիւր տասնեակ նուիրուած է Տիրոջ կեանքի մէկ դրուագի խորհրդածութեան: Այդ դրուագները կոչւում են «խորհուրդներ», հետեւաբար դրանց մասին խորհրդածութիւնը ինքնին մեզ համար աստուածային շնորհներ ընդունելու եզակի առիթ է: Շաբաթուայ

իւրաքանչիւր օրուայ համար նախատեսուած է խորհուրդների մէկ խումբ: Վարդարանի համար նախատեսուած է քսան խորհուրդ՝ չորս խմբերով, իւրաքանչիւրի մէջ՝ հինգ խորհուրդ:

Պատմութիւնը

Աստուածամօր Վարդարանի աղօթքը աղօթահամրիչի (պսակ) օգնութեամբ սկսեց տարածուել միջնադարեան Եւրոպայում, հաւանաբար, 11-12րդ դարերում՝ փոխարինելով աղօթահամրիչի օգնութեամբ 150 Հայր Մեր կամ Սաղմոսներ աղօթելու վանական սովորութեանը, որ գոյութիւն ունէր Ֆրանսիայի նշանաւոր Քլունիի վանքում, Տաճարական միաբանների եւ այլ վանքերում: Արդէն 12-րդ դարում վանքերում Սաղմոսների փոխարէն, յատկապէս, աւելի սակաւ կրթուած վանականները սկսել են աղօթել 150 «Ողջո՛յն Քեզ Մարիամ»՝ «Հայր Մեր»-ի հետ միասին: Այսպէս նրանք կարողանում էին աղօթակից լինել աւելի ուսեալ վանականներին ու քահանաներին, ովքեր Սուրբ Պատարագ էին մատուցում եւ աղօթում լատիներէնով: Բայց աստիճանաբար «Տիրամօր սաղմոսարանը», ինչպէս սկզբում անուանում էին 150 «Ողջո՛յն»-ներից բաղկացած այդ պարզ, բայց շատ զօրաւոր աղօթքը, դարձաւ սիրելի բոլորի՝ թէ անուս, թէ ուսեալ վանականների եւ թէ պարզ աշխարհականների համար: Դոմինիկեան վանականների միջոցով ձեւաւորուեց մի աւանդութիւն, թէ Վարդարանի աղօթքը տարածողը Սուրբ Դոմինիկոսն է (1170-1221թթ.)՝ դոմինիկեան քարոզիչների միաբանութեան հիմնադիրը: Ըստ այդ աւանդութեան, Աստուածամայրը Դոմինիկոսին

պատուիրեց տարածել այդ աղօթքը՝ որպէս զէնք աղանդաւորների եւ մեղքի դէմ: Բայց պատմական փաստերը վկայում են, որ «Տիրամօր սաղմոսարանը» սկսել են աղօթել Սբ. Դոմինիկոսից առաջ, թէեւ անհերքելի է, որ դոմինիկեանները մեծ դեր խաղացին Վարդարանի տասնհինգ խորհուրդների կազմաւորման եւ աղօթքի համաեւրոպական տարածման գործընթացում, յատկապէս, 15-րդ դարից սկսած: 1495թ. Ալեքսանդր Զ Սրբազան Քահանայապետը պաշտօնապէս արտօնեց Վարդարանի աղօթքը ողջ Կաթողիկէ Եկեղեցում: (*Տե՛ս՝ Կաթողիկէ հանրագիտարան (Catholic Encyclopedia, 1913)).*

Հայոց մէջ

Գերյ. Հ. Մեսրոպ Հայունին (Թոփալեան) Սբ. Յովհաննէս Պօղոս Բ Քահանայապետի՝ «Պսակ կուսին Մարիամու» առաքելական նամակի իր կողմից հայացուած տեքստի ներածականում գրում է, որ կան պատմական փաստաթղթեր, որոնք փաստում են, թէ հայերի մօտ Վարդարանի աղօթքը շատ սիրուած է եղել արդէն 16-րդ դարի վերջին քառորդից: 17-րդ դարասկզբում Հայաստանում արդէն կատարուել են Աստուածամօրը նուիրուած թափօրներ, որոնց ընթացքում Վարդարան եւ այլ աղօթքներ են ասուել, յատկապէս, Սեբաստիայում, Բրգնիկում, որտեղ Վարդարանը նաեւ ընտանեկան սիրուած աղօթք էր: Նախիջեւանի հայ կաթողիկէ տաճարում 1735-40թթ.-ից Աւագ Խորանը զարդարել է «Սբ. Վարդարանի Տիրամայր» կոչուող իւղապատկերը, որը նախատիպն է իտալական Պոմպեյ քաղաքի ուխտավայրի հրաշագործ սրբանկարի: 1666-1735թթ. ընթացքում եւրոպական քաղաքներում հայերէն

«Մարիամի հետ՝ աղօթել Քրիստոսին»
Սբ. Յովհաննէս Պօղոս Բ

Հաւատամք ի մի Աստուած ...
Մէկ անգամ՝ «Տէրունական աղօթքը».

հրատարակուած գրեթէ բոլոր քրիստոնէականներում կայ Վարդարանի աղօթքը՝ չորս խորհուրդներով աղօթելու կարգով: Վարդարանի աղօթքի հայոց մէջ տարածման հիմնական ալիքը սկսուեց Մխիթարեան Միաբանութեան հայրերի, յատկապէս, Մխիթար Սեբաստացու, ջանքերով: Սեբաստացին մեծագոյն հայ մարեմասէրներից է, ով հայկական մշակոյթի մէջ ամրացրեց Վարդարանի աղօթքը եւ այլ մարեմական աղօթքներ: 1735թ. Սեբաստացին հրատարակեց Վարդարանի առաջին հայերէն պատկերազարդ մատեանը, որը յետագայում վերահրատարակուեց եւս եօթն անգամ եւ հայ աշխարհում դարձաւ Սուրբ Գրքից եւ Նարեկից յետոյ ամենաշատ տպուած եւ պահանջուած գիրքը: Հայոց մէջ «Վարդարան» բառի առաջին սահմանումը տուել է Մխիթար Սեբաստացին՝ հետեւեալ կերպ. «Պսակը (այսինքն՝ աղօթահամրիչը-*խմբ.*), որ 150 Ողջոյն Քեզ Մարիամ-ներէն եւ 15 Հայր Մեր-ներէն կը բաղկանայ, կը կոչուի Վարդարան, զոր բարեպաշտները կ՛աղօթեն ի պատիւ Կուսին: Անոր համար «Վարդարան» կ՛անուանի, որովհետեւ ամէն մէկ «Ողջոյն Քեզ Մարիամ»-ի եւ «Հայր Մեր»-ի համար դրուած հատիկները իբր վարդեր պսակաձեւ շարուած են չուանի վրայ» (*Պսակ Կուսին Մարիամու, Զմմառ, 2003*):

Հայր մեր …

Երեք անգամ՝ «Հրեշտակային ողջոյնը».

Ողջո՛յն քեզ, Մարիա՛մ …

որոնցով հայցում ենք աստուածաբանական երեք առաքինութիւնները՝ Հաւատք, Յոյս եւ Սէր:

«Փառք Հօր …

ՈՒՐԱԽՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

(երկուշաբթի եւ շաբաթ)

Ա. ՀՐԵՇՏԱԿԻ ԱՒԵՏՈՒՄԸ ՄԱՐԻԱՄԻՆ

Վեցերորդ ամսին Գաբրիէլ հրեշտակը Աստծու կողմից ուղարկուեց Գալիլիայի մի քաղաքը, որի անունը Նազարէթ էր, մի կոյսի մօտ, որ նշանուած էր Յովսէփ անունով մի մարդու հետ՝ Դաւթի տնից: Եւ այդ կոյսի անունը Մարիամ էր: Եւ հրեշտակը, գալով նրա մօտ, ասաց. «Ուրախացի՛ր, ո՛վ շնորհընկալ, Տէրը քեզ հետ է»: Իսկ նա այս խօսքերի վրայ խռովուեց եւ մտքում խորհում էր, թէ ինչ բան էր այս ողջոյնը: Եւ հրեշտակը նրան ասաց. «Մի՛ վախեցիր, Մարիա՛մ, որովհետեւ Աստծուց դու շնորհ գտար: Եւ ահա՛ դու կը յղիանաս եւ կը ծնես մի որդի ու նրա անունը Յիսուս կը դնես: Նա մեծ կը լինի եւ Բարձրեալի որդի կը կոչուի: Եւ Տէր Աստուած նրան կը տայ նրա հօր՝ Դաւթի աթոռը, եւ

նա յաւիտեան կը թագաւորի Յակոբի տան վրայ, ու նրա թագաւորութիւնը վախճան չի ունենայ»: Իսկ Մարիամը հրեշտակին ասաց. «Ինչպէ՞ս այդ կը պատահի ինձ, քանի որ ես տղամարդ չեմ ճանաչում»: Հրեշտակը պատասխանեց եւ նրան ասաց. «Սուրբ Հոգին կը գայ քեզ վրայ, եւ Բարձրեալի զօրութիւնը հովանի կը լինի քեզ, որովհետեւ նա, որ քեզնից է ծնուելու, սուրբ է եւ Աստծու որդի կը կոչուի: Եւ ահա քո ազգական Եղիսաբեթը. նա եւս յղի է իր ծերութեան մէջ, եւ այս՝ յղիութեան վեցերորդ ամիսն է նրա, որ ամուլ էր կոչուած. որովհետեւ Աստծու համար անկարելի բան չկայ»: Եւ Մարիամն ասաց. «Ահաւասի՛կ ես մնում եմ Տիրոջ աղախինը, թող քո խօսքի համաձայն լինի ինձ»: Եւ հրեշտակը հեռացաւ նրանից (Ղկ. 1, 26–39):

Կարճ խորհրդածութիւն եւ աղօթք

Հայր Մեր... 10 Ողջոյն... Փառք Հօր...

Ով Յիսուս, ների՛ր մեր մեղքերը, պահի՛ր մեզ դժոխքի կրակից եւ երկինք տար բոլոր հոգիներին, յատկապէս, առաւել կարօտեալներին:

Բ. ՄԱՐԻԱՄԻ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ ԵՂԻՍԱԲԵԹԻՆ

Այդ օրերին Մարիամը վեր կացաւ եւ շտապով գնաց Յուդայի լեռնային շրջանի քաղաքներից մէկը, մտաւ Զաքարիայի տունը ու Եղիսաբեթին ողջոյն տուեց: Եւ երբ Եղիսաբեթը Մարիամի

ողջոյնը լսեց, մանուկը խաղաց նրա որովայնում, եւ Եղիսաբեթը լցուեց Սուրբ Հոգով եւ բարձր ձայնով աղաղակեց ու ասաց. «Օրհնեա՛լ ես դու կանանց մէջ, եւ օրհնեա՛լ է քո որովայնի պտուղը: Որտեղի՞ց ինձ այս ուրախութիւնը, որ իմ Տիրոջ մայրը ինձ մօտ գայ. որովհետեւ ահաւասիկ, երբ քո ողջոյնի ձայնը հասաւ իմ ականջին, մանուկը ցնծալով խաղաց իմ որովայնում: Եւ երանի՛ նրան, որ կը հաւատայ, թէ Տիրոջ կողմից իրեն ասուածները կը կատարուեն» (Ղկ. 1, 39–45):

Կարճ խորհրդածութիւն եւ աղօթք

Հայր Մեր... 10 Ողջոյն... Փառք Հօր...

Ով Յիսուս, ների՛ր մեր մեղքերը, պահի՛ր մեզ դժոխքի կրակից եւ Երկինք տար բոլոր հոգիներին, յատկապէս, առաւել կարօտեալներին:

Գ. ՅԻՍՈՒՍԻ ԾՆՈՒՆԴԸ

Այն օրերին Օգոստոս կայսեր կողմից հրաման ելաւ՝ ամբողջ երկրում մարդահամար անելու համար: Այս առաջին մարդահամարը տեղի ունեցաւ, երբ Կիւրենիոսը կուսակալ էր Ասորիքում: Եւ բոլորը գնում էին արձանագրուելու մարդահամարի՝ իւրաքանչիւրն իր քաղաքում: Յովսէփն էլ Դաւթի տնից եւ ազգատոհմից լինելով՝ Գալիլիայի Նազարէթ քաղաքից ելաւ գնաց դէպի Հրէաստան՝ Դաւթի քաղաքը, որը Բեթղեհէմ է կոչւում, մարդահամարի մէջ արձանագրուելու Մարիամի

հետ, որ նրա հետ նշանուած էր եւ յղի էր: Եւ երբ նրանք այնտեղ հասան, նրա ծննդաբերելու օրերը լրացան, եւ նա ծնեց իր անդրանիկ որդուն, խանձարուրի մէջ փաթաթեց նրան ու դրեց մսուրի մէջ, որովհետեւ իջեւանում նրանց համար տեղ չկար (Ղկ. 2, 1-7):

Կարճ խորհրդածութիւն եւ աղօթք

Հայր Մեր... 10 Ողջոյն... Փառք Հօր...

Ով Յիսուս, ների՛ր մեր մեղքերը, պահի՛ր մեզ դժոխքի կրակից եւ Երկինք տար բոլոր հոգիներին, յատկապէս, առաւել կարօտեալներին:

Դ. ՅԻՍՈՒՍԻ ԸՆԾԱՅՈՒՄԸ ՏԱՃԱՐԻՆ

Երբ որ նրանց սրբագործման օրերը լրացան, Մովսէսի Օրէնքի համաձայն՝ նրան Երուսաղէմ տարան՝ Տիրոջը ներկայացնելու համար... Արդ, Երուսաղէմում Սիմէոն անունով մի մարդ կար, եւ այդ մարդն արդար ու աստուածավախ էր եւ ակնկալում էր Իսրայէլի մխիթարութիւնը. եւ Սուրբ Հոգին էր նրա մէջ: Եւ Սուրբ Հոգուց հրամայուած էր իրեն մահ չտեսնել, մինչեւ որ տեսնէր Տիրոջ Օծեալին: Նա Հոգով առաջնորդուած՝ եկաւ տաճարը, եւ երբ ծնողները բերին Յիսուս մանկանը՝ նրա վրայ կատարելու ինչ որ օրէնքի սովորութեան համաձայն էր, Սիմէոնը նրան իր գիրկն առաւ, օրհնեց Աստծուն եւ ասաց. «Այժմ, ո՛վ Տէր, խաղաղութեամբ արձակիր քո ծառային՝ ըստ քո

խօսքի, որովհետեւ աչքերս տեսան փրկութիւնը քո, որ պատրաստեցիր բոլոր ժողովուրդների առաջ, լոյս, որ կը լինի յայտնութիւն՝ բոլոր հեթանոսների համար եւ փառք Իսրայէլի քո ժողովրդի համար» (Ղկ. 2, 22–32):

Կարճ խորհրդածութիւն եւ աղօթք

Հայր Մեր... 10 Ողջոյն... Փառք Հօր...

Ով Յիսուս, ների՛ր մեր մեղքերը, պահի՛ր մեզ դժոխքի կրակից եւ Երկինք տար բոլոր հոգիներին, յատկապէս, առաւել կարօտեալներին:

Ե. ՅԻՍՈՒՍ՝ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՏԱՃԱՐՈՒՄ

Եւ երբ նա տասներկու տարեկան եղաւ, տօնի սովորութեան համաձայն՝ Երուսաղէմ ելան: Եւ երբ տօնական օրերը լրացան, ու նրանք վերադարձան, մանուկ Յիսուսը մնաց Երուսաղէմում, եւ նրա ծնողներն այդ չիմացան: Կարծում էին, թէ նա իրենց ուղեկիցների հետ է. մի օրուայ չափ ճանապարհ եկան եւ նրան փնտռեցին ազգականների ու ծանօթների մէջ: Ու երբ չգտան, Երուսաղէմ վերադարձան՝ նրան փնտռելու համար: Եւ երեք օր յետոյ նրան գտան տաճարում. վարդապետների հետ նստած՝ նա լսում էր նրանց եւ հարցեր էր տալիս: Եւ բոլորը, որ նրան լսում էին, զարմանում էին նրա իմաստութեան եւ պատասխանների վրայ: Երբ ծնողները նրան տեսան, հիացան. իսկ մայրը նրան ասաց. «Որդի՛, այս ի՞նչ արեցիր դու

մեզ. ահաւասիկ հայրդ ու ես տագնապած քեզ էինք փնտռում»: Եւ նա պատասխանեց նրանց. «Ինչո՞ւ էիք ինձ փնտռում, չգիտէի՞ք, թէ ես Հօրս տանը պէտք է լինեմ»: Բայց նրանք չհասկացան այն խօսքը, որ նա իրենց ասաց: Եւ Յիսուս նրանց հետ իջաւ ու Նազարէթ գնաց. եւ նա հնազանդ էր նրանց: Եւ նրա մայրն այս բոլոր բաները պահում էր իր սրտում: Իսկ Յիսուս զարգանում էր իմաստութեամբ, հասակով եւ շնորհով Աստծու ու մարդկանց առջեւ (Ղկ. 2, 42–52):

Կարճ խորհրդածութիւն եւ աղօթք

Հայր Մեր... 10 Ողջոյն... Փառք Հօր...

Ով Յիսուս, ների՛ր մեր մեղքերը, պահի՛ր մեզ դժոխքի կրակից եւ Երկինք տար բոլոր հոգիներին, յատկապէս, առաւել կարօտեալներին:

ԼՈՅՍԻ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

(հինգշաբթի)

Ա. ՅԻՍՈՒՍԻ ՄԿՐՏՈՒԹԻՒՆԸ

Այն ժամանակ Յիսուս Գալիլիայից Յորդանան եկաւ, Յովհաննէսի մօտ՝ նրանից մկրտուելու: Իսկ Յովհաննէսն ընդդիմացաւ նրան ու ասաց. «Ի՛նձ պէտք է, որ քեզնից մկրտուեմ, եւ դու ի՞նձ մօտ ես գալիս»: Յիսուս պատասխանեց եւ ասաց նրան. «Թո՛յլ տուր հիմա, որովհետեւ այսպէս վայել է, որ

մենք կատարենք Աստծու ամէն արդարութիւն»: Եւ ապա նրան թոյլ տուեց: Եւ երբ Յիսուս մկրտուեց, իսկոյն ջրից դուրս ելաւ. եւ ահա երկինքը բացուեց նրան, եւ նա տեսաւ Աստծու Հոգին, որն իջնում էր ինչպէս աղաւնի եւ գալիս էր իր վրայ: Եւ ահա՝ մի ձայն երկնքից, որ ասում էր. «Դա՛ է իմ սիրելի Որդին, որն ունի իմ ամբողջ բարեհաճութիւնը» (Մտթ. 3, 13–17):

Կարճ խորհրդածութիւն եւ աղօթք

Հայր Մեր... 10 Ողջոյն... Փառք Հօր...

Ով Յիսուս, ների՛ր մեր մեղքերը, պահի՛ր մեզ դժոխքի կրակից եւ Երկինք տար բոլոր հոգիներին, յատկապէս, առաւել կարօտեալներին:

Բ. ԿԱՆԱՅԻ ՀԱՐՍԱՆԻՔԸ

Գալիլիա հասնելու երրորդ օրը Կանա քաղաքում հարսանիք կար: Եւ Յիսուսի մայրը այնտեղ էր: Հարսանիքի հրաւիրուեցին նաեւ Յիսուս եւ իր աշակերտները: Եւ երբ գինին պակասեց, մայրը Յիսուսին ասաց. «Գինի չունեն»: Եւ Յիսուս նրան ասաց. «Ի՞նչ ես ուզում ինձնից, ո՛վ կին, իմ ժամը դեռ չի հասել»: Նրա մայրը սպասաւորներին ասաց. «Ինչ որ ձեզ ասի, արէ՛ք»: Այնտեղ կային քարէ վեց թակոյկներ՝ հրեաների սովորութեան համաձայն մաքրուելու համար. նրանցից իւրաքանչիւրը շուրջ հարիւր լիտր տարողութիւն ունէր: Յիսուս նրանց ասաց. «Լցրէ՛ք այդ թակոյկները ջրով»:

Եւ լցրին բերնէբերան: Եւ ասաց նրանց. «Հիմա վերցրէ՛ք եւ տարէ՛ք սեղանապետին»: Եւ նրանք տարան: Եւ երբ սեղանապետը ճաշակեց գինի դարձած ջուրը ու չէր իմանում, թէ որտեղից է (բայց սպասաւորները, որոնք ջուր լցրին, գիտէին), խօսեց փեսայի հետ ու ասաց. «Ամէն մարդ նախ ընտիր գինին է մատուցում, եւ երբ հարբած են, այն ժամանակ՝ վատը: Իսկ դու ընտիր գինին մինչեւ հիմա պահել ես»: Յիսուս այս առաջին նշանն արեց Գալիլիայի Կանա քաղաքում որպէս սկիզբը նշանների եւ յայտնեց իր փառքը, ու նրա աշակերտները հաւատացին նրան (Յովհ. 2, 1–11):

Կարճ խորհրդածութիւն եւ աղօթք

Հայր Մեր... 10 Ողջոյն... Փառք Հօր...

Ով Յիսուս, ների՛ր մեր մեղքերը, պահի՛ր մեզ դժոխքի կրակից եւ Երկինք տար բոլոր հոգիներին, յատկապէս առաւել կարօտեալներին:

Գ. ԱՍՏՈՒԾՈՅ ԱՐՔԱՅՈՒԹԵԱՆ ԱՒԵՏՈՒՄԸ

Յովհաննէսի բանտարկուելուց յետոյ Յիսուս Գալիլիա եկաւ. քարոզում էր Աստծու Աւետարանը եւ ասում. «Ժամանակը հասել է, եւ մօտեցել է Աստծու Արքայութիւնը. ապաշխարեցէ՛ք եւ հաւատացէ՛ք Աւետարանին» (Մարկ. 14–15):

Կարճ խորհրդածութիւն եւ աղօթք

Հայր Մեր... 10 Ողջոյն... Փառք Հօր...

Ով Յիսուս, ների՛ր մեր մեղքերը, պահի՛ր մեզ դժոխքի կրակից եւ երկինք տար բոլոր հոգիներին, յատկապէս, առաւել կարօտեալներին:

Դ. ՅԻՍՈՒՍԻ ՊԱՅԾԱՌԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ

Եւ վեց օր յետոյ Յիսուս իր հետ վերցրեց Պետրոսին, Յակոբոսին եւ նրա եղբօրը՝ Յովհաննէսին եւ նրանց հանեց, առանձին, մի բարձր լեռ եւ նրանց առաջ պայծառակերպուեց. եւ նրա դէմքը փայլեց ինչպէս արեգակը. եւ նրա զգեստները դարձան սպիտակ ինչպէս լոյսը: Եւ ահա նրանց երեւացին Մովսէսն ու Եղիան, որ խօսում էին նրա հետ: Պետրոսը պատասխան տուեց եւ ասաց Յիսուսին. «Տէ՛ր, լաւ է, որ մենք այստեղ ենք. եթէ կամենաս, երեք տաղաւարներ շինենք, մէկը՝ քեզ համար, մէկը՝ Մովսէսի, մէկն էլ՝ Եղիայի»: Եւ մինչ նա դեռ խօսում էր, ահա մի լուսաւոր ամպ նրանց վրայ հովանի եղաւ. ամպից մի ձայն եկաւ ու ասաց. «Դա՛ է իմ սիրելի Որդին, որին հաւանեցի, դրա՛ն լսեցէք»: Երբ աշակերտները այս լսեցին, իրենց երեսի վրայ ընկան եւ սաստիկ վախեցան: Եւ Յիսուս, մօտենալով, դիպաւ նրանց ու ասաց. «Ոտքի՛ ելէք եւ մի՛ վախեցէք» (Մտթ. 17, 1–7):

Կարճ խորհրդածութիւն եւ աղօթք

Հայր Մեր... 10 Ողջոյն... Փառք Հօր...

Ով Յիսուս, ների՛ր մեր մեղքերը, պահի՛ր մեզ դժոխքի կրակից եւ երկինք տար բոլոր հոգիներին, յատկապէս, առաւել կարօտեալներին:

Ե. ՍՈՒՐԲ ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ

Եւ մինչ նրանք դեռ ուտում էին, Յիսուս հաց վերցրեց, օրհնեց ու կտրեց եւ տուեց աշակերտներին ու ասաց. «Առէ՛ք, կերէ՛ք, այս է իմ մարմինը»: Եւ բաժակ վերցնելով՝ գոհութիւն յայտնեց, տուեց նրանց ու ասաց. «Խմեցէ՛ք դրանից բոլորդ, որովհետեւ այդ է նոր ուխտի իմ արիւնը, որ թափւում է շատերի համար՝ իրենց մեղքերի թողութեան համար (Մտթ. 26, 26-28):

Կարճ խորհրդածութիւն

Հայր Մեր... 10 Ողջոյն... Փառք Հօր...

Ով Յիսուս, ների՛ր մեր մեղքերը, պահի՛ր մեզ դժոխքի կրակից եւ Երկինք տար բոլոր հոգիներին, յատկապէս, առաւել կարօտեալներին:

ՏՐՏՄՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ

(չորեքշաբթի եւ ուրբաթ)

Ա. ՅԻՍՈՒՍ՝ ԳԵԹՍԵՄԱՆԻԻ ՊԱՐՏԷԶՈՒՄ

Այն ժամանակ Յիսուս նրանց հետ եկաւ մի տեղ, որի անունը Գեթսեմանի էր, եւ նրանց ասաց. «Նստեցէ՛ք այդտեղ, մինչեւ որ գնամ աղօթեմ»: Եւ

իր հետ վերցնելով Պետրոսին եւ Զեբեդէոսի երկու որդիներին՝ սկսեց տրտմել եւ տագնապել: Այն ժամանակ նրանց ասաց. «Հոգիս տխուր է մահու չափ. այստե՛ղ մնացէք եւ ինձ հետ հսկեցէ՛ք»: Եւ մի փոքր առաջ գնալով՝ ընկաւ իր երեսի վրայ, աղօթեց ու ասաց. «Հա՛յր իմ, եթէ կարելի է, այս բաժակը թող ինձնից հեռու անցնի, բայց ոչ՝ ինչպէս ես եմ կամենում, այլ՝ ինչպէս դու» (Մտթ. 26, 36-46):

Կարճ խորհրդածութիւն

Հայր Մեր... 10 Ողջոյն... Փառք Հօր...

Ով Յիսուս, ների՛ր մեր մեղքերը, պահի՛ր մեզ դժոխքի կրակից եւ Երկինք տար բոլոր հոգիներին, յատկապէս առաւել կարօտեալներին:

Բ. ՅԻՍՈՒՍԻ ԽԱՐԱՋԱՆՈՒՄԸ

Պիղատոսը նրանց ասաց. «Ի՞նչ չար բան է արել նա»: Եւ նրանք առաւել եւս աղաղակում էին ու ասում. «Խա՛չը հանիր դրան»: Իսկ Պիղատոսը, որովհետեւ ուզեց ամբոխին գոհացնել, նրանց համար Բարաբբային արձակեց: Իսկ Յիսուսին ծեծել տալով՝ նրանց ձեռքը յանձնեց, որպէսզի խաչը հանուի (Մրկ. 15, 14-15):

Կարճ խորհրդածութիւն

Հայր Մեր... 10 Ողջոյն... Փառք Հօր...

Ով Յիսուս, ների՛ր մեր մեղքերը, պահի՛ր մեզ դժոխքի կրակից եւ Երկինք տար բոլոր հոգիներին, յատկապէս, առաւել կարօտեալներին:

Գ. ՅԻՍՈՒՍԻ ՓՇԵՊՍԱԿՈՒՄԸ

Այն ժամանակ կուսակալի զինուորները Յիսուսին վերցրին տարան ապարանք եւ ամբողջ գունդը նրա գլխին հաւաքեցին: Մերկացրին նրան եւ նրա վրայ կարմիր վերնազգեստ գցեցին: Եւ փշերից պսակ պատրաստելով՝ դրեցին նրա գլխին եւ մի եղէգ՝ նրա աջ ձեռքին. նրա առաջ ծնկի գալով՝ ծաղրում էին ու ասում. «Ողջո՛յն, հրեաների՛ թագաւոր»: Եւ թքելով նրա վրայ՝ եղէգն առնում էին ու խփում նրա գլխին: Եւ երբ նրան ծաղրուծանակի ենթարկեցին, նրա վրայից հանեցին քղամիդը ու նրան հագցրին իր զգեստը. եւ տարան նրան խաչը հանելու (Մտթ. 27, 27–30):

Կարճ խորհրդածութիւն

Հայր Մեր... 10 Ողջոյն... Փառք Հօր...

Ով Յիսուս, ների՛ր մեր մեղքերը, պահի՛ր մեզ դժոխքի կրակից եւ Երկինք տար բոլոր հոգիներին, յատկապէս, առաւել կարօտեալներին:

Դ. ԽԱՉԻ ՃԱՆԱՊԱՐՀԸ

Եւ նրանք առան Յիսուսին եւ տարան: Եւ խաչափայտը նա ինքն էր վերցրել եւ բարձրացնում էր այն տեղը, որի անունն էր Գագաթ, իսկ եբրայերէն կոչւում էր Գողգոթա... (Յվհ. 19, 17–18) ... բռնեցին Սիմոն Կիւրենացի անունով մէկին, որը հանդից էր գալիս. նրա վրայ դրեցին խաչը, որ այն բերի Յիսուսի յետեւից: Եւ նրա յետեւից գնում էր

ժողովրդի մի մեծ բազմութիւն եւ կանայք, որոնք կոծում էին ու ողբում նրան: Յիսուս դարձաւ եւ ասաց նրանց. «Երուսաղէմի՛ դուստրեր, ինձ վրայ լաց մի՛ եղէք, այլ լա՛ց եղէք ձեր եւ ձեր որդիների վրայ, որովհետեւ օրեր պիտի գան, երբ մարդիկ պիտի ասեն՝ «Երանի՛ չբեր կանանց եւ նրանց, որոնք բնաւ չծնեցին եւ չդիեցրին (Ղկ. 23, 27–29):

Կարճ խորհրդածութիւն

Հայր Մեր... 10 Ողջոյն... Փառք Հօր...

Ով Յիսուս, ների՛ր մեր մեղքերը, պահի՛ր մեզ դժոխքի կրակից եւ Երկինք տար բոլոր հոգիներին, յատկապէս առաւել կարօտեալներին:

Ե. ԽԱՉԵԼՈՒԹԻՒՆ

Երբ հասան «Գագաթ» կոչուած տեղը, այնտեղ նրան խաչը հանեցին. եւ չարագործներին էլ՝ մէկին աջ կողմը, միւսին ձախ կողմը՝ խաչեցին: Եւ Յիսուս ասաց. «Հա՛յր, ների՛ր դրանց, որովհետեւ չգիտեն, թէ ինչ են անում» (Ղկ. 23, 33–34):

Կարճ խորհրդածութիւն

Հայր Մեր... 10 Ողջոյն... Փառք Հօր...

Ով Յիսուս, ների՛ր մեր մեղքերը, պահի՛ր մեզ դժոխքի կրակից եւ Երկինք տար բոլոր հոգիներին, յատկապէս, առաւել կարօտեալներին:

ՓԱՌԱՒՈՐՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

(երեքշաբթի եւ կիրակի)

Ա. ՅԻՍՈՒՍԻ ՅԱՐՈՒԹԻՒՆԸ

Շաբաթ օրուայ երեկոյեան, երբ կիրակին լուսանում էր, Մարիամ Մագդաղենացին եւ միւս Մարիամը եկան գերեզմանը տեսնելու: Եւ ահա մեծ երկրաշարժ եղաւ, որովհետեւ Տիրոջ հրեշտակը երկնքից իջնելով՝ մօտեցաւ, դռնից վէմը մի կողմ գլորեց ու նստեց նրա վրայ: Նրա տեսքը փայլակի նման էր, ու նրա զգեստը՝ սպիտակ, ինչպէս ձիւնը: Նրա ահից պահապանները խռովուեցին եւ մեռելների պէս եղան: Հրեշտակը խօսեց ու կանանց ասաց. «Դուք մի՛ վախեցէք, գիտեմ, որ փնտռում էք Յիսուսին, որ խաչուեց. այստեղ չէ նա, քանի որ յարութիւն առաւ, ինչպէս ինքն ասել էր. եկէ՛ք, տեսէ՛ք այն տեղը, ուր պառկած էր: Եւ իսկոյն գնացէ՛ք, ասացէ՛ք նրա աշակերտներին, թէ յարութիւն առաւ. եւ ահա նա ձեզնից առաջ գնում է Գալիլիա. այնտեղ նրան կը տեսնէք: Ահա ասացի ձեզ» (Մտթ. 28, 1–7):

Կարճ խորհրդածութիւն

Հայր Մեր... 10 Ողջոյն... Փառք Հօր...

Ով Յիսուս, ների՛ր մեր մեղքերը, պահի՛ր մեզ դժոխքի կրակից եւ Երկինք տար բոլոր հոգիներին, յատկապէս, առաւել կարօտեալներին:

Բ. ՅԻՍՈՒՍԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԸ

Ապա Յիսուս առաքեալներին տարաւ հանեց մինչեւ Բեթանիա եւ, բարձրացնելով իր ձեռքերը, օրհնեց նրանց: Եւ մինչ նա օրհնում էր նրանց, բաժանուեց նրանցից եւ դէպի երկինք էր վերանում: Իսկ նրանք երկրպագեցին Յիսուսին եւ մեծ ուրախութեամբ վերադաձան Երուսաղէմ: Եւ միշտ տաճարում էին, գովաբանում եւ օրհնաբանում էին Աստծուն (Ղկ. 24, 50–53):

Կարճ խորհրդածութիւն

Հայր Մեր... 10 Ողջոյն... Փառք Հօր...

Ով Յիսուս, ների՛ր մեր մեղքերը, պահի՛ր մեզ դժոխքի կրակից եւ Երկինք տար բոլոր հոգիներին, յատկապէս, առաւել կարօտեալներին:

Գ. ՀՈԳԵԳԱԼՈՒՍՏԸ

Երբ Պենտեկոստէի օրերը լրացան, բոլորը միասիրտ, միատեղ էին: Եւ յանկարծակի երկնքից հնչեց մի ձայն՝ սաստիկ հողմից եկած ձայնի նման. եւ լցրեց ամբողջ այն տունը, ուր նստած էին: Եւ նրանց երեւացին բաժանուած լեզուներ, նման բոցեղէն լեզուների, որոնք եւ նստեցին նրանցից իւրաքանչիւրի վրայ: Եւ բոլորը լցուեցին Սուրբ Հոգով ու սկսեցին խօսել ուրիշ լեզուներով, ինչպէս որ Սուրբ Հոգին նրանց խօսել էր տալիս (Գործք. 2, 1–4):

Կարճ խորհրդածութիւն

Հայր Մեր... 10 Ողջոյն... Փառք Հօր...

Ով Յիսուս, ների՛ր մեր մեղքերը, պահի՛ր մեզ դժոխքի կրակից եւ Երկինք տար բոլոր հոգիներին, յատկապէս, առաւել կարօտեալներին:

Դ. ԱՍՏՈՒԱԾԱՄՕՐ ՎԵՐԱՓՈԽՈՒՄԸ

«Առաքեալները... Սուրբ Կոյսին դնելով գերեզ-մանի դռան մօտ, սպասում էին եւ ակնկալում Տիրոջը... Տեսա՛ն Արարչին, որ գալիս էր բազում հրեշտակներով... Տեսան Սուրբ Կոյսին՝ օդում ճախրելիս եւ ամպեղէն կառքով վեր՝ դէպի Երկինք, համբառնալիս եւ երկնային խորանները մտնելիս՝ իմաստուն կոյսերի հետ միասին, եւ նրանց միաձայնելով՝ ասում էին՝ օրհնեա՛լ ես ամենօրհնեալդ կանանց մէջ»: *(Ժամ. ի գիշերի, Օրհն. ԴՁ):*

Հայր Մեր... 10 Ողջոյն... Փառք Հօր...

Կարճ խորհրդածութիւն

Ով Յիսուս, ների՛ր մեր մեղքերը, պահի՛ր մեզ դժոխքի կրակից եւ Երկինք տար բոլոր հոգիներին, յատկապէս առաւել կարօտեալներին:

Ե. ԱՍՏՈՒԱԾԱՄՕՐ ՊՍԱԿՈՒՄԸ՝ ՈՐՊԷՍ ԹԱԳՈՒՀԻ ԵՐԿՆՔԻ ԵՒ ԵՐԿՐԻ

Եւ երկնքում մեծ նշան երեւաց. մի կին՝ արեգակն իր վրայ առած, լուսինն իր ոտքերի տակ եւ իր գլխի վրայ մի պսակ՝ տասներկու աստղերից (Յյտն. 12,1):

Տէ՛ր, Թագուհին կանգնած է Քո աջից՝ զարդարուած եւ պաճուճուած ոսկեհուռ զգեստներով (Սղմ. 44,10):

Կարճ խորհրդածութիւն

Հայր Մեր... 10 Ողջոյն... Փառք Հօր...

Ով Յիսուս, ների՛ր մեր մեղքերը, պահի՛ր մեզ դժոխքի կրակից եւ Երկինք տար բոլոր հոգիներին, յատկապէս առաւել կարօտեալներին:

ՈՂՋ ԼԵ՛Ր, ԹԱԳՈՒՀԻ[54]

Ողջ լե՛ր, Թագուհի, Մա՛յր Ողորմութեան, կեանք, քաղցրութիւն եւ յոյս մեր, ողջ լե՛ր: Առ

---

54 «Ողջ լե՛ր, Թագուհի» (լատ.՝ Salve Regina) աղօթքը կամ օրհներգը ծնուել է միջնադարում, Կաթողիկէ Եկեղեցում: Հեղինակային վերագրումները շատ են, բայց, առաւել հաւանական են համարում այն, որ այս աղօթքը գրել է գերմանացի վանական, աստղագէտ, պատմաբան, երաժշտագէտ Երանելի Հերմանուս Կոնտրակտուսը (1013-1054թթ.): Ըստ Հ. Մեսրոպ Ծ. Վրդ. Հայունու, «Ողջ լե՛ր, Թագուհի» աղօթքը 12-րդ դարից տարածուել է Գերմանիայի եւ Ֆրանսիայի վանական մենաստաններում (12-13-րդ դդ.՝ Քլունիի վանքում, Ցիստերցեան, Քարթուսեան, Դոմինիկեան, Ֆրանցիսկեան վանքերում, նաեւ՝ 14-րդ դ. Հայ Դոմինիկեանների վանքերում, 15-16-րդ դդ.՝ Կարմեղեան եւ Յիսուսեան, 16-18-րդ դդ.՝ Մխիթարեան եւ Զմմառեան, 19-րդ. դ.՝ Անարատ Յղութեան Հայ Քոյրերի վանքերում)՝

քեզ գոչեմք աքսորեալ որդիքս Եւայի: Առ քեզ հառաչեմք՝ հեծելով եւ ողբալով յայսմ արտասուաց վայրի: Արդ, ո՛վ բարեխօս մեր, դարձո՛ առ մեզ զաչս ողորմութեան քո: Եւ զՅիսուս՝ զօրհնեալ պտուղն որովայնի քո, յետ այսր աքսորանաց ցո՛յց մեզ, ով գթա՜ծ, ով բարեգո՜ւթ, ով քա՜ղցր Կոյս Մարիամ:

Աղաչեա՛ վասն մեր, Սուրբ Աստուածածին,
-զի արժանի լիցուք խոստմանցն Քրիստոսի:

ԼԻԹԱՆԻԱ (ԼՕՐԵՆՏԵԱՆ) ՍՈՒՐԲ ԿՈՅՍԻՆ[55]

Տէր, ողորմեա՛:

ծիսական-հասարակաց աղօթքի մէջ. վանականներն այն երգում էին օրուայ վերջում, ժամերգութիւնից յետոյ, Սբ. Հաղորդութեան երկրպագութեան ընթացքում եւ մայիս ամսուայ մարեմական ջերմեռանդութեան, Մարիամին նուիրուած թափօրների ժամանակ: Այն շատ սիրուած է եղել նաեւ ժողովրդի կողմից, միջնադարեան համալսարաններում, յատկապէս՝ նաւաստիների մօտ, ովքեր սիրում էին այս օրհներգով խնդրել Աստուածամօր բարեխօսութիւնը՝ նաւարկութեան ընթացքում: «Ողջ լե՛ր, Թագուհի»-ն իր վերջնական բնագրով հաստատուեց Լեւոն 13-րդ Սրբազան Քահանայապետի (1878-1903թթ.) կողմից:

55 Սուրբ Կոյսին նուիրուած այս Լիթանիան (այսինքն՝ գովերգ) Աստուածամօրը նուիրուած մի օրհներգ է, որը յայտնի է նաեւ «Լօրենտեան Լիթանիա» անունով՝ այն պատճառով, որ, հաւանաբար, ծագել է Իտալիայի Լօրետո

Քրիստոս, ողորմեա՛:
Յիսուս, լո՛ւր մեզ:
Քրիստոս, անսա՛ մեզ:
Հայր երկնաւոր Աստուած, ողորմեա՛ մեզ:
Որդի Փրկիչ աշխարհի Աստուած, ողորմեա՛ մեզ:
Հոգի Սուրբ Աստուած, ողորմեա՛ մեզ:
Ս. Երրորդութիւն, Մի Աստուած, ողորմեա՛ մեզ:
Սրբուհի՛ Մարիամ,
Սո՛ւրբ Աստուածածին,
Սո՛ւրբ կոյս կուսանաց,
Աղօթեա՛ վասն մեր:
Մա՛յր Քրիստոսի,
Մա՛յր աստուածային շնորհաց,
Մա՛յր մաքուր,
Աղօթեա՛ վասն մեր:
Մա՛յր սուրբ,
Մայր անարատ,
Մայր անբիծ:
Աղօթեա՛ վասն մեր:

բնակավայրում գտնուող Աստուածամօր Սրբավայրում, 15-րդ դարավերջին կամ 16-րդ դարասկզբին: Հռոմի Սիքստոս Ե Սրբազան Քահանայապետն այն պաշտօնապէս արտօնել է Կաթողիկէ Եկեղեցում՝ 1587թ.: Տարբեր ժամանակներում մեծ երգահաններ, օրինակ՝ Կոստանցո Պորտան, Վոլֆգանգ Ամադէուս Մոցարտը եւ ուրիշներ, երաժշտութիւններ են գրել Լօրենտեան Լիթանիայի համար:

Մայր սիրելի,
Մայր սքանչելի,
Մա՛յր բարի խորհրդոյ։
Աղօթեա՛ վասն մեր։
Մա՛յր Արարչին,
Մա՛յր Փրկչին,
Կոյս իմաստուն։
Աղօթեա՛ վասն մեր։
Կո՛յս յարգոյ,
Կո՛յս քարոզելի,
Կո՛յս Հզօր։
Աղօթեա՛ վասն մեր։
Կո՛յս գթած,
Կո՛յս հաւատարիմ,
Հայելի՛ արդարութեան։
Աղօթեա՛ վասն մեր։
Աթո՛ռ իմաստութեան,
Պատճառ մերոյ խնդութեան,
Անօ՛թ հոգեւորական։
Աղօթեա՛ վասն մեր։
Անօ՛թ պատուելի,
Անօթ ընտիր աստուածպաշտութեան
Վա՛րդ խորհրդական։
Աղօթեա՛ վասն մեր։
Աշտարակ Դաւթեան,
Աշտարակ փղոսկրեայ,
Տո՛ւն ոսկեղէն։
Աղօթեա՛ վասն մեր։

Տապանա՛կ ուխտի,
Դո՛ւռն երկնից,
Աստղ առաւօտեան:
Աղօթեա՛ վասն մեր:
Առողջութի՛ւն հիւանդաց,
Ապաստան մեղաւորաց,
Մխիթարիչ վշտացելոց:
Աղօթեա՛ վասն մեր:
Օգնական քրիստոնէից,
Թագուհի հրեշտակաց,
Թագուհի նահապետաց:
Աղօթեա՛ վասն մեր:
Թագուհի մարգարէից,
Թագուհի առաքելոց,
Թագուհի մարտիրոսաց:
Աղօթեա՛ վասն մեր:
Թագուհի խոստովանողաց
Թագուհի կուսանաց,
Թագուհի ամենայն սրբոց:
Աղօթեա՛ վասն մեր:
Թագուհի Անարատ Յղացեալ
Թագուհի փոխեալ յերկինս
Թագուհի Վարդարանի:
Աղօթեա՛ վասն մեր:
Թագուհի տիեզերաց
Թագուհի Հայաստանի
Թագուհի խաղաղութեան:
Աղօթեա՛ վասն մեր:

Գառն Աստուծոյ, որ բառնաս զմեղս աշխարհի
Խնայեա՛ ի մեզ, Տէր
Գառն Աստուծոյ, որ բառնաս զմեղս աշխարհի
Անսա՛ մեզ, Տէր
Գառն Աստուծոյ, որ բառնաս զմեղս աշխարհի
Ողորմեա՛ մեզ
Յիսուս, լո՛ւր մեզ,
Քրիստո՛ս անսա՛ մեզ:

Աղօթք

Աստուած անճառելի ողորմութեան, որ ոչ միայն մարդ, այլ եւ Որդի մարդոյ լինել հաճեցար եւ ծնանելով ի կուսէն՝ զՄայր յերկրի ստացար, որ զԱստուած ունէիր Հայր յերկինս. տուր մեզ, աղաչեմք, զյիշատակ Նորա յօժարութեամբ կատարել, զմայրութիւն Նորա գերագոյն յարգանօք պատուել, գերապանծ վսեմութեան Նորա զմեզ խոնարհութեամբ հպատակել, որ զՔեզ Հոգւով Սրբով յղացաւ, զՔեզ կուսութեամբ ծնաւ, եւ զՔեզ յերկրի ինքեան հնազանդ կալաւ, զՏէր մեր Յիսուս Քրիստոս, որ կենդանի ես եւ թագաւոր ես ընդ Հօր եւ ընդ Սուրբ Հոգւոյդ ի յաւիտեանս. Ամէն:

ԼԻԹԱՆԻԱ ԱՆԱՐԱՏ ՅՂՈՒԹԵԱՆ

Տէր, ողորմեա՛:
Քրիստոս, ողորմեա՛:
Յիսուս, լո՛ւր մեզ:
Քրիստոս, անսա՛ մեզ:
Հայր երկնաւոր Աստուած, ողորմեա՛ մեզ:
Որդի Փրկիչ աշխարհի Աստուած, ողորմեա՛ մեզ:
Հոգի Սուրբ Աստուած, ողորմեա՛ մեզ:
Ս. Երրորդութիւն, Մի Աստուած, ողորմեա՛ մեզ:
Անարատ Կոյս՝ ի մէջ համօրէն կուսանաց, աղօթեա՛ վասն մեր,
Անարատ Կոյս ի յղութեան, աղօթեա՛…
Անարատ Դուստր Հօր Աստուծոյ, աղօթեա՛…
Անարատ Մայր Որդւոյն Աստուծոյ, աղօթեա՛…
Անարատ Հարսն Հոգւոյն Սրբոյ, աղօթեա՛…
Անարատ տաճար Ամենասուրբ Երրորդութեան, աղօթեա՛…
Անարատ պատկեր իմաստութեան Աստուծոյ, աղօթեա՛…
Անարատ արշալոյս Արեգական արդարութեան, աղօթեա՛…
Անարատ եւ կենդանի տապանակ ուխտի եւ տեղի հանգստեան Յիսուսի Քրիստոսի, աղօթեա՛…
Անարատ բողբոջ արմատոյն Դաւթի, աղօթեա՛…
Անարատ ճանապարհ, որ տանիս առ Քրիստոս, աղօթեա՛…
Անարատ Կոյս, որ յաղթեցեր մեղաց, աղօթեա՛…

Անարատ Կոյս, որ խորտակեցեր զգլուխ
վիշապին, աղօթեա՛…
Անարատ Դշխոյ երկնի եւ երկրի, աղօթեա՛…
Անարատ դուռն Երկնային Երուսաղէմի,
աղօթեա՛…
Անարատ գանձապետ շնորհացն Աստուծոյ,
աղօթեա՛…
Անարատ աստղ ծովու, աղօթեա՛…
Անարատ աշտարակ պատերազմող Եկեղեցւոյ,
աղօթեա՛…
Անարատ վարդ՝ ի մէջ փշոց, աղօթեա՛…
Անարատ ձիթենի՝ ի խորհրդաւոր դաշտին
Աստուծոյ, աղօթեա՛…
Անարատ օրինակ ամենայն կատարելութեանց,
աղօթեա՛…
Անարատ պատճառ երջանկութեան մերոյ,
աղօթեա՛…
Անարատ սիւն հաւատոց մերոց, աղօթեա՛…
Անարատ աղբիւր սիրոյն Աստուծոյ, աղօթեա՛…
Անարատ եւ անվրէպ նշան փրկութեան,
աղօթեա՛…
Անարատ կանոն կատարեալ հնազանդութեան,
աղօթեա՛…
Անարատ խարիսխ ազատութեան մերոյ,
աղօթեա՛…
Անարատ լոյս հրեշտակաց, աղօթեա՛…
Անարատ պսակ նահապետաց, աղօթեա՛…
Անարատ փառք մարգարէից, աղօթեա՛…

Անարատ ուսուցիչ առաքելոց, աղօթեա՛…
Անարատ զօրութիւն մարտիրոսաց, աղօթեա՛…
Անարատ ապաւէն խոստովանողաց, աղօթեա՛…
Անարատ մաքրութիւն կուսանաց, աղօթեա՛…
Անարատ խնդութիւն յուսացելոց ի քեզ, աղօթեա՛…
Անարատ փաստաբան մեղաւորաց, աղօթեա՛…
Անարատ ախոյեան յահարկութիւն հերետիկոսաց, աղօթեա՛…
Անարատ տուն մաքրութեան եւ զգաստութեան, աղօթեա՛…
Անարատ Թագուհի յղացեալ՝ առանց արատոյ մեղաց, աղօթեա՛…
Գա՛ռն Աստուծոյ, որ բառնաս զմեղս աշխարհի Խնայեա՛ ի մեզ, Տէր
Գա՛ռն Աստուծոյ, որ բառնաս զմեղս աշխարհի Անսա՛ մեզ, Տէր
Գա՛ռն Աստուծոյ, որ բառնաս զմեղս աշխարհի Ողորմեա՛ մեզ:
Ո՛վ բոլորովին Սուրբ եւ Անարատ Կոյս, բարեխօսեա՛ վասն մեր, զի արժանի լիցուք խոստմանցն Որդւոյդ՝ Յիսուսի Քրիստոսի:

ՈՂՈՐՄՈՒԹԵԱՆ ՊՍԱԿ[56]

56 Այս աղօթքի տարածողը Կաթողիկէ Եկեղեցում լեհ Սրբուհի Ֆաուստինա Կովալսկան (Faustina Kowalska)

(1905-38թթ.) է, ում անուանում են նաեւ «Ողորմութեան առաքեալ»: Կովալսկան այն գրել է՝ հիմնուելով Տէր Յիսուս Քրիստոսի երեւումների (1931-35թթ.) վրայ, որոնց ընթացքում Յիսուս պատուիրել է այսպէս աղօթել եւ խոստացել է, որ այս աղօթքի շնորհիւ կարելի է ստանալ Հայր Աստծոյ ողորմութիւնը: Յիսուս պատուիրել է այսպէս աղօթել յատկապէս մահուան օրհասի պահին կամ մահացող մերձաւորի համար: Կովալսկան գրել է իր օրագրում, որ Յիսուս իրեն ասել է. «Երբ այս աղօթքն ասեն մահամերձի մօտ, ես կը կանգնեմ իմ Հօր եւ մահամերձի միջեւ՝ ոչ որպէս արդար Դատաւոր, այլ՝ Ողորմած Փրկիչ»: Ողորմութեան աղօթքը շատ զօրաւոր է: Կովալսկան իր երեւումերից յետոյ պատուիրել է նկարել Աստուածային ողորմութեան պատկերը. Յիսուս՝ պարզած ձեռքերով, իսկ Նրա Սուրբ Սրտից հոսող արիւնն ու ջուրը՝ որպէս նշան ողորմութեան, ողողում են աշխարհը: 1934թ. ստեղծուած «Աստուածային Ողորմութեան» նկարի հեղինակն է Եւգենիուշ Կազիմիրովսկին: Այս պատկերը ի ցոյց է դրւում Սուրբ Պետրոսի հրապարակում ամէն տարի՝ Աստուածային ողորմութեան տօնին, որը հաստատուեց 2001թ. ապրիլի 30-ին՝ այն օրը, երբ Սբ. Յովհաննէս Պօղոս Բ Քահանայապետը Կովալսկային հռչակեց սուրբ: Աստուածային Ողորմութեան տօնը ամէն տարի, լատին օրացոյցով տօնւում է Սբ. Յարութեան տօնին յաջորդող կիրակի օրը՝ Կրկնազատկին, Հայ Եկեղեցու օրացոյցով: Սբ. Յովհաննէս Պօղոսը 2001-ին յայտարարեց հետեւեալը. «Յիսուս Սրբուհի Կովալսկային ասաց. «Մարդկութիւնը երբէք խաղաղութիւն չի ունենայ, մինչեւ վստահութեամբ չհայցի Աստուածային Ողորմութիւնը»:

պատրաստութիւն, կարելի է աղօթել այսպես.

Ո՛վ Յիսուս, Դու սպառուեցիր, բայց կեանքիդ աղբիւրը դուրս հորդեց հոգիների համար, եւ ողորմութեան ովկիանոսը բացուեց ամբողջ աշխարհի համար. Ո՛վ Կեանքի Աղբիւր, անճառելի Աստուածային Ողորմութիւն, գրկի՛ր ամբողջ աշխարհը, եւ Ինքդ Քեզ հեղի՛ր մեզ համար:

Երեք փոքր հատիկներից առաջինի վրայ՝

Հայր մեր…

Երկրորդ փոքր հատիկի վրայ՝

Ողջո՛յն…

Երրորդ փոքր հատիկի վրայ՝

Հաւատամք ի մի Աստուած…

Մեծ հատիկների վրայ՝

Հայր Հաւիտենական, Քեզ եմ ընծայում Քո սիրելի Որդու՝ մեր Տէր Յիսուս Քրիստոսի Մարմինն ու Արիւնը, Հոգին եւ Աստուածութիւնը՝ մեր եւ ամբողջ աշխարհի մեղքերի քաւութեան համար:

Փոքր հատիկների վրայ՝

Յանուն իր դառը չարչարանքների՝ ողորմի՛ր մեզ եւ ամբողջ աշխարհին:

Վարդարանն ամբողջութեամբ աղօթելուց յետոյ երեք անգամ պէտք է ասել՝

Սուրբ Աստուած, Սուրբ եւ Հզօր, Սուրբ եւ Անմահ,

Ողորմի՛ր մեզ եւ ամբողջ աշխարհին:

Ապա՝ երեք անգամ՝

Յիսու՛ս, Քե՛զ եմ վստահում:

ԱՂՕԹՔ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ԵՕԹՆ ՈՒՐԱԽՈՒԹԻՒՆՆԵՐԻ[57]

---

57 Այս աղօթքը, որի հնագոյն անուանումն է «*Ջերմեռանդութիւն առ եօթն խնդութիւնս, որովք զմայլի Տիրուհին մեր ի յերկինս*», ներկայացրել ենք
Ըստ Հ. Ղուկաս Վրդ. Ինճիճեանի «Աղօթագիրք աշխարհաբար», Սուրբ Ղազար, 1849, գրքի տեքստի՝ արեւելահայերէն թարգմանութեամբ, միայն ուրախութիւնների աղօթքներից առաջ աւելացնելով Սուրբ Կոյսի «Մեծացուսցէ»-ից երկու տող: Այս ջերմեռանդութիւնը, հաւանաբար, սկիզբ է առել 11-րդ դարասկզբում, երբ երգեր էին ձոնում Տիրամօրը՝ նրա հետ խնդակից լինելով Աւետման իրադարձութեանը, որը դարձաւ այս

ԱՌԱՋԻՆ ՈՒՐԱԽՈՒԹԻՒՆ ԱՒԵՏՈՒՄ

Մեծացուսցէ՛ անձն իմ զՏէր
Եւ ցնծասցէ հոգի իմ Աստուծով փրկչաւ իմով:

Խնդա՛ եւ ուրախ լեր, ո՛վ ընդունարան աստուածային շնորհների, յիշի՛ր այն վայրկեանը, երբ Գաբրիէլ հրեշտակն ուրախութեան աւետիսը միայն քեզ տուեց. այնքան կանանց մէջ դո՛ւ միայն ընտրուեցիր Երկնաւոր Հօր առաջ՝ լինելու մարմնարանը Աստծոյ Խօսքի, տեղ եւ բնակարան անբաւ աստուածութեան, եւ Նրա հետ մէկտեղ՝ գործակից լինելու մարդու փրկագործութեան մէջ: Յիշելով այս մեծ շնորհքդ եւ անճառելի ուրախութիւնդ՝ Սուրբ Աստուածածի՛ն, յիշի՛ր այսօր իմ ողորմելիութիւնս էլ, որ տառապում եմ զանազան թշուառութիւնների մէջ, նեղւում մարմնաւոր եւ հոգեկան տառապանքներով, եւ միայն յոյսս քեզ վրայ դնելով՝ քեզ եմ ապաւինել ամբողջ սրտով: Յիշելով իմ թշուառութիւնը, եւ քո առաջին ուրախութիւնը, տո՛ւր ինձ այսօր մի շնորհ

ջերմեռանդութեան եօթը ուրախութիւնների ելակէտը: Կիսելով Մարիամի բերկրանքը՝ հաւատացեալները պատրաստւում էին երկնային անանց ուրախութեանը, որին կարելի է աւելի հեշտութեամբ հասնել՝ Սուրբ Կոյսի բարեխօսութեամբ (Տե՛ս՝ Մեսրոպ Հայունի, «Ահա՛, այսուհետեւ բոլոր ազգերը պիտի երանեն զիս, որովհետեւ հզօրը մեծ սքանչելիքներ ըրաւ զիս», Այնճար, 2015):

հոգեւոր ուրախութեան՝ փարատելով այն բոլոր տրտմութիւնները, յուսահատութիւնները, որոնք մեղքերիս հետեւանքներն են:

Հայր մեր…

Ողջո՛յն քեզ Մարիամ…

Փառք Հօր…

ԵՐԿՐՈՐԴ ՈՒՐԱԽՈՒԹԻՒՆ ՅԻՍՈՒՍԻ ԾՆՈՒՆԴԸ

Մեծացուսցէ՛ անձն իմ զՏէր

Եւ ցնծասցէ հոգի իմ Աստուծով փրկչաւ իմով:

Խնդա՛ եւ ուրա՛խ լեր, ընտրեա՛լդ ի մէջ ամենայն կանանց: Յիշի՛ր այն ուրախութիւնդ, երբ եղար մայր Աստուծոյ, կուսութեամբ ծնար զԲանն Աստուած: Նրան, ումից դողում են սերովբէները, քերովբէները, դու ունեցար որպէս զաւակդ, գրկեցիր, շօշափեցիր, համարձակ վայելեցիր. մայր եղար Նրան, ով աշխարհիս յոյսն ու փրկութիւնն է եւ բոլորի ուրախութիւնը: Յիշի՛ր, ո՛վ Սուրբ Կոյս, այդ ուրախութեան ժամը, եւ այսօր ինձ էլ տո՛ւր մի ուրախութիւն, մի յոյս՝ մեղքերիս թողութեան, որ աղտերիցս մաքրուելով՝ լինեմ Յիսուսի բնակարան, եւ յոյս առնեմ Նրան տեսնելու Արքայութեան մէջ՝ Իր սրբերի հետ. Ամէն:

Հայր մեր…

Ողջո՛յն քեզ Մարիամ…

Փառք Հօր…

ԵՐՐՈՐԴ ՈՒՐԱԽՈՒԹԻՒՆ ՎԵՐԱՓՈԽՈՒՄԸ

Մեծացուսցէ՛ անձն իմ զՏէր
Եւ ցնծասցէ հոգի իմ Աստուծով փրկչաւ իմով:

Խնդա՛ եւ ուրա՛խ լեր, Սուրբ Աստուածածի՛ն, պաշտպան, յոյս եւ բարեխօս բոլոր քրիստոնեաների. յիշի՛ր այն ուրախութիւնը, երբ տեսար Միածին Որդուդ՝ Երկնքից իջած եւ մօտդ եկած մահուանդ ժամանակ՝ քեզ Երկինք տանելու համար: Սերովբէներ, քերովբէներ՝ դասերն հրեշտակների եւ բոլոր սրբերն օրհներգելով քեզ առան, Երկինք տարան: Յիշի՛ր այդ ժամն ուրախութեան, եւ այդ անպատմելի խնդութեանդ համար, որ Յիսուս Միածինդ քեզ պարգեւեց, պարգեւի՛ր ինձ էլ այսօր յոյս ապաւինութեան, տո՛ւր ինձ քո հզօր պաշտպանութիւնը: Որչափ մարմնաւոր փորձանք գայ վրաս, որչափ հոգեւոր փորձութիւն գայ սատանայից, աշխարհից կամ իմ մարմնից, միշտ քո հզօր աներեւոյթ պաշտպանութեամբդ հասի՛ր, պահի՛ր, պաշտպանի՛ր ինձ: Պաշտպանութիւնդ ցո՛յց տուր ինձ, մանաւանդ, մահուանս վայրկեանին, երբ ամէնքն էլ ինձ լքում են, որպէսզի մայրական պաշտպանութիւնդ տեսնելով՝ մխիթարուեմ:

Հայր մեր…
Ողջո՛յն քեզ Մարիամ…
Փառք Հօր…

ՉՈՐՐՈՐԴ ՈՒՐԱԽՈՒԹԻՒՆ ՅԻՍՈՒՍ ԻՐ ՄՕՐԸ ՆՍՏԵՑՐԵՑ ԻՐ ԱՋ ԿՈՂՄՈՒՄ

Մեծացուսցէ՛ անձն իմ զՏէր
Եւ ցնծասցէ հոգի իմ Աստուծով փրկչաւ իմով:

Խնդա՛ եւ ուրախ լեր, Կոյս անարատ. յիշի՛ր այն ուրախութիւնը, որ ունեցար, երբ տեսար, որ Երկնքից բոլոր սրբերից քեզ հաճեց նայել Ամենասուրբ Երրորդութիւնը, եւ Իր մօտ առաւ, մարդացեալ Յիսուսի աջ կողմը նստեցրեց, եւ այնպիսի անճառելի փառքով լցրեց, որին չի հասնում խելքը մարդկային. միայն Ամենասուրբ Երրորդութիւնը գիտի: Եւ դու վայելելով՝ զմայլւում ես յաւիտեան: Այս ուրախութիւնդ յիշելով՝ մի ձգիր ինձ այսպիսի թշուառ խեղճութեան մէջ, ինձ էլ մի քիչ այն փառքից պատրաստի՛ր: Եւ որպէս զի հասնեմ այն փառքին, օգնի՛ր, որ վարքս շտկեմ, զղջմամբ ու բարեգործութեամբ աշխատեմ, եւ միշտ յոյս ունենամ Արքայութեան եւ երանութեան, յոյս՝ Աստծուն տեսնելու եւ քեզ՝ Մայրդ Աստուծոյ, փառքիդ մէջ:

Հայր մեր…
Ողջո՛յն քեզ Մարիամ…
Փառք Հօր…

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՈՒՐԱԽՈՒԹԻՒՆ ԱՍՏՈՒԱԾԱՄՕՐ ՊՍԱԿՈՒՄԸ՝ ՈՐՊԷՍ ԹԱԳՈՒՀԻ ԵՐԿՆՔԻ ԵՒ ԵՐԿՐԻ

Մեծացուսցէ՛ անձն իմ զՏէր
Եւ ցնծասցէ հոգի իմ Աստուծով փրկչաւ իմով:

Խնդա՛ եւ ուրախ լեր, դուստր լուսոյ Հօրն Երկնաւորի. յիշի՛ր այն ուրախութիւնները, որ ունեցար, երբ Հայրն Երկնաւոր, տեսնելով ծայրագոյն խոնարհութիւնդ, քեզ պսակեց՝ որպէս Թագուհի Երկնի եւ երկրի, որպէս զի մայրական հովանիովդ պաշտպանես սրբերին, գթութեամբդ՝ դարձի բերես մեղաւորներին: Փառքովդ զարդարուեց, լցուեց Երկնային Դրախտը. Երկնքում բնակուող ամէն սուրբ եւ հրեշտակների ամէն դաս յատուկ ուրախութիւն ունեցան՝ տեսնելով ամենախոնարհ Կոյսիդ՝ այն փառքին բարձրացած: Եւ Քրիստոսի ողջ Եկեղեցին մեծապէս ցնծում է՝ յիշելով փառքդ, որով եղար պարծանք քրիստոնեաների, փառքն Ադամի եւ Եւայի: Այս խնդութեանդ համար տո՛ւր ինձ, այսօր, ո՛վ Թագուհի Երկնի եւ երկրի, մի շնորհ՝ արդիւնաւորելու, որպէս զի ոչ թէ միայն մեղքերիցս հեռանամ, այլ նաեւ արդիւնք վաստակեմ, քանի որ կեանք ունեմ, շունչս վրաս է, ժամանակս պարապ չանցկացնեմ, այլ ամէն գործս ի փառս Աստուծոյ անելով՝ վարձք շահեմ: Տո՛ւր, որ ինչքան էլ շատ խաչ եւ նեղութիւն ունենամ, այդ նեղութիւններիս մէջ ուրախութիւն ունենամ՝ այդ ամէնը կրելու

Աստուծոյ համար, Իր կամքին ապաստանելով՝ օրհնեմ Հօրը Երկնաւոր, որ քեզ այսպիսի մեծութեան բարձրացրեց:

Հայր մեր…

Ողջոյն քեզ Մարիամ…

Փառք Հօր…

ՎԵՑԵՐՈՐԴ ՈՒՐԱԽՈՒԹԻՒՆ ԱՍՏՈՒԱԾԱՄԱՅՐԸ՝ ԳՈՐԾԱԿԻՑ ՔՐԻՍՏՈՍԻ

Մեծացուսցէ՛ անձն իմ զՏէր

Եւ ցնծասցէ հոգի իմ Աստուծով փրկչաւ իմով:

Խնդա՛ եւ ուրախ լեր, Մայր Բանին Աստուծոյ. յիշի՛ր այն ուրախութիւնը, այն փառքը, որ ունեցար, երբ քո սիրելի Որդին Միածին, որպէսզի հրեշտակների եւ բոլոր սրբերի առջեւ պատուեց քեզ մայրական պատուով, ինչպէս որ արժան է, քեզ վերցրեց որպէս գործակից իր դատաստանի: Արդարութեան դատաստանն իրեն պահեց, իսկ գթութեան եւ ողորմութեան դատաստանը քեզ յանձնեց. եւ կատարեալ իշխանութիւն տուեց, որ ինչ շնորհ, որ ուզես Իրենից, իսկոյն կատարուի, որով եղար յոյս բոլոր արդար քրիստոնեաների, յոյս եւ ապաստան մեղաւորների: Ուստի այն ծառաներդ, որ այս աշխարհում յատուկ ջերմեռանդութեամբ քեզ են ծառայում, քեզ են գովաբանում, յատուկ մի շնորհ պիտի ընդունեն եւ Երկնքում՝ յատուկ մի վարձ եւ փառք, իսկ այն մեղաւորները, որ քեզ են դիմում,

ընդունեն շնորհք դարձի եւ ապաշխարհութեան, եւ այն աշխարհում՝ փառք յաւիտենական սրբերի հետ: Հիմա ես, որ գլուխն եմ մեղաւորների, եւ աղօթքով՝ եօթը ուրախութիւններդ յիշեցնելով՝ քեզ եմ դիմում. տո՛ւր ինձ այսօր, աղաչում եմ, շնորհք դարձի եւ ապաշխարութեան, որ ծանր մեղքերիս թողութիւն գտնեմ եւ շնորհք ներողութեան եւ քաւութեան՝ բոլոր մեղքերիս պատիժներին, քանի որ չարաչար մեղքերիս համար շատ պատիժ կրելու արժանի եղայ: Այսօր քո գթութեամբ եւ միջնորդութեամբ ազատի՛ր Յիսուսի անաչառ դատաստանից եւ պատժից, որպէս զի արքայութեան մէջ արժանի լինեմ Աստուծոյ փառքի հետ քո փառքն էլ տեսնելուն, օրհնեմ Յիսուս Միածնին յաւիտեան, որ քեզ այսպիսի փառքի հասցրեց եւ ինձ էլ քո շնորհիւ սրբեց:

Հայր մեր…

Ողջո՛յն քեզ Մարիամ…

Փառք Հօր…

ԵՕԹՆԵՐՈՐԴ ՈՒՐԱԽՈՒԹԻՒՆ ՍՈՒՐԲ ԿՈՅՍԸ՝ ԳԱՆՁԱՊԱՀ ԲՈԼՈՐ ՇՆՈՐՀՆԵՐԻ

Մեծացուցէ՛ անձն իմ զՏէր

Եւ ցնծացէ հոգի իմ Աստուծով փրկչաւ իմով:

Խնդա՛ եւ ուրախ լե՛ր, Հա՛րսն անարատ Հոգւոյն Սրբոյ. յիշի՛ր այն ուրախութիւնը, որ ունեցար,

երբ տեսար որ Հոգին Սուրբ, քո ամենամաքուր կուսութեանդ վրայ զմայլուելով, քեզ դրեց գանձապետ իր բոլոր շնորհների, այնպէս որ որեւէ շնորհք չի բաշխւում որեւէ մէկին՝ մինչեւ որ քո ձեռքերով չանցնի: Ինչպիսի՜ մեծութիւն, ինչպիսի՜ փառք ես վայելում, ո՜վ ամէնօրհնեա՛լ Սուրբ Աստուածածին: Աղաչում եմ, Սուրբ Աստուածածի՛ն, այս խնդութեանդ եւ այս փառքիդ համար, տո՛ւր ինձ շնորհներ, որոնք պէտք են հոգուս եւ մարմնիս, ինձ եւ ընտանիքիս անդամներին՝ կենդանի եւ մահացած: Ինչ շնորհք, որ պէտք է փրկութեան հասնելուս, դու որ ձեռքիդ մէջ ունես աստուածային շնորհների գանձերն ու մայրական գթութեամբ խնամում ես ամէն հաւատացեալի, հանի՛ր աստուածային գանձարանացիդ անհրաժեշտ շնորհները, եւ արժանի արա՛ ընդունելու ինձ՝ անարժանիս, որ Քո բարեխօսութեամբդ այս աշխարհում Աստծոյ կամքը կատարեմ, այս կեանքից յետոյ էլ Աստծոյ Արքայութեան արժանի լինելով՝ գովեմ, փառաւորեմ քեզ, եւ քեզնով՝ Սուրբ Հոգուն, որ քեզ արեց իր բոլոր շնորհների այսպիսի Տիրուհի:

Հայր մեր…

Ողջո՛յն քեզ Մարիամ…

Փառք Հօր…

ԱՂՕԹՔ՝ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ԵՕԹԸ ՎԷՐՔԵՐԻ[58]

58 Այս աղօթքը, որ հնագոյն ձեւով կոչւում է «*Ջերմեռանդութիւն առ եօթն վէրս գլխաւորս ամենասրբուհւոյ Կուսին Մարիամու*», եւս ներկայացում ենք ըստ Հ. Ղուկաս



ԱՌԱՋԻՆ ՎԷՐՔ «ԻՍԿ ՔՈ ՀՈԳՈՒ ՄԻՋՈՎ ԷԼ ՍՈՒՐ ՊԻՏԻ ԱՆՑՆԻ» (ՂԿ., 2, 35)

Ո՛վ ցաւագին Սուրբ Կոյս Աստուածածին, յիշի՛ր քո առաջին վէրքը, երբ Սիմէոն ծերունու բերանով լսեցիր, թէ այն կուսածին Որդիդ, որին գրկում ես, սիրում ես, մի ժամանակ պիտի գայ, որ հակառակութեան նշան պիտի լինի, այնպիսի բաներ պիտի տեսնես, որ սիրտդ խոցուի, կարծես թէ սուր խոթէին սրտիդ մէջ: Այս խօսքը լսելուց յետոյ՝ սուրը սրտիցդ չելաւ, Յիսուս դեռ չը

Վրդ. Ինճիճեանի «Աղօթագիրք աշխարհաբար», Սուրբ Ղազար, 1849, գրքի: Այս ջերմեռանդութիւնը ի յայտ է եկել 14-րդ դարասկզբին՝ Տիրամօր ցաւերով խոցուած անարատ Սրտի հանդէպ պատուի եւ խորհրդածութեան հիման վրա՝ կապուած Յիսուսի չարչարանքների աւետարանական պատմութիւնների հետ: Տիրամօր Սուրբ Սիրտը խոցած ցաւերի կամ վէրքերի ցանկը հնում բաւական շատ եւ բազմազան է եղել, մինչեւ որ ֆլանդրիացի մի քահանայ՝ Հ. Jean de Coudenberghe-ը 1482թ. սկսեց իր քարոզներով տարածել Տիրամօր «Եօթը ցաւեր»-ը: Բայց կայ Եօթը ցաւերի երկու ցուցակ: Հայ իրականութեան մէջ այս ջերմեռանդութեան ջանասէր տարածողներն եղել հայ Մխիթարեան հայրերը եւ, յատկապէս, նրանց հիմնադիրը՝ Մխիթար Աբբահայրը (Տե՛ս՝ Մեսրոպ Հայունի, «Ահա՛, այսուհետեւ բոլոր ազգերը պիտի երանեն զիս, որովհետեւ հզօրը մեծ սքանչելիքներ ըրաւ զիս», Այնճար, 2015):

չարչարուած՝ դու սկսեցիր սրտիդ մէջ խոցուել ու տառապել՝ մինչ նայում էիր Միածին Յիսուսին. սիրտդ, ուրախանալու փոխարէն՝ տագնապում էր, «արդեօք ի՞նչ նեղութիւններ պիտի քաշի» մտածում էիր: Եւ այդ մտածումներով երեսուն եւ երեք տարի տանջուեցիր: Յիշի՛ր տառապանքներդ, ով Տիրամա՛յր, որ ինձ համար քաշեցիր, որպէսզի ե՛ս փրկուեմ, ե՛ս չկրեմ տառապանք՝ սատանայի ձեռքից: Յիսուս Միածի՛նը յանձն առաւ իմ փոխարէն տանջանք կրելու, Նրանով քե՛զ էլ բաժին ընկաւ կրելու այս վէրքը: Եւ յիշելով առաջին կրած ցաւդ՝ աղաչում եմ, որ այսօր իմ սրտիս մէջ տպաւորես զղջման եւ արտասուքի սուրը, որ մինչեւ մահ երբեք չպակասի իմ սրտից ցաւն ապաշխարութեան: Սուրբ Հոգու շնորհով սկսեմ լացել իմ մեղքերիս համար, որ պատճառ եղան Յիսուսի չարչարանքների, եւ քո՝ դառնապէս խոցուելուդ:

Յիսուս ինձ համար թող լինի կանգնելու պատճառ եւ ոչ գլորուելու. Յիսուս թող լինի իմ սրտիս խորհուրդը, մտքիս յայտնութիւնը, տպաւորութիւնը: Մտածմամբ ու ապաշխարութեամբ ապրեմ մնացած կեանքս, որով քո առաջին վէրքիդ արդիւնքն իմ վրայ փառաւորուի սրբերի եւ հրեշտակների առաջ:

Հայր մեր…

Ողջո՛յն քեզ Մարիամ…

Փառք Հօր…

ԵՐԿՐՈՐԴ ՎԷՐՔ
ՓԱԽՈՒՍՏ ԴԷՊԻ ԵԳԻՊՏՈՍ՝ ՅԻՍՈՒՍ ՄԱՆԿԱՆ ՀԵՏ

Ո՛վ ցաւագին ամէնօրինեալ Կոյս Մարիամ, յիշի՛ր քո երկրորդ վէրքը, երբ Հերովդէսի ձեռքից փախար Եգիպտոս, Սուրբ Յովսէփի հետ երկար ճամփորդութեան նեղութիւնը քաշեցիր, որպէս զի Յիսուսին ազատես Հերովդէսի կոտորածից: Ահա՛, ես եմ այն Հերովդէսը՝ որ նախ կեղծաւորութեամբ երկրպագել եմ ուզում Յիսուսին, յետոյ՝ սպաննել, վա՜յ ինձ. քանի՜ անգամ անարժանութեամբ ընդունելով Հաղորդութեան Սուրբ Խորհուրդը, սրտիս մէջ իրապէս ուզել եմ սպանել Յիսուսին:

Տիրամա՛յր, այսօր յիշելով կրածդ տառապանքը, տո՛ւր ինձ գոհանալու մի շնորհք: Ինչպէս որ առաջ փախար Եգիպտոս, հեռացրեցիր Յիսուսին հալածչի ձեռքից, իսկ հալածանքից յետոյ վերադարձար՝ Յիսուսին հետդ բերելով, շնորհքն էլ, Արքայութիւնն էլ բերեցիր, տո՛ւր, որ ես էլ դադարեմ մեղանչել, որ պատճառ է Յիսուսին հալածելու, սրտիցս հանելու: Իմ դադարելովս՝ դո՛ւ էլ Յիսուսին դարձնես-բերես կրկին իմ սրտիս մէջ՝ շնորհներով, որպէսզի սիրտս Յիսուսի համար բնակարան լինի, եւ քո երկրորդ խոցիդ արդիւնքն ինձ համար էլ շահաւէտ լինի՝ փրկելով ինձ յաւիտենական կորստից:

Հայր մեր…

Ողջո՛յն քեզ Մարիամ…
Փառք Հօր…

ԵՐՐՈՐԴ ՎԷՐՔ
ՄԱՐԻԱՄԸ ԿՈՐՑՆՈՒՄ Է ՅԻՍՈՒՍԻՆ ԵՐՈՒՍԱՂԷՄՈՒՄ

Ո՛վ Մայր ցաւագին, բաւական չեղաւ քո առաջին կրածներդ Եգիպտոսի երկար ճամփորդութեան մէջ, Յիսուսի հետ միասին, այլեւ երրորդ անգամ մեծ վէրք կրեցիր սրտիդ մէջ, երբ կորցրեցիր Յիսուսին Երուսաղէմում՝ մի նոր ճամփորդութեանդ մէջ: Երեք օր սիրտդ տագնապեց՝ մտածելով, թէ ո՞ւր գտնես այդ անկորուստ գանձն աշխարհի՝ Յիսուսին: Երբ տաճարի մէջ գտար, ցաւագնեալ սիրտդ չդիմացաւ, մայրական սրտով կրածդ տառապանքը յայտնեցիր Յիսուսին:

Հիմա ի՛մ սիրտն է կորցրել Յիսուսին, բայց ամենեւին հոգ չունի փնտռելու, այլ սիրտս հիմա մէկդի թողնելով Յիսուսին, որ իր հանգստութիւնն ու երջանկութիւնն է արարածների մէջ, օտար տեղերում է փնտռում իր երջանկութիւնը, եւ ոչ թէ՝ տաճարի մէջ, սուրբ գործերի մէջ, ուստի հանգստութիւն չի կարող գտնել: Յիսուս իր երեսը դարձցրած՝ թաքնուել է ինձանից, չի երեւում: Այսպէս, զրկուած լինելով Յիսուսի հետ հանդիպումից ու զրոյցից՝ հիմա քե՛զ եմ աղաչում, Մա՛յր ցաւագնեալ, ասա՛ Յիսուսին. «Ի՞նչ արեցիր,

որդեա՛կ: Ինչո՞ւ թողեցիր այս խեղճ հոգին, որ որոնում է քեզ եւ չգիտի, թէ որտեղ գտնի: Այս ասելով՝ խնդրի՛ր այսօր ինձ համար նոր յարատեւութեան մի շնորհ, որ մեղքերիս համար զղջալուց յետոյ, երբե՛ք չմեղանչեմ եւ մեղքով չկորցնեմ Յիսուսին իմ սրտիցս, այլ միշտ իր հետ բնակակից լինեմ, Հօր տանը՝ տաճարի մէջ, փնտռեմ Յիսուսին: Ուր, որ Նա գտնւում է, ես էլ միշտ այնտեղ մնամ, այնտեղ իր հետ տեսնուեմ՝ ուր, որ կայ աղօթք եւ բարեգործութիւն, հեռու մնամ այն ամէնից, ինչից փախչում է Յիսուս:

Հայր մեր…

Ողջո՛յն քեզ Մարիամ…

Փառք Հօր…

ՉՈՐՐՈՐԴ ՎԷՐՔ
ՅԻՍՈՒՍԻ ՁԵՐԲԱԿԱԼՈՒՄԸ, ԳԱՆԱԿՈԾՈՒՄԸ ԵՒ ԾԱՂՐՈՒՄԸ

Ո՛վ Մայր ցաւագին, ի՞նչ եղաւ արդեօք սիրտդ, երբ քեզ իմաց տուեցին, որ սիրելի Միածին Որդուդ բռնեցին, չարագործի պէս դատաւորների առջեւ տարան, հրեաների ամբոխը վրան ժողովուած՝ քահանայապետի առջեւ որպէս մահապարտ վճռեցին, ապտակեցին, Պիղատոսի ատեանում ձեռքերը կապեցին, չարաչար ծեծեցին, գլուխը փշով պսակեցին, սուտ թագաւոր ձեւացնելով, ծաղրելով՝ Նրա սուրբ երեսին թքեցին, եւ հիմա պիտի

տանեն խաչը հանելու: Սրանք, եթէ մի հասարակ մարդու մասին էլ պատմուեն, ոչ մէկի սիրտը չի դիմանայ՝ որչափ օտար էլ լինի, ուր մնաց՝ անմեղ Միածնի վրայ, երբ մա՛յրը լսի. այսպիսի կուսածի՜ն Աստուածորդի, եւ այսպիսի Մա՜յր Աստծոյ, Կո՜յս անապական: Ինչպիսի՜ խօսքեր են, ինչպիսի՜ խոր-հուրդներ, ինչպիսի՜ տեսիլ անարգանքի, ինչպիսի՜ տեսիլ չարչարանքների՝ խելք ու մտքից վեր, եւ, սակայն, այսպիսի Մայր լինելով՝ դիմացար, որպէս զի դու էլ Յիսուսի քահանայութեան խորհրդին մասնակից լինես:

Վասն զի այսչափ մեծ խորհուրդների, այսչափ դառնակսկիծ չարչարանքների պատճառ եմ ես՝ անարգ որդս. ես Բարաբբա մարդասպան աւա-զակն եմ: Եւ որպէսզի ես՝ Բարաբբաս, փրկուեմ, ինքն Յիսուս քահանայապետը՝ յանձն առաւ իր չարչարանքով զոհուել, պատարագ մատուցուել իմ մեղքերիս թողութեան, քաւութեան համար: Դու էլ Մա՛յր Աստուծոյ, Որդուդ հետ մէկտեղ կրելով այդ ամէնը՝ գործակից եղար իմ փրկութեանը, մեծ խորհուրդներին տեղեակ ու խելամուտ լինելով՝ Սիմէոն ծերունու խօսքը միտքդ բերեցիր, իմացար, որ Յիսուս Միածինդ անզեղջ հրեաների համար գլորումն պիտի լինի՝ աստուածասպանութեամբ, եւ ինձ նման մեղաւորիս համար՝ պէտք է լինի պատճառ ոտքի կանգնելու՝ փրկագործութեամբ, որ հեթանոս ազգից զղջումով դարձած՝ հաւատացեալ հրեաների անդրանկութիւնը վերցրեցի, բայց

մահացու մեղքերովս կորցրեցի անդրանկութիւնս էլ, անմեղութիւնս էլ, Յիսուսին էլ. եղայ պատճառ՝ որ Տէր Յիսուսին բռնեցին, չարչարեցին, վերջն էլ խաչել վճռեցին:

Տո՛ւր ինձ, այսօր, յատուկ մի շնորհ եւ օգնութիւն՝ փորձութիւններից պահուելու, աշխարհիս, մարմնիս, սատանայի խաբէութիւններին չհաւատալու:

Հայր մեր…

Ողջո՛յն քեզ Մարիամ…

Փառք Հօր…

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՎԷՐՔ
ՏԻՐԱՄԱՅՐԸ ՏԵՍԱՒ ԻՐ ՈՐԴՈՒՆ՝ ԽԱՉԸ ԿՐԵԼԻՍ

Ո՛վ Մայր ցաւագնեալ, ի՜նչ եղաւ սիրտդ, երբ Յիսուսի բռնուելը իմանալով՝ ելար Նրան գտնելու եւ տեսնելու: Առաջին տեսնելդ ա՛յս եղաւ, որ Յիսուս Կուսածնին աչքովդ տեսար. զաւակդ արիւնլուայ եղած, խաչը շալակած քայլում էր: Նրան շրջապատել էին դահիճներ, զինուորներ, կատաղի անգութ հրեաներ, օգնում էր միայն Սիմէոն Կիւրենացին, որ խաչի ծայրից բռնած՝ հետն էր գնում, որովհետեւ Յիսուսի վրայ ուժ չէր մնացել հարուածներից, ծեծուելուց, իր Սուրբ Արիւնը թափելուց: Եւ ահա՛ տեսար այն ամենակարող Բանն Աստծուն, որ ամբողջ աշխարհն իր ձեռքի վրայ էր տանում, սակայն ուժը սպառուելուց՝

գետնին ընկաւ աչքիդ առջեւ, անգութ դահիճները փոխանակ ողորմելու՝ զարկելով ուզում էին վեր բարձրացնել Նրան:

Ա՜խ, ի՞նչ եղաւ արդեօք այն ժամանակ սիրտդ մայրական: Եթէ Երուսաղեմի օտար կանայք, որ չէին ճանաչում Նրա աստուածութիւնը, լալիս էին, ողբում, ի՞նչ եղար արդեօք այն ժամանակ դու՛, որ ճանաչում էիր Նրա աստուածութիւնը, Նրա կուսածին լինելը, Նրա սուրբ վարքը, Նրա անմեղութիւնը: Ի՞նչ եղաւ սիրտդ, երբ աչքդ Յիսուսի աչքերին հանդիպեց, ինչպէ՜ս գորովով լցուեց, ճմլուեց սիրտդ:

Մէկ անգամ էլ յիշեցիր Սիմէոն ծերունու խօսքը, եւ Աստուծոյ կամքը՝ մարգարէների բերանով նախապէս ասուած, թէ Միածին Որդիդ այսպէս պիտի չարչարուի, արիւնլուայ լինի, գետնին ընկնի, որպէսզի ամբողջ մարդկութիւնը փրկուի, եւ դու էլ, Յիսուսի հետ միակամ, միաբան, սրտովդ Երկնաւոր Հօրը նուիրուեցիր:

Ահա՛, ե՛ս եմ այդ մեղաւորների գլուխը, ինձ փրկելու համա՛ր Յիսուս այդ խաչը տարաւ, դու էլ իր հետ մէկտեղ խաչուեցիր, իմ չարաչար մեղքերս քաւելու համար մէկտեղ խորովուեցիր: Ուրեմն, ո՜վ Մա՛յր Աստծոյ, ոչ իմ արժանաւորութեան համար, այլ միայն Յիսուսի եւ քո կրած տառապանքներդ ի զուր չլինելու համար, այսօր զօրաւոր մի շնորհք պարգեւի՛ր ինձ՝ հինգերորդ վէրքիդ շնորհիւ, որ

Յիսուսի չարչարանքները, խաչուելը ես էլ յստակ տեսնեմ՝ հաւատքի աչքով, մեղքերիս գարշութիւնն իմանամ, ճշմարիտ զղջմամբ ապաշխարեմ: Շնորհք տո՛ւր, որ ես էլ Յիսուսի նման յօժարութիւն ունենամ՝ խաչ կրելու, եւ ինչպիսի խաչ էր, որ Աստուած ուղարկի՝ սիրով տանեմ, չդժգոհեմ:

Հայր մեր…

Ողջո՛յն քեզ Մարիամ…

Փառք Հօր…

ՎԵՑԵՐՈՐԴ ՎԷՐՔ
ՏԻՐԱՄԱՅՐԸ ՏԵՍԱՒ ԻՐ ՈՐԴՈՒ ԽԱՉՈՒԵԼԸ

Ո՛վ Սուրբ Կոյս ցաւագին, ինչպիսի՜ զարհուրելի տեսարան եղաւ, երբ Յիսուս խաչը շալակած, յոգ-նած՝ Գողգոթա լեռը հասաւ: Այնտեղ աչքովդ տեսար, որ զինուորները խաչի վրայ տարածեցին, սուրբ ձեռքերը ձգելով, տարածելով՝ խոշոր գամերով գամեցին: Ա՜խ, ի՜նչ եղաւ մայրական սիրտդ, երբ գամուելու ձայնը լսեցիր. գիտէիր, որ տախտակ չէր, որ գամում էին, այլ Մարմի՛նը կուսածին, քո միամօրիկ Միածին Որդւոյդ ձեռքերն էին, որ տախտակի պէս գամում էին: Գամելուց յետոյ տեսար, որ այն կուսածին Յիսուսին աւա-զակի պէս խաչի վրայ բարձրացրին՝ ամբողջ աշխարհի առաջ անարգ մի տեսարան սարքելով, եւ մարմինը չորս կողմից վիրաւոր, արիւնը գետնի վրայ հոսում էր, հողն էր թրջում:

Յիշի՛ր այս բոլոր կրածներդ, Սուրբ Աստուածածին, յիշի՛ր առջեւդ եղած ողորմելի տեսարանը, ժամդ ցաւագին, երբ թէ Աստուած հրաշքով չպահէր, հազար անգամ կը մեռնէիր: Եւ յիշելով դրանք՝ բացի՛ր շնորհներով իմ հաւատքիս աչքերն էլ, որ ես էլ մտքովս աչքիս առջեւ տեսնողի պէս տանեմ այս կսկիծը, երբեք սրտից չհանեմ Յիսուսի չարչարանքները, այլ միշտ յիշելով՝ լամ, ողբամ իմ մեղքերը, որոնք պատճառ եղան Յիսուսի չարչարանքների, եւ քո հազարաւոր վշտերի համար:

Հիմա, որ ես բոլորովին ապաւինած, փաթաթուած կանգնել եմ այս Սուրբ Խաչի տակ, այսօր կատարեալ թողութիւն առնել տո՛ւր իմ մանկութիւնից ի վեր գործած մեղքերիս, որովհետեւ երբ աստուածային արդարութիւնը տեսնի Յիսուսի այս չարչարանքները, ու կրածդ տառապանքն ինձ համար, գութը կը շարժուի, կը ողորմի ինձ, եւ ես կ՛արդարանամ Յիսուսի չարչարանքների պտուղներով եւ քո վէրքերի միջնորդութեամբ: Եւ այսպէս սրբերի հետ ընկերանալով՝ յաւիտեան կը փառաւորեմ Ամենասուրբ Երրորդութիւնը, եւ քեզ կը մեծարեմ՝ որպէս Մայր կենաց եւ փրկութեան:

Հայր մեր…

Ողջո՛յն քեզ Մարիամ…

Փառք Հօր…

ԵՕԹՆԵՐՈՐԴ ՎԷՐՔ
ՏԻՐԱՄԱՅՐԸ ԳՐԿԵՑ ԻՐ ՄԵՌԱԾ ՈՐԴՈՒ ՄԱՐՄԻՆԸ

Ո՛վ Մայր ցաւագին, որ Միածին Որդուդ հետ միասին մինչեւ վերջ կրեցիր սրտիդ մէջ այն ամէնն, ինչ որ Յիսուս կրեց իր մարմնով՝ բոլորի՛ս համար: Յիսուս ամէն բան կրելուց յետոյ, իր յաղթանակը տարաւ՝ սրբագնեալ հոգին աւանդելով Երկնաւոր Հօր ձեռքերում: Բայց քո վէրքերը, Մա՛յր ցաւագին, չաւարտուեցին, մանաւանդ, աւելի սաստկացան, երբ աչքովդ տեսար Յիսուսի մեռնելը, երբ զրկուեցիր Յիսուսի կենդանի տեսիլքից, երբ կենդանի Յիսուսի փոխարէն մեռեալ Յիսուսին աչքիդ առջեւ խաչից իջեցրին եւ, բոլորովին խոցոտուած, արեան մէջ թաթախուած՝ գիրկդ տուեցին:

Ա՜խ, յիշի՛ր այդ ցաւագին ժամը, ով Մայր ցաւերի. որչա՜փ փոխուած տեսար մարմինը Որդուդ, ո՜ր վէրքին էիր նայում, արդեօք փշեղէն պսակի՞ն, թէ՞ ձեռքի ծակերին, թէ՞ ոտքին ու կողին եւ մարմնի պատռուածքին: Ի՞նչ եղաւ այդ ժամանակ սիրտդ, ո՛վ Մայր ծովացեալ վշտերի, յիշի՛ր որ, սրանք բոլորն էլ ի՛մ եւ բոլորիս պատճառով կրեցիր:

Հիմա ես՝ գլուխս մեղաւորների, մեղքերիս ծանրութիւնից յուսահատուած՝ ահա այդ սոսկալի օրն եմ յիշեցնում քեզ, ով Մա՛յր Ողորմութեան: Մեծ են Յիսուսի եւ քո կրածները, մի՛ թող, որ մեղքերս

ունայն դարձնեն այդ տառապանքը, անտանելի են այն կսկիծները, որոնք կրեցիր սրտիդ մէջ, անպտուղ մի՛ թող ցաւերդ՝ իմ չարութեան պատճառով: Այլ ի խորոց սրտի աղաչում եմ, հոգա՛ իմ փրկութեան համար, որովհետեւ եթէ ես միայնակ մնամ, չեմ կարող փրկուել, դո՛ւ ես իմ միակ յոյսը:

Ո՛վ Մայր Աստծոյ, Թագուհի Երկնի եւ երկրի, եւ գանձարան Յիսուսի շնորհների, երբ ցոյց տաս քո վերջին վէրքը՝ միւս վէրքերիդ հետ մէկտեղ, եւ մի քանի խօսքով բարեխօս լինես իմ փրկութեան համար, յիրաւի կը գթայ Երկնաւոր Հօր սիրտը, իմ դատապարտութեան վճիռն էլ կը պատռի, ինձ Արքայութեան կը հասցնի՝ քո անուանդ շնորհիւ: Այն ժամանակ այս քաշածներդ իզուր չեն լինի ինձ համար, այն ժամանակ ես՝ ողորմելի մեղաւորս, կը լինեմ փառք պարծանք՝ քու անուանը, ամենքն էլ կ՛իմանան, որ ինձ պէս մեղաւորը պիտի դատապարտուէր, եւ միայն քո եօթը վէրքերի միջնորդութիւնն ինձ փրկեց:

Դրա համար, իմ կենդանութեան ժամանակ այս երեք շնորհներն եմ խնդրում քեզանից: Նախ, երբ սատանան ինձ փորձութեան մէջ գցի, եւ ես քո եօթը վէրքերի բարեխօսութիւնը հայցեմ, օգնութեան կանչեմ, Երկնքից հասի՛ր ինձ, երկնային զօրութիւնդ ուղարկի՛ր, ինձ մեղքերից պահի՛ր, թոյլ մի՛ տուր, որ այն փորձութեան մէջ ընկնեմ: Երկրորդ, մեռնելուց առաջ կատարեալ զղջմամբ Սուրբ

Հաղորդութեան խորհրդին արժանի արա՛ ինձ: Եւ երրորդ, ինչպէս Յիսուսի մահուան պահին մօտը գտնուեցիր, իմ մահուանս ժամանակ էլ մօտս եղի՛ր, որ Սուրբ Հաղորդութեամբ մէկ մարմին եմ եղել Յիսուսի հետ, շնորհներով Երկնքից հասնելով՝ ինձ մխիթարի՛ր, եւ հոգուս թշնամիներից ազատի՛ր ինձ:

Այս աղաչանքս Միածնիդ մեռած օրուայ յիշատակի համար եմ խնդրում, ով Մա՛յր գթութեան, ընդունի՛ր, լսի՛ր հիմա, եթէ մեռնելու ցաւագին օրս չկարողանամ աղաչել: Եւ մեռնելուցս յետոյ էլ բարեխօսութեամբդ ինձ պարզերես հանի՛ր Յիսուսի դատաստանի առջեւ, որ փրկութիւն գտնելով՝ քեզ եւ քեզնով Յիսուսի՛ն միայն յաւիտեան փառաւորող լինեմ Իր Արքայութեան մէջ. Ամէն:

Հայր մեր…

Ողջոյն քեզ Մարիամ…

Փառք Հօր…

ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ ԱՌ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴՆ ՔՐԻՍՏՈՍԻ[59]

Հայր մեր …

---

59 Այս աղօթքը, որ հայ կաթողիկէ համայնքներում տարածել են Մխիթարեան միաբանութեան հայրերը, սկսում են ասել նոյեմբերի 29-ից, ամեն օր՝ մինչեւ դեկտեմբերի 23-ը ներառեալ, որ լինում է 25 օր: Այդ 25 օրերի ընթացքում ամէն օր ասւում է 40 ողջոյն՝ աւանդական 50-ի փոխարէն, որ վերջում ընդհանուր թուով ստացւում է 1000

Հրեշտակ Տեառն …
Փառք Հօր …

Օրհնեալ է ժամն այն, ո՛վ Կոյս Մարիամ,
յորում եղեր Մայր Աստուծոյ:
Ողջոյն քեզ, Մարիամ … (տասն անգամ)
Փառք Հօր …

Օրհնեալ է ժամն այն, ո՛վ Կոյս Մարիամ,
Յորում ծնար զՈրդին Աստուծոյ:
Ողջոյն քեզ, Մարիամ … (տասն անգամ)
Փառք Հօր …

Օրհնեալ է առաջին շիթն կաթին,
Ո՛վ Կոյս Մարիամ,
Զոր դիեցաւ ի ստեանց քոց
Որդին Աստուծոյ:
Ողջոյն քեզ, Մարիամ … (տասն անգամ)
Փառք Հօր …

Օրհնեալ է առաջին համբոյրն այն,

ողջոյն: Այս խորհրդաւոր եւ գեղեցիկ աղօթական շրջանը իւրօրինակ հոգեւոր պատրաստութիւն է Յիսուս Մանկան Սուրբ Ծննդեանը՝ Աստուածամօր հետ միասին եւ Նրա առաջնորդութեամբ եւ մի լաւագոյն առիթ է՝ հարստանալու Սուրբ Կոյսի՝ իր Նորածին Որդուց խնդրած աստուածային շնորհներով:

ո՜վ Կոյս Մարիամ, զոր ետուր աստուածային շրթանց

Որդւոյն Աստուծոյ:

Ողջոյն քեզ, Մարիամ … (տասն անգամ)

Փառք Հօր …

Ողջ լեր, Թագուհի …

Եզրափակիչ աղօթք՝ վերջին օրուայ՝ դեկտեմբերի 23-ի համար.

Ո՜վ հզօր Թագուհի հրեշտակների, Սրբուհի՜ եւ Մա՛յր Քրիստոսի, գթած եւ ողորմած Տիրուհի՜, մենք՝ Քո անարաժան որդեգիրներդ, խոնարհուելով ամենասուրբ ոտքերիդ առջեւ, աղաչում ենք Քեզ, ընդունի՜ր տառապեալ եւ մեղաւոր ծառաներիդ Սուրբ Վարդարանի այս խոնարհ աղօթքը, որ անարժանապէս մատուցեցինք Քո մեծութեանը: Եւ այժմ աղաչում ենք Քեզ՝ Տիրամայր եւ Կոյս, հազար ողջոյնների փոխարէն մեզ համար Քո Նորածին Որդուցդ ընդունի՜ր շնորհներ, որպէսզի մեր կենդանութեան օրերին զղջանք մեր մեղքերի վրայ ամբողջ սրտով եւ մահուան ժամին անվտանգ հասնենք յաւիտենական կեանքին. ամէն:

ՏՕՆԱԿԱՆ ՇԱՐԱԿԱՆՆԵՐ

ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

ԴԿ. **ԽՈՐՀՈՒՐԴ ՄԵԾ** եւ սքանչելի, որ յայսմ աւուր յայտնեցաւ. հովիւքն երգեն ընդ հրեշտակս, տան աւետիս աշխարհի:

Ծնաւ նոր արքայ ի Բեթղեհէմ քաղաքի, որդիք մարդկան օրհնեցէ՛ք, զի վասն մեր մարմնացաւ:

Անբաւելին երկնի եւ երկրի ի խանձարուրս պատեցաւ, ոչ մեկնելով ի Հօրէ, ի սուրբ յայրին բազմեցաւ:

Այսօր ցնծան երկինք ի վերուստ, մեծապայծառ աւետեաք, եւ արարածք ամենայն զգեցան հանդերձ փրկութեան:

Այսօր յայրին ընծայեցաւ Քրիստոս, Որդին Աստուծոյ. եւ հրեղինաց բազմութիւնքն յերկնից յերկիր վայր իջեալ:

Այսօր հովուացն տեսեալ զարդարութեան արեգակն. եւ ընդ հրեշտակս երգէին. փա՛ռք ի բարձունս Աստուծոյ:

Ի Հօրէ ծագեցար, լուսաւորել՝ զարարածս, արդարութեան արեգակն, Տէ՛ր, փա՛ռք քեզ:

Ծընար ի յայրին, ընծայեցաւ Բեթղեհէմ. արդարութեան արեգակն, Տէ՛ր, փա՛ռք քեզ:

Հովուաց յայտնեցար, երկրպագեա՛լդ ի մոգուց, արդարութեան արեգակն, Տէ՛ր, փա՛ռք քեզ:

Եւ մեք երգեսցուք, որ ի Կուսէն մարմնացար, արդարութեան արեգակն, Տէ՛ր, փա՛ռք քեզ:

ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԿՐՏՈՒԹԻՒՆ

ԴՁ. **ԼՈՅՍ Ի ԼՈՒՍՈՅ** ի Հօրէ առաքեցար եւ մարմնացար ի Սուրբ Կուսէն. զի վերստին նորոգեսցես զապականեալն Ադամ:

Դու Աստուած ի յերկրի երեւեցար եւ ընդ մարդկան շրջեցար, եւ փրկեցեր զտիեզերս յանիծիցն Ադամայ:

Քեզ ի յերկնից վկայեալ Հօր քո ձայն, ասէ՝ դա՛ է իմ Որդի, եւ Սուրբ Հոգին զՔեզ յայտնեաց աղաւնակերպ երեւմամբ:

Զքեզ որ Հոգւով եւ հրով մաքրեցեր զմարդկան աղտեղութիւն, որպէս զԱստուած եւ զփրկիչ ամենեքեան օրհնեսցուք:

ՈՎ ԶԱՐՄԱՆԱԼԻ խորհուրդս այս մեծ յայտնեալ:

Արարիչն Աստուած ի Յորդանան եկեալ:

Կամէր մկրտիլ ի ծառայէն իւրմէ:

Չառնոյր Կարապետ զմկրտելն ի յանձն:

Գե՛տ, մի զարհուրիր, քո արարիչն եմ ես,

Եկեալ մկրտիմ եւ լուանամ զմեղս:

ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱՋ

ԱՁ. **ՄԱՐՄՆԱՑԵԱԼԴ** ի Կուսէն նախայաւիտեան Բանդ, այսօր իր տաճարն եկիր կատարել զօրէնս, վասն փրկութեան հեթանոսաց:

Որ յանարուեստ աթոռ նստիս, բարեբանեալդ ի հրեշտակաց, այսօր ի Սիմէովնի բառնալով ի գիրկս, որ ընծայեսցես զմեզ ի կեանսդ յաւիտենից:

ԾԱՂԿԱՁԱՐԴ

ԴՁ. **ԹԱԳԱՒՈՐ ԳՈԼՈՎ** քո յաշխարհ, մտեր ի քաղաքն Երուսաղէմ, նստեալ ի վերայ հողեղէն նոր յաւանակի, կոչել զհեթանոսս յերկրպագութիւն:

Ծերքն ոստովք ձիթենեօք, եւ տղայքն ոստովք արմաւենեօք, եւ երամ դասուքն աղաղակէին. Ովսաննա, օրհնեալ եկեալ ի յանունըն Տեառն:

ՍՈՒՐԲ ՁԱՏԻԿ

ԱՁ. **ԱՅՍՕՐ ՅԱՐԵԱՒ** ի մեռելոց Փեսայն անմահ եւ երկնաւոր, քեզ աւետիք խընդութեան, հարսն ի յերկրէ Եկեղեցի, օրհնեա՛ ի ձայն ցնծութեան զԱստուած քո, Սիոն:

Այսօր անճառ լոյսն ի լուսոյ լուսաւորեաց զմանկունս քո, լուսաւորեա՛ Երուսաղէմ, քանզի յարեաւ լոյս քո Քրիստոս, օրհնեա ի ձայն ցնծութեան զԱստուած քո, Սիոն:

Այսօր խաւարն անգիտութեան հալածեցաւ երրեակ լուսովն, եւ քեզ ծագեաց լոյս գիտութեան,

յարուցեալն ի մեռելոց Քրիստոս, օրհնեա՛ ի ձայն ցնծութեան զԱստուած քո, Սիոն:

Այսօր զատիկ մեր զենմամբ Քրիստոսի արասցուք տօն ցընծութեամբ նորոգեալքս ի հնութենէ մեղաց ասելով. Քրիստոս յարեաւ ի մեռելոց:

ՏՕՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ

ԳՁ. **ՈՒՐԱԽ ԼԵՐ**, սուրբ Եկեղեցի, քանզի Քրիստոս արքայն երկնից այսօր պըսակեաց ըզքեզ խաչիւն իւրով. Եւ զարդարեաց զամուրըս քո սքանչելի փառօքն իւրովք:

Խնդա՛ յոյժ, դուստըր Սիովնի, քանզի երկիրս երկինք եղեն այսօր վերըստին քո նորոգմամբ, եւ թագաւորն երկնաւոր հաճեցաւ բընակիլ ի քեզ:

Ընդ դասս երկնաւոր վերառեալ տօնեմք քեզ այսօր զանդադար փառատրութիւնս, ուրախ լեր հարսն անարատ, անքընին քո խորհրդով:

ԱՍՏՈՒԱԾԱՄՕՐԸ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՇԱՐԱԿԱՆՆԵՐ ԵՒ ԱՅԼ ԵՐԳԵՐ

ՄԱՅՐ ՍՈՒՐԲ[60] սքանչելի լուսոյն, որ զԱստուածն ամենայն յաւիտեանց որովայնի քում կրեցեր, եւ ցնծութիւն աշխարհի ծնար զԲանն Աստուած. աղաչեմք:

---

60 Այս շարականը երգւում է ժամերգութիւնների ընթացքում՝ տէրունական եւ Աստուածամօր տօներին:

Մա՛յր Սուրբ, բարեխօսեա՛:

Աղաչեա՛ վասն մեր զառ ի քէն զմարմնացեալն Աստուած, որ խոնարհեցաւ ի հայրական ծոցոյ. էառ մարմին ըստ մարդկային բնութեանս, առնել խաղաղութիւն յերկինս եւ յերկրի. աղաչեմք:

Մա՛յր Սուրբ, բարեխօսեա՛:

Աղաչեա՛ վասն մեր զառ ի քէն զմարմնացեալն Աստուած, ներել մեզ, անտես առնել զյանցանս մեր եւ տալ օգնականութիւն ընդդիմակաց լինել հակառակամարտիցն ի պատերազմի. աղաչեմք:

Մա՛յր Սուրբ, բարեխօսեա՛:

Աղաչեա՛ վասն մեր զառ ի քէն զմարմնացեալն Աստուած, զի լռեսցեն պատերազմունք, դադարեսցին յարձակմունք թշնամեաց, տնկեսցի սէր եւ արդարութիւն ի յերկրի. աղաչեմք:

Մա՛յր Սուրբ, բարեխօսեա՛:

Աղաչեա՛ վասն մեր զառ ի քէն զմարմնացեալն Աստուած, աճեցուցանել յերկրի մերում զքաղցր բղխումն աղբերաց, զառատ պտղաբերութիւն բուսոց եւ տնկոց, առ ի զուարճալի լինել ամենայն հարկաւոր պիտոյից մերոց. աղաչեմք:

Մա՛յր Սուրբ, բարեխօսեա՛:

Աղաչեա՛ վասն մեր զառ ի քէն զմարմնացեալն Աստուած, զի միաբանեսցէ զԵկեղեցի իւր սուրբ, շինեալ ի վերայ հիման առաքելոց եւ մարգարէից, պահել անարատ մինչեւ յօր երեւելոյ գալստեան իւրոյ.աղաչեմք:

Մա՛յր Սուրբ, բարեխօսեա՛:

Աղաչեա՛ վասն մեր, Սրբուհի՛, զՄիածին քո զՈրդին, եւ վասն հոգւոցն հանգուցելոց՝ ընդունել յարքայութիւն երկնից եւ տալ մասն եւ բաժին ընդ սուրբս ամենայն. աղաչեմք:

Յիշեա՛, Տէր, եւ ողորմեա՛:

Եւ եւս առաւել զյորդորումն սիրոյ եւ զգործս բարեաց պարգեւել մեզ. խնդրեմք:

Տո՛ւր մեզ, Տէր Աստուած մեր:

Զանձինս մեր եւ զմիմեանս Տեառն Աստուծոյ Ամենակալին յանձն արասցուք:

Քեզ Տեառնդ յանձն եղիցուք:

Ողորմեա՛ց մեզ, Տէր Աստուած մեր, ըստ մեծի ողորմութեան քում, ասասցո՛ւք ամենեքեան միաբանութեամբ:

Տէր ողորմեա՛: Տէր ողորմեա՛: Մա՛յր Սուրբ, բարեխօսեա՛ առ Տէր վասն մեր:

(ԳՁ) ՄԵԾԱՑՈՒՍՑԷ՛[61] անձն իմ զՏէր եւ ցնծասցէ հոգի իմ Աստուծով փրկչաւ իմով: Սուրբ զԱստուածածինն օրհնութեամբ մեծացուցանեմք:

Աւետաւոր հրեշտակն աւետարանէր ըզծընեալ Փրկիչն ի սրբոյ Կուսէն:

Ասէ ուրախ լեր բերկրեալդ. քանզի Տէր տերանց է ընդ քեզ:

---

61 Երգւում է Սբ. Պատարագի ընթացքում՝ Սբ. Ծննդեան, Աւետեաց, Աստուածածնի Վերափոխման եւ Տեառնընդառաջի տօներին:

(ԲՁ) ԱՆԿԱՆԻՄՔ առաջի Քոյ, Աստուածածի՛ն,
Եւ աղաչեմք զԱնարատ ըզԿոյսդ:
Բարեխոսեա՛ վասն անձանց մերոց
Եւ աղաչեա՛ զՄիածին Որդիդ
Փրկել զմեզ ի փորձութենէ
Եւ յամենայն վտանգից մերոց:

(ԴԿ) ՍՐԲՈՒՀԻ ՄԱՐԻԱ՛Մ, սափոր ոսկի եւ տապանակ կտակարանաց, որ զի վերուստ զհացըն կենաց պարգեւեցեր քաղցեալ բնութեանս. Առ նա միշտ բարեխօսեա՛ վասն անձանց մերոց:

(ԲՁ) ԱՆԹԱՌԱ՛Մ ԾԱՂԻԿ, անդատապարտ շառաւիղ. վերաբուսեալ յարմատոյն Յեսսեայ. զքեզ Եսայիաս կանխաւ վերագոչեաց՝ եօթնարփեան շնորհաց Հոգւոյն ընդունարան գոլ. Աստուածածին եւ Կոյս, զքե՛զ մեծացուցանե՛մք:

ՄԱՅՐ ԵՒ ԿՈՅՍ[62], աղախին Քրիստոսի,
Որ բարեխօսդ ես միշտ աշխարհի,
Քեզ երանեն ամենայն ազինք:
Մաքուր աղաւնի եւ Հարսն երկնից Մարիամ,
Տաճար եւ աթոռ Աստուծոյ Բանին,
Քեզ երանեն ամենայն ազինք:

---

62 Երգւում է Սբ. Պսակի խորհրդակատարութեան ժամանակ:

Քեւ հաճեցան իմանալիքն ընդ հողեղէնքս
Եւ քեւ մերձեցաք ի փայտն կենաց,
Քեզ երանեն ամենայն ազինք:

(ԴԿ) ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵՒ ՍՐԲՈՒՀԻ. որ զԲանն Աստուած անսերմն յըղութեամբ յարգանդի կրեցեր. անդադար երգով մեծացուցանեմք:

Զքեզ մայր կուսութեան եւ յըղութեան լուսոյ. եւ առագաստ անճառելւոյ բընակողին ի քեզ փեսայացեալ Բանին. անդադար երգով մեծացուցանեմք:

Քեւ լուծան կնիք դատապարտութեանն, եւ քեւ կանգնեցաւ մեղուցեալ մայրըն գլորեալ. վասն որոյ ըզքեզ Աստուածածին եւ Կոյս. անդադար…:

(ԳԶ) ՈՒՐԱԽ ԼԵ՛Ր, ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ, յոյս եւ փըրկութեան մայր. ըզքեզ ընդունող լուսոյ մեծացուցանեմք:

Ըզքեզ լուսոյ մայր եւ կոյս. ըզքեզ գանձըդ կենաց աստուածային. ձայնիւ ցընծութեամբ մեծացուցանեմք:

Մա՛յր սուրբ անարատ լուսոյն. հրեշտակային օրհնութեամբ պատուեալ ըզքեզ մեծացուցանեմք:

(ԳԿ) ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՆԿ խընկաբեր ծառ, յանուշահոտ բուրաստանէն, որ ի գնացս Հոգւոյն վըտակաց տընկեցար, եւ զանմահութեան պըտուղն ի ժամու ետուր մեզ. վասն որոյ ամենեքեան ըզքեզ

միշտ մեծացուցանեմք: Զանապական բողբոջն յաստուածային դրախտէն յորովայն քո տնկեալ՝ բըղխեցեր յարմատոյն Յեսսեայ, ծաղիկ վայելուչ, կուսական ծնընդեամբ. վասն որոյ ամենեքեան ըզքեզ միշտ մեծացուցանեմք: Յարփւոյն լուսոյ ծագումն ի քեզ վառեաց ըզճրագ մարմնոյն լոյս աշխարհի, որով գըտեալ զպատկերն իւրական, զոր վերստին նորոգեաց յառաջին կերպարանն. վասն որոյ բարեխօսեա՝ նորոգել ըզմեզ ի հնութենէ մեղաց:

(ԳԿ) ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԽՈՐԱՆ ԼՈՒՍՈՅ, անվայրաբնակ արփւոյն կենաց, որ եղեր արեւելք արեգականն արդարութեան, եւ Նստելոցս ի խավարի լոյս ծագեցեր, վասն որոյ ամենեքեան ըզքեզ միշտ մեծացուցանեմք:

Անապական տաճար եւ մորենի անկիզելի, որ զանշէջ հուր աստուածութեանն ի քեզ տարեալ կրեցեր, որով բնութեանս կիզեալ շիջաւ կրից բոց. վասն որոյ ամենեքեան ըզքեզ միշտ մեծացուցանեմք:

Կենդանի տապանակ կտակարանաց նորոյ ուխտիս, որով ելք յերկիր աւետեաց հորդեալ. Հոգւով ի քեզ տըպաւորեալ Բանին. վասն որոյ ամենեքեան ըզքեզ միշտ մեծացուցանեմք:

(ԲԿ) ՍԻՒՆ ԼՈՒՍՈՅ եւ ամպ հովանի սուրբ Կոյս, որ ցօղեցեր ի մեզ ըզցօղն երկնային. զքեզ բարեբանեմք, Աստուածածին Կոյս:

Անկէզ մորենի եւ սրովբէ հողեղէն սուրբ Կոյս. քանզի պըտուղըն կենաց ի քէն տըւաւ մեզ. զքեզ բարեբանեմք, Աստուածածին Կոյս:

Անիծից լուծիչ եւ քաւիչ մեղաց, սուրբ Կոյս, որ զանտանելին յէից ի գիրկըս քո բարձեր. զքեզ բարեբանեմք, Աստուածածին Կոյս:

(ԴՁ) ՈՒՐԱԽ ԼԵՐ, ՄԱՐԻԱՄ, Սուրբ Աստուածածին, զի ի տաճարիդ մաքրեցելոյ յանկարծակի եկըն Տէր. ըզքեզ օրհնութեամբ մեծացուցանեմք:

Ուրախ լեր, դուռըն փակեալ, ընդ որ ոչ ոք մըտեալ, բայց Տէր Աստուածն Իսրայելի. ըզքեզ օրհնութեամբ մեծացուցանեմք:

Ուրախ լեր, աղբիւր կնքեալ ջրոյն կենդանութեան, զոր ծարաւելոյ բնութեանս ետուր ի յարբումն. ըզքեզ օրհնութեամբ մեծացուցանեմք:

(ԱԿ) ԽՈՐՀՈՒՐԴՆ ԱՆՃԱՌ ծածկեալն յազգաց եւ յաւիտեանց իջմամբ հրեշտակապետին այսօր առ Կոյսըն Մարիամ. զոր առ Տէր ունիմըք բարեխօս վասն անձանց մերոց:

Անժամանակն առ ի Հօրէ եւ անմարմին ծոցածին ծընունդ, այսօր աւետեօքըն Գաբրիելի մարմին

զգենու ի սրբոյ Կուսէն. զոր առ Տէր ունիմըք բարեխօս վասն անձանց մերոց:

Անտանելին ի համայնից բովանդակիչ բնութեանց բոլորից. պարագրի այսօր մարդասիրապէս յորովայնի անարատ Կուսին. զոր առ Տէր ունիմըք բարեխօս վասն անձանց մերոց:

(ԲՁ) ԸԶՔԵԶ ԿՈՅՍ ԵՒ ՄԱՅՐ եւ բնակարան աստուածային ներմարդութեան, գոհաբանեմք եւ վերօրհնեմք զեղեալ փրկող կենդանութեան ազգի մարդկան. վասն որոյ ըզքեզ, Աստուածածին եւ Կոյս, բարեբանեմք զմայր եւ զաղախին Փրկիչն մերոյ:

Ծընունդն Հօր եւ հինավուրց, անժամանակն յաւիտենից. ժամանակաւ յորովայնի քում բնակեցաւ եւ ի Հօրէ ոչ մեկնեցաւ. վասն որոյ ըզքեզ, Աստուածածին եւ Կոյս, բարեբանեմք զմայր եւ զաղախին Փրկիչն մերոյ:

Ըզքեզ ոչ միայն որդիք մարդկան այլ եւ վերին զօրութիւնք, դասք անմարմնոց հոգեղինաց հրեղինաց զուարթնոց եւ հրեշտակաց գոհաբանեն եւ վերօրհնեն եւ փառաւորեն ըզմայր եւ զաղախին Փըրկիչն մերոյ:

(ԳՁ) ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ, ԵՐԿՆԱՅԻՆ ԴՈՒՌՆ, աստուածային ձայնիւն աւետարանէր հրեշտակն. ուրախ լե՛ր, բերկրեա՛լդ, Տէր ընդ քեզ:

Ի քերովբէս բազմեալ ընդ Հօր անապականաբար բնակիլ հաճեցաւ ի քում յորովայնի. ուրախ լե՛ր, բերկրեա՛լդ, Տէր ընդ քեզ:

Որ բոցեղէն սրովբէիւք շրջապակեալ պահիւր, այսօր ի մէջ մարդկան ի գիրկըս հողեղինի յայտնեալ. ուրախ լե՛ր, բերկրեա՛լդ, Տէր ընդ քեզ:

(ԴԿ) ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ, ՏԱՃԱՐ լուսոյ. որ մարմնով պարագրեալ անճառաբար ծընար ըզԲանն Աստըւած. զքեզ բարեբանեալ մեծացուցանեմք:

Ուրախ լե՛ր եւ բերկրեա՛, Մա՛յր եւ Կոյս. քանզի ծնեալն ի կուսէդ այսօր վերըստին յարութեամբ ծընաւ ի կոյս գերեզմանէն. զքեզ բարեբանեալ մեծացուցանեմք:

Ցընծա՛ եւ զուարճացի՛ր, հարսն ի յերկրէ երկնից, քանզի այսօր երկնայնոցն իջեալ տային քեզ զաւետիս յարութեան միածնի Որդւոյ քոյ. զքեզ բարեբանեալ մեծացուցանեմք:

(ԴՁ) ՄԱՅՐ ԼՈՒՍՈՅ, ՄԱՐԻԱՄ, սուրբ Կոյս, որ ըզլոյսն առ ի Հօրէ ծընար մարմնով. եւ եղեր արեւելք արեգականն արդարութեան. հոգեւոր երգով ըզքեզ, Սըրբուհի, մեծացուցանեմք:

Քերովբէից գերագոյն Էին աթոռ, եւ ծառ կենաց անմահական պըտղոյն. տապանակ կըտակի Բանին եւ սափոր ոսկի երկնային մանանային. հոգեւոր երգով ըզքեզ, Սըրբուհի, մեծացուցանեմք:

Քեւ բացաւ սրովբէական դուռն դրախտին. եւ քեւ տուաւ մեզ փայտն անմահութեան. զոր ի նմա զենեալն անմահ այսօր յերկնից լուսաւորեաց, հոգեւոր երգով ըզքեզ, Սըրբուհի, մեծացուցանեմք:

(ԴԿ) ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ, ՄԱՅՐ լուսոյ. արեգականն արդարութեան արեւելք, որ ի խաւար աշխարհի ծագեցեր ըզլոյսըն գերազանց. օրհնութեամբ ըզքեզ բարեբանեալ մեծացուցանեմք:

Ամպ թեթեւ լուսաւոր, անընդունակ խոնաւութեան. որ ըզցօղըն կենաց ի ցամաքեալ բնութիւնս ցօղեր. օրհնութեամբ ըզքեզ բարեբանեալ մեծացուցանեմք:

Սերովբէ հողեղէն. եւ մարմնաւոր քերովբէ, որ զանտեսն ի նոցունց յորովայնի քում կրեցեր. օրհնութեամբ ըզքեզ բարեբանեալ մեծացուցանեմք:

(ԴՁ) ԱՅՍՕՐ ԺՈՂՈՎԵԱԼ սըրբոցն ի միասին, երանելի առաքեալքն եւ սուրբ կուսանքն. ջահազգեստուք պայծառացեալ լուցանէին ըզլապտերս իւրեանց, եւ միաձայնեալ ասէին. Օրհնեա՛լ ես, ամէնաօրհնեալդ ի կանայս:

Այսօր տեսեալ ըզսուրբ Կոյսըն թռուցեալ յօդս, եւ ամպեղէն կառոքն ի վեր համբարձեալ յերկինս, մըտանելով յերկնային խորանսն ընդ իմաստուն կուսանսն. եւ նոցա միաձայնեալ ասէին. օրհնեա՛լ ես, ամէնաօրհնեալդ ի կանայս:

Այսօր զազատիչը յանցանաց նախամօրն ըզկուսութեանց մայրն. փոխադրեաց Բանն Աստուած յերկնայինսըն, դասելով յաստուածակերտ խորանսն եւ յանպատում ի կեանս. վասն որոյ հրճուողական ձայնիւ քեզ երգէ Եկեղեցի սուրբ ըզընոր զօրինաբանութիւն:

(ԳԿ) ԵՐԳԵՑԷՔ, ՈՐԴԻՔ ՍԻՈՎՆԻ, երգ նոր ի ծնընդեան Մօր Տեառն. քանզի որ ծընաւ զանժամանակն ի Հօրէ ծընեալն, այսօր ծընաւ յամուլ արգանդէ. տո՛ւք օրհնութիւն տուողին մեզ ըզմայրըն լուսոյ:

Ցընծացէ՛ք, որդիք մարդկան, այսօր, ծնընդեամբ սըրբուհւոյ Կուսին. քանզի որ տարաւ զանտանելին յարգանդի անսերմնապէս, այսօր բըղխեաց յարմատոյն Յեսսեայ. տո՛ւք օրհնութիւն տուողին մեզ ըզմայրըն լուսոյ:

Ուրախութիւն աշխարհի, ծընաւ զՄարիամ ամուլն Աննա, աւետեաք զուարթնոյն. որ զտուողն օրինաց հընոյն՝ ծնեալ մարմնով, պարգեւիչ նորոյս կտակի. տո՛ւք օրհնութիւն տուողին մեզ ըզմայրըն լուսոյ:

Խնդա՛, մայր Բանին, ի Հօրէ ծնեալ՝ նախ քան զարուսեակ, որ ըզլոյսն երկնային ծագեցեր մարդկան, ըզլուծիչ մեղաց մըթութեան. մաղթեա՛ Բանին, փրկել ըզմեզ ի մեղաց մերոց:

(ԳԿ) ԾԱՌ ԿԵՆԱՑ տընկեալ յադին սուրբ Կոյս, որ ըզհայրածինըն բղխեցեր զծաղիկ եւ ետուր ի ժամու զՈրդին պըտուղ մարդկան, զորոյ զմարմինըն ճաշակեալ անմահացան յուսով. վասն որոյ օրհնաբանեմք ըզքեզ յաւուր քո ծնընդեան:

Բանաւոր երկիր, Տիրուհի, եւ անդաստան մաքուր ի փշոց մեղաց, որ ըզբոյսն երկնային առանց սերման ծընար, որով զկենացն ետուր զհաց սովեալ բնութեանս. վասն որոյ…

Ամպ թեթեւ յերկնային ցանկութեանց, սուրբ Կոյս, եւ վառարան աստուածային բոցոյն, որ ըզցօղն հայրաբուղխ անձրեւեցեր ի բանական երկիր, որով բնութեանս բուսան արդարութեան սուրբ բոյսք. վասն որոյ …

(ԴՁ) ՆՈՐ ՍԻՈՎՆ ծնեալ մանկունք սուրբ աւազանաւն, շնորհազարդեալք Հոգւովն Աստուծոյ, օրհնեցե՛ք զՀայրն երկնաւոր՝ յաւուր ծննդեան Սրբուհւոյ Կուսին, յոր օրհնեցայք յանիծից նախնոյն:

Արեամբ Գառինն անարատի փրկեալ ժողովուրդք, յաւուր ծննդեան Մօր անտանելւոյն, գովեցէք զՄիածինն, որ հաճեցաւ առնուլ մարմին անսերմն ի նմանէ, յոր օրհնեցայք յանիծից նախնոյն:

Յառատաբուղխ շնորհաց Հոգւոյն լուսազարդեալ ազգք հեթանոսաց, յաւուր ծննդեան Մօր Բանին ծնողի, ըզփառակից Որդւոյ զՀոգին

բարեբանեցէ՛ք հոգեւոր երգով, որ մաքրազարդեաց զմարմնարանն Որդւոյն:

(ԴՁ) ՈՒՐԱ՛Խ ԼԵՐ, ՄԱՐԻԱՄ, Կո՛յս անապական, զի ի հայրական ծոցոյ անմեկնելի Որդին ի քո յանձն առնու բնակիլ յորովայնի:

Ուրա՛խ լեր, երկի՛ն վեհագոյն, քրովբէ հողեղէն, որ զանտանելին երկնից եւ հրեղինաց դասուցն ի քո ընկալար մաքրական յորովայնի:

Ուրա՛խ լեր, սի՛ն հրեղէն, լուսոյն աշտանակ, որ զարարչականն եղականաց լուսոյ ի քեզ տանելով, ծագեցեր խաւարելոց:

Ուրա՛խ լեր, սափո՛ր ոսկի՝ երկնային հացին, որ զառ ի վերուստ իջեալ ըզմանանայն կենաց նորոյս պարգեւեալ կերակուր Իսրայելի:

Ուրա՛խ լեր, ամպ թեթեւ, գեղմն իմանալի, որ ի բանական երկիր հեղեր զանձրեւ կենաց, արդիւնս ընդ գործոյ հաւատոյ պտղաբերեալ:

Ուրա՛խ լեր, դու՛ստր լուսոյ, մայր անհարսնացեալ, քանզի յղացելոյն ի քէն համախմբեալ վերնոցն, որդիք Սիովնի երգեն զփառս ի բարձունս:

(ԱԿ) Ո՛Վ ԳԵՐԱՀՐԱՇ ԾԱՂԻԿ, բուրեալ յԵդեմայ հոտ անմահութեան ծնընդոցս Եւայի, յորմէ սըփռեցաւ մահ ընդ տիեզերս. օրհնութեամբ զքեզ մեծացուցանեմք:

Դու՛, լուծի՛չ երկնաց, բարձող անիծից, կոյս անհարսնացեալ, մայր անարատ Էմմանուելի,

տաճար Բանին Հօրն երկնաւորի. օրհնութեամբ զքեզ մեծացուցանե՛մք:

Զքե՛զ ունիմք բարեխոս, Կոյս անհարսնացեալ, մայր անարատ Եմմանուէլի, տաճար Բանին Հօրն երկնաւորի. օրհնութեամբ զքեզ մեծացուցանեմք:

(ԳԿ) ԱՂԲԻՒՐ ԿԵՆԱՑ բղխեալ յԵդեմայ, Սուրբ Աստուածածին, որով արբեցաւ երկիր ծառաւուտ Հոգւոյն իմաստիւք, տալ մեզ մաղթեա՛ աղբիւրս արտասուաց, մաքրել ըզմեզ ի մեղաց մերոց:

(ԲՁ) ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԱՆՀԱՐՍՆԱՑԵԱԼ, յերկրէ երկնից հարսն ընծայեալ, յորժամ բազմիս լուսոյ նըման՝ քո Միածնիդ յաջակողմեան, յայն-ժամ մաղթեա՛ ընդ մեր զնոյն՝ փրկել ըզմեզ յանեղ բոցոյն, համադասիլ ընդ արդարոցն, երգել ըզփառս ընդ երկնայնոցն:

ԲԱՐԵՊԱՇՏԱԿԱՆ ԵՐԳԵՐ

ՍՈՒՐԲ ԾՆՆԴԵԱՆ ԵՐԳԵՐ
ՔՐԻՍՏՈՍ ԾՆԱՒ ԵՒ ՅԱՅՏՆԵՑԱՒ

Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ,
Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ,
Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ:
Այսօր տօնն է Սուրբ Ծննդեան,
Տեառն մերոյ եւ յայտնութեան,
Այսօր արեւն արդարութեան,
Երեւեցաւ ի մէջ մարդկան,
Այսօր հրեշտակք յերկնից իջան,
Ընդ մեզ օրհնեն զանմահ արքայն:
Քրիստոս ծնաւ,
Քրիստոս ծնաւ,
եւ յայտնեցաւ (*կրկներգ*)
Նմա փառք յաւիտեանս, ամէն:

ԱՅՍՕՐ ՏՕՆՆ Է ԾՆՆԴԵԱՆ

Այսօր տօնն է ծննդեան, աւետիս,
Տեառն մերոյ եւ յայտնութեան, աւետիս,
Այսօր արեւն արդարութեան, աւետիս,
Երեւեցաւ ի մէջ մարդկան, աւետիս:

Այսօր Սուրբ Կոյս անապական, աւետիս,
Ծնաւ եբեր զանմահ արքայն, աւետիս,

Այսօր հրեշտակն յերկնից իջեալ, աւետիս,
Ընդ մեզ օրհնեն զանմահ արքայն, աւետիս:

ԼՈՒՌ ԳԻՇԵՐ, ՍՈՒՐԲ ԳԻՇԵՐ

Լուռ գիշեր սուրբ գիշեր
Ծով ու ցամաք քնով են խաղաղ
Մեղմ կը փայլի աստղը Բեթղեհեմէ
Եւ հեռուէն շատ աչքեր կը գրաւէ
Հոն՝ ուր Փրկիչը ծնաւ: *(կրկ.)*

Լուռ գիշեր սուրբ գիշեր
Երգ մը ահա հովտին վրայ
Հրեշտակներուն անթիւ խումբը կ՚երգէ
Երգ՝ որ ցնծման աւետիս կը բերէ
Տէրը, Փրկիչը, եկաւ: *(կրկ.)*

Լուռ գիշեր սուրբ գիշեր
Ով դու երկիր ալ առթնցիր
Քու օրհնութիւնը դարդ վեր թող ելլէ
Փառք Աստուծոյ ի բարձունս երգէ
Խաղաղութիւն աշխարհի: *(կրկ.)*

ԵՐԳԵՐ՝ ՍՈՒՐԲ ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ ԵՐԿՐՊԱԳՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

ՍԷՐ ԱՆՈՒՆ ՅԻՍՈՒՍ

Սէր անուն Յիսուս

Սիրով քո ճըմլեա,
Սիրտ իմ քարեղէն:
Վասըն գըթութեանդ
Վասն ողորմութեանդ,
Վերստին կեցո:

Տենչալի տեսլեամբ
Տուր ինձ յագենալ,
Տէր Յիսուս Քրիստոս:
Ռաբուն երկնաւոր,
Ռոտեա զաշակերտս
Ռամից երկնայնոց:

ԵՐԿՐՊԱԳԵՄ

Երկրպագեմ տենչմամբ սրտիւ (կրկ.)
Աստուածութեան.
Ստուգիւ ծածկեալ զգալի ձեւօք յայսմ
խորհրդեան:
Քեզ խոնարհի սիրտ իմ բոլոր (կրկ.)
Որպէս արժան,
Զի զքեզ տեսեալ ոչ հանդարտի
Քոյ մեծութեան:
Ի խաչին էր Աստուածութիւնն (կրկ.)
Անյայտ միայն.
Իսկ աստ թաքչի եւ մարդկութիւն
համանգամայն:
Ո՛վ յիշատակ մշտակառոյց (կրկ.)

Տեառն մահուան,
Հաց կենդանի, կենդանարար ազգի մարդկան:

ԵՂԻ՛Ր ՅԻՍՈՒՍ

Եղի՛ր Յիսուս, ինձ զով աղբիւր,
Թող սրբուին մեղքերս բիւր,
Հոգիս շնորհքովդ վերականգնի,
Ժպտի նորէն երկինքն ինծի:

Եղի՛ր Յիսուս, ինձ ճոխ սեղան,
Խմցուր արիւնդ արքայական,
Աստուածային մարմինը դ տուր
Հիւծած հոգւոյս դեղ, կերակուր:

Եղի՛ր Յիսուս, ինձ ապաւէն,
Երբոր մեղքերս զիս կը փորձեն,
Գամէ՛ ոտքերս որ չըգայթիմ,
Ու չըխաչեմ քեզ, Աստուած իմ:

Եղի՛ր Յիսուս, ինձ օթեւան,
Խաչըդ ըրէ սրտիս խորան,
Կողը դ՝ աղբիւր ինձ անապակ,
Փուշէ պըսակդ՝ գլխուս թագ:

ԱՆՁՆ ԻՄ ԱՀԱ ԾԱՐԱԻԻ

Անձն իմ ահա ծարաւի
Աղբիւրիդ զովարար,
Ով փրկիչ իմ սիրելի,
Կը դիմէ խանդավառ:

Ով երջանիկ հրեշտակներ
Տուէք ինձ ձեր վառ սէր
Ձեր պաշտաման առարկայ
Աստուածն այն ինձ կու գայ: (կրկ.)

Տապանակին մէջ ի սպառ
Կենարար իմ Յիսուս
Կը սպասես դու ինձ համար
Տալով ինձ խրախոյս:

Ո՛Վ ՔԱՂՑՐԱԳՈՒԹ ՍԻՐՏ ՅԻՍՈՒՍԻ

Ո՛վ քաղցրագութ Սիրտ Յիսուսի
Զղջմամբ սրտի եւ դառնագին
Կը խոնարհի առջեւդ հոգիս,
Դարձնո՛ւր նայուածքդ կաթոգին:

Ինչո՞ւ համար քու փրկարար,
Աստուածային օրէնքներուդ
Քաղցրութենէն հոգիս ի սպառ
Զուրկ մնայ այսպէս հեռի եւ ցուրտ:

Բա՛ց ինձ Սուրբ Սիրտդ աստուածային
Այնտեղ միայն պիտի գտնեմ
Երջանկութիւնն իմ հոգիին
Եւ երկնքի փա՛ռքը վըսեմ:

Ով հըրավառ Սի՛րտ Յիսուսի,
Հուրը սիրոյդ վեհ սրբազան
Իմ սրտիս մէջ թող մի՛շտ վառի,
Սիրոյդ ըլլամ զո՛հն յաւիտեան:

ՅԻՍՈՒՍ ԽՈՆԱՐՀ ԵՒ ՀԵԶ

Յիսու՛ս, Յիսու՛ս, խոնարհ եւ հեզ,
Սիրտըս ըրէ Սուրբ Սրտիդ պէս՝
Հնազանդ, խոնարհ, քաղցըր եւ հեզ: (կրկ.)

Յիսու՛ս, Յիսու՛ս, խոնարհ եւ հեզ,
Սիրտըս ի սպառ դի՛ր Սըրտիդ քով,
Սիրտըս այրէ սիրոյդ հըրով: (կրկ.)

Յիսու՛ս, Յիսու՛ս, խոնարհ եւ հեզ,
Հոսէ սրտիս շնորհք սըրբարար
Սիրտըս վառէ սիրովդ անմար: (կրկ.)

Յիսու՛ս, Յիսու՛ս, խոնարհ եւ հեզ,
Մի՛ թողուր զիս որ թողում զքեզ
Այլ ըրէ՛ զիս քեզ ողջակէզ: (կրկ.)

ԿԸ ՊԱՇՏԵՆՔ ՔԵԶ

Կը պաշտենք քեզ, ով սուրբ նշխար
Բորբոքեալ մեր սիրով յար,
Դու զհօրներու քաղցրութիւն
Դու տկարներու քաջութիւն,
Կը պաշտենք քեզ, ով սուրբ նշխար
Բորբոքեալ մեր սիրով յար:
Կը պաշտենք քեզ, ով սուրբ նշխար
Բորբոքեալ մեր սիրով յար
Դու կենդանեաց ես փրկութիւն
Ննջեցելոց եւ բերկրութիւն,
Կը պաշտենք քեզ ով սուրբ նշխար
Բորբոքեալ մեր սիրով յար:

ՈՎ ԱՆՄԱՀ

Ով անմահ հեց կենաց, մեզ տուար Տէր Յիսուս. քաւեցեր զպարտիս նախահօրն Ադամայ:

Դու օծար ի Հօրէ, որ ի քեզ հաճեցաւ, օծեցեր զմարդիկ, որք Հոգւով նոր ծնան:

Զ Ահարովն առաջին, զքահանայասն ի հընումն, զվարդապետս որ ընդ քեզ օծեցեր ի վերջնումն: Ամէն:

Զ՞ԻՆՉ ՏԱՑ ՏՐԻՏՈՒՐ ՏԵԱՌՆ

Զի՞նչ տաց տրիտուր Տեառն,
Ընդ ամենայնի՝ զոր եւ ետ ինձ: (կրկ.)
Զբաժակ փրկութեան ընկալայց եւ

Զանուն Տեառն կարդացից:
Զողորմութիւնըս քո Տէր
Յաւիտեան օրհնեցից: (կրկ.)
Օրհնեա՛, անձն իմ, ըզՏէր եւ
Մի՛ մոռանար զամենայն տուրս նորա: (կրկ.)

ՍԻՐՈՅ ՔՈՅ ՀՈՒՐ

Սիրոյ քո հուր արկեալ յերկիր,
Բորբոքեսցի ի հոգիս մեր.
Զխորհուրդ սրտից մեր մաքրեսցէ,
Ի քնոյ մահու զմեզ զարթուսցէ,
Զմիտս բոցով քոյ վառեսցէ:
Սիրոյ քոյ հուր արկեալ յերկիր,
Բորբոքեսցի ի հոգիս մեր:

ԶԹԱԳԱՒՈՐՆ ՔՐԻՍՏՈՍ

Զթագաւորն Քրիստոս օրհնութեամբ երգով
Բարեբանեցէ՛ք ամենայն երկիր:
Արարողին երկնի եւ երկրի մատուսցուք երգով
Գոհաբանութիւն ամենայն երկիր:
Երրորդութեան եւ մի Աստուածութեան մատուսցուք
Պատիւ եւ երկրպագութիւն, յաւիտեանս. Ամէն:

ԿԸ ՀԱԻԱՏԱՄ ՔԵԶԻ

Կը հաւատամ Քեզի, Տէր իմ Քեզի,
Մութն աչքս կը պատէ հաւատքս կ՛իշխէ,
Քու խօսքդ, ով Տէր, զիս լծեց սուրբ օրէնքիդ,
Կը հաւատամ Քեզի, Տէր իմ Քեզի:

Դու ես յոսս, ո՛վ Տէր, յոյսս ո՛վ Տէր,
Մարդասէր եղիր դու հանդէպ ինծի,
Կասկածի երկիւղի,
Երբ շնչէ խիստ քամի,
Դու ես յոյսս, ո՛վ Տէր, յոյսս ո՛վ Տէր:

Սիրել միայն զՔեզ, Տէր իմ, զՔեզ
Սուրբերդ ըրին այդպէս, ինչու՞ ոչ ես
Մինչ խաչըդ կը դիտեմ,
Ո՜վ Տէր, սորվիլ կ՛ուզեմ
Սիրել միայն ըզՔեզ, միայն ըզՔեզ:

Ըլլալ միշտ Քեզի մօտ, աւելի մօտ,
Բաղձանքըն է սրտիս, կ՛ընդունի՞ս զիս.
Կը ցանկամ անկամ սուրբ սրտով,
Վառիլ սիրոյդ հրով,
Ըլլալ միշտ քեզի մօտ, աւելի մօտ:

ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ԵՐԳԵՐ

ԱՂԱՉԵԱ՛[63] վասն մեր զառ ի քէն զմարմնացեալն Աստուած, զի միաբանեսցէ զԵկեղեցի իւր սուրբ, շինեալ ի վերայ հիման առաքելոց եւ մարգարէից, պահել անարատ մինչեւ յօր երեւելոյ գալստեան իւրոյ.աղաչե՛մք:

Մա՛յր Սուրբ, Մա՛յր Սուրբ, բարեխօսեա՛:

Աղաչեա՛ վասն մեր զառ ի քէն զմարմնացեալն Աստուած, զի լռեսցեն պատերազմունք, դադարեսցին յարձակմունք թշնամեաց, տնկեսցի սէր եւ արդարութիւն ի յերկրի. Աղաչե՛մք:

Մա՛յր Սուրբ, Մա՛յր Սուրբ, բարեխօսեա՛:

ԵՐԳ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱՄՕՐ[64]

Աղաչեմք զքե՛զ Աստուածածին,
Որ ես տաճար անեղ Բանին,
Բարձր եւ պայծառ որպէս զարփին,
Մաղթեա՛ վասն իմ առ քո Որդին:

---

63 «Մայր Սուրբ...» ժամերգութեան շարականի այս երկու հատուածները երգի են վերածուել Հ. Մովսէս Վրդ. Սրապեանի մշակմամբ:

64 Հեղինակն է Մխիթար Սեբաստացի Աբբահայրը (1676-1749թթ.), ով մեծագոյն հայ մարեմասէր հայրերից է, Մխիթարեան Միաբանութեան հիմնադիրը, անուանի հայագէտ, բանաստեղծ, շարականագիր, հայ մշակոյթի պահպանութեան մէջ մեծագոյն աւանդ ունեցած հայորդիներից մէկը:

Տէր ողորմեա՛, Տէր ողորմեա՛,
Աստուածածին բարեխօսեա՛:
(Կրկնել ամէն տունից յետոյ)

Գոչեմ առ քե՛զ արտասուագին,
Կոյս Մարիա՛մ տուր զհայցուածս իմ,
Դու ես աթոռ աստուածային,
Խնդրեա՛ վասն իմ Կոյս Տիրածին:
Տէր ողորմեա՛…

Խընդրեմք իմ քէն Կոյս տալիթա,
Միշտ անդադար բարեխօսեա՛.
Ծընար զԱստուած որպէս տըղայ,
ԶՅիսուս Փրկիչ Տէր եւ արքայ:
Տէր ողորմեա՛…

Զայնիւ մաղթեմ արտաուալի,
Յոգնահանճար մեծ թագուհի՛.
Ղամպար ես դու՛ լուսով միշտ լի,
Հայցեա՛ վասն իմ ո՛վ Սրբուհի:
Տէր ողորմեա՛…

Տիրամայր Կոյս Աստուածածի՛ն
Միշտ անդադար մաղթեա՛վասն իմ.
Ռախացո՛զիս հայցմամբ քոյին,
Զի հայցուածք քո միշտ կատարին:
Տէր ողորմեա՛…

ԱՄԻՍՆ ԱՀԱ ՍՈՒՐԲ ԿՈՒՍԻՆ

Ամիս յոյժ գեղեցիկ,
Աստուածամօր միասին
Ուղղենք երգ մը քաղցրիկ։

Ծաղիկներով խընկահուր
Զարդարենք իր տաճար,
Նուագներով եռանդոտ
Գովենք իր գեղն անճառ։

Նոր գարունին գեղանի
Կը գովեն թոյրն ու բոյր.
Մարիամ անկէ շատ ունի,
Թէ՛ շնորհք, թէ՛ հրապոյր։

Կո՛յս, մեր սրտին տուր համակ
Քու ձիրքերդ գեղեցիկ,
Որոնց են լոկ նըշանակ
Ծաղիկներն այն վաղանցիկ։

Մեր հայրենեաց անձկաւէտ՝
Ըրէ՛ մեզ արժանի,
Որ դրուատենք առ յաւէտ փառքըդ,
Մա՛յր գեղանի։

Թրգմ.՝ Հ. Խաչիկ Վրդ. Աթանասեան

ԵՐԱՆԵԼԻ ԿՈՅՍ ՄԱՐԻԱՄ,

Խոնարհ սրտով քեզ կը դառնամ,
Ընդունէ զիս թեւերուդ տակ,
Ու պաշտպանէ միշտ անսայթաք (կրկ.):

Կարկառէ ինձ, Մայր սիրելի,
Գլթոտ ձեռքերդ շնորհալի,
Որպէսզի միշտ սուրբ իղձերով
Վայելեմ քու սէրդ ու գորով (կրկ.):

Ա՜հ, երջանիկ կը համարիմ
Ըլլալ որդի, քեզի Մայր իմ,
Որովհետեւ դուն տիրապէս
Տիեզերքի Փրկչին Մայրն ես (կրկնել):

Յիսուսէն վերջ դուն ես իմ յոյս,
Եւ արժանի համակ սիրոյս,
Գրաւէ սըրտիս բոլոր իղձեր
Զոր կ՚ընծայեմ Քեզի նուէր (կրկնել):
Հ. Ղեւոնդ Վրդ. Տէր-Մինասեան

ՍԻՐՏ ՄԱՐԵՄԱՅ[65], անբիծ շուշան՝
Դուն ցընծութիւն ազգի մարդկան,
Ամէնուն ես քաղցր եւ սիրուն
Եւ մանաւանդ կոյս սըրտերուն: (կրկ.)

---

65 Երգել՝ «Երանելի կոյս Մարիամ»-ի եղանակով

Եղի՛ր ինծի ապաւէն միշտ,
Երբ հասի վրաս տագնապ ու վիշտ,
Ի փորձութեանց զիս ազատէ՛,
Որ դեւն Քեզմէ զիս չըզատէ: (կրկ.)

Գահէն նայէ՛ աչքովդ գըթած,
Ուր վերացուց ըզՔեզ Աստուած.
Սիրուն Որդիդ ինծի ցուցուր,
Չըբաժնէ զիս ոչ հուր, ոչ ջուր: (կրկ.)

Սուրբ Մա՛յր, տա՛ր մեզ դէպի Յիսուս,
Մեղաւորաց հաստատուն Յոյս,
Հասցո՛ւր ըզմեզ երանութեան,
Որ օրհնենք Քեզ այժմ, յաւիտեան: (կրկ.)

ՄԻՆՉ ՕՐՐԱՆԷՍ ո՛վ Մայր երկնի
Բացե՛ր աչերս գթոյդ մայրենի,
Ո՛հ, այն օրէն հեռու քեզմէ
Սիրոյդ ըստուեր սիրտ իմ պաշտէ:

Այլ երբ յօրհաս գամ աքսորիս,
Զիս երեսէդ մի՛ վտարեր.
Երբ իմ աչերս գոցուին յաստիս,
Քեզ թող տեսնէ իմ հոգւոյս սէր:

Այլ երբ իմ շուրթ չըսէ Մարիամ,
Սրտիս հեծմունք թող քեզ խօսի.
Երբ ալ իմ շունչ ի սպառ մարի

Սիրոյդ ի ծով թող չքանամ,
Սիրոյդ ի ծով, ո՜վ Կոյս Մարիամ:

Հ. Մկրտիչ Վրդ. Աբգարեան

ԳԱԲՐԻԷԼԻ Ի ՁԵՌԻՆ

Ծաղիկն անթառամ,
Աւետեց քեզ Փրկչին
Խորհուրդն ով Մարիամ:
Ողջո՛յն, ողջո՛յն, ողջո՛յն քեզ Մարիամ,
Ողջո՛յն, ողջո՛յն, ողջո՛յն քեզ Մարիամ: (կրկներգ)

Քու խօսքովդ Տէրն երկնից
Անվիշտ ու անցաւ
Յարգանդիդ սուրբ, անբիծ
Եկաւ հանգչեցաւ:
Ողջո՛յն…
Գաբրիէլ հրեշտակին
Հետ եւ մենք այսօր
Կ՚ողջունենք բերկրագին
Ըզքեզ Կոյս հզօր:
Ողջո՛յն...
Մարիամ, Մայր գթած,
Ոտքերուդ առջին՝
Հոգիս արդ խոնարհած,
Կ՚երգէ կաթոգին:
Ողջո՛յն…

Հոգիիս քաղցր սնունդ,
Եւ բերկրանքն անճառ,
Ըլլայ քու սուրբ անունդ
Կրկնել անդադար:

Ողջոյն…

Աշխարհիս ցնծաւէտ
Փառքերն ունայն
Թող ինձմէ առ յաւէտ
Միշտ հեռու մնան:

Ողջոյն…

Տնակէս հայրենի
Հեռու կ՚ապրիմ ես.
Պաշտպան իմ Թագուհի,
Հեռո՛ւ, բայց մօտ քեզ:

Ողջոյն…

Եղի՛ր դու խախաղիկ,
Հոգւոյս ապաստան,
Աշխարհի փոթորիկք
Ո՛, զիս կուլ չտան:

Ողջոյն…

Հ. Ղեւոնդ Վրդ. Տէր-Մինասեան

ԻՆՉՊԷՍ ՆԱՒԱԿ Մ՚ԱԼԵՅՈՅԶ

Կիրքերու բիրտ հողմին տակ
Կորուսած ղեկ ւ՚ամէն յոյս,
Կը տատանիմ միայնակ:

Վերջ տո՛ւր այլեւս ով Մարիամ,
Հեծեծանքին թշուառիս.
Յիշէ Որդւոյդ խաչն ու գամ
Յիշէ արցունքդ, յիշէ զիս: (կրկներգ)

Երկինք ցասկոտ մըթամած,
Գութի նշոյլ մը չունի
Ուղեկորոյս, մոլորած,
Եւ ալեմոյն նաւորդի:
Վերջ տուր…

Երբ շրթներես դալկահար
Թըռչի անունն այս քաղցրիկ,
Մարիամ, Մարիամ, ո՞ւր ես մայր,
Չե՞ս տար սիրոյդ հաւաստիք:
Վերջ տուր…

Յուսակըտուր, թեւաբաց,
Ալիքներու ալուցքէն,
Քեզ կը կանչեմ, ով գթած,
Մոլորեալիս ապաւէն:
Վերջ տուր…

Վերջալոյսի մութ պահուն
Ցրուէ՛ ամպերն տխրաստուեր,
Եւ նաւակիս երերուն
Ցուլա՛ աստղէդ ջինջ ցոլքեր:
Վերջ տուր…

Եւ մրրիկի աշխարհին
Ափունքներէն՝ հեզասահ
Մըղէ՛ նաւակիս ուժգին
Դէպի կեանքի լոյսն անմահ:
Վերջ տուր…

Հ. Պօղոս Վրդ. Պզտիկեան

ԱՒԵՏԱԲԵՐ ՀՐԵՇՏԱԿԻՆ

Հետ կ՛ողջունենք բերկրագին,
Ողջո՛յն, ո՛վ Կոյս գեղանի,
Երկնի, երկրի Թագուհի:
Ողջո՛յն, ողջո՛յն, քեզ Մարիամ,
Ողջո՛յն, ողջո՛յն, քեզ Մարիամ,
Ողջո՛յն, ողջո՛յն, քեզ Մարիամ: (կրկներգ)

Ով վեհապանծ Տիրուհի,
Յարգալիր թող խոնարհի,
Ոտքիդ առջեւ կաթոգին
Ըզքեզ սիրող մեր հոգին:
Ողջո՛յն…

Աջովդ սուրբ երկնաձիր,
Մեր սըրտին մէջ տնկեցիր,
Երկնի փառաց գրաւական,
Սէրը չքնաղ կուսութեան:
Ողջո՛յն…

Տուր, որ պահենք յարաժամ,
Այս սուրբ ծաղիկն անթառամ,
Որով ըլլանք Յիսուսի,
Սիրոյն, փառաց արժանի:

Ողջոյն…

Հ. Ղեւոնդ Վրդ. Տէր-Մինասեան

ՇՈՒՔՆ ԵՐԿՐԻ ՎՐԱՅ ԿԸ ԾԱՒԱԼԻ,

Տես զաւակներդ կը դառնան,
Ոտքդ կու գան Մայր պանծալի,
Քեզ նուիրելու վերջն օրուան:

Ով կուսամայր խնամակալ,
Ով մեր յոյսն աննման,
Ընդունէ մեր աղօթքն ալ,
Աղօթքն ու երգն երեկոյեան:

կրկներգ

Արշալոյսին ծագած ատեն,
Ծունկիդ առջեւն էինք մենք,
Ահաւասիկ կու գանք նորէն,
Հսկէ մեր վրայ. կը գոչենք:

Ո՛վ Կուսամայր…

Ո՛վ բարի Մայր, հսկէ մեր վրայ,
Մեր նախանձոտ թշնամին
Անդուլ մեր շուրջը կը դառնայ
Ենգահնար զայրագին:

Ո՛վ Կուսամայր…

Հեռու՛ մեզմէ աղտեր ամէն,
Ամէն պատիր ցնորքներ.
Ո՛մ մաքուր Կոյս, հաճէ՛ նորէն
Պաշտպանել մեզ այս գիշեր:
Ո՛վ Կուսամայր…

Պիտի հանգչինք խաղաղաւէտ
Թեւին շուքին ներքեւ մենք.
Իցի՛ւ գիշեր ցորեկ յաւէտ՝
Հաւատարիմ կեանք վարենք:
Ո՛վ Կուսամայր…
Թրգմ.՝ Խաչիկ Վրդ. Աթանեսեան

ՈՂՋՈ՛ՅՆ, ԱՍՏՂ ԾՈՎՈՒ,

Տիրամա՛յր գըթալից,
Եւ միշտ Կոյս սիրարկու,
Երանեալ Դուռն երկնից: (կրկ.)

Գաբրիէլ Քեզ տուաւ
Երկնառաք այս ողջոյն,
Եւայի մեղսաքաւ
Տուր հանգիստ մեր հոգւոյն: (կրկ.)

Խորտակէ՛ կապ մեղաց,
Պարգեւէ՛ կուրաց լոյս,
Հալածէ՛ չարն ի բաց,
Ա՛ռ բարիք ամէնուս: (կրկ.)

Ցոյց տու՛ր մեզ, որ ես Մայր,
Մեր աղօթքն ընծայէ՛
Անոր, որ մեզ համար
Ծընաւ, ո՛վ Կոյս, Քեզմէ: (կրկ.)

Ո՛վ Կոյս, զերծ արատէ,
Ամէնէն սուրբ եւ հեզ,
Մեղքերնէս ազատէ՛
Եւ ըրէ՛ սուրբ ըզմեզ: (կրկ.)

Տու՛ր շաւիղ ապահով,
Վարք մաքուր եւ անբիծ,
Որ Յիսուս տեսնելով՝
Ըլլանք Քեզ խընդակից: (կրկ.)

Թրգմ.՝ Հ. Խաչիկ Վրդ. Աթանասեան

ԵՐԲ ԿԸ ԿՐԿՆԵՄ ԱՆՈՒՆԴ ՈՎ ՄԱՅՐ,

Սիրտս յոյզով կը լեցուի,
Կ՛ուզեմ երգել ես անդադար,
Սէրդ ու գորովդ մայրենի:
Օրհնեալ ըլլայ ամէնուրեք,
Անունդ ով Մայր աննման,
Դուն գորովդ ես իմ կեանքիս հէք,
Լոյսն ու ժպիտը մահուան:

Երբ կը կրկնեմ անունդ ով Մայր,
Կամքըս նոր ոյժ կը զգենու,
Կը դիւրանայ ամէն պայքար,
Կ՚իյնան խութերը հուժկու:
Օրհնեալ ըլլայ...

Երբ կը կրկնեմ անունդ ով Մայր,
Կը մոռնամ ցաւը կեանքի,
Հոգ չէ խոցեն զիս անհամար,
Փուշերդ սուր եւ վայրի:
Օրհնեալ ըլլայ...
Հ. Պօղոս Վրդ. Պզտիկեան

ՄԱՅՐԻ՚Կ, ՄԱՅՐԻԿ, ԻՄ ՄԱՐԻԱՄ

Մայրիկ, Մայրիկ, իմ Մարիամ,
Ահա, գիրկդ կու գամ՝
Դընել գլուխըս յոգնաբեկ
Ու պարպել սիրտըս հէք:
Դուն ես, Դուն ես իմ Մայրիկ,
Իմ Մայրիկ, իմ Մայրիկ,
Մարիամ, Մայր քաղցրիկ,
Մարիամ, Մայր քաղցրիկ: *Կրկներգ*

Գորովալի գիրկըդ թողած՝
Ու՞ր երթամ, ո՜վ Գըթած.
Որու՞ դիմեմ այսպէս թըշուառ,

Հիւանդ, մերկ ու անճար:
Որչափ ըլլամ ես անառակ,
Ապերախտ մի զաւակ,
Դարձեալ Դուն Մայրս ես գըթառատ,
Ես՝ զաւակըդ հարազատ:
Սիրոյ ժըպիտ մը ինծի ցուցուր,
Ժըպիտ մը Կոյս մաքուր.
Տուր տաք համբույր մը մայրենի,
Որ սիրտըս ըսփոփուի:
Այս իմ սըրտիս թոռմած ծաղկին
Ցօղն եղիր Կուսածին,.
Կեանք սփռէ, ո՜հ, ոյժն եղի՜ր իր
Շուշանին լուսալիր:
Ու ես կրկնեմ թող անդադար.
«Մարիամ է իմ քաղցըր Մայր.
Ան է սէրը եւ յոյսն ճամբուն՝
Իմ կեանքիս օրերուն»:

Հ. Պօղոս Վրդ. Պզտիկեան

ՈՂՋՈ՛ՅՆ ՔԵԶ, ԱՆԱՐԱ՛Տ ՅՂԱՑԵԱԼ,

Ողջո՛յն քեզ, տաճա՛ր Բանին Աստուծոյ,
Ողջո՛յն քեզ, շքեղ հա՛րսն Հոգւոյն Սրբոյ:
Ուրախ լե՛ր, ամպ թեթեւ,
Աստուածածին Սուրբ Կոյս.
Ուրախ լե՛ր, բերկրեալդ, օրհնեա՛լ դու ի կանայս:
Ողջո՛յն քեզ, վսե՛մ թագուհի,

Ողջո՛ն քեզ, Մայր համայն մարդկութեան:
Ո՛վ գթած Մարիա՛մ, զքեզ աղաչե՛մք,
Փրկեա՛ զորդիս քո յամենայն չարէ,
Եւ շնորհեա՛ զերկնից արքայութիւն:
Ողջո՛ն քեզ, կուսանաց պարծանք,
Ողջո՛ն քեզ Անարատ Յղացեալ:
Անարատ Յղացեալ, ողջո՛ն քեզ,
Ողջո՛ն քեզ, ողջո՛ն քեզ:

Փութացի՛ր յօգնութիւն, Սուրբ Աստուածածին. Եւ աղաչեա՛ զառ ի քէն զմարմնացեալն Աստուած, զի յահաւոր եւ ի միւսանգամ գալստեան իւրոյ պարգեւեսցէ մեզ ըզկեանսըն յաւիտենից:

ՈՒ՞Ր ԵՍ ՄԱՅՐ ԻՄ, քաղցր եւ անոյշ,
Սէր ծնողիդ զիս այրէ:
Լցան աչք իմ դառն արտասուօք,
Ոչ զոք ունիմ, որ սրբէ:
Թըքին, հարին, ապտակեցին,
Պսակ եդին ի փշէ:
Ի փայտ խաչին բեւեռեցին,
Ներկեալ եղէ յարենէ:
Ջուր խնդրեցի, քացախ արբի,
Յանօրինաց ձեռանէ:

ԽՈՐՀՐԴԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳԻ[66]

66 «*Սուրբ Պատարագը աղբիւրն ու բարձունքն է ամբողջ քրիստոնէական կեանքի: Բոլոր միւս խորհուրդները, ինչպէս եւ եկեղեցական ծառայութեան բոլոր տեսակները եւ առաքելական ջանադրութիւնները կապուած են Պատարագի հետ եւ ուղղուած են դէպի այն, որովհետեւ Սուրբ Պատարագը իր մէջ է ընդգրկում Եկեղեցու ողջ հոգեւոր գանձարանը, այսինքն՝ Ինքնին Քրիստոսին՝ մեր Զատիկը*», *Քրիստոնէական Կաթողիկէ Եկեղեցու, 1324:*

Սուրբ Պատարագը վեհագոյն եւ ամենակատարեալ աղօթքն է, որ քրիստոնեան կարող է մատուցել իր Արարչին, որովհետեւ այն Տէր Յիսուս Քրիստոսի միջնորդական աղօթքն է մեզ համար եւ սրբազան զոհաբերութիւնը, որին միանում են հաւատացեալները եւ որի շուրջ համախմբւում եւ մի է դառնում Քրիստոսի խորհրդաւոր Մարմինը՝ Սուրբ Եկեղեցին: Հայերէն «Պատարագ» բառը նշանակում է զոհ. այս դէպքում ի նկատի ունենք Քրիստոսի Զոհը, որ նա մատուցեց Խաչի վրա՝ մէկ անգամ եւ ընդմիշտ՝ քաւելով մարդկային մեղքերի բազմութիւնը Իր Արեամբ եւ նորոգելով թէ՛ մարդուն, թէ՛ ամբողջ արարչագործութիւնը, բեկում մտցնելով տիեզերքի պատմութեան մէջ: Խաչի վրայ Քրիստոսի կատարած այդ միակ եւ վճռորոշ Զոհաբերութիւնն է, որ Սուրբ Պատարագի ընթացքում վերստին ճշմարտապէս ներկայանում է հաւատացեալի առջեւ՝ անարիւն Զոհի՝ Հացի եւ Գինու յատկանիշների տեսքով, այլ խօսքով՝ անարիւն Զոհաբերութեամբ. Տէր Յիսուս Քրիստոսի խօսքերով, որոնք Նա ասաց իր աշակերտների առջեւ Վերնատանը՝ իր չարչարանքներից առաջ, եւ որոնք պատարագիչ քահանան ասում է իւրաքանչիւր Պատարագը մատուցելիս, Սուրբ Սեղանի վրայ ընծայուած հացը եւ գինին գոյափոխւում եւ ճշմարտապէս դառնում են Յիսուս Քրիստոսի Մարմինն ու Արիւնը՝ հոգեւորապէս, խորհրդաւոր, անտեսանելի կերպով: Այսպէս, Սուրբ Պատարագը կամ Սուրբ Զոհը ոչ թէ Խաչելութեան կրկնութիւնն է կամ մէկ այլ Զոհաբերութիւն, որ մատուցում է Քրիստոսը, այլ՝ Խաչի վրայ կատարած Տիրոջ նոյն Զոհաբերութեան կենդանի յիշողութիւնն է, իրապէս ապրումը, մշտական

եւ անփոփոխ ներկայութիւնը, արդիականութիւնը, ուժականութիւնը փաստող մի աստուածատուր հնարաւորութիւն՝ այլ տեսքով՝ հացի եւ գինու յատկանիշներով, որոնք ճաշակելով՝ հաւատացեալը 1. հաղորդւում է Տէր Յիսուս Քրիստոսին՝ ընդունելով իր մէջ Նրա Մարմինն ու Արիւնը, Հոգին եւ Աստուածութիւնը, մէկ հոգեւոր Մարմին է դառնում Նրա հետ, 2. միանում է Նրա միակ Զոհաբերութեանը՝ Պատարագին՝ ինքն իրեն Տիրոջ նման մատուցելով եւ ընկալելով որպէս զոհ, սուրբ ընծայաբերում՝ Հայր Աստծուն՝ այսպիսով Աստծո առաջ ընդունելի եւ ծանրակշիռ դարձնելով սեփական աղօթքները եւ նուիրումը՝ Քրիստոսի Զոհաբերութեան եւ նուիրումի միջնորդութեամբ, տրամաբանութեամբ եւ Նրա որդիական վաստակի շնորհիւ: Սուրբ Պատարագն, այսպիսով քրիստոնեայի համար նաեւ ամենակարեւոր շնորհակալական եւ խնդրական աղօթքն է, քանի որ իր աղօթքները միանում են Քրիստոսի աղօթքին եւ դրանով իսկ իմաստաւորւում եւ հասնում են իրենց կատարելութեանը (*առաւել մանրամասն՝ տե՛ս՝ Քրիստոնէական կաթողիկէ Եկեղեցու, 1324-1405*):

Հայ Եկեղեցու Սուրբ Պատարագի խորհրդակատարութեան կանոնը աւանդուել է տիեզերական հայրերից՝ Սուրբ Բարսեղ Կեսարացու, Յովհան Ոսկեբերանի, Աթանաս Ալեքսանդրացու մշակումներով եւ հայ սուրբ հայրերի, յատկապէս, Յովհան Մանդակունու, Ներսէս Լամբրոնացու եւ ուրիշների թարգմանութեամբ եւ կարգաւորութեամբ (*տե՛ս՝ Հ. Անդրանիկ Ծ. Վրդ. Կռանեան, «Հայ ծիսական պաշտամունքը»)*:

ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ

Եթէ պատարագիչը Եպիսկոպոս է, հանդիսապէս մտնելիս՝ դպիրները երգում են.

ՇԱՐԱԿԱՆ ԴՁ

Հրաշափառ Աստուած եւ միշտ բարեխնամող, որ յառաջգիտութեամբ զփրկութիւն Հայաստանեայց սկզբնաւորեալ, ի Պարթեւական մեղապարտ ազգէն Լուսաւորիչ մեզ շնորհեցեր. վասն որոյ բարեխօսութեամբ սորա, Փրկիչ, կեցո՛ զմեզ, այժմ եւ ի քո յահաւոր գալստեանն:

ԵՐԳ ԶԳԵՍՏԱՒՈՐՄԱՆ

Դպր. Խորհուրդ խորին, անհաս, անսկիզբն, որ զարդարեցեր զվերին պետութիւնդ, ի յառագաստ անմատոյց լուսոյն, գերապանծ փառօք զդասս հրեղինաց:

Անճառահրաշ զօրութեամբ, ստեղծեր զԱդամ՝ պատկեր տիրական. եւ նազելի փառօք զգեստաւորեցեր ի դրախտն Ադենի՝ տեղի բերկրանաց:

Չարչարանօք քո սուրբ Միածնիդ՝ նորոգեցան արարածք ամենայն, եւ վերստին մարդն անմահացաւ, զարդարեալ ի զգեստ անկողոպտելի:

Թագաւոր երկնաւոր, զԵկեղեցի քո անշարժ պահեա՛. եւ զերկրպագուս անուանդ քում պահեա՛ ի խաղաղութեան:

Առաջի աստիճանաց

Քհն. Վասն Սրբուհւոյ Աստուածածնին, Տէ՛ր, ընկա՛լ զաղաչանս մեր եւ կեցո՛ զմեզ:

Սրկ. *Սուրբ զԱստուածածինն եւ զամենայն սուրբս բարեխօս արասցուք առ Հայր ի յերկինս, զի կամեցեալ ողորմեսցի եւ գթացեալ կեցուսցէ զարարածս իւր: Ամենակալ Տէր Աստուած մեր, կեցո՛ եւ ողորմեա՛:*

Քհն. Ընկա՛լ, Տէ՛ր, զաղաչանս մեր, բարեխօսութեամբ սրբուհւոյ Աստուածածնին՝ անարատ ծնողի Միածնի Որդւոյ քոյ եւ աղաչանօք ամենայն սրբոց քոց: Լուր մեզ, Տէ՛ր, եւ ողորմեա՛, ներեա՛, քաւեա՛ եւ թո՛ղ զմեղս մեր: Արժանաւորեա՛ գոհութեամբ փառաւորել զքեզ ընդ Որդւոյ եւ ընդ Սրբոյ Հոգւոյդ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

Խոստովանիմ առաջի Աստուծոյ եւ սրբուհւոյ Աստուածածնին եւ առաջի ամենայն սրբոց եւ առաջի ձեր, հա՛րք եւ եղբարք, զամենայն մեղս՝ զոր գործեալ եմ. քանզի մեղայ խորհրդով, բանիւ եւ գործով եւ ամենայն մեղօք՝ զոր գործեն մարդիկ. մեղայ, մեղայ, աղաչեմ զձեզ, խնդրեցէ՛ք վասն իմ յԱստուծոյ զթողութիւն:

Սրկ. *Ողորմեսցի քեզ մարդասէրն Աստուած՝ հզօրն, եւ թողութիւն շնորհեսցէ ամենայն յանցանաց քոց, անցելոյն եւ այժմուս, եւ յառաջակայէն փրկեսցէ զքեզ եւ հաստատեսցէ յամենայն գործս բարիս եւ հանգուսցէ զքեզ ի հանդերձեալ կեանս:*

Քհն. Ամէն: Ազատեսցէ եւ զձեզ մարդասէրն Աստուած եւ թողցէ զամենայն յանցանս ձեր: Տացէ ժամանակ ապաշխարելոյ եւ գործելոյ զբարիս: Ուղղեսցէ եւ զառաջակայ կեանս ձեր, շնորհօք սուրբ Հոգւոյն, հզօրն եւ ողորմածն, եւ նմա փառք յաւիտեանս. Ամէն:

Սրկ. *Յիշեսջի՛ր եւ զմեզ առաջի անմահ Գառինն Աստուծոյ:*

Քհն. Յիշեալ լիջիք առաջի անմահ Գառինն Աստուծոյ:

Դպր. *Աղաղակեցէ՛ք առ Տէր, ամենայն երկիր. ծառայեցէ՛ք Տեառն ուրախութեամբ:*

Մտէ՛ք առաջի նորա ցնծութեամբ. ծաներո՛ւք զի նա է Տէր Աստուած մեր:

Նա արար զմեզ եւ ոչ մեք էաք. մեք ժողովուրդք եւ խաշն արօտի նորա:

Մտէ՛ք ընդ դրունս նորա խոստովանու-թեամբ. եւ օրհնութեամբ ի յարկս նորա:

Խոստովան եղերուք Տեառն. եւ օրհնեցէ՛ք զանուն նորա:

Քաղցր է Տէր, յաւիտեան է ողորմութիւն նորա. ազգէ մինչեւ յազգ է ճշմարտութիւն նորա:

Փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

Սրկ. *Սուրբ եկեղեցեաւս աղաչեսցուք զՏէր, զի սովաւ փրկեսցէ զմեզ ի մեղաց եւ կեցուսցէ շնորհիւ ողորմութեան իւրոյ: Ամենակալ Տէր Աստուած մեր, կեցո՛ եւ ողորմեա՛:*

Քհն. Ի մէջ տաճարիս եւ առաջի աստուածընկալ, եւ պայծառացեալ սուրբ նշանացս եւ սուրբ տեղւոյս խոնարհեալ երկիւղիւ երկիր

պագանեմք: Զսուրբ, զհրաշալի եւ զյաղթող զյարութիւնդ քո օրհնեմք եւ փառաւորեմք, եւ քեզ մատուցանեմք զօրհնութիւն եւ զփառս, ընդ Հօր եւ ընդ Սրբոյ Հոգւոյդ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

Քհն. Մտից առաջի սեղանոյ Աստուծոյ, առ Աստուած, որ ուրախ առնէ զմանկութիւն իմ:

Սրկ. *Դա՛տ արա ինձ Աստուած եւ իրաւ արա ինձ ի դատաստանի իմում:*

Քհն. Յազգէ որ ոչ է սուրբ, ի մարդոյ մեղաւորէ, նենգաւորէ, փրկեա՛ զիս:

Սրկ. *Դու Աստուած, հզօրիչ իմ ես, ընդէ՞ր մոռացար զիս, ընդէ՞ր տրտում գնամ ես ի նեղել թշնամւոյ իմոյ:*

Քհն. Առաքեա՛, Տէր, զլոյս քո. եւ զճշմարտութիւն քո, զի առաջնորդեսցեն ինձ եւ հանցեն զիս ի լեառն սուրբ եւ ի յարկս քո:

Սրկ. *Մտից առաջի սեղանոյ Աստուծոյ, առ Աստուած, որ ուրախ առնէ զմանկութիւն իմ:*

Քհն. Խոստովան եղէց քեզ օրհնութեամբ, Աստուած, Աստուած իմ:

Սրկ. *Արդ, ընդէ՞ր տրտում ես, անձն իմ, կամ ընդէ՞ր խռովես զիս. յուսա՛ առ Աստուած, խոստովանեա՛ նմա, փրկիչ երեսաց իմոց Աստուած է:*

Քհն. Փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ:

Սրկ. *Այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն: Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք: Օրհնեսցուք զՀայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ արժանի արար զմեզ կալ ի տեղւոջ փառաբանութեան, եւ երգել զերգս հոգեւորս: Ամենակալ Տէր Աստուած մեր, կեցո՛ եւ ողորմեա՛:*

Քհն. Ի յարկի սրբութեան եւ ի տեղւոջ փառաբանութեան, հրեշտակաց բնակարանիս եւ մարդկան քաւարանիս, առաջի աստուածընկալ եւ պայծառացեալ սուրբ նշանացս եւ սուրբ սեղանոյս խոնարհեալ երկիւղիւ երկիր պագանեմք. զսուրբ, զհրաշալի եւ զյաղթող զյարութիւն քո օրհնեմք եւ փառաւորեմք. եւ քեզ ընդ երկնային զօրսն մատուցանեմք զօրհնութիւն եւ զփառս, ընդ Հօր եւ ընդ Սրբոյ Հոգւոյդ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

ՄԵՂԵԴԻ

Յայս յարկ նուիրանաց ուխտի Տեառն տաճարիս, ժողովեալքս աստանօր ի խորհուրդ պաշտման պաղատանաց առաջիկայ սուրբ պատա-րագիս:…

ՆՆՋԵՑԵԼՈՑ *Յորժամ մտցես ի սուրբ խորանն, անդ յիշեսցես զմեր ննջեցեալսն: Յորժամ առնես զպատարագն, յիշեա՛ եւ զիս զբազմամեղս:*

ՋԱՏԿԻՆ *Ի գերեզմանն յարուցելոցն անմահին՝ այսօր գոչէր հրեշտակն երկնային. Յարեաւ Քրիստոս, զարթեաւ Քրիստոս՝ ի կոյս գերեզմանէն, ի լոյս գերեզմանէն:*

ԵՐԳ ԽՆԿԱՐԿՈՒԹԵԱՆ

Դպր. *Բարեխօսութեամբ Մօր քոյ եւ Կուսի, ընկալ՛ զաղաչանս քոց պաշտօնէից:*

Որ գերագոյն քան զերկինս պայծառացուցեր սուրբ զԵկեղեցի արեամբ քով, Քրիստոս:
Եւ ըստ երկնայնոցն կարգեցեր ի սմա զդասս առաքելոց եւ մարգարէից, սուրբ վարդապետաց:
Այսօր ժողովեալ դասք քահանայից, սարկաւագաց, դպրաց եւ կղերիկոսաց, խունկ մատուցանեմք առաջի քո, Տէր, յօրինակ ըստ հնումն Զաքարիայ:
Ընկալ՛ առ ի մէնջ զխնկանուէր մաղթանս, որպէս զպատարագն Աբելի, զՆոյի եւ զԱբրահամու:
Բարեխօսութեամբ վերին քո զօրաց, միշտ անշարժ պահեա՛ զԱթոռ Հայկազնեայց:

ՍԿԻԶԲՆ ՍՐԲՈՅ ՊԱՏԱՐԱԳԻ
ՊԱՇՏՕՆ ՃԱՇՈՒ – ՊԱՏԱՐԱԳ ԵՐԱԽԱՅԻՑ

Սրկ. *Օրհնեա՛, Տէր:*

Քհն. Օրհնեալ թագաւորութիւնն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

ԺԱՄԱՄՈՒՏՔ
Կիւրակէի

Դպր. *Միածին Որդի եւ Բանդ Աստուած եւ անմահ էութիւն, որ յանձն առեր մարմնանալ ի սրբուհւոյ Աստուածածնէն եւ ի միշտ Կուսէն: Անփոփոխելիդ մարդ եղեալ՝ խաչեցար, Քրիստոս*

Աստուած, մահուամբդ զմահ կոխեցեր: Մինդ ի Սրբոյ Երրորդութենէն, փառաւորակից ընդ Հօր եւ ընդ Սրբոյ Հոգւոյն, կեցո՛ զմեզ:

Զատկին

Քրիստոս յարեաւ ի մեռելոց, մահուամբ զմահ կոխեաց եւ յարութեամբն իւրով մեզ զկեանս պարգեւեաց. նմա փառք յաւիտեանս. Ամէն:

Ծննդեան եւ Աստուածածնի

Աստուածածին անհարսնացեալ, զԲանն անսկիզբն յղացար եւ զԱստուածն անիմանալին ծնար, զանպարագրելին ի գիրկս քո բարձեր. նմա անդադար բարեխօսեա՛ վասն անձանց մերոց:

Սրկ. *Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք, ընկալ, կեցո՛ եւ ողորմեա՛: Օրհնեա՛, Տէր:*

Քհն. Օրհնութիւն եւ փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն: Խաղաղութիւն † ամենեցուն:

Դպր. *Եւ ընդ հոգւոյդ քում:*

Սրկ. *Աստուծոյ երկրպագեսցուք:*

Դպր. *Առաջի քո, Տէր:*

Քհն. Տէր Աստուած մեր, որոյ կարողութիւնդ անքննին է եւ փառքդ անհասանելի, որոյ ողորմութիւնդ անչափ է եւ գթութիւնդ անբաւ, դու ըստ առատ մարդասիրութեան քում նայեա՛ ի

ժողովուրդս քո եւ ի տաճարս յայս սուրբ: Եւ արա՛ ընդ մեզ եւ ընդ աղօթակիցս մեր առատապէս զողորմութիւն քո եւ զգթութիւն: Զի քեզ վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

ՃԱՇՈՒ ՇԱՐԱԿԱՆՔ
Յարութեան ԳՁ

Դպր. *Տէր թագաւորաց, վայելչութիւն ըզգեցաւ: Զթագաւորըն Քրիստոս՝ օրհնութեամբ երգով բարեբանեցէք, ամենայն երկիր:*
Արարողին երկնի եւ երկրի՝ մատուցուք երգով գոհաբանութիւն, ամենայն երկիր:
Փառք Հօր …: Այժմ եւ միշտ …: Երրորդութեան եւ մի Աստուածութեան՝ մատուցուք պատիւ, երկրպագութիւն, յաւիտեանս. Ամէն:

Զատկին ԲԿ.

Դպր. *Գովեա՛, Երուսաղէմ, զՏէր:*
Յարեաւ Քրիստոս ի մեռելոց. Ալէլուիա:
Եկա՛յք, ժողովուրդք, երգեցէք Տեառն. Ալէլուիա:
Փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ: Այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն:
Յարուցելոյն ի մեռելոց. Ալէլուիա:
Որ զաշխարհս լուսաւորեաց. Ալէլուիա:

Ծննդեան եւ Աստուածածնի ԳՁ

Դպր. *Մեծացուսցէ անձն իմ զՏէր, եւ ցնծասցէ հոգի իմ Աստուծով Փրկչաւ իմով:*
Սուրբ զԱստուածածինն օրհնութեամբ մե-ծա-ցուցանեմք:
Աւետաւոր հրեշտակն աւետարանէր ըզծընեալ Փըրկիչն ի սրբոյ Կուսէն:
Փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն:
Ասէ ուրա՛խ լեր, բերկրեալդ, քանզի Տէր տերանց է ընդ քեզ:

ԵՐԳ ԵՐԵՔՍՐԲԵԱՆ

Քհն. Զի քո է կարողութիւն եւ զօրութիւն եւ փառք յաւիտեանս. Ամէն:

Սրկ. *Պռոսխումէ:*

Դպր. *Սուրբ Աստուած, Սուրբ եւ հզօր, Սուրբ եւ անմահ, որ յարեար ի մեռելոց. ողորմեա՛ մեզ (3 անգամ):*
որ խաչեցար վասն մեր.
որ ծնար եւ յայտնեցար.
որ մարմնացար վասն մեր.
որ եկիր եւ գալոցդ ես.
որ համբարձար փառօք առ Հայր.
որ եկիր եւ հանգեար յառաքեալսն.
որ յայտնեցար ի Թաբոր լերինն.
որ եկիր ի փոխումն Մօր քոյ եւ Կուսի.

ՔԱՐՈԶ ՀԱՄԱՇԽԱՐՀԱԿԱՆ

Սրկ. *Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք:*

Դպր. *Տէր, ողորմեա՛:*

Սրկ. *Վասն խաղաղութեան ամենայն աշխարհի եւ հաստատութեան սրբոյ եկեղեցւոյ՝ զՏէր աղաչեսցուք:*

Դպր. Տէր, ողորմեա՛:

Սրկ. *Վասն ամենայն սուրբ եւ ուղղափառ եպիսկոպոսաց՝ զՏէր աղաչեսցուք:*

Դպր. Տէր, ողորմեա՛:

Սրկ. *Վասն Սրբազան Պապին մերոյ Տեառն (***) կենաց եւ փրկութեան հոգւոյ նորին՝ զՏէր աղաչեսցուք:*

Դպր. Տէր, ողորմեա՛:

Սրկ. *Վասն Հայրապետին մերոյ Տեառն (***) կենաց եւ փրկութեան հոգւոյ նորին՝ զՏէր աղաչեսցուք:*

Դպր. Տէր, ողորմեա՛:

Սրկ. *Վասն Առաջնորդին մերոյ Տեառն (***) կենաց եւ փրկութեան հոգւոյ նորին՝ զՏէր աղաչեսցուք:*

Դպր. Տէր, ողորմեա՛:

Սրկ. *Վասն վարդապետաց, քահանայից, սարկաւագաց, դպրաց եւ ամենայն ուխտի մանկանց Եկեղեցւոյ՝ զՏէր աղաչեսցուք:*

Դպր. Տէր, ողորմեա՛:

Սրկ. *Վասն հոգւոցն հանգուցելոց, որք ճշմարիտ եւ ուղիղ հաւատով ի Քրիստոս ննջեցին, զՏէր աղաչեսցուք:*

Դպր. *Յիշեա՛ Տէր եւ ողորմեա՛: Տէր, ողորմեա՛: Քեզ Տեառնդ յանձն եղիցուք: Տէր, ողորմեա՛. Տէր, ողորմեա՛. Տէր, ողորմեա՛:*

Քհն. Զի ողորմած եւ մարդասէր ես Աստուած գոլով, եւ քեզ վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

ԸՆԹԵՐՑՈՒԱԾ

Կարդան նախ զՃաշու Գիրսն եւ ապա՝ Դպիրքն երգեն Ալէլուիա, ըստ պատշաճի աւուրն:

Սրկ. *Ալելուիա: Օրթի:*
Քհն. Խաղաղութիւն † ամենեցուն:
Դպր. *Եւ ընդ հոգւոյդ քում:*
Սրկ. *Երկիւղածութեամբ լուարուք:*
Քհն. Սրբոյ Աւետարանիս Յիսուսի Քրիստոսի, որ ըստ...
Դպր. *Փառք քեզ, Տէր Աստուած մեր:*
Սրկ. *Պռոսխումէ:*
Դպր. *Ասէ Աստուած:*
Քհն. Տէրն մեր Յիսուս Քրիստոս...

ԱՒԵՏԱՐԱՆ

Դպր. *Փառք քեզ, Տէր Աստուած մեր:*

ՔԱՐՈԶ

ՀԱՆԳԱՆԱԿ ՀԱՒԱՏՈՅ

ՀԱՒԱՏԱՄՔ ի մի Աստուած՝ Հայրն ամենակալ, յարարիչն երկնի եւ երկրի, երեւելեաց եւ աներեւութից:

Եւ ի մի Տէր Յիսուս Քրիստոս, յՈրդին Աստուծոյ, ծնեալն յԱստուծոյ Հօրէ՝ Միածին, այսինքն՝ յէութենէ Հօր: Աստուած յԱստուծոյ, լոյս ի լուսոյ, Աստուած ճշմարիտ, յԱստուծոյ ճշմարտէ, ծնունդ՝ եւ ոչ արարած: Նոյն ինքն ի բնութենէ Հօր, որով ամենայն ինչ եղեւ յերկինս եւ ի վերայ երկրի՝ երեւելիք եւ աներեւոյթք:

Որ յաղագս մեր մարդկան եւ վասն մերոյ փրկութեան իջեալ ի յերկնից՝ մարմնացաւ, մարդացաւ, ծնաւ կատարելապէս ի Մարիամայ Սրբոյ Կուսէն՝ Հոգւովն Սրբով: Որով էառ մարմին, հոգի եւ միտս, եւ զամենայն, որ ինչ է ի մարդ, ճշմարտապէս եւ ոչ կարծեօք:

Չարչարեալ, խաչեալ, թաղեալ, յերրորդ աւուր յարուցեալ, ելեալ ի յերկինս՝ նովին մարմնովն նստաւ ընդ աջմէ Հօր: Գալոց է նովին մարմնովն եւ փառօք Հօր ի դատել զկենդանիս եւ զմեռեալս, որոյ թագաւորութեանն ոչ գոյ վախճան:

Հաւատամք եւ ի Սուրբ Հոգին, յանեղն եւ ի կատարեալն, որ խօսեցաւ յՕրէնս եւ ի Մարգարէս

եւ յԱւետարանս. որ էջն ի Յորդանան, քարոզեաց յառաքեալսն եւ բնակեցաւ ի սուրբսն:

Հաւատամք եւ ի մի միայն ընդհանրական եւ առաքելական Եկեղեցի: Ի մի մկրտութիւն՝ յապաշխարութիւն, ի քաւութիւն եւ ի թողութիւն մեղաց: Ի յարութիւն մեռելոց, ի դատաստանսն յաւիտենից՝ հոգւոց եւ մարմնոց, յարքայութիւնն երկնից եւ ի կեանսն յաւիտենականս:

Քհն. *Իսկ մեք փառաւորեսցուք որ յառաջ քան զյաւիտեանս երկիր պագանելով սրբոյ Երրորդութեանն եւ մի Աստուածութեան՝ Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն:*

ՔԱՐՈԶ ԱՂԱՉԱԿԱՆ

Սրկ. *Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք:*

Դպր. *Տէր, ողորմեա՛:*

Սրկ. *Եւ եւս հաւատով աղաչեսցուք եւ խնդրեսցուք ի Տեառնէ Աստուծոյ եւ ի փրկչէն մերմէ Յիսուսէ Քրիստոսէ՝ ի ժամուս պաշտաման եւ աղօթից, զի արժանի ընդունելութեան արասցէ, լուիցէ ձայնի աղաչանաց մերոց, ընկալցի զխնդրուածս սրտից մերոց, թողցէ զյանցանս մեր, ողորմեսցի ի վերայ մեր:*

Դպր. *Կեցո՛, Տէր: Շնորհեա՛, Տէր (3 անգամ): Տէր, ողորմեա՛: Քեզ Տեառնդ յանձն եղիցուք: Տէր, ողորմեա՛. Տէր, ողորմեա՛. Տէր, ողորմեա՛:*

Քհն. Որպէս զի արժանաւորք եղիցուք գոհութեամբ փառաւորել զքեզ ընդ Հօր եւ ընդ Սուրբ Հոգւոյդ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւի-տենից. Ամէն:

Խաղաղութիւն † ամենեցուն:

Դպր. *Եւ ընդ հոգւոյդ քում:*

Սրկ. *Աստուծոյ երկրպագեսցուք:*

Դպր. *Առաջի քո, Տէր:*

Քհն. Խաղաղութեամբ քով Քրիստոս փրկիչ մեր, որ ի վեր է քան զամենայն միտս եւ զբանս, ամրացո՛ զմեզ եւ աներկիւղ պահեա՛ յամենայն չարէ: Հաւասարեա՛ զմեզ ընդ ճշմարիտ երկր-պագուս քո, որք հոգւով եւ ճշմարտութեամբ քեզ երկիր պագանեն: Վասն զի ամենասուրբ Երրորդու-թեանդ վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւի-տենից. Ամէն:

Օրհնեալ Տէր մեր Յիսուս Քրիստոս:

Սրկ. *Օրհնեա՛, Տէր:*

Քհն. Տէր Աստուած … օրհնեսցէ զամենեսեանդ:

Դպր. *Ամէն:*

ՎԵՐՋ ԵՐԵԽԱՅԻՑ ՊԱՏԱՐԱԳԻ ԵՒ ՃԱՇՈՒ ՊԱՇՏԱՄԱՆ

ԿԱՆՈՆ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳԻ

Արտաքսումն երախայից

Սրկ. *Մի՛ ոք յերախայից, մի՛ ոք ի թերահաւատից եւ մի՛ ոք յապաշխարողաց եւ յանմաքրից մերձեսցի յաստուածային խորհուրդս:*

Դպր. Մարմին տէրունական եւ արիւն փրկչական կայ առաջի. երկնային զօրութիւնքն յաներեւոյթս երգեն եւ ասեն անհանգիստ բարբառով. սուրբ, սուրբ, սուրբ, Տէր զօրութեանց:

Սրկ. *Սաղմոս ասացէք Տեառն Աստուծոյ մերոյ, դպիրք, ձայնիւ քաղցրութեամբ, զերգս հոգեւորս:*

ՎԵՐԱԲԵՐՈՒՄ

Եւ ի սարկաւագացն վերաբերցի սրբազան հացն եւ օրհնութեան բաժակն ի սուրբ սեղանն: Թէ հանդիսաւոր օր լինի եւ զԽորհուրդն վերաբերել կամիցիս, այս է արարողութիւնն … :

ՍՐԲԱՍԱՑՈՒԹԻՒՆՔ

Կիւրակէի եւ Եկեղեցւոյ

Հրեշտակային կարգաւորութեամբ լցէր, Աստուած, զքո սուրբ զԵկեղեցի: Հազարք հազարաց հրեշտակապետք կան առաջի քո, եւ բիւրք բիւրուց հրեշտակք պաշտեն զքեզ, Տէր: Եւ ի մարդկանէ հաճեցար ընդունել զօրհնութիւնս ձայնիւ խորհրդականաւ. սուրբ, սուրբ, սուրբ, Տէր զօրութեանց:

Ծննդեան եւ Աստուածածնի

Բազմութիւնք հրեշտակաց եւ զօրաց երկնաւորաց իջեալ ի յերկնից ընդ միածին Թագաւորին: Որք երգէին եւ ասէին. Սա է Որդին Աստուծոյ: Ամենեքեան ասասցուք. Ուրախ լերուք, երկինք, եւ ցնծացսեն հիմունք աշխարհի. զի Աստուածն յաւիտենական ի յերկրի երեւեցաւ եւ ընդ մարդկան շրջեցաւ, զի կեցուսցէ զանձինս մեր:

Զատկին եւ Յինանց

Ո՞վ է որպէս Տէր Աստուած մեր. խաչեցաւ վասն մեր, թաղեցաւ եւ յարեաւ, հաւատարիմ եղեւ աշխարհի եւ համբարձաւ փառօք: Եկա՛յք, ժողովուրդք, զօրհնութիւնս ընդ հրեշտակս երգեսցուք

նմա ասելով. սուրբ, սուրբ, սուրբ, Տէր Աստուած մեր:

Լուացումն ձեռաց

ՔԱՐՈԶ ՅՈՐԴՈՐԱԿԱՆ

Սրկ. *Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք:*

Դպր. *Տէր, ողորմեա՛:*

Սրկ. *Եւ եւս հաւատով եւ սրբութեամբ կացցուք յաղօթս առաջի սրբոյ սեղանոյս Աստուծոյ, ահիւ: Մի՛ խղճիւ եւ գայթակղութեամբ, մի՛ նենգութեամբ, խորամանկութեամբ, մի՛ պատրանօք եւ խաբէութեամբ, մի՛ երկմտութեամբ եւ մի՛ թերահաւատութեամբ. այլ ուղիղ վարուք, պարզ մտօք, միամիտ սրտիւ, կատարեալ հաւատով, լցեալ սիրով, լի եւ առաւելեալ ամենայն գործովք բարութեան ... :*

Դպր. *Կեցո՛, Տէր, եւ ողորմեա՛:*

Քհն. Շնորհօք եւ մարդասիրութեամբ Տեառն մերոյ եւ Փրկչին Յիսուսի Քրիստոսի, ընդ որում քեզ Հօր, միանգամայն եւ Հոգւոյդ սրբոյ, վայելէ փառք իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

Խաղաղութիւն † ամենեցուն:

Դպր. *Եւ ընդ հոգւոյդ քում:*

Սրկ. *Աստուծոյ երկրպագեսցուք:*

Դպր. *Առաջի քո, Տէր:*

ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՈՂՋՈՅՆ

Սրկ. *Ողջոյն տուք միմեանց, ի համբոյր սրբութեան, եւ որք ոչ էք կարողք հաղորդել աստուածային խորհրդոյս, եւ առ դրունս էք՝ աղօթեցէք:*

Դպր. *Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ,*
որ Էնն Աստուած աստ բազմեցաւ:
Խաղաղութեան ձայն հնչեցաւ,
սուրբ ողջունիս հրաման տուաւ:
Եկեղեցիս մի անձն եղաւ,
համբոյրս յօդ լրման տուաւ,
թշնամութիւնն հեռացաւ,
սէրն ընդ հանուրս սփռեցաւ:
Արդ՝ պաշտօնեայք, բարձրեալ զձայն,
տո՛ւք օրհնութիւն ի մի բերան,
միասնական Աստուածութեան,
որում սրովբէքն են սրբաբան:

ՅՈՐԴՈՐ ԵՒ ԵՐԳ ՍԵՐՈՎԲԷԱԿԱՆ

Սրկ. *Ահիւ կացցուք, երկիւղիւ կացցուք, բարւոք կացցուք. եւ նայեցարո՛ւք զգուշութեամբ:*

Դպր. *Առ քեզ, Աստուած:*

Սրկ. *Պատարագ Քրիստոս մատչի Գառն Աստուծոյ:*

Դպր. *Ողորմութիւն եւ խաղաղութիւն եւ պատարագ օրհնութեան:*

Քհն. Շնորհք, սէր եւ աստուածային սրբարար զօրութիւնն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, եղիցի ընդ ձեզ, † ընդ ամենեսեան:

Դպր. *Ամէն: Եւ ընդ հոգւոյդ քում:*

Սրկ. *Զդրունս, զդրունս, ամենայն իմաստութեամբ եւ զգուշութեամբ: Ի վեր ընծայեցուցէք զմիտս ձեր աստուածային երկիւղիւ:*

Դպր. *Ունիմք առ քեզ, Տէր ամենակալ:*

Սրկ. *Եւ գոհացարո՛ւք զՏեառնէ բոլորով սրտիւ:*

Դպր. *Արժան եւ իրաւ:*

Սրկ. *Օրհնեա՛, Տէր:*

Քհն. Եւ ընդ Սերովբէսն եւ ընդ Քերովբէսն միաձայն սրբասացութեամբ յօրինել նուագս, եւ համարձակապէս գոչելով՝ աղաղակել ընդ նոսին եւ ասել:

Դպր. *Սուրբ, սուրբ, սուրբ, Տէ՛ր զօրութեանց: Լի են երկինք եւ երկիր փառօք քո. օրհնութիւն ի բարձունս: Օրհնեալ որ եկիր եւ գալոց ես անուամբ Տեառն. Ովսաննա՛ ի բարձունս:*

ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ Ս. ԽՈՐՀՐԴՈՅՆ

Քհն. ԱՌԷ՛Ք, ԿԵՐԷ՛Ք, ԱՅՍ Է ՄԱՐՄԻՆ ԻՄ, ՈՐ ՎԱՍՆ ՁԵՐ ԵՒ ԲԱԶՄԱՑ ԲԱՇԽԻ, Ի ՔԱՀՈՒԹԻՒՆ ԵՒ Ի ԹՈՂՈՒԹԻՒՆ ՄԵՂԱՑ:

Դպր. *Ամէն:*

Քհն. ԱՐԲԷ՛Ք Ի ՍՄԱՆԷ ԱՄԵՆԵՔԵԱՆ. ԱՅՍ Է ԱՐԻՒՆ ԻՄ ՆՈՐՈՅ ՈՒԽՏԻ, ՈՐ ՅԱՂԱԳՍ ՁԵՐ ԵՒ ԲԱԶՄԱՑ ՀԵՂԱՆԻ, Ի ՔԱՀՈՒԹԻՒՆ ԵՒ Ի ԹՈՂՈՒԹԻՒՆ ՄԵՂԱՑ:

ՄԱՏՈՒՑՈՒՄՆ

Դպր. *Ամէն: Հայր երկնաւոր, որ զՈրդիդ քո ետուր ի մահ վասն մեր, պարտապան պարտեաց մերոց. հեղմամբ արեան նորա աղաչեմք զՔեզ՝ ողորմեա՛ քո բանաւոր հօտիս:*

Քհն. Եւ զքոյս ի քոյոցս Քեզ մատուցանեմք՝ ըստ ամենայնի եւ յաղագս ամենեցուն:

Դպր. *Յամենայնի օրհնեալ ես, Տէ՛ր. օրհնեմք զՔեզ, գովեմք զՔեզ. գոհանամք զՔէն, աղաչեմք զՔեզ, Տէր Աստուած մեր:*

Քհն. Խաղաղութիւն † ամենեցուն:

Դպր. *Եւ ընդ հոգւոյդ քում:*

Սրկ. *Աստուծոյ երկրպագեսցուք:*

Դպր. *Առաջի քո, Տէր: Որդի Աստուծոյ, որ պատարագեալ Հօր ի հաշտութիւն, հաց կենաց բաշխիս ի մեզ. հեղմամբ արեան քոյ սուրբ, աղաչեմք զՔեզ, ողորմեա, արեամբ քով փրկեալ հօտի:*

ԿՈՉՈՒՄՆ Ս. ՀՈԳԻՈՅՆ

Քհն. Որպէս զի եղիցի սա ամենեցուն մեզ մերձեցելոցս՝ յանդատապարտութիւն, ի քաւութիւն եւ ի թողութիւն մեղաց:

Դպր. *Հոգի Աստուծոյ, որ զփառակցի քո զխորհուրդ իջեալ ի յերկնից կատարես ի ձեռս մեր. հեղմամբ արեան սորա, աղաչեմք զՔեզ, հանգո՛ զհոգիս մեր ննջեցելոց:*

ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆՔ

Քհն. Ընդ որս եւ մեզ այց արասցես, բարերար Աստուած, աղաչեմք:

Դպր. *Յիշեա՛, Տէր, եւ ողորմեա՛:*

Քհն. Աստուածածնին սրբոյ Կուսին Մարիամու եւ Յովհաննու Մկրտչին, Ստեփանոսի նախավկային եւ ամենայն սրբոց եղիցի յիշատակ ի սուրբ պատարագս, աղաչեմք:

Դպր. *Յիշեա՛, Տէր, եւ ողորմեա՛:*

Սրկ. *Առաքելոց սրբոց, մարգարէից, վարդապետաց, մարտիրոսաց եւ ամենայն հայրապետաց սրբոց, առաքելագործ եպիսկոպոսաց, երիցանց, ուղղափառ սարկաւագաց եւ ամենայն սրբոց, եղիցի յիշատակ ի սուրբ պատարագս, աղաչեմք:*

Դպր. *Յիշեա՛, Տէր, եւ ողորմեա՛:*

Սրկ. *Օրհնեալ, գովեալ եւ փառաւորեալ, հրաշալի եւ աստուածազարդ ¥Յարութեանն¤ Քրիստոսի երկիր պագանեմք:*

Դպր. *Փառք Յարութեան քոյ, Տէր:*

Սրկ. *Առաջնորդացն մերոց եւ առաջին Լուսաւորչացն սրբոց, Թադէոսի եւ Բարթուղիմէոսի առաքելոցն եւ Գրիգորի Լուսաւորչին, Արիստակիսի, Վրթանիսի, Յուսկանն, Գրիգորիսի, Ներսիսի, Սահակայ, Դանիելի եւ Խադայ, Մեսրոպայ Վարդապետին եւ Գրիգորի Նարեկացւոյն եւ Ներսիսի Կլայեցւոյն եւ Ներսիսի Լամբրոնացւոյն, եւ ամենայն սրբոց հովուաց եւ հովուապետացն Հայաստանեայց, եղիցի յիշատակ ի սուրբ պատարագս, աղաչեմք:*

Դպր. *Յիշեա՛, Տէր, եւ ողորմեա՛:*

Սրկ. *Միանձնացելոց սրբոց, առաքինասէր եւ աստուածուսոյց կրօնաւորացն՝ Պողոսի, Անտոնի, Պողայ, Մակարայ, Ոնոփրիոսի, աբբայ Մարկոսի, Սրապիոնի, Նեղոսի, Արսենի, Եւագրի, Յովհաննիսեանց եւ Սիմէոնեանց, սրբոց Ոսկեանց եւ Սուքիասեանց եւ ամենայն սրբոց Հարց եւ աշակերտելոց նոցին ընդ տիեզերս, եղիցի յիշատակ ի սուրբ պատարագս, աղաչեմք:*

Դպր. *Յիշեա՛, Տէր, եւ ողորմեա՛:*

Սրկ. *Թագաւորաց հաւատացելոց սրբոց՝ Աբգարու, Կոստանդիանոսի, Տրդատայ եւ Թէոդոսի եւ ամենայն սրբոց եւ բարեպաշտ թագաւորաց եւ աստուածասէր իշխանաց, եղիցի յիշատակ ի սուրբ պատարագս, աղաչեմք:*

Դպր. *Յիշեա՛, Տէր, եւ ողորմեա՛:*

Սրկ. *Ընդհանուր ամենայն հաւատացելոց, արանց եւ կանանց, ծերոց եւ տղայոց, եւ ամենայն չափու հասակի հաւատով եւ սրբութեամբ ի Քրիստոս ննջեցելոց, եղիցի յիշատակ ի սուրբ պատարագս, աղաչեմք:*

Դպր. *Յիշեա՛, Տէր, եւ ողորմեա՛:*

Քհն. Եւս առաւել զՍրբազան (***) շնորհեսցես մեզ ընդ երկայն աւուրս ուղիղ վարդապետութեամբ:

Սրկ. *Գոհութիւն եւ փառաբանութիւն մատուցանեմք քեզ, Տէր Աստուած մեր, վասն սուրբ եւ անմահ պատարագիս՝ որ ի վերայ սրբոյ սեղանոյս. զի զսա մեզ ի սրբութիւն կենդանութեան պարգեւեսցես: Սովաւ շնորհեա՛ զսէր,*

զհաստատութիւն եւ զբղձալի զխաղաղութիւն ամենայն աշխարհի, Սրբոյ Եկեղեցւոյ եւ ամենայն ուղղափառ եպիսկոպոսաց: Եւս առաւել Սրբազան (***) որ զպատարագս մատուցանէ: Եւ վասն զօրութեան եւ յաղթութեան թագաւորաց քրիստոնէից եւ իշխանացն բարեպաշտից: Աղաչեսցուք եւ խնդրեսցուք եւ վասն հոգւոցն հանգուցելոց: Եւս առաւել վասն հանգուցեալ ռաբունապետացն մերոց եւ շինողաց սուրբ եկեղեցւոյս, եւ որք ընդ հովանեաւ սորին են հանգուցեալ: Ազատութիւն եղբարց մերոց գերելոց, եւ շնորհ առաջիկայ ժողովրդեանս: Հանգիստ հաւատով եւ սրբութեամբ ի Քրիստոս կատարելոցն. եղիցի յիշատակ ի սուրբ պատարագս. աղաչեմք:

Դպր. *Ըստ ամենայնի եւ յաղագս ամենեցուն:*

ՎԵՐՋ ԿԱՆՈՆ ՍՐԲՈՅ ՊԱՏԱՐԱԳԻ

Քհն. Եւ եղիցի ողորմութիւն մեծիս Աստուծոյ եւ Փրկչիս մերոյ Յիսուսի Քրիստոսի՝ ընդ ձեզ, ընդ է ամենեսեան:

Դպր. *Ամէն: Եւ ընդ հոգւոյդ քում:*

ՔԱՐՈԶ ԱՂԱՉԱԿԱՆ

Սրկ. *Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք:*

Դպր. Տէր, ողորմեա՛:

Սրկ. *Ամենայն սրբովք՝ զորս յիշատակեցաք, եւս առաւելապէս զՏէր աղաչեսցուք:*

Դպր. *Տէր, ողորմեա՛:*

Սրկ. *Վասն մատուցեալ սուրբ եւ աստուածային պատարագիս, որ ի վերայ սրբոյ սեղանոյս, զՏէր աղաչեսցուք:*

Դպր. *Տէր, ողորմեա՛:*

Սրկ. *Որպէսզի Տէր Աստուած մեր, որ ընկալաւ զսա ի սուրբ, յերկնային եւ յիմանալի իւր մատուցարանն. եւ զփոխանակն առաքեսցէ առ մեզ զշնորհս եւ զպարգեւս Հոգւոյն Սրբոյ, զՏէր աղաչեսցուք:*

Դպր. *Տէր, ողորմեա՛:*

Սրկ. *Ընկալ՛, կեցո՛ եւ ողորմեա՛ եւ պահեա՛ զմեզ, Տէր, քոյին շնորհիւդ:*

Դպր. *Կեցո՛, Տէր եւ ողորմեա՛:*

Սրկ. *Զամենասրբուհի զԱստուածածինն զմիշտ Կոյսն Մարիամ՝ հանդերձ ամենայն սրբովք յիշելով, զՏէր աղաչեսցուք:*

Դպր. *Յիշեա՛, Տէր եւ ողորմեա՛: Տէր, ողորմեա՛: Քեզ Տէառնդ յանձն եղիցուք: Տէր, ողորմեա՛. Տէր, ողորմեա՛. Տէր, ողորմեա՛:*

ԱՂՕԹՔ ՏԷՐՈՒՆԱԿԱՆ

Քհն. Եւ տուր մեզ համարձակաձայն բարբառով բանալ զբերանս մեր, կարդալ զքեզ՝ երկնաւորդ Հայր, երգել եւ ասել:

Դպր. *Հայր մեր, որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն քո, եկեսցէ արքայութիւն քո, եղիցին կամք քո, որպէս յերկինս եւ յերկրի:*
Զհաց մեր հանապազորդ տո՛ւր մեզ այսօր,

եւ թո՛ղ մեզ զպարտիս մեր, որպէս եւ մեք թողումք մերոց պարտապանաց, եւ մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն: Այլ փրկեա՛ ի չարէ:

Քհն. Զի քո է արքայութիւն եւ զօրութիւն եւ փառք յաւիտեանս. Ամէն:

Խաղաղութիւն † ամենեցուն:

Դպր. *Եւ ընդ հոգւոյդ քում:*

Սրկ. *Աստուծոյ երկրպագեսցուք:*

Դպր. *Առաջի քո, Տէր:*

Եւ Խոնարհեսցի ամենայն ժողովուրդն …

ԲԱՐՁՐԱՑՈՒՄՆ ԵՒ ՀՐԱՒԷՐ Ս. ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ

Սրկ. *Օրհնեա՛, Տէր:*

Քհն. Քրիստոսիւ Յիսուսիւ Տերամբ մերով, ընդ որում քեզ Հոգւոյդ Սրբոյ եւ Հօր ամենակալի՝ վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

Սրկ. *Պռոսխումէ:*

Քհն. Ի Սրբութիւն սրբոց:

Դպր. *Միայն սուրբ, միայն Տէր, Յիսուս Քրիստոս ի փառս Աստուծոյ Հօր. Ամէն:*

Քհն. Օրհնեալ Հայր սուրբ Աստուած ճշմարիտ:

Դպր. *Ամէն:*

Քհն. *Օրհնեալ Որդիդ սուրբ Աստուած ճշմարիտ:*

Դպր. *Ամէն:*

Քհն. Օրհնեալ Հոգիդ սուրբ Աստուած ճշմարիտ:

Դպր. *Ամէն:*

Քհն. Օրհնութիւն եւ փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից:

Դպր. *Ամէն. Հայր Սուրբ, Որդիդ Սուրբ, Հոգիդ Սուրբ: Օրհնութիւն Հօր եւ Որդւոյ եւ Սրբոյ Հոգւոյն. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն:*

Քհն. Ի սուրբ, ի սուրբ, պատուական մարմնոյ եւ յարենէ Տեառն մերոյ եւ փրկչին Յիսուսի Քրիստոսի, ճաշակեսցուք սրբութեամբ, որ իջեալ ի յերկնից՝ բաշխի ի միջի մերում: Սա՛ է կեանք, յոյս, յարութիւն, քաւութիւն եւ թողութիւն մեղաց: Սաղմոս ասացէ՛ք Տեառն Աստուծոյ մերոյ, սաղմոս ասացէք երկնաւոր թագաւորիս մերոյ անմահի, որ նստի ի կառս քերովբէականս:

Սրկ. *Սաղմոս ասացէք Տեառն Աստուծոյ մերոյ, դպիրք, ձայնիւ քաղցրութեամբ, զերգս հոգեւորս: Զի սմա վայելեն սաղմոսք եւ օրհնութիւնք, ալէլուք եւ երգք հոգեւորք: Պաշտօնեայք, հանդերձ երգովք սաղմոս ասացէք եւ զՏէր յերկինս օրհնեցէք:*

ԵՐԳ ԱՌ ՔՐԻՍՏՈՍ ՊԱՏԱՐԱԳԵԱԼ

Դպր. *Օրհնեալ է Աստուած:*
Քրիստոս պատարագեալ բաշխի ի միջի մերում. ալէլուիա:
Զմարմին իւր տայ մեզ կերակուր եւ սուրբ զարիւն
իւր ցողէ ի մեզ. ալէլուիա:

Մատիք առ Տէր եւ առէք զլոյս. ալէլուիա:
Ճաշակեցէք եւ տեսէք, զի քաղցր է Տէր. ալէ-լուիա:
Օրհնեցէք զՏէր յերկինս. ալէլուիա:
Օրհնեցէք զնա ի բարձունս. ալէլուիա:
Օրհնեցէք զնա, ամենայն հրեշտակք նորա. ալէ-լուիա:
Օրհնեցէք զնա, ամենայն զօրութիւնք նորա. ալէլուիա:

ՀԱՅՑՈՒԱԾ ԹԱԽՃԱԳԻՆ

Դպր. *Տէր, ողորմեա՛. Տէր, ողորմեա՛.*
Տէր, ողորմեա՛. Տէր, ողորմեա՛:
Ամենասուրբ Երրորդութիւն,
Տո՛ւր աշխարհիս խաղաղութիւն,
Եկեղեցւոյ պայծառութիւն,
Ազգիս Հայոց՝ սէր, միութիւն.
Եւ հիւանդաց առողջութիւն:
Ննջեցելոց արքայութիւն:
Տէր, ողորմեա՛. Տէր, ողորմեա՛.
Յիսուս Փրկիչ, մեզ ողորմեա՛:

ԲԱՇԽՈՒՄՆ Ս. ԽՈՐՀՐԴՈՅ

Սրկ. *Երկիւղիւ եւ հաւատով յառաջ մատիք եւ սրբու-թեամբ հաղորդեցարուք: Ասացէք. մեղայ Աստուծոյ: Հաւատամք ի Հայր սուրբ Աստուած ճշմարիտ. հաւատամք յՈրդին սուրբ Աստուած ճշմարիտ. հաւատամք ի Հոգին սուրբ Աստուած*

ճշմարիտ: Խոստովանիմք եւ հաւատամք՝ զի սա է ճշմարիտ Մարմին եւ Արիւն Տեառն մերոյ եւ Փրկչին Յիսուսի Քրիստոսի, որ բառնայ զմեղս աշխարհի:

Եւ ամենայն արժանաւոր ժողովուրդն հաղորդեսցին:

Դպր. *Աստուած մեր եւ Տէր մեր երեւեցաւ մեզ, օրհնեալ, եկեալ անուամբ Տեառն:*

Քհն. Կեցո՛, Տէր, զժողովուրդս քո եւ օրհնեա՛ զժառանգութիւնս քո. հովուեա՛ եւ բարձրացո՛ զսոսա յայսմհետէ մինչեւ յաւիտեան:

ԳՈՀԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Դպր. *Լցաք ի բարութեանց քոց, Տէ՛ր. ճաշակելով զմարմին քո եւ զարիւն. փառք ի բարձունս կերակրողիդ զմեզ: Որ եւ հանապազ կերակրես զմեզ. առաքեա՛ ի մեզ զհոգեւոր քո զօրհնութիւն. փառք ի բարձունս կերակրողիդ զմեզ:*

Սրկ. *Ամէն: Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք:*

Դպր. *Տէր, ողորմեա՛:*

Սրկ. *Եւ եւս հաւատով ընկալեալք յաստուածային, սուրբ, յերկնային, յանմահ, յանարատ եւ յանապական խորհրդոյս, զՏեառնէ գոհացարուք:*

Դպր. *Գոհանամք զքեն, Տէ՛ր, որ կերակրեցեր զմեզ յանմահական սեղանոյ քոյ, բաշխելով զմարմին եւ զարիւնդ ի փրկութիւն աշխարհի, եւ կեանք անձանց մերոց:*

ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐՁԱԿՈՒՄՆ

Սրկ. *Օրհեա՛, Տէր:*

Քհն. Որ օրհնես զայնոսիկ, որք օրհնեն զքեզ, Տէր, եւ սուրբ առնես զյուսացեալս ի քեզ:

Դպր. *Օրհնեալ է Աստուած:*

Քհն. Կեցո՛ զժողովուրդս քո եւ օրհնեա՛ զժառանգութիւնս քո: Զլրումն Եկեղեցւոյ քոյ պահեա՛: Սրբեա՛ զսոսա, որք ողջունեցին սիրով զվայելչութիւն տան քոյ:

Դպր. *Ամէն:*

Քհն. Դու զմեզ փառաւորեա՛ աստուածային զօրութեամբ քով եւ մի՛ թողուր զյուսացեալս ի քեզ:

Դպր. *Ամէն:*

Քհն. Զխաղաղութիւն քո պարգեւեա՛ ամենայն աշխարհի, եկեղեցեաց, քահանայից, թագաւորաց քրիստոնէից .... եւ զինուորեալ մանկանց նոցա եւ ամենայն ժողովրդեանս:

Դպր. *Ամէն:*

Քհն. Զի ամենայն տուրք բարիք եւ ամենայն պարգեւք կատարեալք ի վերուստ են իջեալ առ ի քէն, որ ես Հայրդ լուսոյ. եւ քեզ վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից:

Դպր. *Ամէն. եղիցի անուն Տեառն օրհնեալ, յայսմհետէ մինչեւ յաւիտեան. եղիցի անուն Տեառն օրհնեալ, յայսմհետէ մինչեւ յաւիտեան: Եւ եղիցի անուն Տեառն օրհնեալ, յայսմհետէ մինչեւ յաւիտեան:*

Քհն. Կատարումն օրինաց եւ մարգարէից դու ես, Քրիստոս Աստուած Փրկիչ մեր, որ լցեր

զամենայն հայրական տնօրէնութիւնս քո. լցո՛ եւ զմեզ Հոգւովդ քով Սրբով:

Սրկ. *Սուրբ խաչիւս աղաչեսցուք զՏէր, զի սովաւ փրկեսցէ զմեզ ի մեղաց եւ կեցուսցէ շնորհիւ ողորմութեան իւրոյ: Ամենակալ Տէր Աստուած մեր, կեցո՛ եւ ողորմեա՛:*

Քհն. Պահպանիչ եւ յոյս հաւատացելոց, Քրիստոս Աստուած մեր, պահեա՛, պահպանեա՛ եւ օրհնեա՛ զժողովուրդս քո, ընդ հովանեաւ սուրբ եւ պատուական խաչիւդ քով ի խաղաղութեան, փրկեա՛ յերեւելի եւ յաներեւոյթ թշնամւոյն. արժանաւորեա՛ գոհութեամբ փառաւորել զքեզ ընդ Հօր եւ ընդ Սրբոյ Հոգւոյդ, այժմ եւ միշտ եւ յաիտեանս յաւիտենից. Ամէն:

Դպր. *Օրհնեցից զՏէր յամենայն ժամ, յամենայն ժամ օրհնութիւն նորա ի բերան իմ:*

Քհն. Օրհնեալ եղերուք ի շնորհաց Սուրբ Հոգւոյն, երթա՛յք խաղաղութեամբ, եւ Տէր եղիցի ընդ ձեզ, ընդ ամենեսեանդ. Ամէն:

Եթէ պատարագիչն է ինքն Հայրապետը, դպիրները երգում են.

Կեցո՛ զորդի ծառայի քոյ, զոր ի Հռովմայ գահիցն վերապատուեցեր, ուր եդին զվէմն հաւատոյ հիման Սուրբ Եկեղեցւոյ:

ՊԱՇՏՕՆ ՀԱՆԳՍՏԵԱՆ

Սրկ. *Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք. ընկալ՛, կեցո՛ եւ ողորմեա՛:*

Քհն. Օրհնութիւն եւ փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

Ճարական ԲԿ.

Որ յանէից ստեղծող գոյից, արարչակից Հօր, Բանդ Աստուած, թողութիւն շնորհեա՛ ննջեցելոց քոց ծառայից, յորժամ գաս դատել զոր անարատ ձեռօք ստեղծեր:

Որ ի Հօրէ առաքեցար եւ մարմնացար ի սուրբ Կուսէն, թողութիւն շնորհեա՛…:

Փառք Հօր…: Այժմ եւ միշտ …:

Որ պսակիչդ ես քոց սրբոց եւ անվախճան բարեաց բաշխող, թողութիւն շնորհեա՛…:

Սաղմոս ՃԻԹ.

Սրկ. *Ալէլուիա, ալէլուիա:*
Ի խորոց կարդացի առ քեզ, Տէր, Տէր, լո՛ւր ձայնի իմում:
Եղիցին ականջք քո ի լսել զձայն աղօթից իմոյ:
Ալէլուիա. Օրթի:

Քհն. Խաղաղութիւն … ամենեցուն:

Դպր. *Եւ ընդ հոգւոյդ քում:*

Սրկ. *Երկիւղածութեամբ լուարուք:*

Քհն. Սրբոյ Աւետարանիս Յիսուսի Քրիստոսի որ ըստ Յովհաննու.

Դպր. *Փառք քեզ, Տէր Աստուած մեր:*

Սրկ. *Պռոսխումէ:*

Դպր. *Ասէ Աստուած:*

Քհն. † Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ. Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ, եթէ ցորենի հատիկը հողի մէջ ընկնելով չմեռնի, միայն հատիկն ինքը կը մնայ, իսկ եթէ մեռնի, բազում արդիւնք կը տայ: Ով սիրում է իր անձը, կը կորցնի այն, իսկ ով այս աշխարհում իր անձն ատում է, այն կը պահի յաւիտենական կեանքի համար: Եթէ մէկն ինձ ծառայի՝ իմ ետեւից կը գայ. եւ ուր ես եմ՝ այնտեղ կը լինի նաեւ իմ ծառան. եթէ մէկը ինձ ծառայի, նրան կը պատուի իմ Հայրը (ԺԲ. 24–26):

Դպր. *Փառք քեզ, Տէր Աստուած մեր:*

Երգ

Քահանայք եւ ժողովուրդք հայցեմք ի քէն, Տէր բարեգութ, ընդ նընջեցեալսըն հաւատով ընկա՛լ ըզմեզ նովին յուսով. յԵրուսաղէմ քաղաք վերին, յորում արդարքըն ժողովին. փառս վերերգել միշտ ընդ նոսին, Երրորդութեանդ երրեակ անձին:

Երգ՝ աշխարհական ննջեցեալների համար.

Ի վերին Երուսաղէմ, ի բնակարանըս հրեշ-տակաց, ուր Ենովք եւ Հեղիաս կան ծերացեալ աղաւնակերպ, ի դրախտին եդեմական, պայծա-ռացեալ արժանապէս. ողորմած Տէր, ողորմեա՛ հոգւոցըն մեր նընջեցելոց:

Եթէ ննջեցեալը հոգեւորական է, երգում են.

Ահեղ խորհուրդ քահանային, բազկատարած կայր ի բեմին, առաջի սուրբ սեղանոյն, հուր շիջանի, խաւար մերժի, տրտմեալ հոգիքն ուրախանան, զի թողութիւն մեղաց լինի, ողորմած Տէր, ողորմեա՛ հոգւոցըն մեր ննջեցելոց:

Քհն. Հանգուցեալիս հոգուն, Քրիստոս Աստուած, պարգեւի՛ր հանգիստ եւ ողորմութիւն, եւ մեզ՝ մեղաւորներիս շնորհի՛ր յանցանքների թողութիւն:

Սրկ. *Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք: Հանգուցեալիս հոգուն համար աղաչենք մեր Փրկիչ Քրիստոսին, որպէսզի սրան դասաւորի արդարների մէջ, եւ մեզ պահի իւր ողորմութեամբ: Ամենակալ Տէր Աստուած մեր, կեցո՛ եւ ողորմեա՛:*

Քհն. Տէ՛ր, ողորմեա՛. Տէ՛ր, ողորմեա՛. Տէ՛ր, ողորմեա՛:

Աղօթք

Քրիստոս, Որդի Աստծու, անոխակալ եւ բարեգութ, գթա՛ քո արարչական սիրով՝ հանգուցեալ ծառայիդ (կամ՝ աղախնուդ) Ա.Ա. հոգուն, յիշի՛ր նրան քո արքայութեան գալստեան մեծ օրը, արժանացրո՛ւ ողորմութեան, քաւութեան եւ մեղքերի թողութեան: Պայծառացրո՛ւ դասելով քո սրբերի հետ, աջակողմեան դասում: Քանզի դու ես Տէրը եւ արարիչը ամէնքի, դատաւորը ողջերի

եւ մեռելների, եւ քեզ վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

Օրհնեալ Տէր մեր Յիսուս Քրիստոս. Ամէն:

Դպր. *Հայր մեր՝ որ յերկինս …:*

Քհն. Զի քո է արքայութիւն եւ զօրութիւն եւ փառք յաւիտեանս. Ամէն:

Քրիստոս Աստուած մեր, ողորմի՛ր համօրէն հաւատացեալ ննջեցեալների հոգիներին:

Դպր. *Օրհնեցից զՏէր յամենայն ժամ, յամենայն ժամ օրհնութիւն նորա ի բերան իմ:*

Քհն. Օրհնեալ եղերուք ի շնորհաց Սուրբ Հոգւոյն, երթա՛յք խաղաղութեամբ, եւ Տէր եղիցի ընդ ձեզ, ընդ ամենեսեանդ. Ամէն:

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆՆԵՐ

Կաթողիկէ (Ընդհանրական) Եկեղեցու վարդապետութիւնը ամփոփ եւ մատչելի շարադրուած կարելի է գտնել Կաթողիկէ Եկեղեցու Քրիստոնէականի մէջ: Ստորեւ ներկայացնում ենք միայն որոշ տարրական գիտելիքներ:

ԱՍՏՈՒԾՈՅ ՏԱՍԸ ՊԱՏՈՒԻՐԱՆՆԵՐԸ

1. Ե՛ս եմ քո Տէր Աստուածը, ինձնից բացի ուրիշ Աստուած չկայ:
2. Աստուծոյ անունը զուր տեղը մի՛ արտասանիր:
3. Աստուծոյ օրը սուրբ պահի՛ր:
4. Պատուի՛ր քո հօրն ու մօրը:
5. Մի՛ սպանիր:
6. Մի՛ շնացիր:
7. Մի՛ գողացիր:
8. Սուտ վկայութիւն մի՛ տուր:
9. Քո հարեւանի կնոջը մի՛ ցանկանայ:
10. Ուրիշի ունեցուածքին մի՛ նախանձիր:

ԵՂԵՂԵՑԻՈՅ ԵՕԹԸ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ

1. Մկրտութիւն
2. Դրոշմ

3. Ապաշխարութիւն
4. Հաղորդութիւն
5. Կարգ քահանայութեան
6. Պսակ
7. Հիւանդաց օծում

ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՈՒԻՐԱՆՆԵՐԸ

1. Կիրակի ու պարտաւորիչ տօներին մասնակցել Սուրբ Պատարագի ու հրաժարուել ծառայողական աշխատանքներից:
2. Պահել Եկեղեցու պահոց օրերը:
3. Տարին առնուազն մէկ անգամ խոստովանել:
4. Հաղորդուել Տիրոջ Սուրբ Մարմնին եւ Արեանը (յատկապէս, Զատկի շրջանում):
5. Օգնել Եկեղեցուն ըստ կարողութեան:

ԳԵՐԱԳՈՅՆ ՊԱՏՈՒԻՐԱՆԸ

«Պիտի սիրես քո Տէր Աստծուն՝քո ամբողջ սրտով, քո ամբողջ հոգով, քո ամբողջ զօրութեամբ եւ քո ամբողջ մտքով. եւ պիտի սիրես ընկերոջդ, ինչպէս քո անձը: *(Աւետարան ըստ Ղուկասի, 10, 27-28)*

ՏԷՐ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ՆՈՐ ՊԱՏՈՒԻՐԱՆԸ

«Նոր պատուիրան եմ տալիս ձեզ, որ սիրէք միմեանց. ինչպէս ես ձեզ սիրեցի, դուք էլ միմեանց

սիրեցէք: Եթէ դուք միմեանց սիրէք, դրանով բոլորը պիտի իմանան, որ դուք իմ աշակերտներն եքե: *(Աւետարան ըստ Յովհաննէսի, 13, 34-35)*

Ի՞ՆՉ Է ՄԵՂՔԸ

Մեղքը գիտակցուած ցանկութիւն, խօսք կամ արարք է, որը դէմ է Աստծո օրէնքին, մարդկային խղճին եւ բնական օրէնքին:

Մեղքը վիրաւորանք է Աստծու, ընկերոջ եւ ինքներս մեր հանդէպ:

ԾԱՆՐ ԵՒ ԹԵԹԵՒ ՄԵՂՔԵՐ

Ծանր է այն լիովին գիտակցուած, կամաւոր մեղքը, որը վիրաւորանք է Աստծոյ, ընկերոջ եւ սեփական անձի հանդէպ՝ ծանր հետեւանքներով, զրկում է մարդուն Աստուածային սրբարար շնորհից եւ Երկնքի Արքայութիւնից: Ծանր մեղքը սեփական հոգում մահացնում է սէրը՝ Աստծոյ եւ ընկերոջ հանդէպ: Ծանր մեղքերից ազատուելու համար անհրաժեշտ է ներում ստանալ՝ Խոստովանութեան Սբ. Խորհրդի միջոցով:

Թեթեւ է այն մեղքը, որը չունի ծանր հետեւանքներ եւ մարդուն չի զրկում Աստուածային շնորհից, բայց վիրաւորում է սէրն՝ Աստծոյ եւ ընկերոջ հանդէպ, կամ ունի ծանր հետեւանքներ, բայց լիովին գիտակցուած չէ: Թեթեւ մեղքերի ներման համար անհրաժեշտ չէ Խոստովանութեան

խորհուրդը, կարելի է զղջման ոգով ընդունել Սուրբ Հաղորդութիւնը՝ աղաչելով, որ Աստուած ների գործուած մեղքերը:

ԱՊԱՇԽԱՐՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Լաւ խոստովանութիւն կատարելու համար անհրաժեշտ է.

- խնամքով քննել խիղճը եւ յիշել մեղքերը.
- անկեղծօրէն զղջալ գործուած մեղքերի համար.
- մեղքերը խոստովանել խոստովանահօրը.
- մտադրուել այլեւս չմեղանչել.
- կատարել յանձնարարուած ապաշխարանքը:

ԽՂՃԻ ՔՆՆՈՒԹԻՒՆ
Ա. ՄԵՂՔԵՐ՝ ԱՍՏԾՈՅ ՀԱՆԴԷՊ

1. Թուլացրե՞լ եմ իմ սէրը Աստծոյ հանդէպ:
2. Ամաչու՞մ եմ ապրել ինչպէս քրիստոնեայ:
3. Արտաբերու՞մ եմ Աստծոյ անունն անյարկի:
4. Մեղք գործե՞լ եմ Սուրբ Երրորդութեան հանդէպ:
5. Սուտ երդում արե՞լ եմ Աստծոյ անունով:
6. Հաւատո՞ւմ եմ աստղագուշակներին, բախտագուշակներին, եւ այլ սնահաւատութիւնների:
7. Կիրակի օրերը Սուրբ Պատարագի յաճախե՞լ եմ:

8. Սբ. Պատարագի ժամանակ եկեղեցուց դուրս գտնուո՞ւմ եմ, կամ անհոգաբար ուշանո՞ւմ եմ Սբ. Պատարագից:
9. Կիրակի օրն այնպիսի գործ անո՞ւմ եմ, որը կարող էի յետաձգել յաջորդ օրուան:

Բ. ՄԵՂՔԵՐ՝ ԾՆՈՂԻ ԵՒ ԸՆԿԵՐՈՋ ՀԱՆԴԷՊ

1. Սիրո՞ւմ եմ ուրիշներին:
2. Արդեօ՞ք ծնողներիս հնազանդուե՞լ եմ կամ, գուցէ, արհամարհե՞լ եմ նրանց:
3. Ուրիշի հանդէպ մտածե՞լ եւ արտայայտուե՞լ եմ վատ բան:
4. Խաբո՞ւմ եմ, բամբասո՞ւմ եմ, զրպարտում եւ կռուեցնո՞ւմ եմ ուրիշներին:
5. Ուրիշին անիծե՞լ եմ:
6. Ուրիշին մարմնական վնասուածքներ հասցրե՞լ եմ:
7. Քինախնդիր եղե՞լ եմ եւ վրէժ լուծե՞լ եմ:
8. Ուրիշին ծանր խօսքերով (հայհոյանք) վիրաւորե՞լ եմ:
9. Ուրիշին մեղսակից դարձրե՞լ եմ ինձ:
10. Շնացե՞լ եմ:
11. Գողացածս ետ վերադարձրե՞լ եմ տիրոջը:
12. Անպարկեշտ խօսքեր ասե՞լ եմ, անպարկեշտ խօսակցութեան մասնակցե՞լ եմ:

13. Դպրոցում սպառնացել, ծեծել կամ վիրաւորե՞լ եմ արդեօք այլ աշակերտների:
14 Խլե՞լ եմ արդեօք կրտսեր դասընկերներիցս դրամ կամ այլ իրեր:
15. Հարբե՞լ եմ:
16. Նախանձե՞լ եմ որեւէ մէկին կամ խանդե՞լ եմ:

Դ. ՍԵՓԱԿԱՆ ԱՆՁԻ ՀԱՆԴԷՊ

1. Ինքնասէ՞ր եմ:
2. Նայել, կարդացել, մտածել եւ ուրիշի հետ զրուցե՞լ եմ անպարկեշտ բաների մասին:
3. Չե՞մ ուզում հեռանալ վատ մտքերից:
4. Ծառայե՞լ եմ մարմնական հաճոյքներին:
5. Դիտե՞լ եմ հեռուստատեսային անբարոյ հաղորդումներ, ինտերնետային գայթակղիչ կայքեր, ֆիլմեր, նկարներ:
6. Երկարատեւ խորհրդածութիւն ունեցե՞լ եմ սեռային յարաբերութիւնների, չար գործերի, ուրիշների հանդէպ վատ մտադրութիւնների մասին:
8. Ուսման կամ աշխատանքի մէջ ծուլացե՞լ եմ:
9. Թմրանիւթ օգտագործե՞լ եմ:
10. Շատակե՞ր եմ:
11. Զուր տեղը ժամանակ վատնե՞լ եմ:

ԵՕԹԸ ՄԱՀԱՑՈՒ ՄԵՂՔԵՐԸ[67]

1. Հպարտութիւն
2. Ագահութիւն
3. Անմաքրութիւն
4. Նախանձ
5. Որկրամոլութիւն
6. Բարկութիւն
7. Ծուլութիւն

ԽՈՍՏՈՎԱՆԻՄ[68] առաջի Աստուծոյ եւ առաջի քո, Հա՛յր Սուրբ (*Տէր Հայր*):

---

67 Այս եօթը մեղքերը կոչւում են «մահացու» կամ «հիմնական, արմատական» (cardinal), որովհետեւ պատճառ են դառնում այլ մեղքերի, բարոյական ապականութեան: Այս մեղքերի աւանդական ցանկը քրիստոնեայ աշխարհում տարածուած է վաղ միջնադարից՝ անապատական հայրերի, յատկապէս, Եւագրիոս Պոնտացու (345-399թթ.) գրուածքներից: Եօթը մահացու մեղքերի մասին գրուել են բազմաթիւ աշխատութիւններ, ստեղծուել գրական, արուեստի գործեր:

68 Այս աղօթքը պէտք է ասել խոստովանահօր առջեւ մեղքերը խոստովանելուց *առաջ*, բարձրաձայն:

ՋՂՋՄԱՆ ԱՂՕԹՔ[69]

Աստուա՛ծ իմ, սաստիկ ցաւում եմ քեզ վշտացնելուս համար, որովհետեւ անսահմանօրէն բարի ես եւ անհունօրէն սիրելի եւ ատում ես մեղքը: Քո սուրբ շնորհքով առաջադրում եմ այլեւս չմեղանչել եւ խուսափել մեղքի բոլոր առիթներից:

ԵՐԵՔ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՔԻՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ[70]

Հաւատ[71]

---

69 Այս աղօթքը պէտք է ասել խոստովանահօր առջեւ մեղքերը խոստովանելուց *յեփոյ*, բարձրաձայն:

70 «Աստուածաբանական առաքինութիւնները կապուած են ուղղակիօրէն Աստծոյ հետ: Դրանք քրիստոնեաներին տրամադրում են ապրել Սուրբ Երրորդութեան հետ յարաբերութեան մէջ: Դրանք իբրեւ ծագում, դրդապատճառ եւ առարկայ ունեն Մէկ եւ Եռամիասնական Աստծուն... Աստուած հեղում է դրանք հաւատացեալների հոգու մէջ, որպէսզի նրանց կարող դարձնի գործելու իբրեւ Իր որդիներ եւ արժանանալու յաւիտենական կեանքին...», *Քրիստոնէական Կաթողիկէ Եկեղեցւոյ, 1812-1813*

71 «Հաւատը աստուածաբանական այն առաքինութիւնն է, որով մենք հաւատում ենք Աստծուն ու Նրա յայտնածներին, որոնց Սուրբ Եկեղեցին առաջարկում է մեզ հաւատալ, որովհետեւ Աստուած Ինքնին Ճշմարտութիւնն է: Հաւատքով մարդն ինքն իրեն ամբողջովին ու ազատօրէն յանձնում է Աստծուն...», *Քրիստոնէական Կաթողիկէ Եկեղեցւոյ, 1814*

Յոյս[72]
Սէր[73]

ՍԻՐՈՅ (ՈՂՈՐՄՈՒԹԵԱՆ) ՆԻՒԹԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ[74]

1. Քաղցածներին կերակրել
2. Ծարաւներին ջուր տալ
3. Մերկերին հագուստ տալ
4. Օտարականին բնակութեան վայր տալ
5. Խնամել հիւանդներին

---

72 «Յոյսն աստուածաբանական այն առաքինութիւնն է, որով մենք ցանկանում ենք իբրեւ մեր երանութիւն ունենալ Երկնքի Արքայութիւնն ու յաւիտենական կեանքը՝ մեր վստահութիւնը դնելով Քրիստոսի խոստումների վրայ ու ապաւինելով ոչ թէ մեր ուժերին, այլ Սուրբ Հոգու շնորհների օգնութեանը...», *Քրիստոնէական Կաթողիկէ Եկեղեցւոյ, 1817*

73 «Սէրն այն աստուածաբանական առաքինութիւնն է, որով սիրում ենք Աստծուն ամէն բանից վեր եւ մեր մերձաւորին՝ իբրեւ մեր անձը՝ յանուն Աստծոյ սիրոյ: Յիսուս սէրը դարձնում է մի նոր պատուիրան: Սիրելով իւրայիններին «ի սպառ» (Յվհ., 13:1)՝ Նա յայտնում է Հօր սէրը...», *Քրիստոնէական Կաթողիկէ Եկեղեցւոյ, 1822-1823*

74 Ողորմութեան նիւթական եւ հոգեւոր գործերի այս շարքը յատուկ է կաթողիկէ միջնադարեան աւանդութեանը: Դրանք նախատեսուած են մերձաւորի հանդէպ սէրը որոշակի քայլերով դրսեւորելու, նաեւ՝ ապաշխարութեան համար: Իւրաքանչիւր շարքը ընդգրկում է եօթը գործեր:

6. Այցելել բանտարկեալներին
7. Մասնակցել յուղարկաւորութեան

«Քանի որ իմ այս փոքր եղբայրներից մէկին արեցիք, այդ՝ ի՛նձ համար արեցիք»

«Արդ, երբ որ մարդու Որդին գայ իր փառքով եւ բոլոր հրեշտակները՝ իր հետ, այն ժամանակ նա պիտի նստի իր փառքի գահի վրայ, ու նրա առաջ պիտի հաւաքուեն բոլոր ազգերը, եւ նա նրանց միմեանցից պիտի զատի, ինչպէս մի հովիւ, որ զատում է ոչխարները այծերից: Եւ ոչխարները իր աջին պիտի կանգնեցնի, իսկ այծերը՝ ձախին: Այն ժամանակ թագաւորը պիտի ասի նրանց, որ իր աջին են. «Եկէ՛ք, իմ Հօր օրհնեալնե՛ր, ժառանգեցէ՛ք աշխարհի սկզբից ձեզ համար պատրաստուած արքայութիւնը. որովհետեւ քաղցած էի, եւ ինձ ուտելիք տուիք, ծարաւ էի, եւ ինձ ջուր տուիք՝ խմելու. օտար էի, եւ ինձ ձեր մէջ առաք, մերկ էի, եւ ինձ հագցրիք, հիւանդ էի, եւ ինձ տեսնելու եկաք, բանտում էի, եւ ինձ այցի եկաք»: Այն ժամանակ արդարները պիտի պատասխանեն նրան ու ասեն. «Տէ՛ր, ե՞րբ տեսանք քեզ քաղցած ու կերակրեցինք, կամ՝ ծարաւ եւ ջուր տուեցինք. ե՞րբ տեսանք քեզ օտար եւ մեր մէջ առանք, կամ՝ մերկ եւ հագցրինք. ե՞րբ տեսանք քեզ հիւանդ կամ բանտի մէջ ու եկանք քեզ այցի»: Թագաւորը պիտի պատասխանի ու ասի նրանց. «Ճշմարիտ եմ ասում ձեզ, քանի որ իմ այս փոքր եղբայրներից մէկին արեցիք այդ՝

ի՛նձ համար արեցիքե: Այն ժամանակ նա պիտի ասի նրանց, որ իր ձախին են. «Անիծեալնե՛ր, գնացէ՛ք ինձնից յաւիտենական կրակը, որ պատրաստուած է սատանայի եւ իր հրեշտակների համար. որովհետեւ քաղցած էի, եւ ինձ ուտելիք չտուիք, ծարաւ էի, եւ ինձ ջուր չտուիք, օտար էի, եւ ինձ ձեր մէջ չառաք, մերկ էի, եւ ինձ չհագցրիք, հիւանդ էի ու բանտի մէջ, եւ ինձ տեսնելու չեկաքե: Այն ժամանակ նրանք էլ պիտի պատասխանեն ու ասեն. «Տէ՛ր, ե՞րբ տեսանք քեզ քաղցած, կամ ծարաւ, կամ օտար, կամ մերկ, կամ հիւանդ, կամ բանտի մէջ ու քեզ չծառայեցինքե: Այն ժամանակ պիտի պատասխանի նրանց ու ասի. «Ճշմարիտ եմ ասում ձեզ, որովհետեւ այս փոքրերից մէկին ա՛յդ չարեցիք, ինձ համար էլ չարեցիքե: Եւ նրանք պիտի գնան դէպի յաւիտենական տանջանք, իսկ արդարները՝ յաւիտենական կեանք»:

(Աւետարան ըստ Մատթէոսի, 25:31-46)

ՍԻՐՈՅ (ՈՂՈՐՄՈՒԹԵԱՆ) ՀՈԳԵՒՈՐ ԳՈՐԾԵՐ

1. Դարձի բերել մեղաւորներին եւ անհաւատներին
2. Կրթել նրանց, ովքեր թերի գիտելիքներ ունեն կրօնի մասին
3. Տարակուսողներին տալ հավատքը հաստատող խորհուրդներ
4. Մխիթարել տառապեալներին
5. Համբերութեամբ տանել դժուարութիւնները

6. Սրտանց ներել վիրաւորանքները
7. Աղօթել ողջերի եւ ննջեցեալների համար

«Միմեանց համար աղօթք արէ՛ք, որպէսզի բժշկուէք. քանզի արդարի աղօթքը շատ ազդեցիկ է եւ օգնում է: Եղիան մարդ էր մեզ նման՝ կրքերի ենթակայ. նա աղօթեց, ու երկրի վրայ երեք տարի ու վեց ամիս անձրեւ չտեղաց: Ապա դարձեալ աղօթեց, եւ երկինքը անձրեւ տուեց, ու երկիրը բուսցրեց իր պտուղը: Եղբայրնե՛ր իմ, եթէ ձեզնից մէկը շեղուի ճշմարտութեան ճանապարհից, իսկ մէկ ուրիշը նրան յետ բերի, թող իմանայ, որ, ով մեղաւորին իր մոլորութեան ճանապարհից յետ է բերում, կը փրկի նրա հոգին մահուանից եւ կը ծածկի մեղքերի մի ամբողջ բազմութիւնե,

(Յակոբոս առաքեալի ընդհանրական թուղթը, 5:16–20):

ԱՂԲԻՒՐՆԵՐԻ ՑԱՆԿ

1. Աստուածաշունչ մատյան, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2017
2. Ժամակարգութիւն Եկեղեցւոյ Հայաստանեայց, Վիեննա, 1990
3. Հ. Մանուէլ Ծ. Վրդ. Պաթագեան, «Նոր Աղօթագիրք», Երեւան, 1993
4. Աղօթագիրք, «Գանձասար», հանդէս, 1992
5. Հ. Ղուկաս Վրդ. Ինճիճեան, «Աղօթագիրք աշխարհաբար», Սուրբ Ղազար, 1849
6. Հ. Գրիգոր Վրդ. Գովրիկեան, «Բանալի արքայութեան», Վիեննա, 1887
7. Հ. Ներսէս Վրդ. Թօսունեան, «Մատեան աղօթքիե, Պէյրութ, 1981թ.
8. Ա. Ր., «Բանալիք քաւարանին՝ հաւաքածոյ աղօթիցե, թարգմանիչ՝ Հ. Յովհաննէս Թորոսեան, Վենետիկ, 1931,
9. «Ես միշտ ձեզ հետ եմ մինչեւ այս աշխարհի վերջը, աղօթքներ եւ խորհրդածութիւններ՝ Ամենասուրբ Հաղորդութեան առջեւ», Սիդնէյ, 2004թ.
10. Մեսրոպ Հայունի, «Ահա, յայսմհետէ երանեսցեն ինձ ամենայն ազգք», Այնճար, 2014
11. Մեսրոպ Հայունի, «Ահա՛, այսուհետեւ բոլոր ազգերը պիտի երանեն զիս, որովհետեւ հզօրը

մեծ սքանչելիքներ ըրաւ զիս», Այնճար, 2015
12. Սբ. Յովհաննէս Պօղոս Բ Քահանայապետ, «Պսակ կուսին Մարիամու», թարգմ.՝ Հ. Մեսրոպ Հայունի, ներածութիւն
13. Մեսրոպ Հայունի, «Մայիսեան աղօթքներ եւ Մարեմեան տաղեր», Այնճար, 2015
14. Հ. Անդրանիկ Ծ. Վրդ. Կռանեան, «Հայ ծիսական պաշտամունքը», Պեյրութ, 2001
15. Մաշտոց Հայաստանեայց Ուղղափառ Եկեղեցւոյ, Վիեննա, 1905
16. Քրիստոնեական Կաթողիկէ Եկեղեցւոյ, Վատիկան, 1997

ԱՂՕԹԱԳԻՐՔ

Մեծացուսցէ անձն իմ զՏէր

Աղօթագրքի տեքստը կազմեց և ծանօթագրեց՝
Տ. Յովսէփ Քհնյ. Գալստեան՝

օժանդակութեամբ՝
Արժ. Տ. Գրիգոր Ավ. Քհնյ. Մկրտչեանի,
Անի Ցոլակեանի,
Հրանուշ Սարգսյանի
և
Նաիրա Բաղդասարեանի:

Սրբագրեց՝
Գերպ. Հ. Մաշտոց Վրդ. Զահթերեան:

Տեխն. խմբագիր՝ Արարատ Թովմասեան
Էջադրումը եւ կազմը՝ Արմինէ Պապանեանի

Վնտարես

«ԱՆՏԱՐԵՍ» հրատարակչատուն
Երեւան 0009, Մաշտոցի 50ա/1
Հեռ.՝ +(374) 58 10 59, 56 15 26, 58 76 69
antares@antares.am
www.antares.am